

# ԷՐԱՐԴԱԾԻՆ



1968

ԱՆԺԵԼ  
ԻԵ ՏՐԻ


Նոյեմբեր - Դեկտեմբեր

# ԷՂՄԻԱԾԻ

Պահօնական ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ  
Ս. ԷՂՄԻԱԾԻ

ԺԱ-ԺԲ

1968



ԽԱ-Դ-255

## Թ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ե

	է
<b>ԽՄԲԱՆԴԲԱԿԱՆ—«Արարտ» ամսագրի երաժշտակուրյան հարյուրամյակը Հաղորդագրուրյուն</b>	3
<b>ՊՐՈՖ. Ա. Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ—«Արարտ» ամսագրը</b>	5
<b>Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—«Արարտ»—ը և նայ դավանաբանական գրականուրյունը</b>	6
<b>ՆԵՐՍԵՆ Մ. ՎՐԴ. ՊՈԶԱՄԱԼՅԱՆ—«Արարտ» ամսագրը և Գևորգյան նմառանք</b>	15
<b>ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈՂԱՆՃՅԱՆ—«Արարտ»—ը և նայազիտուրյունը</b>	30
<b>Ս. ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ լեզվաբանուրյունը «Արարտ»-ի էջերում</b>	39
<b>Գևորգ Դ-ի կոնդակը և Պոլոս Պատրիարքին՝ Վատիկանի ժողովին մասնակցելու երակերի դեմ</b>	53
<b>ԽԵԲՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ անդրանիկ կոնդակը</b>	64
<b>ԿԱՐԱՎԵՏ ՄՐԿ. ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ—Ուստի խօսք արտասանված Տ. Տ. Գևորգ Դ կարողիկոսի շիրմի վրա</b>	66
<b>ԳԱՐԵԳԻՆ ՄՐԿ. ՅՈՎԱՆԻՔԵԲԱՆՑ—Լուսաւորչի կոչը</b>	70
<b>ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ—Մի բանի խօսք մեր սիրելի պատկիցներին</b>	72
<b>Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ—Գրկութեան խաչը</b>	74
Խաչի ներեոյ	76
Մայրական խաչի ներեոյ	76
Մայրական խաչի ներեոյ	77
<b>ՎԱՀԱՆ ԵՊԱ. ՏԵՐՅԱՆ—«Արարտ»—ը և արևմտահայուրյանք</b>	78
<b>Ն. ԹԱՀՄԻՉՅԱՆ—«Արարտ»—ն ու երգ-երաժշտուրյան հարցերը</b>	84
<b>Ռ. ՏԱՎՈՒԵՑԵՑԻ—Թատրական հարցերն «Արարտ»-ի էջերում 1870-ական թվականներին «Արարտ» ամսագրի երաժշտակուրյան հարյուրամյակին նվիրված հանդիսություններ Մայր Արարատ</b>	91
<b>Անցյալի վավերագրեր</b>	96
<b>Մատենազիտուրյուն «Արարտ» ամսագրի (1868—1919)</b>	103
<b>Յանկ «Էջմիածին» ամսագրում 1968 թվականի լեռացքում տպագրված նյութերի</b>	107
	125

## ԽՄԲԱՆԴԲԱԿԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀ, ԷՇՄԻԱՇԻՆ

«ԷՇՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱՆԴԲՈՒԹՅՈՒՆ

Արմանական Հայաստանի պետական ամսագիր «Էշմիածին»  
Հայաստանի պետական ամսագիր «Էշմիածին», Եղմիածին, Արմենիա, ԽՍՀՄ

Հանձնված է արտադրության 22/XI 1968 թ., Ստորագրված է տպագրության 16/I 1969 թ.  
Տպագրական 8,12 մամուց, Բուղթ 60×84<sup>1</sup>/8, պատմեր 794

Մայր Աթոռ Ս. Էջմիածինի տպարան, 1968 թ.



ՀՐԱՄԱՆԱԴ


**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ԱՆՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ա. ՕՇՈՒԹՅՈՒՆ S. S. ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ



## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՐԱՄՅԱԿԸ

Նոյեմբերի 10-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի թելադրությամբ և հրահանգով, Մայր Աթոռում հանդիսավոր նշվեց «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակը՝ ս. պատարագի մատուցմամբ և քարոզով, հոգեհանգստյան պաշտոնի կատարումով և ապա Վեհարաբի ջահազարդ դահլիճում հանդիսավոր հիստով:

Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակը նշելու միջոցառումների մեջ կարելոր տեղ է գրավում նաև «Արարատ»-ում լույս տեսած կրոնական, եկեղեցական, պատմական, բանահրական, քարոյագիտական, հայագիտական և հայրենագիտական հոգիների մատենագիտության և այրութենական, հետինակալին ցանկերի պատրաստությունն ու հրատարակությունը: Մատենագիտությունը, 18 մամուլից քաղացած, պատրաստ է արդեն և ամեն ամիս, մաս առ մաս, կիրատարակվի «Եջմիածին» ամսագրում: «Արարատ»-ի հյութերի մատենագիտությունը մեծապես կապատի մեր բանասիրությամբ գրավվողներին, իրենց գիտական պրատումներին և ուսումնասիրությունների մեջ՝ որպես ողեցուց և առյուր:

«Արարատ»-ի հրատարակության հարյուրամյակին է նվիրված նաև «Եջմիածին» ամսագրի նոյեմբեր-դեկտեմբեր սույն միացյալ համարը, «Արարատ»-ի ոգոն, նպատակին, կատարած հոգևոր, եկեղեցական, մշակութային մեծ ների մասին գրված լուրջ ու սումնասիրություններով, գիտական հոդվածներով:

«Արարատ»-ի կատարած դերը մեր եկեղեցու պատմության, մատենագրության և բանասիրության մեջ առանձնահատուկ է և եզակի այն իմաստով, որ նա հանդիսացել է կրոնական, լուրջ ու գիտական միակ ամսագիրը եվրոպական առումով և չափանիշով, արևելահայերի մեջ, որի կրոնա-քարոյական, եկեղեցագիտական, դավանարանական, հայագիտական հարցերի խորը ուսումնասիրության, գիտական մակարդակին, ծավալին ու քարձրության չի հասկը ոչ մի այլ կրոնական հայ ամսագիր:

«Արարատ»-ի հրատարակության հիմնական նպատակներից մեկն է եղել նաև մեր ժողովրդի ծոցում քարձրացումն ու ամրապնդումը հայ եկեղեցու պատմական և եկեղեցական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածին առաքելության, պաշտպանությունը հայ եկեղեցու դարավոր կարգ ու կանոնն, ողողափառության, դավանարանական դիրքին ու ազգային նկարագրին:

Լուսամիտ Գևորգ Դ կաթողիկոսի նախաձեռնությամբ, նրա «ուսումնասեր հոգվոյն եռանդյամբը» «Արարատ»-ը հրատարակվում էր նաև «աշխատասիրություն միարանից Ս. Եջմիածին... հոգևոր պարտականությունը կատարելու և նոյն հոգևոր կոչման վարկը անձին սեփականելու, որով միայն կարող եմք ազգին առաջին անմեջապարտ լինել» («Արարատ», 1868, էշ 2) և ապա հայ ժողովրդի «ազգային, քարոյական գարգամանը սատարելու» (նոյն տեղ) ազնիվ մտահոգությամբ:

Գևորգ Դ կաթողիկոսի ձեռնարկը հաջողաբար էր պատվում և 1868 թվականի մայիսի 1-ին լուս էր տեսնում «Արարատ» ամսագրի առաջին համարը՝ Գևորգ Դ-ի տնօրինությամբ. «Քննութիւն Արարատայ է անընդմիջական տեսչութեամբ Վեհափառ Հայուապետին, որոյ և հրամանաւ իսկ տպագրի»:

Կառավարական հրամանում, որով թուլատրվում էր «Արարատ»-ի հրատարակությունը, ապնում էր. «Թուլատրվում է հրատարակել «Արարատ»-ը առանց հախնական քննության Կովկասյան գրաքնչական կոմիտեի, եթե պատրիարքը (Գևորգ Դ) իր վրա վերցնի ամսագրի գրաքննությունը և այս հրատարակի իր պատասխանատվությամբ»:

«Արարատ»-ի շորջ տարիների ընթացքում համախմբվեց ինչպես հայագիտության, այնպես էլ աստվածաբանության նվիրված պատվական հոգևորականների և մտավորականների պատկառելի մի սերունդ, հայ ժողովրդի կրոնական, մշակութային, հայութասիրական զարդութիւն նվիրվելու և ծառայելու խոստումով և կոչումով, «հայկազուն սերնդոց սրտի և հոգուն եռանդն ու աշխուզք» վատելու. «հարենքաց կենտրոննեն, հայրենի հմտությանց թանգարանը» բանալու և «ազային մեծագործությանց պատմական հիշատակները» կենդանացնելու, կապելու համար բովանդակ հայության սիրող էջմիածնին և հայրենյաց:

«Արարատ»-ի հրատարակությանը իրենց շնորհակալ աշխատակցությունն են քերել այդ ոգով Արքել արքեա. Միսիթարյանը, Վահրամ եւս. Մանուկնին. Օռմանան սրոազանը, Գարբիկ եպս. Ալվազովսկին, Գալուստ Տեր-Մկուտյանը (Միհրան), Անդրեաս, Անահիտ, Գրիգոր, Հովհեկ եպիսկոպոսները, Ղազարոս Սղայանը, Հովհաննես Հովհաննեսիսան, Արշակ Տեր-Միքելյանը, Մելքոն Վրդ. Մերատյանը, Սահակ Վրդ. Ամատոննին, Վահան Վրդ. Բաստամյանը, Խորեն Վրդ. Ստեփաննեն, Կարապետ Վրդ. Տեր-Մկուտյանը, Գարեհն, Գևորգ, Կոմիտաս, Երվանդ, Արտակ, Խաչիկ, Գյուտ Վարուսակեններ, Պերճ Պոռուանը, Հր. Աճառյանը, Գրիգոր Խալաթանցը, Հավկունին, Մ. Աքեւանը, Ն. Աղոնցը, Ստ. Մայխատանցը, Ս. Կանանցը, Կարապետ Կոտամանը, Արշակ Նահապետյանը, Լեռն, Ն. Մատո, Միհրական Տիգրանյանը, Հակոբ Մանանյա-

նը, Գարեգին Լուսկանը, Սպ. Մելիքյանը, Եր. Հայանը, Աշոտ Հովհաննեսիսանը, Գր. Ղափանցյանը, Արտեն Տերտերյանը և շատ ու շատ սիրելի անուններ:

«Արարատ» ամսագրի հրատարակությունը ջերմ ընդունելություն էր գտնում ընթերցողների կողմից:

Գևորգ Դ-ի ամսագրի մենայուն հրատարակությունը տնտեսական ապահովելու համար բաժանորդագրությունը պարտադիր դարձրեց բոլոր հոգևորականության և ամեն քահանայի համար. «Բաժանորդագրություն Արարատայ յօրէ հրատարակութեան պարտադիր գոլով բոլոր եկեղեցականց հայոց» («Արարատ», 1888, էջ 128, նաև Օրմանյան, «Ազգապատում», Գ հոր., էջ 4249):

«Արարատ»-ը հրատարակեց ավելի քան կես դար և եղավ հայ դպրականական մորթի, եկեղեցական պատմության և մատենագիտության, հայագիտության հանդիպության մեջ և հայ հրատարակության թերթին:

«Արարատ»-ը պատվով և սրբությամբ կատարեց իր առաքելությունը հայ եկեղեցու պատմության մեջ և հայ հասարակական մորթի զարգացման վրա ունեցավ մեծ և խորը ազդեցություն:

«Արարատ»-ի հարուածառ շարունակությունը հանդիպացավ Մայր Աթոռի նոր պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրիը, որը հրատարակվում է 25 տարիներից ի վեր՝ շարունակելով նույն ոգով և նախանձախընդույթյամբ իր կրոնական, եկեղեցական, մշակութային, հայրենասիրական առաքելություն հայ եկեղեցու կյանքում և Մայր Աթոռի ներկա պատմության մեջ: Առաքելություն՝ երեկ «Արարատ»-ի, այսօր՝ «Էջմիածին» ամսագրի միջոցով:

Մայր Աթոռի միաբանությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ազգիս սիրելի Հայրապետի բարձր դեկանալության և օրինության ներքո, Վերակրկնում են իրենց սրբազն ուստուր, «Արարատ»-ի հրատարակության հարուրամակի առիթով, շարունակելու իրենց Ե՛ համեստ սպաս ու ծառալություն՝ ի նապաս հայ մշակութի, հայ համատի և հայ ոգին Արարատը հանդիպացող Մայր Աթոռ և Էջմիածնի և նրանց միջոցով վեռածնված մեր ժողովրդին և մայր հայրենիքին:





## ՀԱԴՐՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, հրավերով Մոսկվայի և համայն Ռուսաստանի Տ. Ալեքսի սրբազն պատրիարքի, 1968 թ. դեկտեմբերի 21-ին Զագորուկի ոուսական մայրավանքում, մասնակցեց միջեւեցական խորհրդակցական ժողովին, որի օրակարգն էր՝ եկեղեցական մի համագումարի հրավիրումը, քննելու համար աստվածային պատգամների լուսի ներքո, աշխարհում խաղաղությունը ամրապնդելու գործում եկեղեցիների և այլ կրոնական դպրանությանց մասնակցության հարցը:

Սույն խորհրդակցական ժողովին ներկա էին Խորհրդային Միության մեջ քրիստոնեական բոլոր եկեղեցիները, ինչպես նաև՝ մահմեդական, մովսիսական և բուդդական դպրանությունները:

Ժողովում միաձայնությամբ որոշվեց վերոհիշյալ օրակարգով կրոնական համագումար հրավիրել 1969 թվականի հունիսի 1—4 օրերին Զագորուկի մայրավանքում՝ մասնակցությամբ Խորհրդային Միության մեջ բոլոր եկեղեցիների և կրոնական դպրանությանց, ինչպես նաև արտասահմանից հրավիրված կրոնական-եկեղեցական ներկայացուցիչների:

25 դեկտեմբեր 1968 թ.  
Ս. Էջմիածին

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ



**ՊՐՈՒ. Ա. Գ. ԱՐԱՔԵԼՅԱՆ**  
(Գերագույն հոգևոր խորհրդի անդամ)

### «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳԻՐԸ

Հարյուր տարի առաջ, 1868 թվականի մայիս 1-ին, լուս տեսավ Էջմիածնում «Արարատ» ամսագիրը: Այս նորանշան մի երեխովոյ էր հայ եկեղեցու պատմության մեջ պարսկական տիրապետությունից հետո, երբ հայ ժողովորդը Շահ-Արասի ու նրա հետմորթների բռնությունից ազատագրվելով սկսեց ազատ գոյության պայմաններում ապրել ուս ժողովրդի եղբայրական օգնությամբ: Շահը էր ու դառնաշունչ հայ ժողովրդի վիճակը պարսկական տիրակալության օրով, ծանր էր ու եղեկի նաև Էջմիածնի վիճակը այդ ժամանակ: «Սուրբ տաճարը,—գրում է ժամանակակից պատմագիրը,— զրկված է եղել ամեն ստացվածքից և զարդից, ոչ գիրը է եղել, ոչ զգեստ և ոչ շործառ, մինչ զի և Քրիստոսի իշման տեղը և սուրբ սեղանը ծածկոց չեն ունեցել և ոչ կանթել և մի մահմետական երրեմնապես վառելիս է եղել ձիթո ճրագ և դնելիս բեմի վերա անցավոր ճանապարհորդաց համար, որ տեսնելով ողորմություն անեն: Եկեղեցու սպարկ հատակը քանդականդյալ, պատուհանները առանց վանդակի, ալեան որ թղթումք բուն էին դրած եկեղեցու մեջ, եկեղեցու կաթողիկեն, տանիքն և որմոց երեսը

քանդականդյալ և քարերը թափված, որմերի հատակած վեմերը փշրած և ծակոտած»<sup>1</sup>:

Այս վիճակը անպատճենելի էր 1868 թվականի բարեզարդության համար, երբ նա այն աստիճան կազմուրվել էր նյութապես և բարոյապես, որ կարիք գգաց իր սեփական մասովն ունենալու և նրա միջոցով ամրապնդելու հայ ժողովրդի մեջ սերը առ յոր հայրենիքը, առ եկեղեցին և հայ ժողովրդի ստեղծած մշակությն ու դարավոր ավանդները:

Անպանույն, փոքրիկ ու նիմար մի տեսրակ էր «Արարատ»-ը՝ բաղկացած ուժ էջից: Ծըեղ չեղ անվանաթերթը: Վրան խոշոր տառերով տպված էր.

«Արարատ ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց, աշխատասիրութիւն միաբանից Սուրբ Էջմիածնի»:

Անվանաթերթից հետո առաջին թերթի վրա գրված է յառաջաբան, որ խոսվում է «Արարատ»-ի հրատարակության նպատակների մասին, այն է՝ «Հայկագուն սերնեղոց սրտի և հոգվուն եռանդն ու աշխույժը վառել

<sup>1</sup> «Արարատ», 1888, մայիս 81, էջ 285:

կրթության և գարգաման սիրով և ազգային դաստիարակության» միջոցով:

Այս եռանդն ու աշխույժն ահա բորբոքցին «սուրբ Հջմիածնի կղերին սիրութ», և նրանք որոշեցին գրավոր հրատարակությամբ «ազգային դաստիարակության կամ գեթ իր կղերակցաց կրթությանը հաղորդակից լինել»: Խմբագրությունը մեջապարու է գգում, որ մինչև այսօր հայրենամիական գացումը հայ ժողովով մեջ վառելու բահձանքն ուշ է իրականանում, որովհետև «չունենք հուսադրող պատիհ ամսական հրատարակությանց ձեռնարկելու»: Այսուհետև խոսվում է թերթի ծրագրի և հյութերի բնույթի մասին, որը չորս կարգի է. կրոնական, պատմական, բանահրական և բարդական:

Ամսաթերթի ծրագրային խոսքից հետո խմբագրությունը հայտարարում է, որ թերթի լեզուն «Հայաստանի Երևան գավառի պարզ աշխարհաբար լեզուն է, որ ավել մեր է գրաբառ»:

Սուածարանից հետո, որ գրավում է երկու և կես էջ, տպագրված է մի ոստանակոր հետևիլավ վերնագրով. «Արարատն առ ազգ հայոց»: Չնայած առաջարկի մեջ հայտարակած է, որ թերթի լեզուն Երևանի «պարզ աշխարհաբարն է», բայց այս ոստանակորը ամբողջապես գրաբար է:

Համարն ակավում է պաշտոնական տեղեկություն բաժնով, որ տպագրված են Սինոնի օրագրությունները հինգ մասեր: Օրագրությունները հետու մկանում է բուն հյութը: Առաջին տեղում, «Կրոնական» վերնագրի տակ, մկանում է հոդվածը: Այսուետ հեղինակը ճշշտում է առաջարկանում հշված առաջին ծրագրային կետը՝ կրոնականը: Կրոնական աւելով «մտքերնիւ այն չէ, որ հավատու խընդիրներու վրա պիտի խոսինք ու հավատու վեճեր նորոգենք, այլ ինչպես գրել ենք մեր հայտարարության մեջ որ արդեն հրատարակած է, եկեղեցական կարգաց և արարողության հումքները (ումի՞ց) և ն'որ սկզբնավորելու վրա պիտի գրենք մեր ստուգին և կամաց աշխարհական ժամանակակիցներու վ սահմանադրությանը: Ուրիշ խոսքով կրոնական բաժնը պետք է գրաղին ոչ թե դավանարանական խնդիրներով, այլ հայոց եկեղեցու պատմությամբ: Սակայն հայ եկեղեցու կյանքում քիչ չեն հարուցվել դավանարանական խնդիրներ, և ամաթերթը հետագա համարներում անդադառնում է դրանց:

Կրոնական բաժինը ընդգրկում է միայն քրիստոնեական շրջանը. «Արարատա կրոնական մասին մեջ, — գրում է խմբագրությունը, — կղենենք ընդհանրապես մեր ազգի ի

քրիստոնեություն դատնալը և առաքելական հաջորդությունը Հայաստանի մեջ», իսկ հետանուական շրջանը, «ազգին հեթանուության ժամանակին կրոնական պաշտամունքը առանձին կղենենք ի կարգ բանասիրական»:

Երկրորդ բաժինը՝ պատմականը, նապատակ ունի շարադրել «հայրենյաց դժբախտ անցքերը» և դրանով ընթերցողներին տալ հայրենիքը պաշտպանելու քաջարության օրինակ, որ «քաշերեն զագ» և հայրենիքը պահելու քաջություն» սովորեն, իսկ «վատերն իրեն հայրենյաց մատնուու եղողները» խորշեն:

# Ա Բ Ա Ր Ա Ը

## Ա Մ Ս Ա Գ Ի Բ

ԿՐՈՆԱԿԱՆ ՊՐԵՍՏԱՆ ԱՎԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՎՐԱՅԱԿԱՆ

ԴԻՑԵԼԵԿԸ

ԱՇԽԱՏԱՓՐԵԼԻՄ

ՎԻՃԱՎԵՐ ԱՎԵՐ ՀԵՎԵՆԵՎ

Ա Բ Ա Զ Ի Ւ Տ Ա Ր Ի

Ի Ս Ա Ւ Ր Ա Է Հ Ա Մ Ա Մ

1868 = Ա մ է Շ

«Արարատ»-ի առաջին տիտղոսաթերթը

Պատմականը նապատակ ունի տալ նաև «Հայաստանի աշխարհին վրա ընդարձակ տեղեկություն», «նորա մասերուն ստորագրությունը» ... «Նորա գավառացը, լեռանց և գետոց, օղոց և թերոց, որպեսզի նոցա մեջ նախնական հանությանց՝ բաղաքաց, տաճարաց և վանորեից ստորագրությունները կարդալու ժամանակ» նոցա վրա լուս առնելուն տեղ հանացները մթություն չեղնեն»: Ամսաթերթը միաժամանակ ուշադրության է առնում այն հանգամանքը, որ Հայաստանի հնություննե-

ի պատմությունը գրողները «անհարազան տեղեկություններով լցեր են» այն, և խմբագրությունը ժամանակակից մեջնակների «տարրաձայն գրվածք» ծանոթության կարգով կեշանակեն «ապագայի համար»:

Երբեք բաժինը՝ բանախրականը, պետք է ծառայի միայն բանասերների «Ամրերը զվարճացնելուն», «ազգին գրականության ուժը ոճնախիր բանախրանություններու և ուղարկություններու մեջ հայկաբանական լեզվով կատարելու»:

ОГЛАВЛЕНИЕ

It was at this time that the first English Government reached a final  
agreement concerning the disposal of all our military stores in New  
Zealand.

1. *Primo Statuto Seguente il quale si determina l'obbligo di versare alla curia dei nobili e dei  
cavallieri di Sestriote il quinto per cento del patrimonio che essi hanno nel paese.*

15. ब्रह्मणा एव विष्णुष्वादे त्रिपुरार्थे उपगमने अवसरं भवति।  
तेऽपि लक्ष्यं त्वयां त्रिपुरार्थे विष्णुष्वादे ब्रह्मणा एव विष्णुष्वादे त्रिपुरार्थे उपगमने अवसरं भवति।

«Արարատ»-ի նրանք առաջարկության առաջարանը

Չորրորդ բաժինը՝ բարոյականը, գրում է հոգևորականների, մեր հոգևորական կարգակից եղբայրների համար, «սուրբ և արտաքին գրոց Այլթափոր խոսքերը բացատրենով որքան կարեի և մեր հոգևորական դասակարգությանը բարողության ճամփան դուռացնենք, այնպիսի ոճ բռնենով, որպեսզի հասարակությունը ազգային հատաշդիմության ոգևով բաջալերվի»:

Այս ծրագրով առաջնորդվելով ամսաթերթի պատմական բաժնում տպված է մի հոդված՝ «Արարատ և Ամանգ» խորագրով։ Հոդվածը փոքր է, թերթի մի պունակը բացատրում է՝ «Արարատ» բար՝ մեջ թերելով

Վկայություններ Աստվածաշնչից, Խորհնակուց, Հովհաննես Կայտողիկոսից:

Բանափրական բաժնում, որը մի էջ է, գետեղված է հոդված «Ազգային բարեկարգություն» վերևագրով։ Բովանդակությունն այն է, որ կուսակրոն հոգևորականների ունեցվածքը նրանց մասից հետո մնում է վաճառքն, և նրանց ազգականներն ու մերձավորներն իրավունք չունեն «ժառանգության ձեռնամուխ լինելու»։ Գևորգ Դ կաթողիկոսը առաջինը հանդիսացավ օրինակ և «իր գույքը թողոց սուրբ Էջմիածն ժառանգություն և ի նոյն հորդորեց և զմիարաններություն»։ Միարանները գրավոր պայման ստորագրեցին, որ «այսուհետև բոլոր կուսակրօն հոգևորականց Էջմիածնի գույքը լւս վախճանի լիցին ի ժառանգություն Աթոռույ»։

Հաջորդ՝ վերջին էջում տպագրված է մի հանեղովն՝ Բարյուական վելևագրի տակ: Հա-  
նեղովնը Ներսէ Ծնորհալուն է:

1868 թվականի «Արարատ»-ը շատ համար է թե՛ ծավալով (8 էջ) և թե՛ բրդանակությամբ: Նոյն վիճակն ունի և հունիսիան համար:

Հովհանն համարի առաջին էջում դրված  
է Էշիմածնի Ալարը, թիկունքում՝ Մասիսը:  
Նոյն հոդվածների շարունակությունը, էջ  
31-ում տպված է Խաչիկ կաթողիկոսի կոն-  
դակը «Փրկչական 976 թուին»: Այստեղ ու-  
շագրակ նորությունը դպրոցն է: Հրատա-  
րակած է կաթողիկոսի կարգադրությունը  
թևմերին տեղեկություն հաղորդել դպրոցնե-  
րի մասին՝ ո՞րտեղ և քանի՞ ծխական դպրոց  
կա, տեսութեանի, հոգարաքուների, ուսու-  
ցիշների, աշակերտների թիվը, ուսումնա-  
րանների բացման ժամանակը, դպրոցների  
հյութական վիճակը և այլն:

Սիածամանակ Եղիշիածնում կազմակերպված ուսումնական հանձնաժողովը առաջարկում է թեմերի առաջնորդներին կամ նրանց փոխանորդներին «մասնավոր դրսուցներ բանալու փուլը ունենան և քահանալքը ուսուցիչ և դաստիարակ կարգեն»։ Դպրոցների գործական ապահովության համար եկեղեցական գումարներից մաս հանել դպրոցներին, իսկ «եթե չեն բավեր, դրամագլխեն միայն մի մասը ծախս անեն, գուղական ազգային մանկունքը բոլորովին տօհսության մեջ չթողնելու համար»<sup>2</sup>։

Այսուհետև տապարված է Երևանի թեմական դպրոցի տարեկան հարցաքննության մասին գեկուցու կաթողիկոսին։ Այս համարը բաղկացած է 16 էջից։

**Տորբորդ համարը** (օգոստոս) բաղկացած  
է 14 էջից: Նախորդ համարում տպված «Ա-

<sup>2</sup> ՀԱղճումը մերն է: Ո՞րպիսի հոգատարություն երեխանութիւն Բամար:

րարատյան երկրի» աշխարհագրական նկարագրի շարունակությունը, իսկական բանասիրական բաժնում ճառեր՝ նվիրված Գևորգ Դ կաթողիկոսին՝ նրա ընտրության առթիվ: Ամսաթերթի վերջում ամսագրի խմբագրության կանոնները:

**Հինգերորդ համարը** (սեպտեմբեր) բաղկացած է 12 էջից: Բանասիրական բաժինն ամբողջովին նվիրված է մյուսոնքին բնության հանդեսին, և այդ առթիվ ելույթներ, ուղերձ կաթողիկոսին:

**Վեցերորդ համարում** (հոկտեմբեր) տպագրության դպրոցը է հայկական դպրոցների կանոնադրությունը, որ մշակել է Էջմիածնի ուսումնական հանձնաժողովը: Կանոնադրությունը վերնագրված է՝

«Կանոն յաղագ ծխական հոգեսր դպրոցն հայոց որ ի Ռուսաստան»:

Կանոնադրությունը վերաբերում է դպրոցների բացման, հոգարածուների ընտրության և նրանց պարտականություններին, դպրոցների նյութական միջոցներին, ուսման ծրագրին, ավանդելիք առարկաներին, ուսուցիչներին և աշակերտներին: Կանոնադրության Ս. Գլխի երրորդ հոդվածով քաղաքների և գյուղերի բույր եկեղեցները պետք է ունենան դպրոցներ:

Ի՞նչ նպատակով են բացվում դպրոցները: Դրա պատահանքը կարդում ենք երրորդ հոդվածում.

«Նպատակ ծխական դպրոցաց է կրթել զամենայն հայացքի մանկուն ի սկզբանական գիտություն հայացի դպրութեան, յորոց ցանկացողք կարեն մտանել ի թեմական դպրոց»:

Ծխական դպրոցները նեկալվարում են ժողովրդից ընտրված երեք հոգի, մեկը՝ հոգեվորական, երկուսը՝ աշխարհական: Հոգարածուների պարտականությունն է «խնամ տանի բարեկարգութեան և պահանութեան դպրոցին և աշխատել ամեցուցանել զեկամուս նորա և հասու լինի ծախուց նորին» («Արարատ», թիվ 7, 1868 սեպտեմբեր):

Այս համարի բանասիրական բաժնում տպագրված է առաջին մանկավարժության դաստիարակչական հոդվածը, որը վերևագրված է «Հայոց մայրերուն մանկանց բարության դաստիարակությանը համար մեկ խորհուրդ», դրանից նետո «գիտական» հետազոտություն՝ «Հայկայ աստուածաշատութինը» խորագրով:

**Յոթերորդ համարը** (նոյեմբեր) պարունակում է մի հոդված՝ նվիրված Եղիշե պատմագրին, ապա տեղ է տրված անցյալ համարի մի հոդվածի և ոտանափորների ո ճառերի՝ նվիրված Գևորգ Դ-ին: Շնարած թերթի լեզուն ըստ խմբագրության խոստման «արարատյան աշխարհաբարեն» է, բայց այս և նե-

տագա համարի ճառերը և ոտանափորները գրաբար են և նոում գրաբար:

Պաշտոնական տեղեկությունները այս համարից հետո գետեղվում են առաջին էջերում և ավանդական կերպով այդ շարունակվում է հաջորդ թվականների բոլոր համարներում առ այսօր:



«Արարատ»-ի առաջին համարի առաջին էջը

**Ութերորդ** (դեկտեմբեր) համարը բաղկացած է ութ թերթից: Բովանդակությունը նորություն չունի, նախորդ հոդվածների շարունակությունն է, իսկ վերջում երկու ոտանապար «Էջմիածնի հոգարածին» և «Ողբ Գէորգայ իշխանի խոսրով Մելիքսեղեկեան» վերնագրերով:

1869 թվականից թերթի ծավալը մեծանում է և աշքի ընկնում մանկավարժական հոդվածներով, որոնց մեջ մեծ տեղ են գրավում Ղազարոս Աղայանի հոդվածները՝ տրված ամսաթերթի 1869 թվականի մայիս, հունիս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների համարներում: Մեծատաղանդ մանկավարժի և բանաստեղծի առաջին հոդվածը 1869 թվականի առաջին համարի (մայիս) խմբագրականն է, որ վերնագրված է «Մի բանի խոր մեր սիրելի ազգակիցներին»: Հոդվածը գրավում է ամսաթերթի 1—3 էջերը (5 սյունակ): Հոդվածի մեջ ընդգծում է պարերա-

կան թերթի կարևոր հշանակությունը: «Պարբերական թերթը լինելով լուսավորության գործիքներից մինչը, արձակ ճանապարհ ունի մտնելու ընդհանուրի մեջ և նորան յոր մտաց զարգացման աստիճանին հարմար սնուն տալու և հասկացնելու, թե ինչպես պիտի էր աշխատել: ...Արարատը յոր ամեն շանքը պիտի գործ դնել լինել այնպիսի մի պատկեր, որը մեջ հայր կարողանա տեսնել յոր անցյալը և ներկան, և հոյսով է, որ յոր հարազան որդոց լուսավորյայ մասը ամենավա կերպով դուրսություն կտա այդ նպատակին մոտենալու» (Ղ. Սղայան):

**Երկրորդ** հոդվածը նոյն համարում վերագրված է «Խորհրդածություն դաստիարակության վերա»: «Մեծ է դաստիարակի գործը,—գրում է Սղայանը,—և սրբազն է նրա պաշտոնը. վասն զի ով որ բանական արարածին ձեռք է առնում, նորան կատարեա ագործելու մտք, նախ և առաջ հարկավոր է ինմանա, թե ինչ է նա, ինչպիսի ինչ է և ինչու համար է» (Ղ. Սղայան):

**Երրորդը՝** նոյնական առաջնորդող հոդված է և գրավում է ամսաթերթի 7 էջերը, վերաբերում է Էջմիածնում միմնարկելիք դպրոցական նոր շենքին: Հոդվածի մեջ ուժեղ ընդգծում է դպրոցի խոշոր կրթիչ դերը հասարակության զարգացման գործում: «Ուսումնարանը, այս մարդկային սեփի ջուրն ու հոգին, որից առանց կրկին ծննանելու նորան փրկություն չկա, ի սկզբանե անտի մինչև մեր օրերը մարդատյաց և բռնաւեր մարդոց աշքում փոշ է եղել. վասն զի դա է, որ մի ամբողջ ժողովուրդ ստրկության, աղքատության, նախապաշտմանց և հազար ու մեկ քստմնելի հանգամանքների անգույք և զարդարենի ճանկերից ազատում և մարդավայրի վիճակի մեջ է գգում (Էջ 29):

Նոյն համարում շարունակվում է «Խորհրդածություն դաստիարակության վերա» հոդվածը՝ Ղ. Սղայան ստորագրությամբ: Հոդվածը շարունակվում է նախ սեպտեմբերյան համարում և հոկտեմբերյան համարում ավարտվում: Այս հոդվածում առաջին ուշադրությունը սևեռում է ընթերցանության վրա և շեշտում նրա բարձր հշանակությունը մտպիր զարգացման համար:

Սղայանի այս հոդվածը շարունակվում է ամսաթերթի հաջորդ համարում (հոկտեմբեր, 1869 թ., Էջ 160): Վերևագրված է «Խորհրդածություն դաստիարակության վերա»:

**Տողի.** (Պետերուրագի հայ ուսանողներին նվեր): Սկսվում է 160-ից և ավարտվում 177 էջում (Ղ. Սղայանց): Այս ծավալուն մանկավարժական հոդվածի մեջ Սղայանը շոշափում է նաև ազգի և ազգասիրության գաղափարը:

1870 թվականի «Արարատ»-ը դարձալ լույս է տեսնում ութ համարով, սակայն մեծ ծավալով:

1878 թվականին հրատարակվում է տարեկան 12 համարով՝ սկսված հունվարի 1-ից և շարունակվում մինչև 1919 թվականը, երբ քաղաքական հանգամանքներն արգելակում են ամսաթերթի հրատարակմանը: Այդ ամբողջ ժամանակամիջոցում ամսաթերթն անշեղորեն ընթանում է իր ուղիով, որ գծել է 1869 թվականին: Հետզինեւ նրա բովանդակությունը հրատանում է և նա դառնում է բազմազան: Այսպես, 1868—69 թվականներին թերթը լույս է տեսնում ութ համարով և 8 կամ 16 էջով, սակայն 1870 թվականից մեծանալով ծավալը, հասնում է 1890—1900-ական թվականներին 90—100 էջի: Ամսաթերթի հոդվածները հիմնականում կրում են մանկավարժական, պատմական, հայագիտական բնույթ, խոշոր չափով տեղ է տրված նաև հավական դպրոցական կյանքին: Այդ համականադի է, որովհետև ցարական կառավարության օրով հայկական դպրոցների դեկավարությունը գտնվել է Էջմիածնի կաթողիկոսների ձեռում, հայկական դպրոցները նյութական միջոցներ չեն ստացել կառավարություններ, այլ պահպանվել են հայ ժողովրդի նվիրատվություններով և նրա միջոցներով:

Դպրոցների ընդհանուր դեկավարությունը պատկանել է Էջմիածնում կազմակերպված ուսումնական հանձնաժողովին, որը մշակել է դպրոցների համար կանոնադրություն, ուսման ծրագիր և իր ներկայացուցիչների միջոցով հետևել նրա կիրառմանը: Դրա հետևեանքով ամսաթերթի լուրաքանչյուր համարում մենք տեսնում ենք հոդվածներ, տեղեկություններ դպրոցների բացման, ուսման առաջադիմության մասին, հոգարածուների, թեմակալ առաջնորդների, Էջմիածնի ներկայացուցիչների գեկուցուներ, հաղորդումներ դպրոցների նյութական և բարոյական վիճակի, տարեկան քննությունների և ուսման ընթացքի, նոր դպրոցների բացման մասին և այլն: Այսպես, 1870 թվականին բացվել են օրիորդաց դպրոցներ Շամախում, Վրաստանի Գորի քաղաքում, Սատրափիանում, տղայոց դպրոց՝ Համզաշիմանում, Ղուրայում: Դնշան այս, նոյնական և այլ որպոցների ուսումնական և տնտեսական հաշիվների մասին հաշվետվություններ ներկայացվում է հասարակական ժողովներին և տպագրվում ամսաթերթում:

Ամսաթերթ շարունակում է իր լայն էջերը բանալ հայ դպրոցի և լուսավորության համար նաև հետագա տարիներին: Կարելի է վստահորեն հայտարարել, որ մատադ սերնդի կրթության և դաստիարակության

գործը հանդիսացել է շերմ հոգատարության առարկա և նրան մեծ չափով արձագանքել է «Արարատ» ամսագիրը:

Ուշագրավ է ամսաթերթի 1891—92 տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր միացյալ համարում տրված «Ղարաբաղի հայոց հոգաւոր թեմական դարոցի տեսչի 1892—93 ճեմարտարվան համար» ներկայացրած «տարեկան հաշիվ»-ը: Այս դպրոցի տեսուչը հշանավոր հայ համարական գործի Լոռ Սարգսյանն է, հետագայում՝ «Մուրճ» ամսագրի խմբագիրը: Հմայլակ գեկուցազրի մեջ պատմում է 90-ական թվականների Արցախի հայկական միջնակարգ (թեմական) դարոցի վիճակը: Այդ ուսումնական տարում դպրոցում աշխատել է 14 ուսուցիչ, դրանց թվում և հշանավոր հայ երաժիշտ Ստեփան Դեմուրյանը, և 375 աշակերտ:

Վերացնելով հաղորդումը Լոռ Սարգսյանը կոչ է անում շուշեցիներին՝ բուն աշակցություն ցուց տալ թեմական դպրոցին և «սկսի ներգրածական և ոչ սպասողական կամ կրավորական դեր կատարել»: «Ծուշվա համարակալությունը,—գրում է տեսուչ Սարգսյանը,—թող լավ իմանա, որ ոչ միայն Ծուշվա, այլ ամբողջ Արցախի լուսավորությունը մեծապես կախված է այս դպրոցից, և Ծուշին, իբրև Արցախի կենտրոնական ու ավելի լուսավոր ու դեկավարող կետը, պատասխանատու է ամբողջ թեմի և ամբողջ ազգի առաջ: Մեր ապագան մեր ուսումնականներն են և ոչ մի ջանք չպետք է խնայենք հրանց բարեկարգ վիճակի հայցներու»:

Ամսաթերթը նոյն եռանդով ներկայացնում է հայ դպրոցական կյանքը նաև հաշորդ տարիներին, ինչպես Երևանի թեմական դպրոցի, Լազարյան ճեմարանի գոյության հորեւյանը, նաև վիճակագրական տեղեկություն ուսումնական ժողովորդի քանակի, գուղերի, եկեղեցների, դպրոցների և այլնի մասին: Ավելորդ չենք համարում 1914 թ. մայիսյան համարում լույս տեսած այս վիճակագրական համառոտ տեղեկագիրը ներկայացնելու մեր ընթերցողներին, որպեսզի նրանք գաղափար կազմեն այդ թվականի Անդրկովկասի հաղության քանակի մասին: Երևանի քաղաքում կա 4500 արական, 4040 իգական, ընդամենը 8540 հոգի, 1 թեմական դպրոց, 365 աշակերտ և 18 ուսուցիչ:

Երևանի թեմում կա 361944 տղամարդ և 323154 կին, ընդամենը 685098 շունչ: 1 թեմ. դպրոց, 365 աշակերտով, 18 ուսուցչով: Ղարսի շրջանում 73406 հայ, որից 39013 արական, 34393 իգական:

Կրաստանի թեմ. քաղաքաբնակ ծխականների թիվը 91966 տղ., 75809 կին, բոլորը 166875 շունչ: Գյուղաբնակ ծխակ. 148494 տղ., 120199 կին. բոլորը 268693 շունչ, թե

բաղ. և թե գյուղացի բոլորը 435.568 շունչ: Աստրախանի թեմ—37888 շունչ, որից տղամարդ 20227, կին 17661.



## Ա Ր Ա Ր Ա Տ

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՈՆԱԿ. ՊԱՍՏՈՒՏ. ԲԱՆԱԳՐԻԿԱՆ ԵՐ ԱՐՋԵՎՈՅՆ

ԹՎ. Ե. ՏԵՐ. Դ. 1871 ՊԵՏԱԿԱՆ

Կ Ր Ո Ռ Ա Ռ Ո Ւ Ն

Կ Ր Ո Ռ Ա Ռ Ո Ւ Ն Ա Ր Ա Ր Ա Տ

Կ Ր Ո Ռ Ա Ռ Ո Ւ Ն Ա Ր Ա Ր Ա Տ

Կ Ր Ո Ռ Ա Ռ Ո Ւ Ն Ա Ր Ա Ր Ա Տ

Կ Ր Ո Ռ Ա Ռ Ո Ւ Ն Ա Ր Ա Ր Ա Տ

«Արարատ»-ի 1871 թ. առաջին էջը


Նոր նախիչևնի և Բենարաբիայի թեմ.— (Խերտին, Պետերբուրգ, Մոսկվա, Դույյան գորքի շրջան, կին, Տավրիկյան նախանձ, Եկատերինուպոլավ) քաղաքաբնակ և գյուղաբնակ հայեր 48849 (արական 25293, իգական 23556):

Ղարաբաղի թեմ.—Ծուշի քաղաքում 20253, որից 10487 տղ., 9766 կին: Ղարաբաղի թեմի մեջ մտել են նոյնու և Լենքուանի շրջանները: Նոյնու գավառու 51 հայաբնակ գյուղերում 37551, որից 20551 տղ., 17000 կին: Ամբողջ Ղարաբաղի թեմում քաղաքաբնակ և գյուղաբնակ հայերի թիվն է 206768 շունչ, որից արական 117968, իգական՝ 88798: Ղարաբաղի թեմում կա երեք քաղաք՝ Ծուշի, Նոյնի և Լենքուան, հայաբնակ գյուղեր՝ 224:

Ճամախու թեմ.— (Բաքու, Գյուղավահ գավառ, Ղուրա քաղաք, Դեղբենդ, Սալյան). հայ բնակչությունը ամբողջ թեմում, թե գյուղերում և թե քաղաքներում, կազմում է 132881, որից 70729 տղա, իսկ 62152՝ աղջիկ:

Ամսաթերթը մեծ չափով տեղ է տիեզ ու-

սումնա-դաստիարակչական մանկավարժական հոդվածներին՝ պատճենաբան և տպագրված է հոդված «Հայոց մարդու մանկաց բարոյական դաստիարակությանը համար մեկ խորհուրդ» վերնագրով։ Այս հոդվածը, որը գիտապահ արժեք չի ներկայացնում, ծեծ և պատճեները շի մա-



«Արարատ»-ի 1915 թ. տիտղոսաթերթը

մարտում համաձայնարկելի դաստիարակչական միջոց։ Հոդվածը շարունակվում է 1869 թ. սևագրներից համարներում։ Ուշագրակ է Պ. Աղայանի հոդվածը մի քանի համարներում, որի մասին խոսեցներ իր տեղում (1870 թվականի մայիսան և հունվան համարներում)։ Նույն տարվա նոյն համարներում տրված է մի հոդված, «Դարձալ վարժապետներ պատրաստելու խնդիր»։ Այս վերջին հոդվածի հեղինակը մեծ կարևորություն է տալիս մալրենի լեզվին։ «Սա (այսինքն մալրենի լեզուն) պետք է լինի բոլոր պատրաստական ուսման կենտրո-

նը և յուր մեջ պարունակե» («Արարատ», 1870, հունիսի, էջ 49—50)։ Այս համարում տրված է Ստեփանոս Նազարյանի ճառը՝ ուղղված Գևորգ Դինի։

Հումանա համարում տպված է «Ամուսնութեանու և նորա «Ժիտագրիքա Սական» ծավալուն հոդվածը, որ շարունակվում է 1870 և 1871 թվականի համարներում, ապա ընթանուր գերմանական մանկավարժական ժողովը։ Այնուհետև 1878 թվականի համարներում «Ժրդովրդական դաստիարակություն», «Պատմական նկատմություն կենու դրության և կրթության մասին», «Հինգ կրթություն» (թարգմանություն ֆրանս.), ինչ 1893 թվականին՝ «Դաստիարակման խորհուրդներ» (մայրենի լեզվի, կրոնի)։ Այս բնագավառը շարունակում է հարստանալ հետոգա տարիներին։

Ամսաթերթը յայն էջերը նվիրել է նաև հայագիտությանը և նենց իր գոյության օրերից մինչև վերջը։ 1869 թ. նույնը երբեմն համարում լուս է տեսել «Եղիշե վարդապետ պատմաբան-մատենագիր Բիսկարորդ դարու» վերնագրով հոդվածը։

1878—88 թվ. «Արարատ»-ը մեծանում է ծավալով և ճիշանում հայագիտությամբ։

«Արարատ»-ն ավելի է ճիշանում 1890-ական թվականներից։ Պատմական-համարագիտական բազմաթիվ և լուրջ հոդվածները փոխում են ամսաթերթի դեմքը և դարձնում հայագիտական հանդես։ Այստեղ են հրապարակվում Սիհարանի «Սարդարարադի բեկվագրերի վերածնությունը» (1893 հունիս), Նիկոլսկու «Վահեի թագավորների սեպան արձանագրությունները», Սիհարանի «Հինգ նոր արձանագրությունները» (1893 օգոստ.), «Ռուսական քննուագրերի լեզուն», «Լազարան, Հայաստան և Քրդաստան» աշխատանքները, Փ. Տեր-Մովսիսյանի «Մովսես Խորենացու մեկ նոր աղբյուրը» և այլն։

Բացի ամսաթերթի ծրագրով նախատեսված հյութերից, նոր մեջ տեղ են գտել զանազան բովանդակությամբ հոդվածներ։ 1869 թվականի համարներում նոր նախիչչանի մարդասիրական ընկերության 1868—69 թվ. հաշվետվությունը, «Ամերիկա և Հայաստան» (համեմատությունը), «Ռուսումարանի վեասակար ազդեցությունը» (առողջապահական), «Հայկա աստվածապաշտությունը», (1870 թվ.), «Մի քանի խոսք թնական աշխարհագրության վերա» (մայիս, հունիս, հուլիս), «Առանց վանքի կրթավորություններ», «Ալեկություն գուղորենից Վիճակին հայոց Ծամախսպո» (սեպտ., դեկտ.), «Արվեստ առողջապահության և երկարակեցության» և այլն։

Ամսաթերթը 1878 թվականին տալիս է 12 համար։ Հրատարակվում է հունվարի 1-ից՝

առաջին էջում զետեղելով Եշմիածնի նկարը: Հոդվածներ, ճանապարհորդություններ, կենսագրություններ Գևորգ Մանուչարյանի, որ Եշմիածնին նվիրել է 25000 ռուփի, ճանապարհության մասին: Բոյլոր համարներում նշանակված են նվիրատունների անուններում, հոդվածները Ստ. Մայիսայանի ինքնաճաշագիրը, նոյնի ժարգմանությունները Վ. Հյուգոյից (Հորբն երկնից, հափշտակություն մարաց), «Վայրենիների վիճակը», Գարուս Շերմազանի նետաքրքրական հոդվածը «Զինուրական հայպաշտոնակար ումանք ի Պարսկատան» և այլն:

1888 թվականի ամսաթերթում բովանդակությունը տրված է անվանաթերթի վրա: Առաջին էջում «Առաջնորդող» վերնագրով հոդված և կրոնականը:

Ամսագրում ստեղծվել է երկու բաժին՝ «Ազգային», որտեղ «Տաճկահայք» և «Իտուսահայք ենթավերնագրերի տակ տեղեկություններ են հաղորդվել թուրքահայերի մասին, և «Պաշտոնականք»՝ կաթողիկոսական կարգադրություններ:

Ուշագրավ են Հ. Տեղի «Միտոն և նորա «Կորուս Դրախտի»» հոդվածը, որ տարգմանել է Սեղրակ Մանդիկյանը (1888 հունիս, օգոստոս), Քաջքերունու «Ճանապարհորդական մկանությունը»-ը, դոկտ. Նիմեյիրի ընդարձակ հոդվածը «Կիրովական հանգստությունը» և այլա նշանակությունը առողջության համար», որը շարունակվում է մի քանի համարում:

Ամսաթերթում վերը նշված բաժինների վրա ավելանում է մեկ նոր՝ «Գրախոսական» վերնագրով: Այդ վերնագրի տակ գրախոսվում են Սեղ. Մանդիկյանի գիրքը որուստ և ազգի դասավանդման մասին, Եշմիածնի Ավետարանի մասին: 1803 թվ.<sup>?</sup> պարի ամսի համարում լուս է տեսնել մեր մեծ լուսավորիչ Խ. Արքվանի գերմաներն ին հոդվածը, որ տպվել է «Պետերբուրգում 1858 թը. «St. Petersb. Zeitung»-ի համար 34-ում:

Պետք է նկատել, որ ամսագիրը (1893 թ.) բավական մեծացել է՝ 56-ից մինչև 170 էջ:

1900 թ. «Արարատ»-ի պատկերը տպարկություն է 1880—90-ական թվականների ամսագրից: Հրատարակված է ոռակայ թուի վրա և ավելի մեծ դիրքով, քան ճամփորդները: Փոխվել է րովանդակությունը և ավելի մոտեցել կանքին, հասարակության գիտական պահանջներին ու վերածվել գիտական համեմեխ: Այդ ուղղությունն է հրահանգում խոհման կաթողիկոսի կրոնակը՝ ողոված Գարեգին վարդապետ Հովհաննեսին, նոր խմբագրին: «...կարևոր համարիմք տալ Քեզ զայտուիկ հրահանգ: Նախ ջանալ մատչելի

կացուցանել զԱրարատն գյուղական քահանայից մերու և հասարակության օգտակար և պիտակի հոդվածովք կրոնական, բարոյական, կրթական, գյուղատնտեսական, առողջապահական և այլ բազմազան բովանդակությամբ: Երկրորդ, ջան ի գործ դնելու զորացուցանել ըստ կոչման ամսագրին Ս. Ալթուույս զգիտական, զարգացման, զմանեմագրական, զմանախոսական բաժինն առ ի բարձրացուցանել գրարի անուն և զգիտական համբավ միաբանության սուրբ Եշմիածնի»:

Կաթողիկոսական այս կոնդակի ոգով խմբագրի Գարեգին վ. Հովհաննեսը «Խմբագրության կողմից» հոդվածում գրում է. «Մեզ համար ցանկալի է, որքան կարելի է գիտական բազմազան ուժեր հավաքել «Արարատ»-ի շորջը Վեհափառ Հայրապետի հրամանով և տպագրական վարչության սիրայի աշակերտամբ մենք պատրաստ ենք մինչ ին սպոռական ծավալից ավելի ընդարձակել գիտական բաժինը»<sup>3</sup>: Եվ արդարու թերթի շորջը համախմբվում են ժամանակի «գիտական բազմազան ուժեր» ու տպագրվում բազմազան գիտական գործեր, ինչպես Ս. Արենյանի «Հայ ժողովրդական առասպեկտները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ», Հր. Աճառյանի «Քըննություն Ղարաբաղի բարբառի», Կոմիտասի քննադատական հոդվածը Պ. Լ. Եղիազարյանի Փարիզում տպագրված «Հայվաճոն հայոց ժողովրդական երգերի» գործի մասին, Գրիգոր Վահագանի «Դիտողություններ Խորենացու մասին», «Վեհաստանի հայերը», Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միարանի) հոդվածները, թժնապետ Ա. Բաբայանի «Ինչպես պահպանվել ծառիկ հիվանդություններ», դոկտ. Ռեկլամի «Առողջապահան գիտելիքներ», Գ. Ղազարյանի հոդվածները՝ «Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ», «Ինչպես պետք է վարել հողը», «Ինչպես պետք է տափանել հողը», Երանել Սովորանի «Ծիռակի գորդական կանքից» և այլն: Գիտական ուղղությամբ աշխատակցում են ամսագրին ապամարան Հանու Մանաւուանը, բանաստեղծ Հովհ. Հովհաննեսանը, հրամանական Սիրական Տիգրանականը, Եղիշեանը, Եպիմառան Եզնին Գևանդականը, Սեպուանը. Մաքսուտանը և մանեավարժ Գուրգեն Եղիշեանը «Հերթերս Սահենսերու ժողովուրդ». Կոտության մասին» (Թարգմ. Սպ. Մելիքյանի), «Գողյան երգերի տաղաւախութան մասին» (Մկրտիչ Պալյանի), «Թուղթ Միհեթան վարդապետին, որ Գոշը կոչիր» և այլն: Ուշագրավ է Կոմիտաս Վարդապետի աշխատակցությունը ամսագրին, հետաքրքրական

<sup>3</sup> Բնագծումը նոդվածագրին է:

են նրա գրած հոդվածները՝ «Տաղաչափություն և շեշտադրություն» («Արարատ», 1898, էջ 114), «Հայոց եկեղեցական հղանակները» («Արարատ», 1894, էջ 222—227 և 256—260), «Մի համեստ բանագող» («Արարատ», 1901 թ. ապրիլ, էջ 228): Վերշին հոդվածում ապացուելով Դ. Խաչկոնցի բանագողությունը Կոմիտասից, եզրափակում է այս խոսքերով. «Պ. Դ. Խաչկոնցը ոչ մի երաժշտական օրենք չգիտե և յուր ազգային երաժշտության մասին հասկացողություն անգամ չունի, բայց գտել է, որ հայոց հիսուակերն այ, եղանակներն այ ծագումով հայացի չեն, այլ հայացած, սակայն այդ միտքն էլ


նոյնքան հայացի չէ, այլ հայացած, Պ. Դ. Խաչկոնց»:

Ամսաթերթն ունի նոր բաժնեներ՝ օտար եկեղեցիներ, գրախոսական և մանրապորք (մանր լորեր):

Այս նոր ուղղությամբ ամսագիրը շարունակում է իր գոյությունը մինչև 1919 թվականը, երբ քաղաքական ստեղծված աննըլպաստ պայմանների հետևանքով դադարում է հրա հրատարակությունը:

«Արարատ» ամսագրի հրատարակությունը մշակութային մեծ երևոյթ էր հայ լրագրության պատմության և Մայր Աթոռի տարեգրության մեջ:





## Ա. ՀԱՅԻՑՅԱՆ

### «ԱՐԱՐԱՏ»-Ը ԵՎ ՀԱՅ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1968 թվականի մայիսի 1-ին լրացավ Մայր Աթոռ և Էջմիածնի առաջին պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակը:

Մի հարյուրամյակ առաջ Մայր Աթոռի հովանու տակ, Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական ղեկավարության մերք և միաբանության, Գևորգյան ճեմարանի դասախության կազմի մասնակցությամբ հրատարակված հայ առաջին կրոնական մամուլի կազմակերպման հիմնական նպատակն է եղել «հայկագուն սերնոց սրտի և հոգոյն եռանուն ու աշխոյժը» վառել, «կրթության և զարգացման սիրով և ազգային դաստիարակության» միջոցով բանալ «հայրենաց կենտրոննեն հայրենին հնությանց թանգարանը» և «ազգային մեծագործությանց պատմական հիշատակները» կենդանացնել «ի մըլիթարություն հնուավոր ազգայնոց, որոնք ժամանակավ հատված գնալով ի պսուլուս այլ և այլ աշխարհաց, առ գետս բարելաց-փոց կնատին և կիշեն զՀայատան» («Արարատ», 1868, Յառաջարան, էջ 1):

«Արարատ»-ի հրատարակության հիմնական նպատակներից մեկն է եղել նաև հայ կանքում բարձրացումն ու ամրապնդումը Մայր Աթոռ և Էջմիածնի առաքելության, պաշտպանությունը հայ եկեղեցու ողդափառության, ինքնուրուցնության և անկախության, ազգային նկարագրի, որպես արևելքի հնագույն ու պատմական եկեղեցիներից մեկի:

«Արարատ»-ի կատարած դերը մեր եկեղեցու մատենագրության և պատմության մեջ առանձնահատուկ է և եզակի: «Արարատ»-ը եվրոպական իմաստով ու չափանիշներով, կրոնական միակ ու լորջ ամսագիրն է եղել, որի կրոնա-բարոյական, եկեղեցագիտական, հայ դավանության նվիրված հարցերի խորը ուսումնասիրությանը, գիտական մակարդակին, ծավալին ու թափին չի հասել ոչ մի այլ կրոնական մամուլ:

«Արարատ»-ը կոչվում է ամսագիր «կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց» և «Յառաջարան»-ում բացատրվում է նրա հրատարակության նպատակն ու բովանդակության «կարգադրությունը», ոստ որի «կրոնականին մեջ պիտի դրվին եկեղեցական կարգաց և արարողությանց վրա տեղեկություններ, կաթողիկոսաց գործեր, սուրբ հարց գրվածքներ, ազգային մատենագրաց կենսագրություններ և ձեռագիր մատենից ծանոթություններ» (Յառաջարան, էջ 3):

«Արարատ»-ը հրատարակվեց ավելի քանի կես դար և եղավ հայ կրոնական մամուլի, ինչպես նաև մեր լրագրության պատմության մեջ լավագույն, բովանդակալից և երկարակյաց ամսագրերից մեկը:

Տարիների ընթացքում «Արարատ»-ի շուրջ համախմբվեց ինչպես հայագիտության, այնպես էլ աստվածաբանության նըլիրված պատմական հոգևորականների մի խումբ, որոնք լորջ ու գիտական ուսումնա-

սիրությամբ առաջ մեցին հայ աստվածաբանական միտքը, արժեքավոր տառմանափրկություններ հրատարակելով հայ դավանաբանական մտքի պատմության ու գարգացման մասին:

Հայ դավանաբանական գրականության պատմությունը շատ հարուստ է և հետաքրքիր, որը ակիզօք է առնում 5-րդ դարի 80-ական թվականներին, երբ Աղեքանությանի պատրիարք և ողղափառ միաբնակության պարագություն Տիմոթեոս Կուղի «Հականապութիւն» առ սահմանեալան ի ժողովոյն Քաղկեդոնի» ընդհանուր եկեղեցական գրականության մեջ դարագություն կազմող աշխատությունը թարգմանվելու է հայերենի, որով և պատշունակեն հայ եկեղեցին Հովհանն Սահնակունին կաթողիկոսի օրոք (478—490) իր Վերաբերմունքը է ճշում Քաղկեդոնի ժողովի դեմ։ (Կարապետ ծ. Վրդ. և Երվանդ Վրդ. «Տիմոթեոփի եակիլոպասապետի Աղեքանությունը հականապութիւն» առ սահմանեալան ի ժողովոյն Քաղկեդոնի», ս. Էջմիածնի տպարան Մայր Աթոռու 1906 թ., էջ 6):

Կուղի «Հականապութիւնը» հայ եկեղեցու դավանաբանական գրականության մեջ ևս «դարագություն կազմող» գործ է և «առաջնորդ ու օրինակ է հանդիսացել հայ դավանաբանների համար» (Յովն տեղ, էջ 6):

Հայ դավանաբանական գրականությունը «մաքառման ու պայքարի մի գրականություն է» ոչ միայն ի պատշաճանություն հայ եկեղեցու ողղափառության, այլ նաև հայ ժողովորդի ազգային ինքնուրույնության պահպանման տեսակետից հայրենասիրական «մաքառման ազգային մի գործ»։ (Մանուկ Արելյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա. հատ., էջ 80):

Հայ եկեղեցու դեմ քաղկեդոնականների մղած պայքարը ուներ նաև ազգային ճնշման բնույթ։ Հայերի մոտ դրա արդյունքը այս եղավ, որ նրանց մեջ առաջացրեց դառնություն և վճռականություն՝ ամրապինդ փարվելու ճշմարիտ և ողղափառ հավատին և վարդապետությանը։

Ե-րդ դարը մեր եկեղեցու պատմության և մատենագրության մեջ լրունական, եկեղեցական ու մշակութային գաղափարախոսությունների հակամարտությանց պայքարի մի ժամանակաշրջան է, «ոռագմական քաղաքական կոփի» գենքով (Արելյան, 83), 451 և 480 թվականներին պարսիկների դեմ և ապա կրոնական պայքար գրականության միջոցով նետորականության, եվութքականության և Քաղկեդոնի դեմ 480-ական թվականների ակած։


Եվ ահա Կուղի «Հականապութիւն»-ը հայերենի է թարգմանում դավանաբանական, կրոնական, մշակութային պայքարների ժա-

մանակ, «այնպիսի պատմական շրջանում, երբ հայոց եկեղեցին ատիպիկ էր անհրաժեշտարար մասնակցություն ունենալ դավանական վեճերի մեջ» (Կարապետ ծ. Վրդ., «Հականապութիւն», էջ 14):


Արդարին, Կուղի «Հականապութիւն»-ը ամենայալ զենքերն էր մատակարարում հայ եկեղեցու դավանակության և ողղափառության պաշտպան մեր վարդապետներին նետուրականության և քաղկեդոնականության դեմ մաքառելու համար։ Ընդհանրապես բոլոր ողղափառ միաբնականների ձեռքում այս գիրքը հզոր մի միջոց էր Քաղկեդոնի դեմ պայքարի մեջ, ամրող արևելքում։

Մեր բանահրության մեջ անվիճելիորեն ճշոված է «Հականապութիւն»-ի հայերենի թարգմանության վերջնական թվականը. «480 փետր. 29—484 փետր. 28. ահա այս քառամյակն է Տիմոթեոս Կուղի հայ թարգմանության հաստատում և անհայտակի թվականը» (Գալուստ Տեր-Մկրտչյան, «Արարատ», 1908, էջ 572), որով և հերքվեց «հին մաշված հաղորդումը թե հայերը իր մինչև Դմինի ժողովը, Ներսես Բ, եղել են քաղկեդոնական, երկարական» (Արելյան, էջ 615)... Դա հին քաղկեդոնականների տեսակետն է, որ պատմագիր Մ. Չամչյանի և առհասարակ Միհիթարյան վարդապետների ազգեկությամբ, ընդհանրապես է եղել մի ժամանակ (613): «Նրանց (Միհիթարյաններին) հարկավոր էր դավանաբանական վեճերի ժամանակ ասել թե իրենք են պահել հայկական, հիմ դավանանքը և ոչ թե հայ եկեղեցին» (Արելյան, 615): «Նորագույն հետազոտությունները, ընդհակառակն, գուց են տալիս, որ օտարենի այդ տեսանետը սխալ է. հայոց կաթողիկոսները, հովհանն 5-րդ դարից միսած, երկարնակրության հակառակ դիրք են բռնել և հայոց եկեղեցու դավանությունը եղել է առաջին երեք տիեզերական ժողովներին» (Արելյան, 616):

Կրոնական, դավանական աս պայքարը շարունակվում է հաջորդ տարիներին ևս, և հայ եկեղեցու վարդապետները «կարողանում են պաշտպանել քրիստոնեությունը՝ մոգությունից, և հայոց եկեղեցին՝ ասորիներից» (Մ. Արելյան, էջ 84) և այդ պատճառով «մեր եկեղեցական գրականության ամենահարուստ զյուղերից մեջն է հանդիսանում դավանաբանական գրականությունը» (Կարապետ ծ. Վրդ., «Հականապութիւն», էջ 22), որին հավատարիմ են մնում հետագա դարերում մեր բոլոր դավանաբանները, մեծ վեճերի ընթացքում։ Ընդհանրապես քրիստոնեական մտածողության խորությունն ու թափը ևս առանձին ուժով հանդես են եղել աստվածաբանական, քրիստոսաբանական գիտության մեջ, դամա-



«Արարատ»-ի 1896 թ. տիտղոսաթերթը



բանական սուր վեճերի ժամանակ IV—VI դարերում. (Պրոֆ. Ն. Սագարյան «Յոյն արեւելքի հիմն եկեղեցական աստվածաբանական գիտութիւնը իւր ծաղկման շրջանում (IV—V դարերում), արտասպառապես «Արարատ» ամսագրից, թարգ. ոռու., Արտակ Վրդ. Միքատյան, Վաղարշապատ, 1910 թ.):

Ե դարում հայ դավանաբանական միտքն ու քրիստոնարանական մտածողությունը արտահայտվում են նաև Սահման Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի դավանաբանական թրթերում (Գիրք թղթոց, մատենագրութիւն և ամսեաց, Թիֆլիս, 1901, է), հայրաբանելու գրքերի թարգմանության, ինչպես նաև Սովուս Խորենացու դավանաբանական թղթում (Արենյան, էջ 618) «քերթողահայր Սովուս Խորենացի եպիսկոպոսի թղթի վավերականությունը», Մանեղակունու «Ապացոյ լերկոց բնութեանց աւել զիրկիշն կամ մի բնութիւն» ճառում, ինչպես նաև Ղազար Փարպեցու թղթի մեջ «Ուղղափառութիւնն ըստ Ղ. Փարպեց. և Մ. Խորենացու և հայոց եկեղեցու դավանությունը 5-րդ դարի երկրորդ կեսին». (Արենյան, էջ 623—637):

Այս գրվածքներով հայ եկեղեցին դավանաբանական վեճերում իր դիրքը ճշտեց, որից հայ հետագայում չշեղվեց:

Զ դարի առաջին քառորդին Դիվինի Ա. ժողովում Բարձեն Ա. կաթողիկոսի օրով (506) պաշտօնական ծողովական որոշումով, մի անգամ ևս աներեկմիտ և բացարձակ կերպով Քաղկեդոն «դրասապարտվում է հայոց եկեղեցու կողմից» (Երվանդ Վրդ. Տեր-Միհանաց, «Հայոց եկեղեցու հարաբերությունները Աստրոց եկեղեցիների մետ», ս. Էջմիածին, 1908, էջ 115—116): Զ դարում հայ եկեղեցին արևելքում համարվում է ուղղափառության ամրոց և այնու՝ ուղղափառ միաբնակ եկեղեցիների, այդ թվում՝ ասորական, պարսից, վրաց, աղվանից եկեղեցիների համար: Այդ եկեղեցիների համար դավանաբանական, քրիստոնարանական հարցերում, հայ եկեղեցին և Բայերը համարվում են «սիհնք հասատոյ, լոյս աշխարհի, քարոզիչ արդարութեան, աջակերտք առաքելոցն, քիչկ իմաստունք հիմանդաց... հայր էք դուք մեր արդարութեան և մեք որդիք եմք ձեր հասատովք, զի հասատ մեք և ձեր մի է... հասասար է հասատ մեք ընդ ձերում հաւատոցք» (Երվանդ Վրդ. Տեր-Միհանայան, «Հայ եկեղեցու հարաբերութիւն», 1908, էջ 95—97):

Այնուհետև էլ հայ եկեղեցին միշտ հաստատ է մնացել իր հնագույն ընդհանուր դավանաբանական դիրքերի վրա, դավանաբանական վեճերի ժամանակ: Մեր եկեղեցական մատենագրությունը հարուստ է դավանաբանական գրականության գոհար էջերով:

Ամա թե ինչո՞ւ «Արարատ» ամսագիրը իր հրատարակության առաջին հայ օրից եղավ հայ դավանական մորի հանդեսը, հայ եկեղեցու ուղղափառության, պաշտպանության ամրինը, հայ եկեղեցու դավանաբանական գրականության նվիրված ընագրերի հրատարակությամբ և ուսումնասիրությամբ:

Ամսագրի հիմնական բաժիններից մեկը կորնական է: Այդ մասին «Արարատ»-ի «Յառաջարան»-ում նշվում է. «Արարատայ առաջին մասը կրօնական ղեկեով, մտքերնիս այն չէ որ հասարությունինը խօսինք և հասարություն վրա պիտի խօսինք և հասարություն վեճեր նորոգենք...» այլ բացարձություն հայ եկեղեցու կարգն ու կանոնը, պարզաբանել հայ եկեղեցու պատմության վերաբերյալ հարցեր, ներկայացնել հայոց եկեղեցու առաքելականությունը, առաքելական հաջորդականությունը, նվիրագետությունը, դավանաբանական ղիրքը, ուղղափառությունն ու ազգային նկարագիրը եկեղեցու պատմության նոր ուսումնասիրությունների լուսի ներքո, մատենագիտական, գիտական հիմնավորումով:

«Արարատ»-ի մեջ հայ եկեղեցու դավանային վերաբերյալ հոդվածների ուսումնասիրությունն ու հրատարակությունն արքի է բաժանել երկու շրջանների. Ա. շրջան՝ 1868—1895, Բ. շրջան՝ 1895—1919:

«Արարատ»-ի առաջին շրջանում հրատակված դավանաբանական հոդվածներն ու ուսումնասիրությունները կրում են ավելի պահպանողական-պատմական, մատենագրական-ջատագովական, քանի գիտական նկարագիր: Առաջին շրջանում աստվածաբանական, լորջ ու գիտական ուսումնասիրությունների մասին մտածել, դեռևս Վայր Աթոռում այդ տարիներին չկային հմտություն և խորապես գիտական պատրաստություն ունեցող աստվածաբաններ, որոնք հանդես եկան «Արարատ»-ում 1895 թվականից հետո: Առաջին շրջանում «Արարատ»-ում, աստվածաբանական-դավանաբանական բնույթի հոդվածներ են ստորագրում ամսագրի առաջին խմբագիր Արեն արքեա. Միսիթարյանը «Հայոց ազգի դարձն ի քրիստոնեութիւն», «Անընդհատ շարունակութիւն առաքելական լաջորդութեան ուղղափառ և եկեղեցու հայոց», «Ամենասուրբ Երրորդութիւն» (չափածո), «Պատմութիւն ծողովոց հայց. եկեղեցու պատմութիւն», «Պատմութիւն հայածացաց, ուրացողաց և հերձուածողաց և բաժանելոց յեկեղեցեաց հայոց»: Հուսիկ Վրդ. Մովսիսյան՝ «Հայ եկեղեցու պատմութիւն», Օրմանյան սրբազն՝ «Աթոռ Հայաստանաց», Վահրամ եպս. Մանկուն «Հայց. եկեղեցու անցեալ», Գարդիել եպս. Արմագյան (Այլվագովակի)՝ «Նիկոլ եպս. և

պատմութիւն դարձին հայկազն Լեհաստանի ի կաթոլիկութիւն», Արշակ Տեր-Միքելյան՝ «Սաստուածաբանական գիտելիքներ»-ի մի ամբողջ շարք (1893, էջ 7, 117, 219, 299, 383, 487, 366, 679), «Հարցմունք երկարնակացն»: Ամսագրի 1879 թվականին հրատարակվում է նաև «Սրբոց Վարդապետացն հայոց Մովսիսի և Դավիթ հարցմունքը բայց բնագիրը, իսկ 1892 թվականին Միարանի երկու կարևոր աշխատությունները. «Անահիա Նարեկացի, գիր խոստվանութեան» և «Գիրը ենթաւածոց» ուսումնասիրությունների բնագործություն:

1888-ից «Արարատ»-ում բացվում է «Ա. Էջմիածնի գրադարան» բաժինը, որը որոշվում է հրատարակել ձեռագիր բնագրեր, նաև հայ եկեղեցու դավանության վերաբերյալ, որպես «հում հուրթ» ապագայում հայ դավանաբանության ուսումնասիրությամբ գրավողութերի համար նոր լուս սփռելու հայ եկեղեցու պատմության և դավանության «մութ և անձանոթ» մնացած հարցերի վրա. («Արարատ», 1895, էջ 98):

«Արարատ»-ում տպագրված առաջին շրջանի դավանաբանական հոդվածներն ու բնագրական ուսումնասիրությունները զուտ հայ եկեղեցական պատմության և մատենագրության շրջանակներում էին կատարվում: Առաջին շրջանի միակ աստվածաբանն էր համարվում Արշակ Տեր-Միքելյանը, որի ուսումնասիրությունները «չոյ ու ցամաք դատողություններ են, դավանաբանական հարցեր շոշափող, համեմված զանազան պատուատիկ բացատրություններով» (Գոյտ արելա, «Կարապետ եպիսկոպոսը (Տեր-Մկրտչան) իրքն հոգևորական», ս. Էջմիածնին, 1917, էջ 19):

«Արարատ»-ի 1869 և 1888 թվերում կան հրատարակված երկու արտերավոր կոնդակներ, որոնք չափազանց կարևոր նշանակություն են ունեցել ծամանակին և պայօն է ունեն, ընդհանրապես հայ եկեղեցու դավանության և ի մասնավորի հայ եկեղեցու պատմության և նրա նվիրապետական կենտրոն Մայր Աթոռի առաքելական հեղինակության համար:

1868 թվականի դեկտեմբերի 14 թվակիր և 1417 համար գրությամբ կ. Պոլսի Պողոս պատրիարք Թաքթաքանը Գևորգ Դ կաթողիկոսին գրում է, որ Հոռոմ Պիոս թ պապը իրեն՝ որպես Թուրքիայի հայոց պատրիարք՝ հրավեր-նամակ է ուղարկել յատիներեն և հայերեն լեզվով՝ մասնակցելու 1868 թվականի դեկտեմբերին Վատիկանում գումարվելու ժողովին:

Պատրիարքը գրում է, որ «մեք որպէս պարտ է պատասխանի արարաք, պայպէս թէ՝ և մեք գերագոյն Հայրապետ ի ս. Էջ-

միածին, գլուխ Հայաստանեաց եկեղեցոյ որ միայն ունի զիրաւասութիւն ի վերայ սրբոյ եկեղեցոյս մերոյ և ամենայն հոգևոր հովուաց նորին, վասնորոյ և նմա անկ է քննադատել զիրաւիրագիրն: Ի վեր է քան զննունիասութիւն մեր, և որ ընդ մեօք եախիւ կոպուաց ամեննեցուն խօսիլ ինչ յաղազ բանին այսորիկ» («Արարատ», 1869, համար 10, էջ 153):



S. Արեւ արքեա. Միհիթարյան.  
«Արարատ»-ի առաջին խմբագիրը

Կ. Պոլսի պատրիարքը խնդրում է Ամենայն Հայոց Հայրապետին պատասխանել պապի գրությամ՝ ավելացնելով, որ «յանձն առնեմք իմաստութեան մեծի հայրապետիդ առնել զոր արծանն է»:

Նման հրավեր-տեսրակներ ուղարկվել են նաև Արևմտյան Հայաստանի «Վիճակաւոր եպիսկոպուաց Տաճկաստանի» առանձինն առանձինն: Պապի հրավեր-տեսրից չի ուղարկվել ոչ Մայր Աթոռ և ոչ էլ Ռուսաստանի հայոց թեմական առաջնորդներին:

Գևորգ Դ-ը պատասխանում է Պողոս պատրիարքին 1870 թվականի փետրվար 11 և համար 11 թվակիր նամակով:

Կաթողիկոսը գրում է, որ հանգամանորեն քննության է առել «Հոռվմայ սրբազն հայուակետի» հրավեր-տեսրակը և ինքն էլ լինելով «մի ի հովուապետաց քրիստոնեական հօսին, թէն ցանկամք միութեան կաթողիկէ եկեղեցոյ և փափաքիմք հանապազ տեսանել զիրամին հակառակութեան բարձեալ ի միջոյ», բայց ցավ ի սիրո պապի նամակից և այնուել առաջ քաշած գերագահության հիվանդագին ձգումից երևում է, որ եկեղեցների բաղադայի միությունը «անյուսալի ինն երկի այժմէն իսկ ի ժողովոյ անտի»:

Հայոց Հայրապետը նշում է, որ Հոռոմ

պապը միության կոչ անելոց առաջ, պեսք էր պատմության լուսի տակ և դավանաբանական հարցերի ուսումնասիրությամբ «կանխա խե ամուս լիներ այն թէ՝ ուստի՝ սկիզբն է առ պատակտութեամբ և սիրով ի միութին Գլուխ Քրիստոսի օդեալ անդամք որոշեցան ի միմեաց» և առաջ եկալ այդպիսով քրիստոնեական մեկ ու ընդհանրական եկեղեցու ծոցում «ցաւալին այն բազմադարեան գժութին»:

Այսուհետև Հայոց Հայրապետը քրիստոնեական ընդհանուր եկեղեցու պատմության և դավանաբանական հարցերի ուսումնասիրության լուսի ներքո, եկեղեցիների միության բաժանումը, պատակտությ արդյունք է համարում Հռոմի Աթոռի այն աշխատանքներին և փառափությանց, որոնց նպատակն էր «նախապատի և գերագահ» ցուց տա Հռոմի Աթոռը, «քան զայլ Աթոռու Արեւելաց»:

Եկեղեցիների միությունը վերականգնելու առաջին պայմանն է համարում Հայոց Հայրապետությունը, «ի բառնալ զնախականիքն գրծութեան ի միջոյ», այսինքն հրաժարվել «նախապատի և գերագահ Աթոռ» լինելու հիմնադրամի փառափությունից: Երկրորդ, բանակցությանց սեղանի շուրջ նատել արեւելական եկեղեցիների հետ «Բարասպր ընդհանարի», (Ընորհապի): Երրորդ, վերադառնալ «նախանի հարցն սրբոց» հին Հայրապետութեարի սկզբունքներին և եկեղեցական կանոններին և ավանդություններին, այն է «քառ օրինի խորհրդակցել բնի Արեւելեան եկեղեցու Հովուապետությունի հրաքանչիր ազգաց, յայտնել կանոնական յօդուածովք գրուն նպատակ հիր և զեկու խնդրոց քննելեաց ի ժողովի անդք: Չորրորդ, արևելյան եկեղեցիների «Բարասպր թիւնն» առնելոց հետո միայն «Բամակութեամբ որոշել գտեղի և զժամանակ ժողովով»:

Գնորդ Դ պատուի կերպով պատասխանում է պապի նամակ-հրապերին, կանոնական, պատմական և դավանաբանական տեսանկյուններից և եղուակացնում է, որ Պիոս Թ պապի նամակում այդ կանոնական կետերը չեն հարգված «Բակառակ իմաստից ողջամիտ փարտապետութեան», որով Հռոմի Հայրապետը «ի կարծիս տայ ձևուի զաման իր ցուցանել գերագույն իշխող և գումա քրիստուութեան, ոչ ճանաշելով զՀովուապետու Արեւելեան եկեղեցու Բամապատիս ինքեան աստիճանօք և իրաւաութեամբ և առաքելական յաջորդութեամբ պատուապս, զոր Հոգին սուրբ Բարասպր իշխանութեամբ և շնորհօք գարդարեաց»:

Հայաստանյաց առաքելական եկեղեցին, եղուակացնում է Հայոց Հայրապետը, հավա-

տարիմ իր նախնաց սուրբ դավանության և կանոնական հրավուտիքի, ինքնուրությունյան և անկախության, որպես արևելյան հնագույն եկեղեցիներից մենք, չի ընդունում նաև պապի «անսխալականություն» նորամուտ վարդապետությունը, որովնեան ըստ մեր հավատքին և դավանության «Գրիս եկեղեցու զՓըռկիշն մեր միայն զՔրիստոս ճանաշենք», իսկ Հռոմի Աթոռը «Գրութիւն կարծեցեալ միապետական գերիշխանութեամբ ինքնին իսկ ևս զևս հեռանայ ի միութենել կաթողիկէ եկեղեցույ»:

Գնորդ Դ-ը շեշտելով նայ եկեղեցու պատմականությունը «ի ձեռն սրբոց Առաքելոց Թաղէոսի և Բարդուղիմէոսի» հում է, որ նայ եկեղեցին «ցայսօր կայ անդրդեկի ի դրանց դժոխց ինքնուրույն իրաւաութեամբ», և զգուշացնում է նայ ժողովրդին օրինականությունից զորկ գտնելով պապի առաջարկը, «չտալ տեղի շփոթից և տարածայնութեանց» («Արարատ», 1869, համար 10, էջ 153—155):

«Արարատ»-ի 1869 թվականի ապրիլ համարում (էջ 175) տպված է նաև «պատմէն հրամագրի Պիոս Թ պապի առ ամենայն եպիսկոպոսուն արևելածէն եկեղեցեաց որք առաքեապետական աթոռոյն հետ հաղորդակցութին չունին»:

Պապի հրավեր-նամակին պատասխանում են նաև Արևելյան Հայաստանի թեմակալ առաջնորդները նույն ոգով ու բովանդակությամբ, նույն վճռականությամբ, շեշտելով միաժամանակ, որ հրավեր-նամակը պետք է ուղղված լիներ Ամենայն Հայոց Հայրապետին, «որու իրաւաութեան ներքո միայն կատնամինք ի հոգևոր»: («Արարատ», 1869, էջ 175):

«Արարատ»-ի 1889 թվականի փետրվար համարում (էջ 65—85) տպված է նաև Մակար Ա կաթողիկոսի 1888 դեկտեմբեր 8 թվակիր և 471 համար «յօդութ ընդհանրական... առ համօրէն դաս եկեղեցականաց և ժողովրդականաց հալոց», այդ թվուն Սի և Աղթամարի կաթողիկոսներին, Երուապետի և Կ Պոլսի պատրիարքներին, բոյոր թեմակալ առաջնորդներին, ուղուած կոնդակը, կան ԺԳ պապի հունի 25 թվակիր գոռութան առթիվ, որով Հայաստանյաց եկեղեցին հուպիրում է մի ամելոր, աճամ ևս «ի հենազանդութիւն Հովուապ գահին», ինչպես իբրև թե «ի հեռումն եղել է» (էջ 86):

Մակար Ա կաթողիկոսի կոնդակը հոյակապ, բովանդակալից մի գրություն է գրաքար լեզվով նայ եկեղեցու պատմության և նայ դավանության մասին, և միաժամանակ մի կոտ, քահանակի, պատասխան, պատմական, եկեղեցագիտական, դավանաբանական

տնաակետից, որով Հայոց Հայրապետը նախ զգուշացնում է իր «Հնորհածին» ժողովրդին և նայ եկեղեցու հոգևորականությանը, որ պես ոչ ոք զձեզ կողոպտիցէ ճարտարութեամբ և սեռու խարէութեամբ», և ապա հորդորում է պինդ պահել նայ եկեղեցու ավանությունները, ուղղափառ դավանությունը, ինքնուրուցնությունն ու անկախությունը, որովհետև «ոչ է հաւատն մեր հնացեալ զի նորոգեացի և ոչ է թերի՝ զի լուսից» (Սիմեոն Երևանցի):

Պապի գիրը ուղղված էր նայ եկեղեցու դարավոր գոյության, ինքնուրուցնության, անկախ և վիրապետության և ազգային-հայրենասիրական առաքելության դեմ:

Սակայ Ս.-ի պատասխանը բովանդակաց է, սպառի ու վճռական որպես պաշտոնական, նայ եկեղեցու և վիրապետության գերազույն պետի պատասխանը, նախնյաց ոգով և նախաճաշմանդրությամբ:

Սակայ կաթողիկոսը իր կոնդակում խստում է նախ նայ եկեղեցու դավանության մասին, շեշտերով, որ նա միշտ անփոփոխ է մնացել իր դավանական դիրքի վրա «ի դարս դարս յարածիք ժամանակացն անցելոց» (էջ 70), և որի դավանությունը խարսխության է Աստվածաշնչի, ավանդության և սուածին երեք տիեզերական ժողովների որոշումներից և վեհուներից բխած դավանության և եկեղեցական վարդապետության վրա, հավատարմությամբ պահպանել է արևելյան նախնական քրիստոնեության ժառանգությունը, ինչ ձևով որ այն կազմվել է առաքյալներին անմիջապես հաջորդող դարս:

Սուաց արդարացոցից պատճանի չեր, որ Հայաստանաց առաքեական եկեղեցին դավանաբանական հարցերում և վեճերում իրավունք ունեցավ Եփևսոսի ժողովից այս կողմ շահցենել, որովհետև այդ ժողովով վերջացավ բոլոր գլխավոր եկեղեցիների համարձիք, համամտության շրջանը: Հայ նայ եկեղեցու՝ ճշմարիտ դավանության հիմնակետը կազմող ընդհանուր եկեղեցու համաձայնությունը և դավանական միությունը խանգարվեց Եփևսոսի ժողովից հետո և այնուհետև դավանական կերպարանքի ներք հոգված խնդիրների խևական հիմքը կազմում էին պատրիարքական Ալյոնների առաջնության հարցերը, որոնց հետևանքով էլ «եպիսկոպոսացն Հոռվմայ է տեսանել ապաքն չարիս... անդ բոցացեալ խարոյկը հայտաքննութեան, անդ կենդանաման կտտանք և սպանութիւնք անձանց՝ իբրև ի հերձուած եկեղեց... անդ վաճառումն շնորհաց և սրբութեանց... և առհասարակ բարձումն ամենայն գործ և խաղաղութեան ի շահ երկրար տիրապետութեան գահուն Հոռվմայ» (74):

Կոնդակում պատմական ստույգ տվյալներով հերքվել է նաև «Դաշանց թղթի» պատմական կեղծիքը, «իբրու թէ սուրբ եկեղեցին Հայց լեալ իցէ երբեք ընդ իշխանութեամբ եկեղեցոյն Հոռվմայ» (էջ 75):

Հայոց Հայրապետները անցյալում, նշում է Մակար կաթողիկոսը, մանավանդ կիլիկյան շրջանում, կաթողիկ եկեղեցու հետ հարաբերության մեջ են մտել սուկ բաղաքական



S. Սիարուպ արքուն. Սմբադյան

ակնկալությունների հաշվոյն և «վասն պատասխութեան հայրենեաց», և կոսիս «ողորութիւն» է կարծել, թէ եղել են «դաշինք և ովտապրութիւնը յանոն հնազանդութեան Ալյոնոյն Հայաստանեաց», ընդ իշխանութեամբ եայսկոպոսին Հոռվմայ» (75): Իսկ մեր բաղաքական անկախության բարձություն հետո, նայ եկեղեցին: «քարձի ի արտիս պանձայր ինքնուրուցնութիւնն ըստ հարաւատ շաղաց՝ աւանդելոց մեզ բառելոց սրբոց և ի մերց լուսաւորչաց» (75):

Սակայ կաթողիկոս կիլիկյան շրջանում նայ և կաթողիկ եկեղեցական հարաբերու-

թյունները գնահատում է ի վեսա հայ եկեղեցու: Այդ փորձերը Հռոմի մեջքով եղան պատճառ «ի Կիլիկիա և ի Հայու ծանու և անբերելի նեղութեան ազգին մերոյ... որ ոչ հայեր ի պայծառութիւն ինչ եկեղեցոյն Քրիստով և յաճեցումն կենացն համարոցն՝ այլ ընդ հակառակն, ի վտարումն և ի պառակուումն հօտին Քրիստոսի և ի մեղումն անմեղ արեանց»: Ապա եզրակացնում է Հայոց Հայրապետը, որ այս բոլորով Հռոմի Աթոռոր «ոչ զլոյս և ոչ զկենդանի համատս որոնէ, այլ գերիշխան բռնակալութիւն իր ի վերայ եկեղեցոյն Քրիստոսի», մի հանգամանք, որի ժեւ չի կարող հաշովել հայ եկեղեցին, իր պատմության կենացփորձով և իր դավանության պատճառով:

Մակար Ա-ը իր բողոքի, ընդվզումի արդար և ձաղկող ձայնն է բարձրացնում, որ մեր օրերին էլ Հռոմը և նրա արքանյակները անխիլճ կերպով զրապարտում են հայ եկեղեցուն, և «քերանով քահանայապետին իրեանց զիայս մոլորեալս քարոզեն և ստութիւն լոդեն անվայելս» և կոչ են անում, որ հայ եկեղեցին վերադառնա Վատիկանի փարախը, որպեսզի վերահաստատվի «միութիւն ընդ Հռովմայ, լորմ հեռացեալ են», իբր «նախնիք իրեանց»: Հայերի դարձ դեպի կաթողիկություն գնահատվում է մեծ խոսումներով, հայծերով. «մտանել նարոց ի ծոց եկեղեց: ոյն Հռովմայ եղիցի, պատճու ոչ միայն յահիտենական փրկութեան հոգոց» հայության, «այլ բարօրութեան կենաց և առ հասարակ ամենայն ցանկալի բարեաց սշաբթի» (81):

Մակար կաթողիկոսը վճռականապես ներքում է, որ երբեք հայ եկեղեցին չի եղել իր ողջ պատմության ընթացքում «ընդ իշխանութեամբ եկեղեցոյն Հռովմայ, ո՞չ ի դարս նախնական և ոչ զկենդանոցիկ ցեղերկայս ինկ» (82):

Մակարը վերջում կոչ է անում իր ժողովրդին «միացեալքը միով Տերամք Յիսուսի Քրիստոսի, ի հաստատութիւն համատոյ նու հովանեա Առաքելական Աթոռուու սրբոյ կաթողիկէ Հշմիածնի» պիտի պամել հայ եկեղեցու դավանությունը, ազգային նկարուսիրն ու ոգին, ինչպես մեզ ավանդի են մեր լուսաբնակ նախնիք «ի խրատ և ի զգուշութիւն ապագայիցն»: (էջ 83):

1895 թվականից սկսած «Արարատ»-ում հրատարակվում են հայ դավանաբանական մտքի ուսումնասիրության նվիրված գիտական, լորջ կշիռ ունեցող հոդվածներ, երբ արդեն Մայր Աթոռում պատրաստվել էր հմուտ աստվածաբնների եղիտասարդ և խոստմալից մի սերունդ, օժնված գերմանական կրությամբ, և որը ասպարեզ էր իշխում հայ ժողովրդի կրոնական, մշակութա-

յին, հայրենասիրական զարթոնքին նվիրվելու և ծառայելու խոստումով և կոչումով: Այս նոր սերունդը կարողացավ իր հմտությամբ, համալսարանական պատրաստությամբ և կայուն իր գիտելիքներով, հայ եկեղեցու դավանության վերաբերյալ իր գիտական ուսումնասիրությունների, հետազոտությունների մեջ մոցել աստվածաբանական սիրությամբ: Այդ աստվածաբան սերնդի գոլիսն էր կանգնած Կարապետ վարդապետ (հետագայում՝ եպիսկոպոս): Տեր-Մկրտչանը, որը սկսավ «կրոնին, բարոյականությանը նայել կյանքի տեսակետից: Առ կրոնը ժողովրդի հառաջադիմության անհրաժեշտ ուժ է համարում և այդ ուժը քննության, վերլուծության ենթակա» (Գյուտ արեղա, «Կարապետ Եպիսկոպոսը», էջ 19):

Կարապետ վոր. Տեր-Մկրտչյանի խմբագրության տարիներին, 1894 դեկտեմբեր—1899, «Արարատ»-ը թևակրիտում է իր պատմության ամենաբեղուն մեկ շրջանը, հայագիտական և մանավանդ դավանաբանական հարցերի ուսումնասիրության և հրատարակության տեսակետից: Այդ տարիներին վոխիլում է ամսագրի գաղափարական բովանդակությունն ու ընդհանուր դիմուգինը, մանավանդ կրոնա-բարոյական հարցերի ուսումնասիրության բնագավառում: Մայր Աթոռում հասած եկեղեցական նոր սերնդը, իր վրա կրում էր շունչն ու ազդեցությունը Օրմանյան սրբազնի աստվածաբանական կրոնական դասախոսությունների: «Ամեն երեկո Օրմանյան սրբազնի շուրջ բոլորած ծրագրեր էինք կազմում ապագայի մասին, թե ինչպես պետք է շարունակենք եկեղեցական ու հայագիտական հրահանգություններ և ուսումնասիրություններ, ինչպես պետք է մի նոր միաբանության սկիզբը դնենինք» (Երվանդ Տեր-Մինապան, «Կարապետ Եպիսկոպոս», կյանքն ու գործունեությունը, էջ 8): Այս նոր սերնդը «կրոնի եռությունը տեսնում էր մանավանդ նրա բարոյական ուժին ու ներգործության մեջ և դեմ էր այն տեսակետին, ըստ որի և Գործի ամեն մի տեղեկություն և խոր անսխառական, անըննադատելի էր համարվում» (Գյուտ արեղա, «Կարապետ Եպս.», էջ 24 և 28):

Կարապետ Վարդապետի խմբագրության տարիներին և մանավանդ 1895 թվականից սկսած «Արարատ»-ը ունենում էր նաև մասնավոր «Յաւելուած» նոր բաժինը, որը հայ եկեղեցու դավանության վերաբերյալ հրատարակում են մի շարք հնագույն բնագրեր և ուսումնասիրություններ:

Կարապետ Վարդապետը «շարունակ աշխատել է և պաշտպանել հայոց եկեղեցին և ս. Հշմիածնը, արտաքին և ներքին հարձակումների դեմ: Ո՞վ չի միշտում այն օրերը, երբ

Միմիթարյան ամբողջ բանակը հրապարակ իշավ հայոց եկեղեցու հերետիկոսությունն ապացուցանելու և հայոց եկեղեցու բոլոր համակարգու հայրապետներին գալտնի կամ հայտնի կաթողիկ հոչակելու: Միայն Կարաստան վարդապահն էր որ ամբողջ հայ հոգեվորականության միջից արի հնամ կանգնեց Միմիթարյան միաբանության դեմ և յուր զորել գրչով ու հմտությամբ կամական փաստերով սանձ դրեց հակառակորդների հավակնություն և հանդուգն լեզուներին և միամիտ փորձերին» (Երվանդ Տեր-Մինասյան, «Կարապետներ. Տեր-Սկրտչյան, էջ 33—34):

Կարապետն վարդապետը «Արարատ»-ի 1898 թվականի մեջ, էջ 199—204 և 344—349, «Աստվածաբաններ պետք են» հոդվածում, ուսումնասիրության հյութ էր դարձնության առաջնային՝ որպես կոնկրետ մի գիտություն՝ Աստծու և կրոնքի մասին, և շեշտում, որ աստվածաբանությունը «վերացական տեսությունների մի ժողովածու չէ, այլ «պատմական հետազոտությունների վրա հաստատված քրիստոնեական մի աշխարհական տեսությունների մի ժողովածու չէ, որով պետք է առաջնորդվի յուրաքանչյուր ոք՝ ով կամ կամենում է քրիստոնյաներ դաստիարակել» (201): Նա միաժամանակ գտնում է, որ հոգեվոր ծառայության կոչված մարդը՝ քահանա, վարդապետ, եպիսկոպոս, ուսուցիչ կամ քարոզիչ, Աստվածաշնչից պետք է քաղի «իրեն ոգևորող հավատի հիմունքները և այդ հավատից բխող բարոյական սկզբունքները»: Այդ նպատակին հասնելու համար՝ արապետ Վարդապետը անհրաժեշտ էր գտնում, որ հոգեվորականը ուսումնասիրի սուրբ Գիրքը և պատմականորեն հետևողություն այն: Սա արդեն աստվածաբանության հարց է: Իզոր չէր, որ անցյալում մեր մեծ պատվածաբանները, մանավաճան Սյունյաց դպրոցում, կոչվում էին «հմտությ և մեկնիչք և Գրոց»: Աստվածաբանության երկրորդ բրծն է ուսումնասիրել յուրաքանչյուր եկեղեցու պատմությունը, դավանությունը, բարյական ըմբռնումները և եղած տարրերությունները մյուս եկեղեցիներից:

Արդարն, անհրաժեշտ էր հոգեվորականի համար աստվածաբանության գիտությունն ու ուսումն, որպեսզի նա իմանա, «թե ինչ դավանություն ունի իր եկեղեցին, ինչի համար նա այդ եկեղեցու հայրերը դարեր շաշունակ հալածանք ու տառապահը կրել, արյուն ու արտասուր թափել այս կամ այն դավանության կետը պաշտպանելիս» (202): «Այլ է,—եզրակացնում էր աստվածաբանության հմտության լիցենցիատ Կարապետ վարդապետը, —կրոնական վեճը, այլ է կրոնական խնդրի պատմագիտական հետազոտությունը» (202):

Ինչպես հայտնի է, Վատիկանի ժողովից հետո հայ կաթողիկ մամուլը, «ի վերուստ» հրահանգված, ինչպես ցոյց են տալիս Գեղվորդ Դ և Մամար Ա կաթողիկոսների կոնդակները, անիրավ հարձակման է անցնում հայ եկեղեցու և նրա դավանության դեմ: «Արարատ»-ը Կարապետն վարդապետի գլխա-



Տ. Կարապետն եպս. Տեր-Մկրտչյան

վորությամբ, իր վրա է վերցնում հայ եկեղեցու դարավոր ողջափառությունը և ազգային նկարագիրը պաշտպանելու շնորհակալ գործը, մեր նախնյաց ոգով և նախանձախնդրությամբ, հայ դավանաբանական հին Հշերի ուսումնասիրությամբ և հրատարակությամբ:

Այս մտածումների լուսի տակ «Արարատ»-ի 1898 թվականի ապրիլի համարում (էջ 155) Կարապետ վարդապետը ստորագրել է մի ընդարձակ ու հետաքրքիր ուսումնասիրություն «Բնության խնդրի նկատմամբ մեր և Միմիթարյան հայրերի ունեցած հայոցք» թեմայի շուրջ: Հոդվածը շարունակվել է նաև ամսագրի օգոստոս համարում, էջ 358, «Կրկին բնության խնդրիը և Միմիթարյան հայրերը» թեմայով:

Հոդվածը հայ եկեղեցու դավանության պաշտպանության նվիրված մի կուռ և հոյակապ ուսումնամիջությունն է, գիտականութեան և մատենագրական հարուստ փաստերով հիմնավորված, երկու բնությանց միավորության վարդապետության մասին, հայ եկեղեցու դիրքի շորք:

«Արարատ»-ի 1895 թվականի նոյեմբերի համարում, էջ 386, Ն. Քարամյանը բնության առնելով օտարենի թշու կարծիքը Քրիստոսի բնությանց վարդապետության վերաբերյալ հայ եկեղեցու դիրքի մասին, ըստ որի իր մեր եկեղեցին եկտիքական կամ նեստորական մտքով ընդունել է «միաբնակությունը», գրել էր, որ «մեր սուրբ եկեղեցու մասին այս տեսակ մոռության տարածելուն շատ են նապատել միարարենը (սուր) և դրանց արժանի ժառանգ Միհրաննեները, որոնք եկորպացվոց համար հեղինակավոր անձինք են հայոց վերաբերյալ խնդիրներում»: Քարամյանի այս ճշշտմասությունը առիթ է տվել Հ. Վ. Հացունուն, որ «Բազմավիճակ»-ի 1896 թվականի մարտ համարում հակաճանելով Քարամյանի դեմ, նրա այդ արդար նկատողությունը համարի «անհրավ հալածանք Միհրարյաններու դեմ» և հարձակում գործի հայ եկեղեցու վրա: Կարապետ վարդապետը քննության առնելով Հ. Վ. Հացունու պատասխանը, գտնում էր, որ «այնտեղ այնպիսի գաղափար է արտահայտվում մեր եկեղեցու դավանության մասին, որ մենք անուշադիր և անպատճախան թողենել չենք կարող» (էջ 156):

Կարապետ վարդապետը բարձր գնահատելով հանդերձ Միհրարյան հայութի կատարած մշակութային, մատենագրական-ազգասիրական գործը, գտնում էր, որ Միհրարյանները կաթողիկ պրոպագանիստի «ամեն առանձնահատկություն ոչնչացնող ճնշման ներքո, մեծապես նապատել են մեր եկեղեցու, մեր ամբողջ պատմության մասին միայն գաղափարներ տարածելու օտար եկեղեցական շրջանակների մեջ: Կարապետ վարդապետը, որպես վերջին փաստը, ճիշտն է Հ. Վ. Հացունու վերաբերմունքը, որը ոչ միայն «արգահատանք է առաջացնում», այլ նաև վրդովմունք, որովհետև, ըստ Հ. Վ. Հացունու, իրը հայ եկեղեցին վերջին շրջանում բաժանվելով ընդհանրական—իման պապական եկեղեցուց, հակառակ է ընթանում «ընդհանրական եկեղեցին վարդապետությանց», մինչ Լուսավորիչներ, Օձեցիներ, Շնորհալիներ ընդունել են դրանք... Եզրակացությունը, ասում է Կարապետ վարդապետը, ըստ Հացունու, պարզ է, մինչև Գրիգոր Տիգա, հայ եկեղեցին, իր հայրապետներով, եղել է քաղկեդոնական, երկար-

նակ, իսկ դրանից հետո է, որ «մորորվել» է, հեռացել է ողողափառությունից և դարձել եկտիքական կամ նեստորական միաբնակ: Կարապետ վարդապետը իր նոգու ամբողջ կորուլով ըմբռատանում է և բողոքում «Արարատ»-ի էջերում «այս անհիմն տեսությունից առաջ եկած մորության դեմ» (էջ 156) և պատմական, եկեղեցական, մատենագրական փաստերով և արդի «եկտոպական և պատմագիտական ստացնակարգ և անկողմնակալ ներկայացուցիչներից» մեջըներում ներով եղակացնում: «Մենք կատեմ և կը կրկնենք որ մի զոտ պատմական միայն է միայն, թեն շատ տարածված միայն—կարծել՝ թե «մի բնություն» դպավանելը, նոյն է, ինչ որ միաբնակ լինել: Եթե Կյուրել Սուրբանդրացին Քաղկեդոնի ծողովով իրեն ողողափառ ճանաչված լինելով՝ նոյն վարդապետությունն ունի, ինչ որ այդ ծողովը, և թե որեւն մեր եկեղեցին «մի բնութիւն» դպավանելով նոյն իմաստով, ինչ որ Կյուրել, կամ միաբնակ այսի է համարվի ըստ բարին, կամ երկարենակ ըստ գաղափարի»:

Կարապետ վարդապետը մեջըներում է կատարում նաև նոյն տեղում գերման մեծ գիտական Ա. Հառնակի մի գրվածքից, որ հայոց եկեղեցու մասին ապած է, թե նա «միաբնակ չէ, այլ կիրեղեան» (A. Harnack—Lehrbuch der Dogmengeschichte, B 11, SS 377 առ. 3—Freiug 1B 1894):

Այնուհետև Կարապետ վարդապետը քննում է այն հարցը, թե հայ եկեղեցին ստածին անգամ «իր վճիռը կայացրեց» Քաղկեդոնի դեմ և դարի 80-ական թվականներուց, Մանդակումու օրով, և մերժեց երկու բնությանց վարդապետություններ:

Հայ եկեղեցին «առաջին անգամից ներ այս վեճեղի վերա նայել է իրեն այլուրդ բանաքաղությունների և նախանձ ընդհանրական եկեղեցու ողջամիտ որ լրացման կարու վարդապետության մեջ մտցրած ներմուծությունների վրա: ուստի և նա հրածարվեցավ նոցա կամայական բացարությունները դեռ դավանություններու յուր համար և որոշեց պահպանել նոյն դրությունը, ինչ որ պարզաբնել նոյն դրությունը, ինչ որ պարզաբնել և հայոց ընդունած վերջին տիեզերական ծողովով միջոցով իշխող էր դարձրել կրողվին Կյուրել Սուրբանդրացին»:

Հայ կյուրեղամ բանաձնին, որին հետեւ վում է հայ եկեղեցին, «մարդեղությունից հետո Քրիստոսի մեջ ոչ մի բաժանում նելի չի կարելի, թե՝ քրիստոնեական հավատը պահանջում է աստվածայինը և մարդկայինը այնպես սերտ կերպով միացած ընդունել, որ ոչ մի մարդկային կիրք կամ գործողությունն առանց աստվածայինի մասնակցության տեղի ունեցած չի հիմն՝ և ընդհանրակառակն» (1896, էջ 158):

Նույն համարի «Յակեռած»-ում հրատապակմէ է նաև Հովհան Օձեցու «Խոստվանութիւն անշարժ յուսոյ մարմնացեղոյ Բանին Քրիստոսի և ընդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» ճառը (էջ 192), որ «շատ գեղեցիկ կերպով բացարկած է քննությանց խնդիրը, ինչ ոգիով մեր երանիկ նախնիք ըմբունել են»: Օձեցին և աշխատել է «Բին Խորր»՝ քայլեղունականությունը, վերացնելու համար: Կարապետ վարդապետ Օձեցու «Ծառ ընդէմ երևորականաց» և «ընդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս» ճառերը գնահատում է որպես «կրկին հուշարձաններ կանգնեցրած մեր եկեղեցու ուղղամիտ վարդապետության համար» (162):

Կարապետ վարդապետը դավանաբանական այս հարցերին մոտենում է ոչ զուտ աստվածաբանական մոտահոգություններով միայն:

Նա անհրաժեշտ և կարևոր է գտնելու հայ եկեղեցու հավատող դավանության, բողավորության, դավանաբանական դիրքի ու մենափառությունները, մեր օրերում ազգային-եկեղեցական մոտահոգություններով ևս. «Ժամանակ է այս հասկանալ, —ընդգծումը իրենն է, —ժամանակ է հասկանալ, թու որտեղ են մեր գոյության արմատները և որտեղից է մեզ մահացու փոսեգ սպառնում», հասկանալ որ կրոնական խնդիրներ պարզելը, կրոնական թշնամություն սերմանել չի հշանակում, այլ ճշմարտության բացահայտումը և որոնումը՝ հայ ժողովրդի և հայ եկեղեցու գոյության արմատների:

Կարապետ վարդապետի սույն գրվածքին պատասխանել է «Բազմավիճակ»-ում բ.մ. Շիրակացի Հ. Վ. Հացունու ոգով և մեթոդով, որը «տրամաբանության և բարդագիտության տարրեր կանոններով է առաջնորդվում» և «որի գրիշը ոչ մի տեղ կանգ չի առնում, առանց գուցե զգալու յուր արածը» որ «ամենածանր անձնական վիրապորակներ է հասցնում» (335), առանց ըստ Եղիշեան և հանգամանորեն, պատմական փատերով պատասխանել կարողանալու, ամբատանելով ձիր կերպով «Արարատ»-ը որ իր «տարիներ առաջ իսկ իրեն կետ նպատակի դրած էր արդեն հարձակողական եւրպով կրոնական խնդիրներ հարուցել, հակամիթթարյան հոսանք մը առաջ բերելու համար»:

Կարապետ վարդապետը այս անգամ ևս մատենագրական, պատմական անհերքելի փաստերի գիտական հիմնավորումուն, պատասխանում է Շիրակացուն «որը զրոխոսությամբ է զրաղվում» քանի լուրջ գիտական ուսումնասիրություններով, որ «Միմիթթարյանց վերջին ժամանակի գործունեությունը կլիկայէ որ, Վենետիկի միարանությունը շատ

եւ է մնացել ժամանակից և դժբախտաբար հետզիեւե կորցնում է իր նախկին մահականության մեր գրականության համար... նա գրեթե չի ենթարկվում ժամանակակից գիտության, մանավանդ հսկայական քայլերով առաջ գնացող պատմագիտության աղեցությանը և եղծում է հայոց պատմությունը և հայ եկեղեցու դավանությունը և ժամանագրությունը. կաթողիկությունը ընդունակ է դարձնում մարդոց սլք սպիտակ տեսնելու»:



Գալուստ Տեր-Մկրտչյան (Միարան)

Կարապետ վարդապետը նշում է, որ դավանաբանական, պատմական, մատենագրական հարցերի շորջ կարելի է միշտ վիճել, օրինականության և ազևնության պայմաններում, անկողմնակացրեն, «մենք, ասում ենք, վիճելիս մարդու բարդական արժանավորությունները և մտավոր ընդունակությունները նորա դավանության հետ չենք կապում», ինչպես անում է Շիրակացին, որը առանց հիմքի հայ եկեղեցու մեծ հայրապետներին և վարդապետներին, Լուսավորչից մինչև Գրիգոր Դ Տղա (1198 թ.), որոնք մեծ անոն են ունեցել և վատակ, դավանաբանական հշանավոր գրվածքներ են թողել, «ուզեն չուզեն պետք է անպայման քաղկեդոնական, կաթողիկ եղած լինեն, իսկ նորա, որոնց հակաբաղկեղունական լինելը շրջու-

նել անկարելի է, տգես են և անհասկացող»:

Շիրակացու մոտ քաղկեդոնական են դրսք թերթի այսպես նաև, բացի Ե դարի մարմատենագիրներից, Վրթանես Քերթող, որը իր «Ընդդեմ պատկերամարտից» ճառում, թեկադրում էր «ամեննին չհաղորդուել ընդ Հռոմու հնագանելեալս ընդ քաղկեդոնական ժողովովն, մի՛ գիրս, մի՛ պատկերս և մի՛ ճշշխարս ի նոցանէ ընդունել», Մաթուսադա՝ որի ընդդեմ Քաղկեդոնի գոած ճառը կամ դաշտական թուղթը, ոչ մի կասկած չի թողնում, որ նա հակաքաղկեդոնական է, Ան. Շիրակացի, որ իր «Ե յայտնութիւն Տեառն» ճառում պաշտպանում է հայ եկեղեցու դարավոր և պատմական կարգը ընդդեմ հովաների և կաթողիկների հովանքար Յ-ին կատարելու «ծնունդն և մկրտութիւնն», հետևելով «սրբոց առաքելոցն և երանելեաց հարցն ի Նիկիա և մերոց վարդապետացն». Ստեփանոս Սյունեցին, որ հալածում էր քաղկեդոնականներին, և նրա ողջ մատենագրությունը պաշտպանություն է հայ եկեղեցու դաշտական, և ուղղված ընդդեմ Քաղկեդոնի և երկարանակության. Օձնեցի, որ իր «Ընդդեմ Երևութականաց» ճառում գրում է, «Յերկուց բնութեանց մի բնութիւն բանին մարմնացելոյ խոստվանի ամենայն աստուածաւոր հոգի», և կամ «զուգամասնեալ զերկուսն ի մի գոյացոյց, ևս միաւորութեանն ի բաց բարձելոյ յերկուս հատմանն». «Երկնչիս յերկուս ասել բնութեանց, երկիդ մեծ գոյ, զի թէ և ասեմք մի բնութիւն բանին մարմնացելոյ, ոչ այդպէս խելայել մտածութեամբ, որպէս թէ միունի ի միւնէն բարձեալ»: Այսինքն՝ աստվածային բնությունը չի իշխում մարդկային բնության վրա, ոչ էլ մարդկայինը ենթարկվում աստվածային բնության, այլ «Յերկուց մի» մի բնություն անհատն, անշփոյ միավորությամբ:

Կարապետ վարդապետը նշում է, որ «մեր վեճերը Միհիթարյանների հետ «Բիրավի ապարդուն է, որովհետև մենք ձգում ենք խնդիրը պատմագիտական հիմունքների վրա դնել, իսկ նոքա նայդու են նորա վերադարձական հայագրով»:

Այնուամենայնիվ, Կարապետ վարդապետը ջախչախում է նաև իր հակառակորդին ո՛չ միայն պատմագիտական տեսանկյունից, այլ նաև դաշտական դիրքերից, ապացուելով, որ հայ եկեղեցին երբեք չի ընդունել քաղկեդոնականությունը, Ե դարի 80-ական թվականներից և ցուց է տալիս, թէ ինչ է հսկապես հայ եկեղեցու դաշտականությունը բնությանց հարցում և ինչով է տարբերվում հայ եկեղեցու դաշտանությունը քաղկեդոնականությունից և աղանդավոր միաբնակությունից:

Սյունեցու նա քննության է առնում «Յերկուց բնութեանց մի բնութիւն» կամ «մի անձն յերկուց բնութիւն» բացատրությունը և շեշտում, որ դրանք նույն իմաստ չունին, և նայ եկեղեցու հայրապետներն ու վարդապետները են յերկուց բնութեանց մի բնութիւն» և ոչ երբեք «մի անձն յերկու բնութիւն», ինչպես Քաղկեդոնի ժողովն է դավանում (էջ 361): Կարապետ վարդապետը նույն տեղում մեջքերում է կատարել նաև «Migne-ի և Mansi ահագին հասորներից», որը ասվել է նույն հարցից վերաբերյալ. «խոստվանիմք... ոչ յերկու բնութիւն զի՞ն Որդին՝ մին երկրագեկի և միան ոչ երկրագեկի այլ մի բնութիւն բամին Աստոծը մարմնացեալ» («Արարատ», 1896, էջ 361):

Կարապետ վարդապետը «Արարատ»-ի 1896 թվի հունվարի համարում, էջ 3—4, ստորագրել է նաև այլ հոդված «Աստուածայապետութեան տօնի ճիշտ օրը ըստ պատմութեան», որը ապացուցում է, որ «քննադատական» ստուգագ պատմություններով Քրիստոնի ծննդյան և մկրտության հիշատակները հունվարի Յ-ին կատարելու մեջ հրավունքը հայ եկեղեցու կողմն է» և թէ հայ եկեղեցու հայրապետները և վարդապետները այդ հարցից վերաբերյալ «բանակովի մեջ գործ էին դնում իրենց եկեղեցվի հնավանդ ստվորությունը օտարների հետ պաշտպանվելին», և թէ մեր եկեղեցին «հունվարի Յ-ին կատարելով պատմածահայտնության տոնը հետևկում է մինչև Դ դար ընթանուր եկեղեցու մեջ ընդունված պաշտպանվելին» (էջ 3): Հայ եկեղեցին անփոփոխ պահելով հնավանդ «համասնական ստվորությունը», ցույց էր տալիս իր «հարազան և ավանդապահ լինելը և շարունակում է պահպանել այն խորհրդավոր կապը, որ կա Քրիստոնի և ծննդյան և մկրտության մեջ» (էջ 4):

«Արարատ»-ի նույն համարի (1896) «Յաւերաած» բաժնում (էջ 49—52) Կարապետ վարդապետը ի հաստատություն իր տեսության, հրատարակել է եկեղեցու հին հայրերի վկայությունները ի հասատ հունվարի Յ-ին, այն բաղեկով Մայր Աթոռի ձեռագիր «Գիրք թոլոց» դաշտական ժողովածուից, թեսնակ վերնագրով. «Վկայութիւնը վասն ծննդեան Քրիստոսի և մկրտութեան տանել ի միում ատոր ի լունուարի վեցն»: Վկայությունները բերված են «ի Կղեմայ տուաքեամահման կանոնացն, Մակարայ Երոսաղեմայ հայրապետին, Յովհաննու Երոսաղեմայ հայրապետին, Նեկտառեայ Հովոմայ հայրապետին, Գրիգորի աստուածարանի, սրբուն Բարսի, Հեպողիտալ եպիսկոպոսի, Սեբերիանոսի եպիսկոպոսի հոգևոր կանոնադատությունից»:

թիմ Մելիտոնի եպիսկոպոսի, Կիպրիանոսի եպիսկոպոսի» և այլն: Այնուհետև Վկայություններ հայ վարդապետներից, «Յովհաննի հայոց կաթողիկոսի, Գրիգորի Արծունեական եպիսկոպոսի, Կոմիտասի հայոց կաթողիկոսի, Սուելիանոսի Սիմեոնաց եպիսկոպոսի, Անահիայի հայոց վարդապետի, Ներսէսի (Կայեցու) հայոց կաթողիկոսի» (Ընտրմալի) և այլն:

«Արարատ»-ի 1896 ապրիլ համարի «Յաւելուած»-ում (էջ 192—199) Կարապետ վարդապետը հրատարակել է ձեռագրերի համեմատություններով ու ծանոթագրություններով «Յովհաննու իմաստափրի, հայոց կաթողիկոսի, խոստվանութիւն անշարժ յուսու մարմնացելոյ Բանին Քրիստոսի, և ընդդեմ դաւանողաց զմի Քրիստոս յերկու բնութիւն» ճառը: Մայիս համարի «Յաւելուած»-ում (էջ 252—256) «Թուղթ Յովհաննու Երուսաղեմի եպիսկոպոսի առ Արա աղուանից կաթողիկոս» թուղթը: Հոկտեմբերի համարի «Յաւելուած»-ում (էջ 477—488) «Պատասխանի ի հայոց թղթոյն աղուանից Վրթանիսի Քերթողի»: Նոյեմբերի «Յաւելուած»-ում (էջ 531—536) «Թուղթ Կոմիտասայ հայոց կաթողիկոսի ի Պարս»:

Բազմամուտ բանակեր, մատենագետ Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան) «Արարատ»-ի 1902 թվի փետրվար համարում (էջ 183—200) հրատարակել է ծանոթագրություններով և ձեռագրական համեմատություններով «Պետրոս Սիմեոն եպիսկոպոսի հարցմունք յաղագու մարմնաւորութեան Տեառն զանազանք՝ Վաշագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիմեոնաց եպիսկոպոսի և իմաստափրի», և ապա էջ 200—203, նույնի այսինքն «Երանելոյն Սիմեոնաց եպիսկոպոսի յաղագու հայատոյ» ճառը:

Գալուստ Տեր-Մկրտչյանը «Արարատ»-ի 1902 մարտ-ապրիլ համարում հրատարակել է «Ստելիանոսի իմաստափրի ասացեալ վասն անապակամութեան մարմնոյն որ աճէ և նուազէ ապականացու է. և վասն զի մարմինն Քրիստոսի աճէր և զարգանայր և ապականացու ոչ էր, զի Աստուծոյ մարմին էր՝ վկայութիւնք սրբոց և աստուածազանց, որք անապական խոստվանին յարգանդէ և յախտեան յախտենից»:

Միաբանը իր հոդվածի տղատակի ծանոթության մեջ նշում է, որ Սյունեցու սովոր ճառը «մեզ հասած միակ նշանավոր վավերագիրն է, որ մեծ լույս է սփոռու 8-րդ դարի առաջին կեսին պատմության... և նաև Զ—Ը դարերի կրտնական, դավանարանական մեծ վեճերի և կուսակցությանց մասին Հայաւանում»: Միաբանի սովոր ուսումնասիրությունը լույս է տեսել նաև առանձին գրքով՝ կով Խորիման Հայրիկի հրամանով 1902 թվին Մայր Աթոռի տպարանից:

Այնուհետև Գարեգին վարդապետ Հովսեփյանը «Արարատ»-ի 1906 թվի մարտի համարի «Յաւելուած»-ում հրատարակում է «Դաւթի փիլիտփայի բան հաւատոյ ընդդեմ հերձուածողաց» ուսումնասիրությունը և ընագիրը (էջ 261—269) և «Նորին Դաւթի ի հրաման Անաստատու հայոց կաթողիկոսի» ճառը (էջ 270—273):

«Արարատ»-ում հրատարակված հայ դավանարանական գրականության մաս են կազմում նաև հետևյալ կարևոր աշխատությունները, որոնց մասին առանձին հոդվածներ գովել են ժամանակին ամսագրում, բայց հետագայում լույս են տեսել նաև որպես առանձին և ընդարձակ ուսումնասիրություններ:

Դրամցից են՝ «Ժիմոթէոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրիոյ Հականառութիւն» առ սահմանեալս ի ծողովոյն Քաղկեդոնի, ի լոյս ընծանեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վարդապետի և Երուսանդ վարդապետի արդեամբ տ. Սուքիսայ արքեպիսկոպոսի, ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ, 1908: Այս գրքի և նրա դավանարանական հշանակության մասին խոսվեց վերևուն:

Երկրորդ աշխատությունը, որ կարևոր է հայ եկեղեցու պատմության և դավանության զարգացման համար, Երվանդ Վրդ. Տեր-Մհենապանի «Հայոց եկեղեցու յարաքերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, հայկական և ասորական աղքատների համաձայն» գերմաներեն հրատարակված կարևոր աշխատության ավելի ընդարձակ և ճոխացած հայերեն հրատարակությունն է:

Սույն հրատարակության նպատակն է եղել ցուց տպա պատմական, մատենագրական փաստերով, որ «մեր եկեղեցին ոչ միայն միարենակ է, բառիս սովորական իմաստով, այլ մինչև Հ դարը կողմնակից է եղել հովհանական կամ հստագույն միաբնակության» (Յառաջարան, էջ 7—8):

Երրորդ աշխատությունը 1914 թվականին Մայր Աթոռի տպարանից լոյս տեսած «Կենք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցու յուղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւորս Կոմիտաս կաթողիկոսի համահաւքեալ» աշխատությունն էր, աստվածաբան Կարապետ եպիսկոպոսի հրատարակությամբ, Դարաշամբի ս. Ստելիանու Նախավկայի վանքի ձեռագրի հիման վրա:

Դա բացառիկ արժեք ներկայացնող մի հրատարակություն է՝ ի պաշտպանություն հայ եկեղեցու դավանարանական դիրքի: Այս ժողովածուն կազմվել է Դվինում, Կոմի-

տաս կաթողիկոսի օրով «Եկեղեցական հայրերի դավանական գրքածքներից հարժարագույն կտորները ընտրելով և ի մի հավաքելով, որպեսզի հարկավոր դեպքում իբրև վկայություն բերվին սուրբ հավաքորի պաշտպանության»։ (Ներածություն, էջ XI)։ Այսուհետև նշվում է դավանարանական այդ կարևոր աշխատության ամսվան նշանակությունը։ Ժողովածուն կոչվում է «Կնիք հաստոյ», որովհետև աշնոտեղ բերված սուրբ հայրերի վկայությունները, «դավանական տեսությունները կնիք են դառնում և հաստատում, որ ժողովածուն կազմողների պաշտպանած հայոց եկեղեցու դավանությունը նոյնն է, ինչ որ ընդունել է մի և անբաժան ընդհանուր սուրբ եկեղեցին» (Ներածություն, էջ XI)։

«Արարատ»-ի շուրջ հավաքված Մայր Աթոռի միաբաններ և Գևորգյան ճեմարանի ուսուցիչներ, 1913 թվականին հրատարակում են «Ծողակաթ և Էջմիածնի հայագիտական ժողովածու»՝ գիրք առաջին, Ավելի վաճառք հայ գրի և տպագրության մեծ հորելյանը, 412—1512—1912, ուրիշ շարք կարևոր ժողովածուներ են ստորագրում Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը՝ «Յովհան Մանդակունի և Յովհան Մարտիրոսյանի» (էջ 84), Գարեգին Վարդապետը՝ «Զագաւանից ժողովը» (էջ 22), Հրաչյա Աճառյանը՝ «Տիմոքեռու Կուզ և ս. Գրքի նորաբեր թարգմանութիւնը» (էջ 1), Գալուստ Տեր-Մկրտչյանը՝ «Հայ մատենագրութեան հնագոյն թուականները» (էջ 154), և այլն, որոնք նոյնական մեծ կարևորություն ունեն հայ դավանարանական գրականության պատմության ուսումնասիրության համար։

«Արարատ»-ը զբաղվել է նաև ընդհանուր աստվածարանական հարցերով։ Այսուել պետք է կարևորությամբ նշել ուսու նշանակոր աստվածարան, պրոֆ. Ն. Սագարյանի «Յոյն-արևելքի հին-եկեղեցական աստուածարանական գիտութիւնը իր ծաղկման շրջանում (IV—V դր.)» նրա գիտադր ուղղութիւնները և բնորոշ յատկութիւնները, որոնք լույս են տեսել «Արարատ»-ի 1910 թվականի մի շարք համարներում (589—707), Արտակ Վորդ. Սմբատյանի թարգմանությամբ, հրատարակվել է նաև որպես առանձին բրոյցուր, Մայր Աթոռի տպարանից 1910 (էջ 1—77)։

«Արարատ»-ի 1917 թվականի ապրիլ-մայիս համարում, էջ 355—360, Բուհս-Բուլիս՝ 449—506, սեպտեմբեր-դեկտեմբեր՝ 806—812, 1918՝ 49, լույս է տեսնում նաև ուսու գիտնական Ֆ. Մ. Ռուսելինի 1915 թվականի հրատարակած մի ընդարձակ աշխատություն, որը կոչվում է «Կ. Պոլսի Փուտիս պատրիարքի առաջին պատրիարքությունը», որի Թ գլուխը (էջ 287—262) նվիրված է

նոյն պատրիարքի շանքերին, նայ եկեղեցն հունական եկեղեցու մետ միացնելուն։ Ծառ կարևոր աշխատություն է այս թարգմանական Հուսիկ արքեպ. Չոհրապատիկ կողմից, չափազանց արժեքավոր բացասրություններով, սրբագրություններով և լրացներով։

Հաւարավոր չէ մի հոդվածում համագումարեն ներկայացնել «Արարատ»-ում հիմունական տարիների ընթացքում լույս տեսած ուսումնակիրառությունները, նայ դավանարանական գրականության վերաբերյալ։

Մեր սույն հոդվածը ցանկանում ենք ավարտել Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի նետայալ խորհրդանություններով՝ տպական «Արարատ» ամսագրի 1898 թվականի հոկտեմբերի համարում (էջ 431)։

«Հայոց եկեղեցւո առաջին մասնակցությունը դավանական վեճերի մեջ և բարգել կաթողիկոս» հոդվածում Կարապետ եպիսկոպոսը նշում է.

«Տարբեր բան է նոր վեճեր հարուցածները և տարբեր՝ դարեւ առաջ եղած վեճերն իբրև պատմական երևույթ քննության առնելու։ Հիրավի տիտոր հիշողություններ շատ կան, որոնք իրավունք են տախս մետ խորշեն դավանական վեճերից, բայց ուրախ չենք կարող, որ նորա ահազին դեր են խաղացի մեր եկեղեցւո պատմության մեջ և այդ պատմության բազմաթիվ էջերը մուլու կմնան մետ հանար, եթե նոցա ծագման ու տարածման պարագաները լուրջ ուսումնասիրության առարկ չդարձնենք»։

Մեր եկեղեցու պատմության և դավանական գրականության ուսումնասիրությամբ գրադիպուների համար շատ կարևոր է իմանալ, «Քեզ ե՞րբ և ի՞նչ համանանեցներում... հայ եկեղեցին» ստիպված եղավ բաժանվել Քաղկեդոնից այս կողմ հովն և կաթողիկ եկեղեցիներից և իր «մաքառումն սկսեց լուր իմքնուրույնությունն պահպանելու և ձևակերպելու համար» («Արարատ», նոյն տեղ, էջ 431)։

Ընդհանրական, մի և առաքելական եկեղեցու բաժանումից հետո 14 դարեր են անցել և այնքան վեճերից, պայքարներից հետո էլ կողմերը մնացել են անխախտ իրենց դավանարանական դիրքերի վրա։

Դժբահնարար Քրիստոսի մարմնի վրա բացված վերքը դեռ չի բուժվել, թեև մեր օրերին բուժման փորձեր կատարվում են և բարի նշաններ երևում այլ ուղղությամբ, էլեկտրումենիկ ոգով։

Այսպես, գոհունակությամբ պես է արձանագրել, որ այնքան դարավայր պայքարներից, դավանարանական վեճերից հետո, կատիկան վերջին ժողովը արևելյան եկեղեցների և նրանց դավանարանական դիր-

քի մասին ընդունել է հետևյալ պաշտոնական հայտարարությունը, որը խոստումնալից և խրախուսիչ մի քայլ է դեպի քրիստոնեական եկեղեցիների համագործակցությունը և սկիզբը՝ նաև ապագա եկեղեցական ցանկաի միության:

«Հայտնիալ ճշմարտության ուսումնասիրությունը տարբեր մեթոդներով և տառեր ընթացքով կատարված է Արևելքի և Արևմուտքի մեջ ճանաչնալու և արտահայտելու համար աստվածային իրողությունները: Ուստի զարմանալի չէ, որ հայտնիալ խորհուրդին ինչ ինչ տեսակետները երթևմն ավելի լավ ճշմարված և ավելի հատակորեն բացարձրված ըլլան անոնցմեն մեկուն կամ մյուսին մեջ, այնպես որ կարելի է ըստ թե աստվածաբանական այդ տարբեր բանաձևութեր՝ հաճախ ավելի իրար կրացնեն, փոխադարձար, քան թե իրարու կրնդիման: Ինչ որ կվերաբերի Արևելքի աստվածաբանական հարազարար ավանդություններուն, հարք է ընդունի որ անոնք կարմատանան սքանչելիորեն Աստվածաշնչին մեջ, կմշակվին և կարտահայտվին ծիսական կյանքով, կսնանին Առաքյալներու կենդանի ավանդությամբ, արևելյան հարթերու և հոգեվոր հեղինակներու գրություններով և կրօնդտիմի ճշմարիս ուղղություն մը տալ մարդկան կրանքին, մանավանդ թե՛ քրիստոնեական ճշմարտություններու կատարալ այլեցողություն»: (Վավերաթղթեր Վատի-

կանան Բ տիեզերական ժողովի, Վենետիկ, Ս. Ղազար, 1967, էջ 158):

Հայ եկեղեցին միշտ շեմ պաշտպան է եղել եկեղեցիների միության, դավանելով, որ Քրիստոսի բոլոր եկեղեցիները իրենց հավատացյալներին ցուց են տայիս փրկության անապարհը և շեշտում, որ տրաքանչյուր եկեղեցի պետք է անփոխիս պահի իր դավանությունը, որովհետև նա է, ներկան անցյալի հետ կապող թելը և թե բոլոր եկեղեցիների համար համագործակցության կանոն պետք է լինի «միութին ի կարևոր, ազատութին յերկրայական և սէր յամենայն» սկզբունքը:

«Արարատ» ամսագիրը պատվով կատարեց իր առաքելությունը և հայ դավանական մտքի պատմության և զարգացման կրանեցավ մեծ աղեցություն:

«Արարատ»-ի հրատարակության հարյուրամյակի առթիվ ամենայն հարգանքի և երախտագիտության արժանի են Մայր Աթոռուի լուսամիտ, զարգացած և իրենց հոգևոր կոչման բարձրության վրա գտնվող այն միաբաններն ու Գնորօնան ճեմարանի դասախոսներն ու մտավորականները, որոնք եռանձուվ, նվիրումով և ազգային արժանապատվությամբ հիտուն տարիներ շարունակ իրենց մատենագրական, գիտական ուսումնական այլ գրականության գանձարանը՝ ի փառ հայ մշակույթի:



## ՆԵՐՍԵՍ Շ. ՎՐԴ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

(Տեսուշ Բոգևոր ճեմարանի)

### «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

Ամեն անգամ, երբ փորձում ենք խոսել ճեմարանի մասին, մեր ուշադրությունը սեվեռվում է Հայաստանյաց եկեղեցու դառնալոր պատմության վրա: Նոյնպես ամեն անգամ, որ Հայաստանյաց եկեղեցու մասին մասին փորձում ենք խորհրդածել, զուգահեռ մեր ուշադրության առարկան է դառնում ճեմարանը:

Գևորգյան ճեմարանի մասին խոսելուց առաջ, հարմար է, որ հակիմն կերպով անդուդանանք մեր եկեղեցու պատմական վաղագույն շրջաններում մեր կրթական մարժարանների, դպրեվանքների կատառած շնորհակալ դերի մասին մեր եկեղեցու կյանքում և հայ մշակույթի պատմության մեջ:

Քրիստոնեությունը առաջին դարի 40-ական թվականներին մոտք գործեց Հայաստան՝ ս. Թաղեսու և ս. Բարդուի մետու առայլմերի քարոզությամբ: 301 թվին՝ ս. Գրիգոր Լուսավորիչ հայրապետ իր մահու շահ ծանր չարչարանքներով կարողացավ քրիստոնեությունը պետական կրոն դարձնել Հայաստանուն, Տրդաս: Գ թագավորի օրերին: Լուսավորիչը առանձինն ոժվար թե կարողանար ամբողջ մի ազգ հեթանոսությունից ի լոյս դարձնել: Կորոնքը ուսուցանող պաշտոնյաների կարիք կար. այդ նպատակով է հիմնել դպրոցներ, և ինքը իսկ ստանձնել է այնուել ուսուցանելու եկած նաև արքայազն գերդաստանի որդիներին և քուրմերի զավակների դաստիարակության պարտականությունները, որպեսի ամելի հնարավոր լինելու տարածել նոր կրոնը առանց մեծ դժվարության: Այդ մասին վկայում է Ագաթանգելոս. «Առնոյր այնուեւու զԱրշակունեաց տոհմի որեարն, ի Վարժս Վարդապետութեան պարապեցուցա-

ներ, որոց զառաջին Տրդատ անուն, որ թագաւորն իսկ էր, ամենայն տամբ իրով»<sup>1</sup>:

Ս. Գրիգոր Պարթև հայրապետի սկսած ուսումնական գործը շարունակում է մեծն Ներսես հայրապետ: Նրա մասին ժամանակին պատմիչները գովասանքով են խոսում, ներկայացնելով նրա անձը ոչ միայն որպես մեն կրթական անձնավորություն, այլ նաև որպես մեծ մարդաբերի: Փավստոս Բյուզանդի Ներսես Հայրապետի կրթական գործին անդրադառնալով ասում է. «Կարգէր և ի տեղիս դպրոցս լուսարէն և ասորերէն՝ յամենայն գաւառս հայոց»<sup>2</sup>: Դժբախտարար հայ գրի բացակայության պատճառով հունարեն և ասորերեն լեզուներով և շամրվել քրիստոնեական ուսումը դպրոցներում: Սակայն Ներսես մեծի աշակերտին՝ ինչպես վկայում է Կորյուն, ս. Մեսրոպի մասին, աւելով՝ «Սնեաւ և ուսեալ առ մեծին Ներսիսի» պիտի հաջողվեր աստվածային ներշնչմամբ ստեղծել հայ տառերը:

Գրերի գյուտին հաշորդեց հայ գրականության ուկեղարը, հայեցի կրթության, ազգային եկեղեցու ինքնուրոշման ու հայրապետանոցի հովանու տակ կրթական օջախների ծաղկման: Ս. Մեսրոպյան աշակերտները Վաղարշապատի հայրապետանոցում էին սեված՝ դարձել կրթական, թարգմանական ու լրացրության գործի ուսմիկրաները: Ժամանակի պատմիչը՝ Կորյուն, նկարագրում է ուսումնածարակ երիտասարդների հոսանքը դեպի Վաղարշապատի մարդապետանոցը. «Ի կողմանց և ի գա-

<sup>1</sup> Ագաթանգելոս, Պատմություն, Թիֆլիս, 1884, էջ 587:

<sup>2</sup> Փավստոս Բյուզանդի, Պատմություն, Վենետիկ, 1882, էջ 77:

տառաց Հայրապետական աշխարհի, յորդեալք և դրդեալք հասանելին ի բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ, քանզի յԱրարատեան գաւառին ըմեցին հայոց շնորհք պատուիրանցն Աստուծոյ» (Կորյուն, էջ 107):

Այդ վարդապետարանի հիմնական դասագիրքը եղել է նոր թարգմանված Աստվածաշունչ մատյանը:

1072 թվականին՝ Գրիգոր Վկալաւերի օրով: Ծովը—Դյուակ՝ 1116 թվականին՝ Գրիգոր Գ Պահլավոնու օրով: Հոռմկլա՝ 1149 թվականին՝ դարձյալ Գրիգոր Գ Պահլավոնու օրով: Սիս՝ 1293 թվականին՝ Գրիգոր Է Աւալավորգու օրով: Ս. Էջմիածին՝ 1441 թվականին՝ Գրիգոր Թ Մոնաքելիանի օրով: Հայրապետական Աթոռի և Էջմիածին



Տ. Կոմիտաս. Վաշուապետը և Հակոբ Մանանդյանը ճեմարանի մի խումբ ուսանողների հետ

Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռով անցյալում, մեր երկրում տիրող պահմանների բերումով բազմից տեղափոխվում է քաղաքից-քաղաք, հայկական քաղաքական իշխանության հետ: Հայրապետական Աթոռի հետ տեղափոխվել է նաև վարդապետարանը: Այսպես Էջմիածինց Աթոռը տեղափոխվել է Դվին՝ 484 թվականին՝ Հովհաննես Ս. Մանդակոնու օրով, ապա՝ Զորավանք և Աղյուսամար 927 թվականին՝ Հավիտանես Դրասիանակերտցի կաթողիկոսի օրով: Արգիսն՝ 947 թվական՝ Անանիա Մոլացի կաթողիկոսի օրով: Ան՝ 992 թվականին՝ Սարգսի Սևանից կաթողիկոսի օրով: Թավբիրը՝ 1062 թվականին՝ Խաչիկի և Անեցու օրով: Ծամբեավ՝

փոխադրվելուց հետո առաջին շրջանում այնքան էլ հուսադրիչ չի եղել վարդապետարանի պատմությունը: Այդ ժամանակաշրջանի կրթական գործում կարևորուն իեմքը հանդիսացել է Մովսես կաթողիկոս Տարուացին (1629—1632 թթ.), որի մասին Խաչատոր Կեսարացի վարդապետը իրավամբ ասել է. «Կրկին լուսավորիչ եղել Հայկացեան սեղի, նորոգելով զուրբ Էջմիածինն և զելծեալ կարգ մեր»:

Մովսես կաթողիկոս իր շուրջն է հավաքել գիտնական վարդապետներ, Հովհաննեա վանքի դպրոցը բարեկարգում և դարձնում է կաթողիկոսական վարդապետարան: Այդ մասին Առաքել Դավիթիցի վարդապետեւնեական է գրում. «Այլու հոգելից առար

վարդապետն մեր Մովսէս, կարգեաց դրաբութուն ի մեծափառ սուրբ ուխտն Յօհանավանք, հոգայր, և մանկութքն անզրադ եւ ամենափառ ուսանելին գեկեղեցական ուսումն, և զգիրս Աստուածաշոնչս, և զիմաստափրականս, որք եղան անմենեքեան արք այտանիք և օգտակարք աշխարհի, վարդապետք, եպիսկոպոսք, և երիցունք...»<sup>3</sup>:

Փիլիպոս Աղքակեցի կաթողիկոսի օրերին (1635—1655) Հովհաննավանքի վարդապետարանը փոխարվում է Վերջնականական և Հշմիածնի: Այդ մասին Դավիթիցին վկայում է. «Եւ յստ ամաց ինչ փոխեաց Յօհաննավանից և եքեր ի Սուրբ Էջմիածնի, և անո կարգեաց զդարցն որ և ամենեքեան ուսան և եղեն արք պիտանիք, վարդապետք և եպիսկոպոսք և քահանայք»: Սուրբ Էջմիածնի է հրավիրվում Հարանց Անապատի և Ամրդոյոի վաճիք դարբուների հայտնի ուսուցիչ Մեղքիսեղեկ վարդապետ Վժանեցին. որ և դառնո՞մ է Էջմիածնի վարդապետարանի պյուներից մեկը:

Փիլիպոս կաթողիկոսի օրով վարդապետարանը հասցնում է գիտնական վարդապետների մի փաղանգ, հանձննա Հակոբ վարդապետ Զո՞ղացեցու, Զաքարիա վարդ. Վաղարշապատեցու, Խաչատոր Ագուեցու, Եսայի Երնջակեցու, Խաչատոր Ասպահանցու, Գրիգոր Կեսարացու և այլն:

Ս. Էջմիածնի վարդապետարանը ապա Հակոբ Դ. կաթողիկոս Զողացեցու օրից (1655—1680), հասնում է մինչև Գևորգ Դ կաթողիկոսի օրերը, մերժ դժվարին և անպտող ն' մերժ՝ արդյունավետ վիճակներ բոլորներվ:

Գևորգ Դ կաթողիկոս (1666—1885) թույլ և անփառնակ մի վարդապետարան գտավ Էջմիածնում, որպես ժառանգություն անցյալի: Այս անմիջիար վիճակը ստիպեց նրան հիմնական նոր քայլեր առնելու, բարեկարգչական և ուսման մակարդակի բարձրացման համար:

Ս. Էջմիածնի հին ժառանգավորաց դրաբունը իր ընթացքը շարունակեց մինչև 1882 թվական:

Գևորգ Դ կաթողիկոսի կոթողական գործերից առաջինը հանդիսացավ «Արարատ» ամսագրի հրատարակումը 1868 թվականից և երկրորդ՝ Գևորգյան ճեմարանի հիմնադրությունը 1874 թվականին:

Վիճակավոր եղած ժամանակ Գևորգ կաթողիկոս չափազանց հոգատար է եղել

ծխական վարժարանների նկատմամբ: Մայր Աթոռում հրա մեծագույն փափագն է եղել ունենալ ուսումնական կրոնական բարձրագույն մի հաստատություն: Այս գաղափարը շատ հին է եղել, Ժմ՛ դարի գրեթե բոլոր Հայրապետները ծրագրել են այդ մասին: Գևորգ Դ սպական հիմնական քայլ առավ: Այս նպատակի համար անհրաժեշտ էր ունենալ մի հաստատուն շենք և ծփսակերի ապահովություն: Դրամագլուխը ձեռք բերվեց հանգանակությամբ, ավանդներից, Ամստերդամի անտերուն մնացած եկեղեցու և կալվածների վաճառություն, Սերովին Արարատան եպիսկոպոսի թողունից, Մուլիկայի կայսերական դրամատան մեջ թողված պանդից, Կալկատայի Գևորգ Մանուկյանի կտորից և այլ միջոցներից<sup>5</sup>:

1869 թվի մայիսի 25-ին Հինանց վեցերորդ Կիրակին և Գևորգ Դ-ի օծնան երկրորդ տարեդարձի օրը, մեծահանդես կերպով նոր ոսումնարանի հիմնարկեքի օրն ությունը կատարվել է և այդ հաստատությունը կոչվել է «Ժառանգավորաց հոգևոր ճեմարան սուրբ Գևորգյան»: Սպական ժողովոյի բերնում շոտով դարձել է Գևորգյան ճեմարան: Զանազան պատճառներ արգելք են հանդիսացել ճեմարանի շենքի շուտափոյթ պալատման, միայն 1874 թվականի սեպտեմբերի 28-ին, և Գևորգի տոնի շաբաթ օրը կարելի է եղել կատարել հանդիսավոր նավակատիքը, նույն ամսի 30-ին 60 աշակերտներով դասավանդությունները սկսվել են: Դժբախտաբար կարճ ժամանակ հետո հունվարի 16-ին անակնելա մի հրեեն ճեմարանի շենքի մեկ մասը պվերել է: Գևորգ կաթողիկոսը չի հուսահատվել, անմիջապես վերանորոգության է ձեռնարկել և կարճ ժամանակից գոլփս է հանել այդ գործը: Միայն 1875 թ. նույնի 10-ին ուսունողները Ղազարապատից փոխադրվել են Վերանորոգված ճեմարան:

Գևորգյան ճեմարան առաջին տարուն ունեցել է մեկ դասարան և հետրզեւուն դասարանների բազմացել են, աշակերտների թիվը անձնահատեսելի չափով աճել է և հարյ է համարվել նույնիսկ 1879 թվականին կառուցել մի նոր միահարկ շենք ևս, որպես նենաշարան:

Ինչո՞ւ համար է բացվել Գևորգյան ճեմարանը: Այս հարցին պատասխանը գտնում ենք ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ կաթողիկոսի «Արարատ»-ում տպված մի կոնդակում. «Արարատ» կուսակոսն հոգևորականներ պատրաստել որպեսզի նորա՝ ըստ համանական սովորութեան ազգին՝ ևս և մեր

<sup>3</sup> Առաքել Դավիթեցի, Պատմություն, 1896, էջ 307:

<sup>4</sup> Առաքել Դավիթեցի, Պատմություն, էջ 325:

<sup>5</sup> Մադ. արքեպ. Օրմանյան—Ազգապատում, Պրոգ. 2805:

ազգի գրականութեան.... ծաղկելուն նպաստեն»:

1875 թվականի հունիսի 10-ին աշակերտները տեղափոխվելով վերանորոգված Գեղվորգյան ճեմարան երեք դասարանի են բաժանվում, և ավելի կատոնակորությամբ սկսվում է ճեմարանի ուսումնական ընթացք, այնինչ կարգով, որ յորաքանչյոր տարի մեկ նոր դասարան բացվեր և, որպեսզի վեց տարվա մեջ վեցերորդ դասարանի աշակերտները կարողանային ավարտել դպրոցական ուսման շրջանը, այն հետև շարունակելու իրենց ուսումը ճեմարանական բարձրագույն լարաններում:

Ճեմարանի բացման երկրորդ տարեդարձին մասնավոր համեմություն է տեղի ունենալու 1876 թվի սեպտեմբերի 25-ին, և Գեղվորգ գորավարի տոնի օրը: Պատարագում է Գեղվորգյան ճեմարանի առաջին վերատնտու տ. Գարբիել արքեպիսկոպոս: Համաքանակ են լինում վաճիք բոլոր միարանները, ճեմարանի աշակերտները, սինոդական և քաղաքական պաշտոնյաներ, պատվավոր անձեր նաև Վաղարշապատի օրիորդաց և տղաների դպրոցների աշակերտները: Հայրապետական մալթանքից հետո Վեհափառ կաթողիկոսի օրինությունը ստանալու և նրա անվանակոչության տոնը շնորհավորելու համար և. Աջը համբուրում են: Ս. Գևորգ գորավարին և ս. Էջմիածնին նվիրված շարականներ երգելով, նկեղեցական դասը գենատավորված՝ թափորով գնում է ճեմարան, այնտեղ մեծ դրան առջև կամարակապի ներքև Վեհափառ Հայրապետի բարձր գանձն են դրել, Ն. Վեհափառությունը գանձն առջև կանգնած է, թափորը մտնում է ճեմարանի ընդարձակ գավիթը՝ երգելով Թարգմանչաց շարականը: Այսպ նկեղեցականները շորջանակի կանգնած՝ կատարում են հանգստյան պաշտոն «վասն հոգոց հանգուցելոց հիմնադրի ճեմարանի»: Օրվա հանդիսության վայելչություն տալու համար հրավիրված են եղել զինվորական նվազածուներ: Այս միջոցին նունք նվազում են, մինչև որ նկեղեցականները աթոռ են գրավում Վեհափառ Հայրապետի աջ և աջակ կողմերում, և ապա իր ճառն է կարդում ճեմարանի վերատեսուչ տ. Գարբիել արքեպիսկոպոս Այվազյանը: Ծառի ընթերցումից հետո դասահատունների և ուսանողների կողմից օրվա խորհրդին նվիրված ուսանալությունը են արտասանվում: Հուսկ ուրեմն, Վեհափառ Հայրապետը ոտքի է կանգնում, իմաստալից և սրտաշարժ խոսքերով իր հայրանան սրտի ուրախությունն է հայտնում տևանելով իր բազմամյա փափագի կատարումը: Հուսադրական խոսքերով քա-

շալերում է ոչ միայն ճեմարանի կառավարիչներին, այլև ժողովրդին և բովանդակ ազգին, որպեսզի արիանան, չկհատվեն դժվարությունների առաջ, և ճեմարանը հասցնեն իր վեճ, ազգօգուտ նպատակներին: Հայոց Հայրապետը ապա իր օրինությունն է տալիս բոլորին և հանդեսը փակում:



S. Կոմիտաս վարդապետ

Հյուրերը ճեմարանի ուժանելուն սրահում աշակերտների աշխատանքներին են ծանոթանում՝ գծագրություններին, նկարներին, հայերներին ու ուստեղներ վայելչագրության նըմուշներին:

Այս ազգային հանդեսը իր լրման է հասնում երեկոյան հրավառությամբ՝ Վեհարանում, վանքում և ճեմարանում, խաղերով և նվագերով:

Գեղվորգյան ճեմարանում սովորելու են եկել ոչ միայն Կովկասից, այլ նաև Խսահանց, Ղարաբաղից, Թափիրից, Չամախից, Ագուլից, Կ. Պոլսից, Կիլիկիայից, Տրապիզոնից, Եվրոպիայից, Նոր Նախիջևանից և այլ վայրերից:

Ծննդարձում բար 1876 թվականի տեղեկատվության դասականիցների են նետված դասահատունները,

- 1.—Հարություն Քեշկելյան—Ֆրանսիերէն, լատինեան:
- 2.—Լևոն Թյուսիկյան—Գրամաշիվ, երկրաշափություն:
- 3.—Վարդան Աբրույան—Ռուսաց դպրություն և պատմություն, աշխարհագրություն:
- 4.—Հովհաննես Գալստյան—Հայերն դպրություն, թվարանություն, եղել է նաև Կարգապահ (Վերակացու):
- 5.—Արժանապատիկ Կյուրեն Վրոց. Սրբայան—Կրոնագիտություն, թվաբանություն:
- 6.—Վասնակ Պապաջանյան—Բնական պատմություն:
- 7.—Մկրտիչ Պայան—Հայկաբանություն, պատմություն մատնագրության հայոց:
- 8.—Ներսես Ավմոնյան—Ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, ֆրանսիերն լեզու:
- 9.—Միքայել Միքայելյան—Ռուսիերն լեզու:
- 10.—Պողոս Շեպեճյան—Զայնագրություն, պատմություն հայոց և եղել է Տևոտ:
- 11.—Առաքել Սաֆինյան—Գծագրություն, Ակարտություն:
- 12.—Մարտիրոս Քերեսեղյան—Վայելագրություն, եղել է նաև քարտովար:

Ծեմարանի վերատեսություն տ. Գարբիել արքեպիսկոպոս իր ճառությունը շեշտում է այն պարագան, որ Ծեմարանի թշանավարտները ապագայն Ծեմարանի ծախսով ուղարկվելու են Եվրոպա՝ համալսարաններ, մի քանի տարի ուսանելու, կատարելագործվելու և ապա վերադառնալու, ծառայելու համար Ծեմարանի հարկի տակ, որպես մասնագետն է քաշահուու մասնավայութեար:

Վերատեսություն սրբազնը, անդրադառնում է Ծեմարանի «Խոտեհենական» և ժամանակավոր բարերարներին, թվում է անունները, և ան հունան, որոնք Խոտեհենական են, այսինքն՝ պատճառ են եղել Ծեմարանի շենքի կերտման, և հետո ժամանակավոր բարերարների անունները՝ տիկին U. Սոֆիա Չալավաձեն Տքիսիսցի, Հովհաննես Սովորան Չալավաձեն Տքիսիսցի, Հովհաննես Սովորան Մելիք Բեգլարյան՝ Տքիսիսցի, Սարգիս առօ. Զալալեան, Գեղոր առօ. Վեհապետյան, Եսահի Խամիլյան Ղզլացի, բարեգործական ընկերությունը հայոց Նոր Նախինեանի և Բաքվի, Մկրտիչ Սահասապան և Հովհաննես Ասատոր իշխան Սամուկ Բեկ: Սրանցից ովանը հաստատություն որամագուի են տրամադրել Ծեմարանին և նաաատ, ովանք՝ միան տոկոսներ և որիշներ՝ միանվագ օժանդակությամբ մասնաւզել են աստվածահան այս բարերարության:

Վերատեսություն իր ճառություն անդրադառնում է ուսանողների հապաջիմության, վարդին ու բարդին, նրանց կատարած աշ-

խատանքին և ուսման ընթացքին: Կարդիու է առաջադեմ ուսանողների անունները: Առաջ իր խոսքի վերջում իր խոսքը է ուղղում Գևորգյան ճեմարանի բոլոր սաներին և ասում է. «Սանելունք Հայաստանի, որդիք սիրասունք Վեհափառ Հայրապետիս մերոյ Գևորգյ Ն, զարթիք ի ձերմէ ի մահամանգոյն թմրութենէդ լուսահատութեան, յոր ընկղոմնաւ կայք լամաց բազմաց մետք, մուռացօնս գործեցէք լայրիկ մի աղեսիցն մեծաց զորս կրեցէքն և սպանեցէք, սրբեցէք զակրնալութեանցն ձերոց հզոյս պահծառապէս փայտառկեալ առ տեղեօքն յորս կրխեցին լուսաշահի ուրք Նահապետին Նոյի և Լուսառչին ազգին Գրիգորի Պարթևի և Ներսիս Մեծի և Սահակեանցն և Մեսրոպեանց»<sup>6</sup>:

Գևորգ Դ երջանկամիշշատակ կաթողիկոսի սկսած սրբազնն գործ շարունակում է Սակար կաթողիկոս, որի մասին ճեմարանի տեսություն Արշակ Նահապետյան ասում է. «Գահը բազմելու օրից ի վեր ամեն տեսակ խնամք և շանք գործ է դեռում այս հաստատությունը յոր կոչման համապատասխան որից մեջ պահպանելու համար: Նորին Ս. Օծություն՝ Հոգերուս Հայրապետից իբրև մի թանկագին ավանդ ընդունած լինելով այս բարոյականության և գիտության բարձրագույն հիմնարկությունը, նորա բարեկարդության և առաջդիմության համար հպատող ոչ մի միջոց չի խնայում, համարելով իր իմաստուն հովվապետության ծանր հոգսորից գլխավորը՝ ճեմարանի հառաջընթաց և խաղաղ շարունակությունը»:


Դրավամբ՝ Սակարի կաթողիկոսության և Արշակ Նահապետյանի տեսչության ըլլոցանում Գևորգյան ճեմարանը պետի կազմակերպված մի հաստատություն է դասունք: Այնտեղ սովորում են 112 աշակերտներ՝ Գ, Դ, Ե, Չ դասարաններում և Ա, Բ, Գ լաբարաններում:

Ուսումնական 1886—87 տարում, ճեմարանի լաբարանական բաժնի ծրագիրը մեծ փոփոխության է ենթարկվում, որովհետև տ. Մահարիս եահսկոպոս Օրմանյան նըշանակվում է աստվածարանական գիտությունների ուսուցիչ և միանգամայն քարտուղարի ճեմարանի:

1887—88 ու. տարում հետևյալ առարկաներն են դասավանդել ճեմարանի երեք լաբարաններում:

<sup>6</sup> «Սրբատ», 1876, էջ 348:

<sup>7</sup> «Սրբատ», 1888, էջ 617—18:



# ԱՐԱՐԱՏ

ԿՐՈՆԱԿ - ԲԱՐՁՐԱԳՈՅՆ, ԳՐԱՆԱԿԱՆ - ՊԱՇՄԱՆ, ՎԱՆԱԽԱՐԱԿ - ՄԱՆԵՎԱՐ.  
ԺԱՌ, ԱԶԴՈՎՈՅ և ՊԵՏՈՎՈՒՆ

## ՀԱՅԱԳՐԻ

ԱՅԻ Լ. ՏԵՐԻ

ՀԱՄԱՐ ՎԻՃԱԿ

ՕԿՏՈԲՐԻ 1897 թ.

**ՄԿՐՏԻՉ ԾԱՓՈՔ ՅԵՍՈՒՄ ՔՐԵՈՏՈՒՄ ԵՎ ՈԿՆԵԱՆԵՐԻ ԿԵՐՈՔԻ  
ՀԱՅՈՒԹՈՅ ԵՎ ԱՅԼԱԿԱՑՈՒՊԵՐ ԵՎ ԿԱՐԱԿԱՆԱՅ ԼՈՒՆԵՎ ՀԱՅՈՒԹՈՅ ՎԵՐԱԿՐՈ  
ՀԱՅՈՒԹՈՅ ԿԱՐԱԿԱՆԱՐ ԱՅԼԱԿԱՑՈՒՊԵՐ ԱԿԱՎԵԱՆԵՐ ԵՎ ԱԿԵՆԵԱՆԵՐ  
ՄՐԱՅ ԿԱՐԱԿԱՆԱԿ ԵՎ ԱՅԼԱԿԱՑՈՒՊԵՐ. ԻԿԱՆԵՐ ՄԻՋ ԱՐԱՐՈՒՄ ԵՎ  
ՎԵՐԱԿՐՈՅԱԿՈՌՈ ՄՐԱՅՈՒՄ ԵՎ ԱՐԱՐԵԱԿՈՌՈ ԱՐԱՐՈՒՄ ԵՎ**

Կոնդահան Մերովի որ յ19 գեկտեմբերի  
1894 ամի համարաւ 2168: Կարգեալ էաք  
շանձնամուղակ խմբագրութեան Արարտա ամ-  
սագրոց Մայր Աթոռոց: Յօրէ անոնի և ցայ-  
սոր ժամանակի անգամք յանձնամուղակոց Հա-  
նապետութեամբ վարդեալ զգործու Ածարէա  
բար պիտու ընդարձակեցին զծաւալ և զգո-  
րծնակութիւն վերծանեալ նիւթաց յէջո Ա-  
րարտի: որոյ վառն և արժանի իսկ են Մե-  
րում Հայրապետական գոհունակութեան: Ապա  
շայեցեալ ի ծանրութիւն աշխատանաց: զորւ

կրեն բարեջան անզամք յանձնամուղակոց: որը  
ընդ նմին վարեն և զգոշուն ուսուցչութեան  
թեմարտին Մայր Աթոռոց: ևս և կամերգ  
Մեր՝ յառաւել բարգաւաճում Արարտա ամ-  
սագրոց: Կոչել ի գործակցութիւն և զայնօսիկ  
ի միարտից Մայր Աթոռոց: որը հմտութեամբ  
իր բնեց և կարեգութեամբ պաշտամանց:  
զօրու իր բարբանցիր ոք ի նոցանէ յանձնին ու-  
նի: կարեն մեծապէս սատորել յառաջագի-  
մութեան կրօնական և պաշտամական ամսա-  
գրոց Մերոյ: այսու Հայրապետական կանզ-

**Ա. լարան**

1.—Բնական աստվածաբանություն	2 ժ.	շաբաթը
2.—Բնմքասացություն	2 »	»
3.—Քննաբանություն և Գրոց	3 »	»
4.—Եկեղեցական պատմություն	2 »	»
5.—Բացասորություն և Գրոց	2 »	»
6.—Հայոց մատենագրություն	4 »	»
7.—Ռուսաց մատենագրություն	2 »	»
8.—Ընդհանուր մատենագրություն	2 »	»
9.—Մանկավարժություն	4 »	»
10.—Ֆրանսերեն լեզու	2 »	»
	25 ժամ.	

**Բ. լարան**

1.—Քննական և տեսական աստվածաբանություն	3 ժամ	շաբաթը
2.—Բնմքասացություն	2 »	»
3.—Քննաբանություն և Գրոց	3 »	»
4.—Եկեղեցական պատմություն	2 »	»
5.—Բացասորություն և Գրոց	2 »	»
6.—Եկեղ. մատենագրություն Հայոց	1 »	»
7.—Ռուսաց մատենագրություն	2 »	»
8.—Ընդհանուր մատենագրություն	2 »	»
9.—Մանկավարժություն	4 »	»
10.—Ֆրանսերեն լեզու	2 »	»
	25 ժամ.	

**Գ. լարան**

1.—Բնական, տեսական և բարոյական աստվածաբանություն	5 »	»
2.—Բնմքասացություն	2 »	»
3.—Մեկնություն և Գրոց	2 »	»
4.—Եկեղեցական պատմություն	2 »	»
5.—Բացասորություն և Գրոց	2 »	»
6.—Եկեղեց. մատենագր. Հայոց	1 »	»
7.—Ռուսաց մատենագրություն	2 »	»
8.—Ընդհանուր մատենագրություն	2 »	»
9.—Տրամաբանություն և ուսումն. դասավան	4 »	»
10.—Ֆրանսերեն լեզու	2 »	»
	24 ժամ	

1887—88 ու. տարում Գևորգյան ճեմաբանում դասավանդել են՝

1. S. Մահաքիան Կոփուպու—Աստվածաբանություն (բնական, տեսական և բարոյական): Բնմքասացություն, բացասորություն և մեկնություն և Գրոց:
2. Սահմակ Վարդապետ—Քրիստոնեական Վարդապետություն:
3. Կարապետ Կոստանդնուպոլիսի Եկեղեցական մատենագրություն Բայոց, Եկեղեցական պատմություն Բայոց, տեսություն մատենագրության և պատմություն մատենագրության Բայոց:
4. Սարգիս Գարեգինյան—Ռուսում և Գրոց, քըննաբանություն և Գրոց, Եկեղեցական պատմություն:

5. Սեղրակ Մամիկոնյան—Տրամաբանություն, մամիկոնաբություն, ուսումն. դասավանդության:
6. Սուեփանոս Պարսակյան—Հայոց պատմություն, ֆրանսերեն:
7. Փիլիպոս Վարդապետ—Ընդհանուր պատմություն, պատմություն ընդհանուր մատենագրության, պատմություն մատենագրության ուսուց:
8. Մկրտիչ Պալյան—Հայոց լեզու:
9. Հովհաննես Սալամելյան—Ռուսաց լեզու և պատմություն, Ռուսաստանի աշխարհագրություն:
10. Գ. Տ. Բարդույիմեռապան—Ընդհանուր աշխարհագրություն, տիեզերագրություն:
11. Միհան Ազնավորյան—Զայսիագրություն:
12. Արենիանով Ակեբանյան—Աշխարհագրություն Հայաստանի, թվարանություն:
13. Ռուբեն Ռոբերտյան—Տաճերեն լեզու:
14. Արշակ Նահապետյան—Բնախտություն, բնագիտություն, թվարանություն:

Գևորգյան ճեմաբանի տասնչորսամյական կյանքում, վերջապես իրականանում է նըպատակը այդ հաստատության: 1887—88 ուսումնական տարում ճեմաբանի ուսման ընթացքը ավարտում են Գ լարանի Յ ասեղության վեհական Հայրապետին միարանության շարքերն ընդունվելու: Այս բարեքաստիկ աղիթով ճեմաբանի տեսուչ՝ Արշակ Նահապետյանը սրտի գոհունակությամբ հայտարարում է. «Բարեքախտ ենք (որ) երկար տարիների մեր իդք իրագործված տեսնելով, այսօր հրապարակավ ավետում ենք, որ սոցանից չորսը, Դալլաբյան, Մուսարեգյան, Հարությունյան, Տեր-Մկրտչյան, հունիսի 15-ին գրավոր կերպով դիմեցին Վեհական Հայրապետին, հայցելով Նորին Սրբության բարեհանությունը ընդունելու յուրանց ի շարու միարանից Մայր Աթոռ Ո. Էջմիածնի»<sup>8</sup>:

Բնականաբար այսպիսով Օրմանյան սրբազնի միամյա հոգնաջան աշխատանքի արդյունքն էր, որ հայ եկեղեցին քաղում էր, այս մասին Օրմանյան արքապիսկոպոս իմբ և վկայում է իր «Խոհք և խոր» գքրթում:

Գևորգյան ճեմաբանի 27-րդ տարեդարձին 1900—1901 ուսումնական տարում, այստեղ սովորելիս են եղել 240 ուսանողներ, որոնցից 207 նախկին և 33-ը նոր ընդունված: Սաների 223-ը գիշերօթիկ են եղել և 17-ը երթնեկ: Այս շրջանի տեսուչ՝ Ա. Կարապետ Վարդապետ Տեր-Մկրտչյանի գեկուցումից իմանում ենք, որ «զոհաբերությունների շնորհիլ միայն (ճեմաբանը)

<sup>8</sup> «Արքատ», 1888, էջ 625:

կարողանում է այդշափ գիշերօթիկ սևաներ պահել» և դրա փոխարեն զրկանքներ են լինում բոլորի համար: Ուստինական այս շըրջանում ճեմարանը ունեցել է 3 լասարն, 6 դասարան և երկու զուգամիեն Ս. դասարաններ, Ս. դասարանի սաների ստվարության պատճառով: Այս տարվա 12 ընթացավարտներից 9-ը հոգեսր կոչման են նըլիբիլել: Առաջին անգամ լինելով ճեմարանը ունեցել է 6 հոգեսրական դասախուներ, որոնք իրենց բարձրագույն կրթությունը ստացել են Եվրոպայի համալսարաններում: Ճեմարանի 1900—1901 ուսումնական տարվա դասախուները եղել են՝ առ. Կարապետ Վարդապետ, առ. Հովհաննես Վարդապետ, առ. Կոմիտաս Վարդապետ, առ. Գարեգին Վարդապետ, առ. Մամրիկ Վարդապետ, Ս. Արենյան, Ս. Հարությունյան, Ս. Կանայան, Հ. Մանանյան, Ս. Տիգրանյան, Հ. Հովհաննեսյան, Ս. Արքանյան, Հ. Բուդյան, Գ. Ղազարյան, Մ. Հայնազարյան, Ս. Շահնազարյան, Լ. Նոր-Արևյան, Հ. Արիստակեանան, Գ. Միքայելյան, Ս. Ղազարովան և Վ. Արքահայրան: Ճեմարանում արտաքր կարգի պարագունքները՝ որը դասավանդել է Հ. Աճառյան, և Գյուղատրներությունը՝ դասասույ Մ. Ղազարյան:

Ճեմարանը բացի տեսչից՝ ունեցել է աշակերտների բարուական դաստիարակության և կարգավահության վրա մտտիկից հակող տեսչի օգնական հանձին՝ առ. Հովհաննես Վարդապետի, իսկ վերակացուներն են եղել Գ. Միքայելյան, Գ. Ղազարյան և Հ. Արիստակեանյան:

1901 թվականի համար ճեմարանի բյուջեն եղել է 42.390 ռուբի: Որից 5700 ռուբին՝ բարձրագույն կրթություն ստացող սարկավագներին, կենսաթոշակ ստացող Ս. Մանսինյանին, ճեմարանում դասախունող և վարդապետներին ու գյուղատներական ծախքերի համար են տրամադրվել: Ճեմարանի բուն տարեկան ծախքը եղել է 36.690 ռուբի: Ճեմարանում որդեգրված են եղել 7 սպեկտր:

Գյուղայան ճեմարանի գրադարանը 1901 թվականին ունեցել է ընդամենը 20.132 հատոր գիրք: Որոնցից 4198-ը եղել է հայերեն, 6948-ը՝ ռուսերեն, 1821-ը՝ ֆրանսերեն, 915-ը՝ գերմաներեն, 316-ը՝ այլ լեզուներով, 5567 հատոր դասագիրք և 372 հատոր բանարաններ: Տարվետարի ճեմարանի գրադարանը անել է նվերներով և գնված գրքերով: Միայն 1900—1901 ուսումնական տարրում գրադարանը հարստացել է 2093 հատոր գրքով, որի միայն 330 հատորը գնվել է ճեմարանի հաշվին, իսկ մնացած-

ները նվեր են տրվել հայտնի ազգայինների կողմից:

Կ. Տեղ-Խաչատրյան եղել է տարիներ շարումակ ճեմարանի բժիշկը: 1901 ուսումնական տարում սաների առողջական վիճակը ներկայացվել է հետևյալ կերպով: 261 աշակերտներ տարվա ընթացքում հիվանդացու են մոտել խնամվելու համար: Նրանցից 122-ը տեսդ և շերմ են ունեցել, 47-ը՝ սակավարյունություն և ընդհանուր թուլություն, ինֆլուենցիալ հիվանդացել են 21 հոգի, բկացավով՝ 13, տիֆով՝ 6 հոգի: Տեսչի գեղուցումից իմանում ենք, որ աշնան քանից ավելի հիվանդներ են եղել, 6-ը տիֆով բռնված, որոնցից երկուը մահվան գրկեց են իվլել: «Իսկ տարվա վերջին, Մեծի պահոց ծանր օրերից հետո, աշակերտներն ընդհանրապես այնչափ թուլացել են ու արյան պակասություն և «սվորքուտ» այնչափ տարածվել, որ քերին միայն կարելի էր կատարելապես առողջ համարել: Եթե այդպիսի հանգամանքներում այս շըրջանն ևս առանց մահվան դեպքի անցավ՝ նախախնամության մի բացարիկ շնորհ էր»<sup>10</sup>:

Կերպին տարիներին ճեմարանի հիմնադրության տարեդարձի օրը կազմակերակ են գեղարվեստական, գիտական-գրական երեկոյթներ: 1901 թվի սեպտեմբերի 29-ին ևս այդ ավանդությունը շարունակվել է, այս առթիվ հանդես է եղել Կոմիտաս Վարդապետը, հայ եկեղեցու երաժշտության ութ ձայների մասին շատ շահեկան մի բանախությամբ: Աշակերտներից ունաճ Կոմիտաս Վարդապետի հրահանգած առողանությամբ ուտանավորներ են արտասանել, իսկ երգչախումբը գեղեցիկ Աերդաշնակությամբ ազգային, ժողովրդական երգեր և կատարել: Կոմիտաս Վարդապետը ճեմարանում իր պաշտոնավարության շրջանում բազմից կազմակերպել է երաժշտական երեկոյթներ, կազմել՝ երգչախումբ ճեմարանի սաներից, երգել է տվել և. պատարագ հանդիսավոր տնական օրերին և ժողովրդական ազգային երգեր: Այսպիսով ճաշակն է տվել իր ունկնդիրներին ազգային դրոշը կրող երաժշտության:

Ս. Գրիգոր Լուսավորչի Մոտեն ի Վիրապի տոնի օրը, Կոմիտաս Վարդապետ տվել է երաժշտության մի երեկոյթ Գյուղայան ճեմարանի հարկի տակ, Աերկայության Մայր Աթոռի միարանության, թեմական դպրանցի ուսուցչների և ուսանողների, ինչպես նաև ճեմարանի դասախուսական կազմի: Երեկոյթի ծրագիրը բազմազան և

<sup>9</sup> «Արարատ», 1901, էջ 436:

<sup>10</sup> «Արարատ», 1901, էջ 436:

հարուստ է եղել, հոգևոր և ժողովրդական եղանակից, երածշտության պատմություններից և զավեշտական արտասանություններից կազմված: Այս առթիվ Կոմիտաս վարդապետը չափազանց շահեկան մի դասախությունն է տվել, որով ապացուել է, որ հայ եկեղեցու եղանակները ժողովրդական ծագում ունեն: Համեմատել է շարականների եղանակները ժողովրդական եղանակների հետ: Այս առթիվ «Արարատ» գրում է. «Հ. Կոմիտաս, կարող ենք լսությամբ ասել, մեծ ապագա ունի հայոց երածշտության պատմության մեջ, ցանկանք, որ նա յուր բարի ձգտումները իրագործել կարողանա»<sup>11</sup>:


Ծեմարանի կյանքում եղել են նաև ներքին և արտաքին դժվարություններ: 1890-ական թվականներին փակման էին ենթակա Կովկասի հայկական բոլոր դպրոցները, ընուր որում և Գևորգյան ճեմարանը և ծիսական բոլոր դպրոցները: Տնտեսական անձուկ վիճակներ և անցկացրել է ճեմարանը: Եղել են նաև, հատկապես ճեմարանի կյանքի վերջին տարիներում քաղաքական խնդրումներ ուսանողների մեջ:


<sup>11</sup> «Արարատ», 1901, էջ 217:

Հակառակ այս բոլորին, Գևորգյան ճեմարանը իրականացրել է իր հիմնադիրների սրբազնությունը և աշխարհական պատասխանակիցների շահերով: Վաղարշապատը դարձել է լուսի ճշմարիտ փառության հայ իրականության համար, թե հոգեկոր և թե մտավոր հիմաստով: Ծեմարանական լուսամիտ սերունդը թև ու թիւնք է կանգնել և իր եռանդը չի խսայի այն օրերին, երբ ստեղծվել է խորհրդային մեր նոր հայրենիքը: Այդ սերունդը իր աշխատանքի բաժինն է բերել նաև մեր վերածնած հայրենիքի գիտության և մշակույթի առաջնարացում:

Հարգանք և մեծարանք մեծ Հայրապետ Գևորգ Դ կաթողիկոսի անթառամ հիշատակին, որ դարձել է ԺԹ դարի լուսամիտ հայրապետներից մեկը: Հարգանք «Արարատ»-ի հիմնադիրին և աշխատակիցներին:

Ներկայի Գևորգյան ճեմարանը որպես նոր հոգևոր ճեմարան, ընթանում է նոյն լուսաշավիդ ճանապարհով, որ գծել են մեր եռամենա հայրապետներն ու վարդապետները, հայրական հոգածության և խնամքին ներքև ազգին Հայրապետ Վազգեն Ա. կաթողիկոսի, ինչպես նաև հարազատ հայրենիքի խաղաղ և ապահով երկնքի տակ:





**ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈՂԱՆՁՅԱՀ,**  
(Պատմական գիտությունների թեկնածու)

**«ԱՐԱՐԱՏ»-Ը ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ**

Երկար ու ձիգ դարեր շարունակ պետականությունից զրկված և աշխարհով մեկ սփռված հայության գոյատևման պատմության ընթացքում, Էջմիածնը հաճախ դարձել է մեր ժողովորդի հավաքականության կենտրոնն ու նրա փրկության լաւարք: Զանազան լրացնել հայ պետականության պահանջ, նա առաջնորդել է իր զավակներին հարյուրամյակների պատմության ամենի ալիքների միջով և տոկարու նոր շունչ և լույս բաշխել հրանց՝ մինչև հայ նոր իշխանության հանդեւ գալը: Բավական է համառոտ ակնարկ գցել անցնող թեկուզ երկու հարյուրամյակների մեր ժողովորդի քաղաքական և մշակութային պատմության վրա համոզվելու համար այդ ճշմարտության հետ: Եթե պրատելու լինենք միայն հայ տպագրության և հայ պարբերական մամուլի պատմության էքերը, կկարողանանք տեսնել, որ նրանք իրենց զարգացումն են ապրել հիմնականում՝ հայկական հեռավոր գալյուսվագրերում: Այդ մեր ժողովորդի պատմության այն դժեռակ շրջանն էր, երբ տիրող քաղաքական անքարենապատ պայմանների հետևանքով մեր հայրենիքը վեր էր ածվել փաստորեն աշխարհագրական հասկացողության և դերերը փոխվելով, այս անգամ հայ գալյուսվագրերն է, որ իրենց նշանակալից հասատն էին բերում մեր մշակույթի զարգացման գործում:

Փաստ է, որ վերոհիշյալ ժամանակաշըրջանում հայ տպարանների պատմության մեջ հայրենի քաղաքների անունները իսպան բացակայում են, իսկ պարբերական մամուլի պատմության մեջ հիշվում են միայն Արևմտյան Հայաստանից մի երկու քաղաքի անուններ: Կամ այսպիսի պատմության մեջ հայրենի անունները կազմության մեջ անդամական չեն:

Այսպիսով պատահական երևոյց չպետք է համարել այն իրողությունը, որ եթե անցնող երկու հայրուրամյակների ընթացքում Հայաստան աշխարհի նշանակորվեց հայրենի առաջին տպարանի բացումով և ապա դարձալ հայրենի առաջին տևական պարբերական մամուլի ստեղծումով, ապա այդ երկուսն էլ ծնվեցին և իրենց զարգացումը ապրեցին Էջմիածնի հնադարյան կամարների ներքո: Եվ իսկապես՝ Էջմիածնում էր, որ 1771 թ. առաջին անգամ սկսեց նույնական տպարանի մամուլը նշանավոր կաթողիկոս Սիմեոն Երևանցու շահքերի շնորհիվ և վերջապես դարձալ Էջմիածնի հովանու տակ էր, որ մեզանից ուղիղ 100 տարի առաջ ծնվել առավ արևելահայության առաջին և բովանդակ պատմական Հայաստանի ամենատևական պարբերականը՝ «Արարատ»-ը, Գևորգ Դ Մեծագործ հայրապետի հայսաձեռնությամբ և հոգևոր ու աշխարհիկ մտավորականների գործակցությամբ: Գևորգ Դ հայրապետը երբ դեռևս լրիվ չափով չէր հսկ ավարտել Էջմիածնի տպարանը բարեկարգելու իր մեծ աշխատանքը, ինչպես նշում է անվանի հայագետ ակադ. Մ. Արելյանը, «Նա հիմնադրեց «Արարատ» հանդեսը որ հոգ պիտի տարվեր եկեղեցական հնությունները երևան հանդիլ, և միանագանք Ս. Էջմիածնի միաբանությունը հնար պիտի ունենար երևան բերելու յուր գրավոր աշխատանքները, որոնց համար հորդորում էր ուսումնասեր Կաթողիկոսը»: Գևորգ Դ հայրապետը հիմ-

<sup>1</sup> Մ. Արելյան, Գևորգ Դ մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց, համառու կենսագրություն, Պահարշապատ, 1899, էջ 55:

նելով «Արարատ»-ն ու ապա Գևորգյան հշանավոր ճեմարանը, իր կրանքի վերջում կտակել էր իր զավակներին, որպեսզի նրանք «հայ լինին», «Հայ հայ լինին» և շահան զարգացնել ուսումը, «Զի ուսումը միայն կրանք կուտա հայության»<sup>2</sup>:

Անենից սովոր գևահատելին այն էր, որ «Արարատ»ի հրատարակումը համընդհանուր երևոյթ էր դարձել Էջմիածնի բովանդակ միարանության համար: Նոր պարերախանի ստեղծումը մեծ ոգևորությամբ համակել էր բոլորին և յուրաքանչյուր միարան պարտավորություն էր իր ուժեղի ներած չափով սատարել նրա հրատարակման գործին, քանի որ այն լույս էր տեսնում իրու «Աշխատասիրութիւն» միարանից Ս. Էջմիածնի: Ուժ հոգի միարաններից իրուն խմբագրության անդամներ պարտավոր էին նոկել հանդեսի հրատարակման գործին: Միարանության մյուս ձեռներս անդամները պետք է ամսից ամսիս հոդվածներ հասցնեն և կամ խմբագրության անդամների հոդվածները արտագրեն և կամ տպագրվածների սրբագրությունը անենի: Աշխատանքին ներգրաված էին բոլոր միարանները, հոյնիսկ և Էջմիածնից բացակա առաջնորդներն ու վանահայրերը «Քանի որ նորա ևս Ս. Էջմիածնի միարան են և «Արարատ»-ը Ս. Էջմիածնի միարանության աշխատությունն է, պարտավոր էին հոգ տանել ամսագրի համար»<sup>3</sup>:

Անշուշտ «Արարատ»-ը լինելով Ամենայն Հայոց կարողիկոսության պատուաթերթը, առաջին հերթին, այն կարևոր դեր խաղաց հայ ենեղեցու, կրոնի, բարոյագիտության, մանկավարժության և այլ հարակից խնդիրների ուսումնասիրման ասպարեզու: Սակայն ի՞նչ իմանար նորան միմնադրող երշանկահիշատա հայրապետը, որ հայ հոգեվոր գործին լուսավորելու իր համեստ ակնեղակություններից բացի, հանդեսը ներզեւու ապեկելով իր վերընթաց զարգացումը, կոչվելով էր նաև խորո ավանդ մուծելու ունդանարապես հայագիտության զարգացման գործում և դրանով իսկ նրա հիմնադրի անմոռանալի անունը կրկնակի չափով փառավորվելու էր մեր ժողովրդի մշակույթի պատմության մեջ:

Խոսել «Արարատ»ի կողմից հայագիտությանը մատուցված ծառայությունների մասին, այդ ամենից սովոր հշանակում է ոչ միայն կանգ առնել Էջմիածնի միարանության և նրա շուրջը համախմբված հայ ականավոր գիտնականների ձեռք բերած նվա-

ճումներին, այլև նշել գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանի հայագիտության զարգացման պատմության մասին: Անշուշտ ներկա հոդվածում հնարավորություն չունենք մասնամասնորեն խոսելու «Արարատ»ի կողմից հայ բանասիրությանը մատուցված մեծ ծառայությունների մասին: Մեր հպատակներ է հիմնականում ցույց տալ 50 տարիների ընթացքում «Արարատ»-ում հայագիտության ունեցած զարգացման ժամանակաշրջանները, կանգ առնել այս ասպարեզում նրա ապրած վերելքներին և վայրէջքներին, խոսել խմբագրող և աշխատակցող հայագետների ծառայությունների մասին, նշել ընդուրված նյութերի բազմազանության վերաբերյալ և ապա հիմնավորել նրա դերն ու հշանակությանը ընդհանրապես մեր հայագիտության մեջ:

Դնչան նշվեց, «Արարատ»-ը իր հրատարակության սկզբնական շրջանում ավելի քան համեստ նպատակներ է ունեցել, այն է առաջին հերթին բավարարել հայ երեցների և ուսուցչների պահանջները: Նախաւեսկել էր, որպեսզի ամսագիրը բովանդակել կրոնական, պատմական, բանափրական և բարդական նյութեր: Հանդեսը իր առաջին առաջարանում (1868 թ. № 1) հայագիտական բնույթի նյութերը նախաւեսկել էր տալ կրոնական և պատմական բաժինների մեջքը: Հիշյալ առաջին առաջնորդողություն ապած էր. «Կրոնականի մեջ պիտի դրվին եկեղեցական կարգաց և արարադրույանց վրա տեղեկություններ, կաթողիկուսաց գործեր, սուրբ հարց գրվածքներ, ազգային մատենագրաց կենսագրություններ և ձեռագիր մատենից ծառոթություններ: Պատմականի մեջ, Հայաստանի համենյաց, գավառաց և քաղաքաց վրա աշխարհագրական տեղեկություններ, վանորեկից և մենաստանաց ստորագրություններ...»<sup>4</sup>: Սյափիսով հայ ձեռագրագիտությունը և հայագիտական հարցերի վերաբերյալ գրվածքները առաջին համարից սկսած տեղ էին գրավելու նորաստեղծ ամսագրի էջերում: Այս ինքարկե առաջին հերթին արդյունք պետք է համարել այն բանի, որ «Արարատ»-ի հիմնադրության տարին Էջմիածնի մատենադարանում արդեն իսկ հավաքվել էր 2382 ձեռագիր: Օրմանյանը և Արենյանը նշում են, որ Գևորգ Դ կաթողիկոսը մեծ ուշադրություն էր դարձնել մատենադարանի վրա և իր կողմից թեմերին ուղղված շրջաբերականների, ինչպես նաև իր ամձնական ձեռագրերի նվիրատվության միջոցով մատենադարանը հա-

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 87:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 56:

<sup>4</sup> «Արարատ» ամսագիր, 1868, Ս. Էջմիածնի, № 1, էջ 6:

րբատացել էր 331 թանկարժեք և հազվագյուտ ձեռագրերով և 1881 թ. նույն հայրապետի խորհրդով հիմք էր դրվել ձեռագրերի այն հավաքածուն և ձեռագրացուցակին, որը հայտնի է «Գևորգյան ժողովածու» անունով՝ և որը կազմվել էր մատենադարանավես Ներսես Վրդ. Խորավերդյանի կողմից:

«Արարատ»-ի առաջին տասնամյակը ընդհանրապես ընդունված է կոչել «որոնումների շրջան», քանի որ այն հիմնականում, հնացած մեր գրեթե բոլոր ժամանակակից հանդեսերը, բովանդակում էր այլազան քնույթի հետաքրքրական խառն հցութեր: Սակայն միաժամանակ խմբագրությունը հատկապես իր աստանդական ընթերցողներին ցանկանում էր ծանոթացնել հայ անցյալի հշուարժերի հետ: Այնուեւ ասված էր, որ աշխարհով մեկ սփոսված հայերը «Արարատ»-ից սպասում էին, որ նա «Հայունաց կեղուննեն հայրենի հնույթյանց թանգարանը բանար և ազգային մեծագործությանց պատմական հիշատակները կենդանացներ ի միահարություն հետավոր ազգայնոց»<sup>6</sup>: Ավելի ուշ հայտնի գրող Դ. Արշակնը «Արարատ»-ի 1869 թ. № 1-ում գրում էր, որ «Արարատ»-ը յուր ամեն շանքը պիտի գործ դնել լինել այնպիսի մի պատկեր, որո մեջ Հայր կարողանա տեսնել յուր անցյալը և ներկան...»<sup>7</sup>: Նոյն հանդեսի մի այլ հայտարարության մեջ ևս ցանկություն էր հայտնվում հայագիտական բաժինը մեծացնելու: «Բովանդակության մասին ևս կը խոստանա հավելացնել բանահյուսաց հետաքրքրության արժանի հնագիտությունը, և ծողովորդական ճաշակին համաձայն քաղվածներ, և այլն...»: Անչուշտ «Արարատ»-ի առաջին շրջանը հայագիտական հյութերով պեմբան էր հրատասություն չէր կարող լուսաւ, քանի որ այդ ժամանակ պատրաստված հայագետների թիվը շատ քիչ էր, իսկ հանդեսի հրատարակումն էլ հիմնականում ծանրացած էր միարանության անդամների վրա: Սակայն միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ խմբագրությունը թեև առանց որիցեւ պարբերացման քնույթի, աշխատում էր մատենադարանի գրչագրերից ընտրությունը ներկազգացնել ուշագրավ բնագրեր, առաջին ներդիմ հրատարակում են Ն. Շենքիանու, Եզնիկի, Եղիշեի, Վահրամի, Վարդանի, Գ. Ռ. Նարեկացու, Տիրանի, Եպիփանի և այլոց գործերը, որոնցից մի մասը

<sup>5</sup> Օ. Եգանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածուները, էջ 51—52 (արտատպ. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հասոր Ա, Երևան, 1985):

<sup>6</sup> «Արարատ», 1868, № 1, էջ 7:

<sup>7</sup> Նոյն տեղում, 1869, № 1, էջ 3:


լույս էր տեսնում առաջին անգամ: Հրատարակվում են նաև Հեթում Բ.-ի բանատեղծություններ, արքայական ծաշոցի նկարագրություններ ու պատմական հիշատակարանը, Ստեփանու Սևանցու՝ Մաշտոց կաթ.-ի վարը, ձեռագրերի պատմական արժեք ունեցող հիշատակարանները: Անտիպ պատմական աշխատություններից լույս է տեսնում երբեմնի մատենադարանապետ Մանուկ Վ. Կյումիշչյաննեցու «Պատմութիւն ան-

## Ա Ր Ա Ր Ա Տ Ա

### Ա Մ Մ Ա Գ Ի Բ

աշխատավրարիստիկ

ՄԻԱՅԱԿԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՐՈ Ա. Է Զ Մ Ի Ա Մ Ն Ե Ր .



ՊՐԵՄԻԱ - 1870-

Ի ՊՐԵՄԻԱ ԱՐՁՈ ԱՌԱՋԱԿԱՆ ԽՈՐՎԱԴՅԱՆ  
Բ. ԳԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արարատ»-ի 1870 թ. տիտղոսաթերթը

ցից անցելոյ Սևանայ վանոց, ի 1830 ամի, ի Սևան: Չեն անտեսվում նոյնինկ հայրենիքից դուրս պահված գրչագրերը. համառոտակի ծանոթացվում են Փարիզի ազգային մատենադարանու պահվող հայերեն 273 ձեռագրերը: Գնահատելի է նաև հնագույն վալերագրերի հրատարակումը: Խըմբագրությունը գրադպում է հնագույն և նոր վալերագրերի հրատարակման գործով: Այդ շարքից են Խաչիկ կաթողիկոսի (Ժդար), Սիմեոն, Ղուկաս և Եփրեմ կաթողիկոսների վերաբերյալ փաստաթղթերի լույս ընծառությունը: Այս առթիվ անհրաժեշտ է նշել, որ սույն գնահատելի վկիքը իր շարունակությունը և զարգացումը ունեցավ նաև, ամսագրի հետագա տարիների համարներում: Այս առումով էլ հայերական հին և նոր հա-

մականի և հատկապես «Գիրք թղթոց»-ի ամբողջացման համար «Արարատ»-ի հայկածուն կարեռ հշանակություն ունի: Սուաշին տասնամյակում թեև թվով քիչ, սակայն կան հրատարակված նաև մի քանի ուսումնասիրություններ: Դեռք է հեղեղ «Արարատ»-ի առաջին հաբագիր ժրաշան Արել եաւ. Միհիթարյանի «Պատմութիւն ժողովոց Հայոց», գործերը Վահրամ եաւ. Մանկունու՝ «Հայաստանեաց եկեղեցոյ», հնչալես նաև նրա «Պատմութիւն հրածացաց, որացողաց և հերձուածողաց և բաժանելոց յեկեղեցոյ Հայոց», գործերը Վահրամ եաւ. Մանկունու՝ «Հայաստանեաց եկեղեցոյ անցեալն», Գարք. եաւ. Արվազյանի «Նիկօլ եաւ. և պատմ. դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն» ևալլն: Հորվածներ կան նվիրված նաև հշանավոր հայ վանքերի, Հայաստանի գավառների, ճանապարհորդությունների և այլ հյութերի շորչ:

«Արարատ»-ի երկրորդ տասնամյակը, որն ընդգրկում է 1878—1887 թթ. նրա պատմության մեջ կարելի է ասել, որ դառնում է իր հունը գտնելու և դեպի Վերելք նախապատրաստվելու ժամանակաշրջան: Խմբագրությունը ջանում է ավելի մեծ թվով աշխատակիցների ընդգրկումով ընդարձակել նաև հայագիտական բաժինը: 1879 թ. հրատարակելով «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և Դաւիթի հարցմունք ըստ երկարնակացն» բնագիրը, խմբագրությունը հայտնել է այն մասին, որ եթե առաջիկայն ևս Մայր Աթոռոյի գրչագրերում կարեռ հյութեր հայտնաբերվեն «Հրատարակվելու են իրեն ազգային հնության փափագելի բեկորներ «Արարատ» ամսագրին մեջ, Վեհափառ կաթողիկոսի բարեհանության և պատվերին համաձայն, որ ազգայինարար մեծ հովանավոր է ազգային գրականության մշակման»<sup>8</sup>: Սակայն ամսագրի առաջին հաբագիր՝ Արել եաւ. Միհիթարյանի մահվան (1876) և կարող աշխատակիցների պակասի հետևամբով մի քանի տարիներ ամսագրում ապրում է իր ճացման շրջանը: «Արարատ»-ի 1887 թ. առաջնորդողում այդ շրջանի մասին ապամակ է: «Այո՛, եղավ ժամանակ, որ «Արարատ»-ը փոքր ինչ շեղվեց լոր նպատակից, և տեղի տվեց թարգմանական և հիմնություն այնպիսի գրվածների, որոնք մինչև անգամ պատշաճավորության ասինանից դորս էին, բայց այդ ժամանակը կարի սուղ եղավ»<sup>9</sup>: Այնուամենայնիվ թվով թեև քիչ, սակայն հայագիտական հոդվածները իրենց տեղուն են գրավում նաև «Արարատ»-ի այս շրջանի համարներում: Զեռագրագիտական սակավաթիվ հոդվածներից է


Հուսիկ վ. Մովսէսանի կողմից նշանակոր փողուկրյա և կամ գիտությանը հայտնի Եջմիածնի հշանակուր Ավետարանի մասին տրված տեղեկությունները: Այս շրջանի կարևոր երևույթներից մեկը հանդիսանում է անկանած Եջմիածնի գիտական միարաններից Մեսրոպ եաւ. Միհրանյանի կողմից Հայաստանի տարբեր շրջաններից ավելի քան քառասուրական արձանագրությունների հայտնաբերումը և նրանց նմանահանությունների և երբեմն նաև նրանց վերծանության և թարգմանության առաջին հրատարակությունները «Արարատ»-ում: Այն տարիներին, երբ գիտական աշխարհին շատ քիչ էին հայտնի որարտական արձանագրությունները, Մեսրոպ արք.-ը մեր հայական շրջանի այդ անգին վկաների հայտնաբերմանը դառնում էր այդ գործի մի տեսակ հայապետը: Նա արձանագրությունների մեծ մասը փրկելով կորատից բերել և զետեղել էր ճեմարանի մոտ, իսկ իր շանքերը գնահատանքի արժանանալով՝ ընտրվել էր Ռուսական Կայսերական Հնագիտական ընկերության անդամ: Այս շրջանում լուս տեսած պատմական ուսումնակիրություններից են Հուսիկ վ. Մովսէսանի «Հայ եկեղեցոյ պատմությունը», Մաղաքիա արքեաւ. Օրմանյանի «Աթոռ Հայաստանեաց» ուսումնասիրությունը, որը լուս տեսակ 1886—1887 թթ. ևալլն: Հրավիրում են աշխատակելու նաև աշխարհական մտավորականները. որոնցից Ռուսում բեկ Երզրումյանը հանդես է գալիս Հաղպատի վաճառքին նվիրված իր հոդվածաշարուվ, ևալլն: «Արարատ»-ի հիմնադիր Գևորգ Դ.-ի մահից հետո, ամսագրի նկատմամբ նովնախիս մեր և հոգածություն է ցուցաբերում Մակար կաթողիկոսը: Նա հայ ձեռագրագիտության զարգացման խոշոր հովանավոր էր, դեռևս իր վարդապետության օրոք գնալով Դարաշամբի Մաղարդա և. Ստեփանոսուն նախավորակայի վաճքը, այնտեղից Եջմիածնի մատենադարանն էր տեղափոխել բազմաթիվ մեծարժեք ձեռագրեր, այդ թվում նաև հշանավոր փողուկրյա կազմով Ավետարանը: Եվ ահա «Արարատ»-ի հրատարակության երկրորդ տասնամյակի վերջում 1887 թ. նախապատրաստական աշխատանքներ են տարվում ընդհանրապես նրա բովանդակությունը և հատկապես հայագիտական բաժինը բարեկալվելու ուղղությամբ: Այդ մասին առաջնորդողում ապամակ է: «Վեհափառ Հայաստանի բարի ցանկության և կամքի համաձայն՝ առաջիկա 1888 թ.-ից սկսած «Արարատ» ամսագրից թե՛ լոր բովանդակությամբ և թե՛ դիրքի կողմանե ենթարկվելու է փոփոխության: Մայր Աթոռուս միարանության հետ հրավիրվում են աշխա-

<sup>8</sup> «Արարատ», 1879, էջ 188—189:

<sup>9</sup> «Արարատ», 1887, էջ 1—2:

տակցելու «Արարատ»-ին և Ծեմարանի ուսուցական խոսքն, ինչպես և ազգին մեջ ամենուրեք գտնվող բանակը գիտնական և ուսումնական անձինք, որոնք հետաքրքր քրովում են ազգային պատմության, գրականության, ազգային եկեղեցոյ և եկեղեցական դասի վիճակին, ինչպես և հոգևոր ծխական դպրոցների բարեկարգության վերաբերյալ նյութերով»<sup>10</sup>: Աշխատակիցները վարձատրվելու էին: Այսպիսով հիշյալ նախապատրաստական լորչ աշխատանքներին իրեն հետևանք՝ «Արարատ»-ը իր հրատարակության 20-րդ տարեդարձին և ապա երրորդ տասնամյակի սեմին՝ հայագիտական և հատկապես ձեռագրագիտական հոլոթերի հրատարակմամբ ապրում է: իր մեծ վերելքը, մեծացվում է ամսագրի էջերի քանակը: Ակաած 1888 թ. համարներից ամսագրում նոյնին ստեղծվում է ձեռագիր բնագրերի հրատարակման հատուկ բաժին «Ս. Էջմիածնի գրադարան» անունով: Ինչպես նշված էր այս շրջանի առաջնորդողներից մեկում, «Արարատ»-ի խմբագրության քաջ հայտնի էր, որ Մայր Աթոռի գրադարանը աշխարհում գտնվող հայերեն ձեռագրերի ժողովածուներից ամենամեծն է, իսկ նրա դուռը Մակար կաթողիկոսի հրամանով լայն կերպով քացվել են հանդեսի խմբագրության համար, որպեսզի հայ ազգին անցյալին վերաբերող հրանց մեջ գլուխվող նյութերը «գեթ իրեն հում նյութեր» հետզինեւ հրատարակվեն և հնարավորություն ստեղծեն հայ գիտնականներին գրելու հայ ժողովորդի պատմության նվիրված գիտական աշխատությունները: Որոշվում է հրատարակել ձեռագիր հուշարձանների հիշատակարանը ժամանակագրական կարգով հատկապես 1700—1800 թթ. վերաբերյալ: Շարունակելով նախորդ տարիների փորձը ամսագրով, ինչպես ասված է, իրեն նպատակ է դնում. «Հրատարակելու և նախնյաց երկերից անտիպ մնացած ընտիր աշխատություններն են, գիտությանց որ նյութին էլ նորա վերաբերելու լինեն: Այսպիսիք են ինչն թարգմանական, հայ ինքնուրույն իննու նոր ճառախմտություններ, վկայաբանություններ, պատմական գրվածքներ, իմաստական և քերթողական երկեր, գործածություններ դրույթում մնացած շարականներ, գանձեր, տաղեր և այլն»<sup>11</sup>: Ամսագրի այս շրջանի էջերում ներկայացվում է մատենադարանի գոհարներից մեկի՝ արքայական Շաշոց գրքի մանրանկարների նկարագրությունը և բերվում է նաև նոյն ձեռագրությունը Ռուբենյանց թագավորական հարշ-

տության նվիրված հիշատակարանը: Հրատարակվում են պարբերաբար 17-րդ դարի ձեռագրերի հիշատակարանները հրանց համայն կցելով նաև պատմական ծանոթագրությունները: Անհրաժեշտ է նշել, որ դրանք



Պատրոս Աղայան

մինչև իսկ այժմ իրենց նշանակությունը չեն կորցրել, քանի որ դեռևս 17-րդ դարի ձեռագրերի հիշատակարանները չեն հրապարակված առանձին հատորներով: Նրանք առանցուց են բովանդակում Հայաստանի քաղաքական դրույթան, Էջմիածնի վիճակի, կաթողիկոսների կենսագրության և այլ հարցերի վերաբերյալ: Լուս են տեսնում Զաքարիա Կաթ.-ի, Վարդան Վ.-ի, Աքրահամ Կրեստոցու, Հովհաննի արք. Արդույքանի և այլոց անտիպ գործերը, օտար թեղինակներից Հակոբ Միջն, Որոդինեան և ուրիշների գրվածքները: Հայունաքերվում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի 1775 թ. հրատարակված «Տօնացոյց»-ի բնագիրը և լուս են ընձայվում նաև անտիպ հնագույն վավերագրեր: Առաջին անգամ հանդես է գալիս Միարան՝ Գալուստ Տեր-Մկրտչյանը, ծած-

<sup>10</sup> «Արարատ», 1887, էջ 511:<sup>11</sup> «Արարատ», 1888, էջ 28—27:

կագրերի հրատարակությամբ և վերծանությամբ: Անվանի հեղինակ Ստ. Պալատանի գրում է Վահան Մամիկոնյանի մասին, իսկ հայտնի գրող Պ. Պողոսյանը մասնակցում է՝ Պոտոսյի «Կովկասյան պատերազմին նվիրված գործից հայերին վերաբերող մասի թարգմանությամբ ևալլե:

# Ա Ր Ա Ր Ա Տ

Կ Ր Ե Վ Ա Խ Ա Բ Ա Ն Ա Վ Ա Ր Ա Տ Ա Խ Ա Բ Ա Ն Ա Վ Ա Ր Ա Տ

Ս Ի Ր Ա Խ Ա Բ Ա Ն Ա Վ Ա Ր Ա Տ Ա Խ Ա Բ Ա Ն Ա Վ Ա Ր Ա Տ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

Թ Ի Ւ Ի Շ Տ Ե Ր Ի Զ Դ Յ Ո Ւ Խ Ա Բ Ա Ր Ա Տ

Վ Ա Ր Ա Ր Ա Տ

Ա Ր Ա Ր Ա Տ Ա Խ Ա Բ Ա Ն Ա Վ Ա Ր Ա Տ

Ո Յ Ա Ր ՝ 1893

«Արարատ»-ի 1893 թ. տիտղոսաթերթը

«Արարատ»-ի երրորդ տասնամյակը (1888—1897) շրջադարձայն կետ հանդիսացալ ամսագրի կանքում: Այս շրջանում այնտեղ Ակում են հանդես գալ ապագայի մեր այնպիսի խոշոր հայրագետները և ձեռագրագետները, ինչպիսիք են Կ. Վ. Տեր-Մկրտչյանը, Գ. Տեր-Մկրտչյանը, Սողոմոն Սողոմոնյան սարկավագը (աննման Կոմիտաս Վրդ.), Սահակ Վ. Ամառումին, Խ. Վ. Ռատյանը, Մեսրոպ Վ. Տեր-Մովսիսյանը, իսկ աշխարհականներից՝ Կ. Կոստանյանը, Մ. Արելյանը, Ստ. Մայսայանցը, Հր. Աւայրյանը, Գր. Խալաթյանցը, Երվ. Շահա-

զիզը, Միկ. Քարամյանը, Ա. Տեր-Միքայելյանը, Ս. Հայկունին և որիշները: «Արարատ»-ի խմբագրերը և հրատարակչության հանձնաժողովները հետագայում ընտրվում են հիշյալ պատկանայի գիտնականներից և որոնք ել են որ փայլ են տալիս իր վերելքը ապրող հանդեսին: Մեծ ուշադրություն է դարձվում հայագիտական հորմանական հրատարակելու ուղղությամբ: 1895 թ. առաջնորդողում կարդում ենք. «Արարատը նոյնաժամանակ պատմական և գրականական մի թերթ պիտի լինի, որ լուս ափուն մեր պատմության և գրականության մութը և դեռ անձանոթ կետերի վրա»<sup>12</sup>: Այս ժամանակ մատենադարանի գրչագրերի թիվը անցել էր արդեն 3000-ը, որը և մեծ մուտք է տալիս ձեռագրագիտության զարգացմանը: 1895 թ. մի առաջնորդողում ուղղակի համացանք էր համարվում մատենադարանում պահպան գրչագրերի նկատմամբ անսպառ մնալը: Այսուղեղ բարացի գրվածք էր. «Ս. Էջմիածնի բերանը (իմա «Արարատ»-ը) հանձնավոր կլինի, եթե վանքի հարուստ ձեռագրատնեց լուս չընծայէ թագնված և անհայտ գանձեր»<sup>13</sup>: Մասնավորելով մեր խոսք սույն տասնամյակի ընթացքում հրատարակված բևագրերի բանակին և արժեքին կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե նշենք, որ այն բացառիկ տեղ է գրակում ոչ միայն ամսագրի, այլև այս շրջանի բովանդակության կյանքում: Անհրաժեշտ է այս առթիվ նկատել մի հաճագամանք ևս, ի տարբերություն «Արարատ»-ում նախապես կատարված բևագրային հրատարակությունների, որոնք մեծ մասամբ լուս էին տեսնում իբրև ապագա գիտնականների կողմից օգտագործելի հում հյութ, արդեն այս շրջանում հրատարակված բևագրային նորությունները մեծ մասամբ ենթարկվել են լուրջ հետազոտության: Ուստի նախորդը այն մեծ սերն էր, որ նկատի ու ներ անշուշտ ձեռագրագետ Միհրանը, երբ իր հետազոտություններից մեկում գրում էր. որ այդ «Այս համոզման արդյունքն է, որ «Արարատ»-ը յուր կրոնական-պատմական բաժինը մեծ մասամբ պետք է հատկացնի համայնք կորած համարված կամ անտիպ մասամբ երկերին և նրանց հետազոտությանը, քիչ թե շատ ծառայելով մեր ձեռագրերի մատենադարանի հրատություններ և նաև հանդելուն և նրանց ժամանակի մասնիկներից ազատելուն»<sup>14</sup>: «Արա-

<sup>12</sup> «Արարատ», 1895, էջ 81:

<sup>13</sup> Նոյն տեղում:

<sup>14</sup> «Արարատ», 1892, էջ 93:

րատ»-ը 1895 թ. Յ-րդ համարից ունենում է բնագրերի հրատարակման իր նոր բաժնը «Հավելված» անունով: Այդ մասին Կ. Վ. Տեր-Մկրտչյանը գրել է: «Արարատ»-ը «այս համարից մկան կունենա իր հավելվածը, որ կը լուսագրի և հետզհետև հասուլ կտրեներ Մայր Աթոռի ձեռագիրներից՝ առ այժմ որքան կարելի է հնագոյն Բիշատակարաններ»<sup>15</sup>: Անհրաժեշտ է նշել, որ Խրիմյան Հայրիկը ևս իր կարողիկուսության շրջանում բացառիկ հովանավորություն ցուց տվեց դեպի հայագիտության զարգացման գործը: Այդ է պատճառը, որ 1896 թ. դեկտ.-ի 31-ի իր կողմակով Հայոց Հայրիկը «Արարատ»-ի խմբագիր ամսվանեց բազմահմտագիտնական Կ. Վ. Տեր-Մկրտչյանին, որն իրեն գլխավոր աշակից ունեցավ նովնքան հմուտ՝ Միաբանին: Խրիմյան Հայրիկը 1897 թ. Սուրբաւարքեավ. Պարզանին նշանակեց խմբագրական հանձնաժողովի նախագահի, իսկ անդամներ՝ Նահապետ Վրդ. Նահապետյանին, Վահան Վրդ. Տեր-Գրիգորյանցին, Կարապետ Վրդ. Տեր-Մկրտչյանին, Սահակ Վրդ. Ամասունում, Նիկոլայոս Քարամյանին և բանաստեղծ Հովհաննես Հովհաննեսիանին: Սակայն ամսագրի հիմնական դեկանարդ շարունակում է դարձալ մենա բանակեր Կ. Վրդ. Տեր-Մկրտչյանը: Մեծացվում է հանդեսի ծավալը: Մեծանուն Հայրապետը կարգադրում էր նաև. «Հայրապետ հնարա բարորքելոյ զրաշխումն Ելիթոց, հրափերելոյ և քաջալերելոյ զնորանոր աշխատակիցն՝ առանձակի յեկեղեցականացն դասու, և ընտրելոյ զնորանոր Ելիթու հետաքրքրական ի ձեռագիր մատենից Մայր Աթոռոյ կամ ի դիանաց Հայրապետանոցի և Սինօսի»<sup>16</sup>:

Այս շրջանում արդեն անքան առաջ է հրատարակված բնագրերի և հետազոտությունների թիվը, որ մի առ մի նշելու համար հարկ կլինի գրել առանձին մի ուսումնասիրությունն: Նշենք միայն մի քանի անուններ: Կ. Վ. Տեր-Մկրտչյանը հանդես է գալիս Աստվածաշնչի անվավեր մի շարք գլուքերի հրատարակությամբ և ուսումնասիրությամբ, նաև զքաղլում է նաև բնագրերը կորած հովու հետինակների հայերեն թարգմանություններով և «Գիրք թվայոց»-ի լրացրություններով: Միաբանը հրատարակում է Ան. Նարեկացու կորած համարված «Գիրք խոսությանութեան»-ը, «Հայկական» իր հոդվածաշրում ծանոթացնում է անհատ մենացած Տիրան, Արամ և այլ մատենագրերի գործերին, ուսումնասիրում է Մ. Խորենացու, Ան. Շիրակացու աշխատությունները և

Անանիա Մոկացի կաթ.-ի անտիպ թղթերը, հրատարակում է «Գիրք ներձուածոց»-ը: Իր «Հին հայ երգիշներ» և «Ս. Էջմիածինը հայ երգիշների տաղերում» գործերում նիկ. Քարամյանը ձեռագրական հարուստ նյութեր է դնում շրջանառության մեջ: Սահման



S. Գարեգին Վրդ. Հովհանիս

Վ. Ամասունին տարիներ շարունակ հանդես է գալիս հայ անհայտ շարականներին Վերաբերող իր ուսումնասիրություններով, որ 73 գործագրերի հիման վրա ի հայու է բերում 243 անհայտ շարականներ: Բանասեր Կ. Կոստայիսը զբաղվում է Համամ Արևելցիով, Մկրտիչ Նաղաշով և այլն: Ականավոր գիտնական Մ. Աքելյանը շարունակարար հրտ. է իր «Հայ ժողովրդական առասպեկտները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» մեծածավալ արժեքավոր աշխատությունը: Խաչիկ Վ. Դաղյանը զբաղվում է Մովսես Կաղամիկանվացու Աղվանից պատմության Մայր Աթոռում պահվող ձեռագրերի ուսումնասիրությամբ: Այս ամսագրի էջերում է, որ 1894 թ. մուտք է գործում, դեռ սարկավագ, ապագա մեծ Կոմիտաս Վրդ.-ը գրելով իր առաջին ուսումնասիրությունները հայ երաժշտության մասին. ինչպես օրինակ. «Հայոց եկեղեցական եղանակները» և այլն: Անվանի հայագետն Գր. Խալաթյանը լուս է ընծայում մատենադարանում իր հայտնաբերած «Ա. և Բ Մեացորդաց գրքերի աստրենենից հայերեն թարգմանությունը» և այլ արժեքավոր գործեր:

<sup>15</sup> «Արարատ», 1895, էջ 82:

<sup>16</sup> «Արարատ», 1897, էջ 1—3:

«Արարատ»-ը իր հրատարակության 4-րդ տասնամյակն է թևակերպում (1898—1907) հաստատաքայլ շարունակելով իր բուռն վերելքը: «Արարատ»-ը մեծ ձեռնախառլությամբ խմբագրող Կարապետ վ. Տեր-Մկրտչյանը 1899 թ. Վերջում երր ստիլիզեց հրաժարվել, քանի որ ծանրաբենված էր Մայր Աթոռի ժառանձգակրոց ճեմարանի տեսչության գործով, 1900 թ. Ակզրից խմբագրությունը Խորիմյան Հայրիկը հանձնեց հայագիտության ապագա մեծ երախտավոր Գարեգին վ. Հովսեփյանին, որին կրոնական և այլ բնույթի բաժինների մեջ միասին, հրահանգուում էր հատուկ ուշադրություն դարձնել մասնակութան հայագիտական գործերի վրա. Հայրիկը այս առթիվ գրել է. «Զան ի գործ դեմ զօրացուցանել ըստ կոչման ամսագրին Մ. Աթոռոյն զգիտական, զպատմական, զմատենագրական, զինախօսական բաժինն առ ի բարձրացուցանել զբարի ամուն և զգիտական համբաւ մահանո՞թեան Սո՞րո Էջմիածնի»<sup>17</sup>: Գնահատելով հայագիտության զարգացման գործը, Խորիմյան Հայրիկը իր կոնդակով կարգադրում էր նաև հետևյալը. «Թողլ տամբ Քեզ առ ի խրախուս աշխատակցաց բանահրաց՝ տալ նոցա ըստ ցանկութեան իրեանց զարտառապութիւն յօդուածոցն առանձին տեսորակօք, եթէ առաւել իցեն յօդուածքն քան զմի թերթ տպագրական»<sup>18</sup>:

Գ. վ. Հովսեփյանը սկզբից նեթ մեծապես գնահատում է Կ. վ. Տեր-Մկրտչյանի աշխատանքը արդարութեան հշելով, որ «Եթե այսօր «Արարատ»-ը կրոնական և գիտական տեսակետով՝ որպես Եվրոպական ամսագիր մեր ձեռքն է անցնում, գիտակրապես պարտական ենք նախկին խմբագրի անթուլ աշխատանաց»<sup>19</sup>: Գ. վ. Հովսեփյանը ոչ միայն ցանկանում է շարունակել իր հայորդի գործը, այլև հիգ է ի գործ դնում ամսագիր ավելի ճնշացնելու և նրա շորջը նորանոր աշխատակիցներ համախրմելու համար:

Գ. վոր. Հովսեփյանը խոսելով «Արարատ»-ի ուղղության մասին նշում էր. «Արարատ»-ը միայն մի ուղղություն կարող է ունենալ, եթէ տասնական խմբագիրներ էլ միմյանց հետևի փոխկեն: Նա Հայոց Հայութապետական Աթոռի պաշտոնական թերթն է: Ա. Էջմիածնի միաբանության բերանը, Հայաստանյաց եկեղեցու միակ կրոնական գիտական թերթը, որի Տերը Հայոց Հայութապետն է:

<sup>17</sup> «Արարատ», 1900, էջ 8:

<sup>18</sup> Նոյն տեղում:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 10:

«Արարատ»-ը երկու նպատակի է ծառայում, մի կողմից քահանապական դասակարգի և միջակ ընթերցող հասարակության թերթ պիտի լինի նաև և մյուս կողմից գիտության թերթ»<sup>20</sup>:

Հայ Գ. վոր. Հովսեփյանի, ամսագրի գիտական մասը «Նվիրված պետք է լինի գրխավորապես մեր եկեղեցական պատմությամ, մատենագրությամ, հնախօսության կամ արվեստի և ընթերապես եկեղեցական քաղաքակղության ուսումնասիրության». Այդ մասին նաև գրել է նաև հետևյալը. «Եմու ինչ վերաբերում է գիտական բաժնին, կցանկանայինք Մայր Աթոռի միաբանության և մշտական մյուս աշխատակիցներից զատ՝ նաև դրսի բանասերների մասնակցությունը տեսանել: Արդեն Մայր Աթոռի միաբան բանասերների թիվը հետզհետև բազմանում է, կարծ ժամանակից հետո հույս ունինք, որ «Արարատ»-ը գիտական տեսակետից ավելի մեծ հառաջադիմություն ցույց կտա, քան մինչև այժմ, սակայն մեզ համար ցանկալի է, որքան կարելի է գիտական բազմազան ուժեր հավաքել «Արարատ»-ի շորջը»<sup>21</sup>:

Գարեգին վոր. Հովսեփյանը վայելելով Խորիմյան Հայրիկի անվերապահ վստահությունն ու տպարանական վարչության սիրայի աշակցությունը նշում էր, որ «Անենք պատրաստ ենք մինչև իսկ սովորական ծավալից ավելի ընդարձակել գիտական բաժինը»: Նա միաժամանակ ցանկություն էր հայտնում, որպեսզի «Հավելվածում» հրատարակվեն ընդարձակ ուսումնասիրություններ կամ բնագրեր, որոնք Վեհափառի Վերթիշյալ հրամանի համաձայն պետք է հրատարակվեն նաև առանձին գրքերով: Նշվում էր այդ բաժինը պատկերազարդ դարձնելու մասին: Այդ մասին նոր խմբագրի գրել է. «Մինչև այժմ խուսափում էինք պատկերազարդ հնագիտական հոդվածներ հրատարակել «Արարատ»-ում, քայլ այսուհետև Հայրապետական կոնդակի համաձայն սիրով կը ընդունինք այսպիսիները: Ցանկալի էր մանավան Թ, Ժ, ԾԱ դարու ձեռագիրների նկարագործություններ, հնաբության և մանրանկարչության պատմության համար արժեք ունեցող պատկերներով, վանքերի նկարագործություններ պատկերներով, հատակագծով և արձանագործություններով, գեղեցիկ խաչքարեր և այլն»<sup>22</sup>:

Նկատի ունենալով հետագա անող ծախսերը, Գ. վ. Հովսեփյանը իր առաջնորդողություն գրում էր նաև հետևյալը. «Ա. Վեհի


<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 20:

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 21:

<sup>22</sup> Նոյն տեղում, էջ 21:

շանկությունն է «Արարատ»-ը ճնշացնել ըստ ամենայնի, առանց նկատի ունենալով հյութական ծախսերի աճումը», քանի որ ըստ նրա ճիշտ եղակացության, «Մայր Աթոռի բարոյական հետինակությունը բարձր է ամեն տեսակ հյութական շահերից»<sup>23</sup>: Սակայն 1901 թ. մայիսին նոր պաշտոնի անցնելու հետևանքով, Գ. Վ. Հովհանիսյանը ստիպում է հրաժարվել խմբագրի պարտականությունից, որից հետո նոյն տարվա վերջին համարները շարունակում է դարձյալ հրատարակել Կ. Վ. Տեր-Մկրտչյանը: Ապա 1902 թ. խմբագրապետն է նշանակվում Միաբանը իրեն իրը օգնականներ ունենալով Սիր. Տիգրանյանին և Հ. Մանանդյանին: Նոր շրջանում փոքրացվում է նրա ծավալը, սակայն էջերի քանակը հասնում է մինչև 100-ի: 1907 թ. Խրիմյան Հայրիկը դարձյալ Գ. Վ. Հովհանիսյանին է հանձնում խմբագրապետության պաշտոնը, որը շատ է նպաստում հայագիտական քածենի ճնշացմանը: Այս շրջանում էջմիածնում ձեռագործի թիվը արդեն սկսել էր անցել 3800-ը, որոնց ուսումնափորումը նորանոր բնագրերի հայտնաբերման առիթ է հանդիսանում: Դեռևս 1898 թ. սկսած, «Արարատ»-ի էջերն են սկսում զարդարվել Գ. Վ. Հովհանիսյանի հնագրական և պատմա-քանակական բնույթի գործերով, այդ թվումն էին «Ծղրութի Ավետարանը» (974), որը այժմ էլ միակ աշխատությունն է գրված այդ ձեռագրի մասին, գրչագիրը ցարդ պահպանվում է Ախալցիքայի մոտ գտնվող հակական այդ գուղում, «Միիթար Մանեցի»-ն, որը գնահատվում է Հ. Տաշյանի և Կ. Բասմաջյանի հման հայագետների կողմից և այլ մեծարժեք ուսումնասիրությունները: Հայագիտական ուսումնասիրություններով են զբաղվում Միաբանն ու Կ. Վ. Տեր-Մկրտչյանը, Ն. Մառը, Ն. Աղոնցը, Հ. Աճայանը, Հ. Մանանդյանը, Մ. Արենյանը, Ս. Կանաւանը, Եռ. Վ. Տեր-Մկրտչյանը, Գր. Խալաթյանը, Մ. Բերբերյանը, Եր. Շահազիզը, և շատ ուրիշներ: Ընդարձակվում է ամսագրի աշխատակիցների ոլորտը, նրան թղթակցում են նույնիսկ արտասահմանում գործող հայագետներ և ամսագիրը իր տարածումով և աշխատակիցների ընդգրկումով ստանում է համահայկական բնույթ: Նրան աշխատակցող արտասահմանյան հայագետներից հիշատակենք, Տրդատ եպ. Պալյանին, Բ. Վ. Կյուլեսերյանին, Կ. Բասմաջյանին, Հ. Թիրաքյանին և ուրիշներին: Ամսագրում ամրապնդվում են հայագիտության մի շարք ենթարածինները. հայ երածշտության խագերի

և շարականների մասին աշխատակցել են մեծանուն Կոմիտաս Վ.-ը, Ս. Վ. Ամառունին, Սպ. Մելիքյանը. Հայ իրավաբանական մտքի վերաբերյալ հոդվածներ են գրել Ս. Տիգրանյանը և Արս. Վ. Ղուճյանը: Հրատարակում են նաև «Գիրք թղթոց»-ի թերի և անտիպ մասերը (հետ. Հ. Գյուղիսանդյանի և այլն, և այլն):




Ստեփան Մանայանց

1903 թ. էջմիածնի մատենադարանի ապագա մատենադարանապետ Ս. Տեր-Հակոբյանը հրատարակում է Վարդան Վրդ-Բաղիշեցու «Ծուցակ գրոց Ամրդօրու վանքին» հնագույն և արժեքավոր ձեռագրացուցակը: Միաբանը համեմատական բնագրով լույս է ընծայում Հովհան Մանեցիունու «Յաղագի սիրոյ և սրբութեան ոռով պրոտոքերին արարածք» գրոծը: 1904 թ. Հակոբ Մանանդյանը հանդիս է գալիս Դավիթ Հարբացի Փիլիստիային վերագրված իմաստահրական երկերի ուսումնասիրությամբ, Հովհանիկ եպիսկոպոսի պահապահությունում: Զեռագրագիտական նյութերից 1905 թ. լոյս են տեսնում Ստ. Կանայանի «Արգար Հովհաննիսյանի ձեռագրերը» հայողորդումը և Գարեգին Վրդ. Մրկաննետյանից:

<sup>23</sup> Նույն տեղում:

«Մշոյ Ս. Կարապետ վանուց ձեռագիր գրքեանը» գրոծը և այլն:

«Արարատ»-ի 5-րդ տասնամյակը, (1908—1919), որը և վերջինը եղավ նրա հարուստ կյանքում, շատ բանով զիջում է իր 3-րդ և 4-րդ տասնամյակների համարներին։ Այդ առաջին հերթին հետևանք էր խմբագրական կազմի թուլացմանը։ Այս առումով



Մանուկ Արենյան

շատ վատ անդրադարձավ Խնիմյան Հայրիկի մահից հետո այն ժամանակվա կաթող. տեղակալի հրամանը, որի համաձայն բազմահմուտ գիտնական Գ. Վ. Հովսեփյանը 1908 թ. նոյ.-ի 5-ին ազատվեց խմբագրապետի պաշտոնից։ այդ հրամանագրում ասված էր. «Ի նկատ առեալ, զի «Արարատ» ամսագիր ընդ Զերու խմբագրությամբ ոչ ծառայէ ճապատակի լուրում որպես կրոնական թերթ, և որպես պաշտոնական թերթ Ս. Էջմիածնի... արձակեմք զՁեզ ի պաշտօնէ խմբագրության, ի տեղի Զեր կարգեմք զբարձրապատիվ Տ. Մատթեոս վրդ. Մատթեոսյանց...»<sup>24</sup>։ Սակայն չնայած ամսագրի ժամանակավոր վարեցքին, «Արարատ»-ի շուրջ ստեղծված մեծ խանդական կաթող.

հիմնովին կասեցնել հնարավոր չեր: 1909 թ. Մատթեոս Բ կաթ.-ը խմբագիր է հշանակում Հովսեփ արք.-ին: Սակայն շուտով 1911 թ. խմբագիր է հշանակում Արեգ արքայա Արքահամյանը, իսկ խմբագրական անդամներ են դատում Ս. Արենյանը, Գ. Ալթումյանը, Ո. Արքահամյանը, Գ. Եղիշյանը: 1913 թ. հանդեսը խմբագրում է Ներսես վ. Միքայելյանը և իր առաջնորդողություն առաջարկում է բոլոր կարող անձանց աշխատակցել: 1913 թ. վերջից մինչև 1915 թ. վերջը Բար. վ. Աղավելյանի և ապա Տիրապ ծ. Վ.-ի կողմից խմբագրվելուց հետո, «Արարատ»-ի վերջին շրջանի խմբագրություններ են վարում Մեսրոպ և Գարեգին եպիսկոպոսները և Գյուտ վարդ.-ը, այս վերջինը, նաև պատասխանատու խմբագրի պաշտոնը: Մրագրվում էր «Արարատ»-ը հետագայում հրատարակել երկու մասից. Ա. իրքն երկարաժամկերթ պաշտոնական, կրոնական և ազգային բաժիններով, Բ. գիտական, հայագիտական եռամյա հանդես: 1918—1919 թթ. վերջի երկու համարները, որոնք շատ փոքր էին իրենց ծավալով, գրեթե ամբողջությամբ նվիրված էին հայագիտական հյութերին: Վերջին տասնամյակում պատմա-բանասիրական հյութերով հանդես են գալիս Միհրանը, Գ. Վ. Հովսեփյանը, Մես. վ. Տեր-Մովսիսյանը, Խաչիկ Սամուելյանը, Ստ. Կանայանը. Թ. Ալդարելյանը, Ս. Արենյանը, Հր. Աճառյանը և որիշները: Տիրապ Վ.-ը մկում է հրտ. մոռացված մի հայ երգչի (Ֆրիկի) մասին գրած իր ուսումնասիրությունը, Մ. վ. Մարտիրյանը լույս է ընծայում Ագուլիսի և շրջակայի ձեռագրերի ցուցակը, որը ընդգրկում է 37 գրչագրերի նկարագրություններ և որոնց մեծ մասը այժմ կորած է գիտության համար և ինչ որ գիտենք նրանց մասին, այն պարտական ենք «Արարատ»-ին:

Այս շրջանից անհրաժեշտ է հիշատակել նաև 1910 և 1911 թթ. Մեսրոպ եպիսկոպոսի կողմից գրված, հոդվածները Երուսաղեմում պահված Գագիկ թագավորի կամ Կարսի Ավետարանի և Գագիկ թագավորի մանրանկարի մասին, Գար. քահանա Կիրակոսյանի հաղորդումը Նոր Ջուղայի մատենադարանի վերաբերյալ, Կ. Եպիսկ. Տեր-Մկրտչյանի «Անհայտ մնացած մի հայ մատենագիր ԺԲ դարու», այսինքն Հովհաննեսի որդի Մուշե կրոնավորի 1118 թ. գրած աշխատության մասին և այլն: Բարգեն Վրդ. Աղավելյանը ամսագրի 1915—1917 թթ. համարներում հրատարակում է երրեմնի մատենադարանապետ Մանուկ վրդ. Կյումիշյաննեցու «Պատմությունը» և կամ «Համառոտութիւն ծննդեան և դիպուածոց Մ. Վ. ի.

<sup>24</sup> «Արարատ», 1908, էջ 959:

Կիսմիշխանեցոյ» գործը և որը ուշագրավ աղբյուր է հայ ժողովրդի նոր շրջանի պատմության համար: Շատ բեղմնավոր է հանայաց շրջանում Գ. Վրդ. Հովհաննիկյանի աշխատակցությունը: Այդ թվին են պատկանում նրա «Զեռագրական նորություններ» հոդվածը, որի մեջ ո՞չագրավ է Մեծ եղեննի բնագրից՝ Ստեփանոս Սյունեցոյ և Որոգինեայի անոնիա գործերին վերաբերող հաղորդումները, ինչպես նաև դարձյալ նրա կողմից գրված անվանի տաղերգուներ Գրիգոր Աղթամարցուն և Հովհաննի Սերաստացուն նվիրված ուսումնասիրություններն ու բնագրերի հրատարակումները: «Արարատ»-ի վերջին շրջանում Մերուու եպիսկոպոսը հրատարակում է նաև արձանագրություններ Տաթևի վանքի և շրջակայքի և Շարունի Բագրատունուն վերագրված «Պատմությունը»: Դարձյալ այս շրջանի համարներուն առաջին անգամ հանդես են գալիս նորանոր աշխատակիցներ, որոնք ևս մեծ անուն են բողնելու մեր վերածնվող հայրենիքի գիտական բարձր: շրջանակներուն: Վերջին տասնամյակի այդ նոր աշխատակիցներից էին Արսեն Տերտերյանը՝ Հ. Թումանյանի և այլոց մասին գրած իր գրականագիտական հոդվածներով, Գ. Ղափանցյանը՝ «Հնության մի քանի հիշատակարաններ», Աշ. Հովհաննիսյանը՝ «Նոր հյութեր հայ ունիթունական պատմությունից» և «Պետրոս դի Սարգսի Գիլանեց» և այլ ուսումնասիրություններով:

Համառոտակի ուրվագծելով «Արարատ» ամսագրի շորջ կես դար տևող հայագիտական գործունեությունը, անհրաժեշտ է եղանական, որ նա ընդհանրապես կարող դեր է խաղացել հայ ժողովրդի հասարակական, եկեղեցական և հայագիտական կյանքում: «Արարատ»-ը անգամ իր բովանդակած կրոնական, բարոյախոսական, քարոզական, ծիսական, մանկավարժական, հետարքրական և այլ բնույթի նյութերով, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոսության պաշտոնաթերթ, քավական կիմներ իր արժանի տեղը գրավելու մեր հման տիպի պարբերականների շարքում: Սակայն «Արարատ»-ի արժեքը պետք քանի կրկնապատկրվում է, եթե նկատի ենք ունենում հատկապես նրա էջերում պարփակված ձեռագրական հրապարակումներն ու պատմա-բանասիրական բնույթի բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրությունները: Նրա էջերում հայագետը կարող է գտնել հայագիտության բազմազան և բազմարվանդակ բնագավառների, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող ուշագրավ գործեր:

Թե ինչքան բազմահարյուս և մենայուն արժեք ունի հայագիտական բնագավառը իր մասնակցութերով նաևներ «Արարատ»-ի 50 տարվա հավաքածուում, այդ ցույց կարող է տալ նրա ընդգրկած նյութերի ոչ ամ-



Գարեգին Ղևոնյան

բոլջական եղող հետագա պարզ թվումն իւկ: Ամենից սուած նա բովանդակել է հայ ձեռագրագիտության վերաբերող շատ հարուստ նյութեր, որոնք ստեղծվում են հայ հնագրության, մանրանկարչության, ծածկագրության, գրիշների, ծաղկողների, պատվիրատուների կանոնքների, էջմիածնի և Հայաստանի սահմաններից դորս գտնվող ձեռնագրագիտության և կամ նրանց մասին տրված տեղեկությունների: Նովազես հրատարակվել են նաև պատմական արժեքի բազմաթիվ հիշատակարաններ քաղված մեր գրչագրերից, ինչպես նաև մեր միջնադարյան մատենագիրների անոնիա գործերը, բնագրերը կորած, սակայն հայերեն թարգմանությամբ պահպանված օստար մատենագիրների աշխատություններ, ի դեպ մի շարք

հայ մատենագիրների գործերը հրապարակվել են գիտական համեմատական բնագրով։ Լուս տեսած սկզբնաղբյուրների թվումն են նաև մեր միջնադարյան և նոր շրջանի, առակայի մինչ այդ աճախի եղող, վավերագրերի հրատարակումը, հաճախ ծանօթագրություններով հանդերձ։ Դարձայ նշանակալից երևոյթ է նաև որարտական սեպան արձանագրությունների և երթամն նաև հրաց թարգմանությունների հրատարակումը, Հայաստանի տարբեր մասերում ցրված վեմարձանագրությունների լուս ընծայումը։ Նյութեր և ուսումնասիրություններ են լուս տեսել հայ ժողովորդի հին, միջն և նոր շրջանի պատմության, հայ և կեղեցու պատմության, հայ հին և նոր գրականության պատմության, հայ գաղթավայրերի պատմության վերաբերյալ։ Հրատարակվել են նաև ուշագրավ տվյալներ հայ բանահայության ազգագրության, հայերի և պարթևների, աղվանների, վրացիների, արաբների, թուրքների, պարսիկների միջև եղող կապերի մասին։ Կան նաև պատմա-աշխարհագրական, հայկական վանքերի, հայ աղաքների, հայ թատրոնի, Ըկարչության, հայ երաժշտության, հայ ճշանակոր և աշխարհիկ գործիչների կյանքին, հայ տպարանների պատմության, հայ լեզվաբանության և բարբառագիտության, հայ փիլիսոփայության, բժշկության և իրավունքի, հայկական դրադուցների, վարքագրության, հայ միջնադարյան արձակի և չափածոյի վերաբերյալ գրրվածքներ, աշուղական և հայ նոր բանաստեղծության նմուշներ և այլ բազմապիսի նյութեր։ Մեծ թիվ են կազմում նաև հայագիտական բնույթի բազմաթիվ աշխատությունների մասին գրված ուշագրավ գրախոսությունները և այլ բազմապիսի նյութեր։ Մեծ թիվ են կազմում նաև հայագիտական բնույթի բազմաթիվ աշխատությունների մասին գրված ուշագրավ գրախոսությունները և այլ բազմապիսի նյութեր։ Ավելացնեն և ասուն։ Ավելորդ չեն նկատել նաև, որ անգամ «Արարատ»-ի «Սինօտի օրագրութիւն», «Ազգային», «Սուրբանդակը Բյուզանդյան» և այլ բաժինների մեջ լուս տեսած լուրերն իսկ առատ նյութ են մեզ տալիս հայ ժողովորդի անցնող հարյուր տարիների ներփակության պատմության մասին։ Այսպիսով «Արարատ»-ը հայագիտության ուսումնասիրության նվիրված ուրույն մի հանրագիտարան է, որը միշտ էլ արժեքավոր է որևէ բնագավառով գրադիր գիտական աշխատողի համար։

Մենք խոսեցինք ձեռագրագիտական, ինչպես նաև որարտական սեպագիր արձանագրությունների և նյութերի հրատարակման նշանակության մասին։ Խոսել մի առ մի հայագիտության վերոհիշյալ ճյուղերի մասին և ցուց տալ «Արարատ»-ի մատուցած ծառապությունները, այդ արդեն մեր նպատակներից դրան է և առանձին ստվար մի մենագրություններից դրեն բոլոր լինելով հայագիտության նովանագործներ բացառիկ ուշադրություն և զուրգութանք են ցուցաբերել դեպի «Արարատ»-ը և նպատել նրա բովանդակության բարեկաման ու նոխացմանը։

Արարատ պատեղ դարձյալ հայրեանցի ցանկանում ենք խոսել նաև հանդեսում հայ օաղթավայրերի պատմության նվիրված էջերի մասին։ «Արարատ» անսագիրը լուս տեսակալ հանդերձ հայրենի նողում, ոչ միայն մեծ տարածում ունեն հայ գաղթավայրերի մեծ մասում, քանի-որ այն ուղարկվում էր և Ռուսաստան ու Հնդկաստան, և Թուրքիա ու Պարսկաստան, և մինչև եւրոպական երկիրները, այլ և իր էջերը նա մեծ սիրով էր տրամադրում այդ վայրերում ապրող հայերի կյանքի արտացոլման հարցերին։ «Արարատ»-ը ոչ միայն անդրադարձում էր իր լուրերի բանում հրաց առօրյա կյանքին, այլև անգամ նոդվածներ և փաստադրություններ էր հրատարակում նվիրված հրաց անցյալի պատմությանը։ Մի ժամանակ, երբ հայագետները դեռ նոր էին պարտավորում ուսումնասիրել հայ գաղթավայրերի պատմությունը, «Արարատ»-ում լուս տեսած նոդվածներն ու նյութերը նվիրված Լեհաստանի, Ռուսիայի, Հունգարիայի, Պարսկաստանի, Ավստրիայի, Թուրքիայի, Պարսկաստանի, Զակարի և այլ վայրերում ապրող հայերին վերաբերյալ, կոստու և նանդեսի ունեցած համահայկական հետաքրքրությունների մեծ որոշիչ մասին։ Անշուշտ «Արարատ»-ը իր կեն դար տևող կյանքում ունեցել է ինչպես իր վերելքի, այնպես էլ իր վայրէջքի ժամանակաշրջանները, սակայն հանուն ճշմարտության պետք է անել, որ բնորոշ նրա բովանդակ գործության ընթացքում եղել է՝ շեշտակի վերելքը։ Անսագործ ձեռք բերած արդյունքները պայմանավորված էին Մայր Աթոռում տիրող հարափոխիս վիճակով, ինչպես նաև խմբագրավետության կոչված անձանց հրմտությամբ և հնարավորություններով։ Սակայն ինչ որ հատկանշական է և էական անսագրի կյանքում, այդ այն է, որ Ամենայն Հայոց հայրապետության գահակալներից գրեթե բոլոր լինելով հայագիտության նովանագործներ բացառիկ ուշադրություն և զուրգութանք են ցուցաբերել դեպի «Արարատ»-ը և նպատել նրա բովանդակության բարեկաման ու նոխացմանը։


«Արարատ»-ը հանդես գալով այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ դեռևս նոր էր սկավում լուրջ հետաքրքրություն ցուցաբերել դեպի հայագիտությունը, և ի մասնակուրի դեպի պահերի երկնած ձեռագիր գամձերը, ևս կարողացավ նորանոր շատ ուժերի համախմբել իր շուրջը և ստեղծել իր, այսինքն «Արարատ»-ի հասուկ դպրոց (շկոլան) և կարևոր դեր ստանձնել հայագետների մի ամբողջ նոյն դաստիարակելու գործում։ Ահա «Արարատ»-ի շուրջ ստեղծված այդ դպրոցի սաներն էին, որ հաղորդ-

վելով հետզհետև լուսին բացվող մինչ այդ անհայտ մնացած մատենագրական գործերի շնորհ և թրծվելով հայ բանասիրության լավագույն ավանդույթներով, իրենք իրենց հերթին կարևոր դեր ստանձնեցին «Արարատ»-ի հաբագրման աշխատանքներում: Նոր կյանք հաղորդելով նրան՝ բարձրացրին ինչպես Մայր Աթոռի, այնպես էլ առասարակ հայ ժողովրդի հեղինակությունը:

Նշանակալից մի երևույթ է նաև այն, որ մեր մշակույթի մեծանուն երախտավորներից ունանք, «Արարատ»-ի էջերում են տպագրել իրենց առաջին գործերը և նույնիսկ ամենածանրակշիռ աշխատությունները: Մեծանուն հայագետ Մ. Արենյանը իր մեծարծեր և ծավալուն գործերը նվիրված հայկական առասպեկտերին, խաղերին և հայ գրականության պատմությանը առաջին հերթին տպագրել է «Արարատ»-ում: Նշանավոր լեզվաբան Հր. Աճառյանը դեռևս 1898 թ. սկսել է աշխատակցել նրան: Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորներից հատկապես Միարանը, Կ. Վ. Տեր-Սկրտչյանը և Գ. Վ. Հովսեփյանը իրենց առաջին ուսումնասիրություններից սկսած մինչև հայագիտական իրենց լավագույն գործերից շատերը հրատարակվել են «Արարատ»-ում: Մեր նշանավոր գիտնականներից Հ. Մանանյանը, Ար. Տերտերյանը, Գր. Ղափանցյանը, Թ. Ավիալբեկյանը, Աշ. Հովհաննիսյանը, Եր. Տեր-Մինալպանը և որիշները իրենց առաջին հայագիտական գործերը, ինչպես նշեցինք, դարձավ սկսել են լուս ընծացել «Արարատ»-ում: Մյուս կարևոր երևույթը, որը ցանկանում ենք մատենաշել, այդ այն է, որ «Արարատ»-ում տպագրվել են հոդվածներից ավելի նաև գրքեր, պահերև ծավալուն ուսումնասիրություններ, որոնք միաժամանակ լուս են տեսնել նաև հատորներով: Այդպիսիք են Արել Եպ. Միհթարյանի, Ա. Վ. Ամառունու, Միարանի, Կ. Վ. Տեր-Մկրտչյանի, Գ. Վ. Հովսեփյանի, Մ. Արենյանի, Հ. Մանանյանի, Հր. Աճառյանի, Աշ. Հովհաննիսյանի և շատ շատերի հատորներն ու գրքովները, որոնք այժմ կարևոր տեղ են գրավել հայագիտական մեր գրադարաններում:

«Արարատ»-ը իր շորջ համախմբած մեծանուն գիտնականներով իր ժամանակին հանդիսացել է նաև մեր գիտության որովն կանոն (ակադեմիան): Այստեղից եւ ընալ պատահական երևույթ չպեսք է համարել այն հանգամանքը, որ վերածնվող մեր հայրենիքի նորատեղ պես: Բամաւարանում, ինչպես նաև գիտությունների կանոնում հրավիրված դասախոսների և անդամների շարքում առաջին հերթին տեղ

են գրավել նաև «Արարատ»-ի շորջ երեսներ համախմբված գիտնականներից ունանք: «Արարատ»-ը իր պատմա-բանասիրական բնույթի և մնայուն արժեք ունեցող ուսումնասիրություններով և բնագրերի հրապառկումներով մեծ համակրանք է վայելել ինչպես հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դրու: Ակադեմիկոս Մանուկ Արենյանը իր «Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց» աշխատության մեջ



«Արարատ»-ի 1878 թ. տիտղոսաթերթը

հշում է, որ «Արարատ»-ի հանդես գալը «Մի շատ անհրաժեշտ բան էր»<sup>25</sup>: Մաղաքիա արք. Օրմանյանը գնահատում էր նրա բովանդակությունը և հշում, որ իր ուսումնասիրությունների ընթացքում օգտագործել է նաև «Արարատ»-ի հյութերը<sup>26</sup>: Վենետիկի Միհթարյաններից հայտնի բանակեր Հ. Մկրտիչ Պոտորյանը «Արարատ»-ի մասին

<sup>25</sup> Մ. Արենյան, Եշված աշխատությունը, էջ 55:

<sup>26</sup> Մ. Արք. Օրմանյան, Ազգապատում, Գ. հասոր, Երևանին, 1927, էջ 4248:

գրել է, որ նա ունեցել է փայլուն շրջաններ և կարող միաբաների ուսումնասիրությանց է նվիրել իր էջերը: Նա իր մատենագիտական աշխատության մեջ բազմաթիվ էջեր է նվիրել պատեղ լուս տեսած արժեքավոր ուսումնասիրություններին<sup>27</sup>: «Բազմավեա»-ի, «Հանդէս ամսօրեայ»-ի, «Բանասէր»-ի և այլ հայագիտական հանդեսների էջերում լուս են տեսել բազմաթիվ դրական գրախոսություններ նվիրված «Արարատ»-ում լուս տեսած հայագիտական ուսումնասիրություններին: Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ տարբեր հանդեսներում հաճախ լուս են տեսել նաև «Արարատ»-ի լավագույն հյուեկորդ ընդգրկող մատենագիտություններ:


«Արարատ»-ի հարուստ ավանդույթները կարևոր օրինակ հանդիսացն են տագայում լուս տեսնող մեր հանդեսների համար: «Արարատ»-ի լավագույն ժառանգորդն է այսօր Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը, որի հրատարակման 25 տարին լրանում է հաջորդ տարի: «Էջմիածին» ամսագիրը վայելելով Ամենայն

Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի բարձր հովանավորությունը, ինչպես նաև Ն. Ս. Օ. Մշտական սերեւ ու համակրաքը, աշխատում է հնարավորության սահմաններում իր լուսն մոծել նաև հայագիտության գործում և շատում է լինել իր մեծ հախորդի՝ «Արարատ»-ի լավագույն հայագիտության ասպարեզում:

Թեև հարյուր տարի է անցեւում այսօր «Արարատ»-ի հիմնադրությամբ, սակայն նա իր բովանդակությամբ իրու հայագիտության անսպաս գանձարան միշտ թարմ է մնում: «Արարատ»-ի կողմից հայ բանասիրությանը մատուցված մեծ ծառայությունները իրավամբ նրան դասում են համարական չափանիշով մեր ամենանշանավոր հայագիտական պարբերականների շարքում: «Արարատ»-ը պայուն է հայագետների կատակի պատահությունը: Ինչպես անցալում, այնպես էլ ներկայուն նրան են դիմում և ապագայում դարձալ նրան են դիմելու հայագիտությամբ զրադշող մեր աճող նորանոր սերունդները:

Ահա ապա բոլորի մեջ է կայանում Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» հանդեսի ունեցած պատմական նշանակությունը և նրա կողմից վատակված անթառամ փառքի գերագույն հմաստը:

<sup>27</sup> Հ. Մ. Գ. Պոտույթան, Հայ մամուլ տասնմեծնագ տարում մէջ 1894—1909, Վեմետիկ, 1909, էջ 199—225:



## Ա. ԱԿ. ԹՈՍՅԱՆ

(Բանահրական գիտությունների թեկնածու)

### ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԿԱՎՈՒՄ Է 5-ՐԴ դարում, գրերի գյուտի հետ միասին, երբ մեր ուսումնասեր նախնիք թարգմանեցին, ավելի շուտ փոխադրեցին Թրակացու քերականությունը: Միշին դարերում ստեղծվեցին քերականագիտական ու ռազմագիտական բարձրարժեք երկեր: Սակայն գիտական բովանդակությամբ՝ հայ լեզվաբանությունը մեր իրականության մեջ սկսվեց 19-րդ դարի 2-րդ քառորդին՝ Եվրոպայում: Վեճենտիկում հաստատված Միխթարյան հայրերը մեր նախնյաց խորախորհուրդ լեզվի քերականության մասնագիտն ուսումնասիրությամբ հնարավորություն ընձեռեցին եվրոպացի գիտնականներին ծանոթանալու հայոց լեզվին: Խոչ Հայկացան բառարանի տպագրումը (Վեճենիկ, 1836—37) հեշտացրեց հայոց լեզվի՝ այլ լեզուների հետ համեմապարզեց և դրանց հետ ազգակցության կապերը ի հայոց բերելու խնդիրը: 1843 թ. հրատարակվեց «Բազմավէպր», խոչ ավելի ուշ նաև «Հանդէս ամսօրեայ»-ն (1847 թ.):

Հայոց լեզվի ուսումնասիրության պատմության մեջ նոր էջ բաց արեց գերմանացի հայագետն Հայերին Պետերմանը (1801—1876), որը տարիներ շարունակ Վեճենիկում հայերեն ուսանելով՝ 1837 թ. լատիներեն լեզվով հրատարակեց «Հայոց լեզվի քերականություն» սիրտեքավոր աշխատությունը, որտեղ առաջին խոսեց հայոց լեզվի՝ արիական լեզուների հետ ունեցած ցեղակցության մասին: Եվրոպայում ըստեղծեց հայոց լեզվով գրաղվելու գիտական ավանդույթ, հայագիտական դպրոց: Ժամանակի լեզվաբաններ Վիճենիմանն ու Ֆ. Մյուլերը, Պ. Դյուլարդը և ուրիշներ ուսումնասիրությունը կազմուեցին հայագիտական ամսագիրը:

Եյտնութեար գրեցին հայոց լեզվի գանազան հարցերի շորջ: Ֆ. Մյուլերը մանավանդ տեսության աստիճանի բարձրացրեց և տեսնություն կերպով պաշտպանում էր այն տեսակետը, թե հայերենը արիական լեզուների իրանական զույգին է պատկանում: Ոչինչ այնքան զորեղ չէ, որքան ավանդույթի ուժը: Եվ այնումնուն ոչ ոք փորձ չարեց այս տեսության դեմ արտահայտվել: Միայն գերմանացի մեծ հայագետն Հայերին Հյուրշմանը (1848—1908) 1875 թ. գրած «Հնդեվլորպական լեզուների շարքում հայերենի դիրքի մասին» իր հոդվածում հայկադրվեց այս տեսակետին և գիտականապես հիմնավորեց, որ հայերենը «չի կարող արիական համարվել.... Ահա թե ինչու պետք է զետեղել իրանականի ու լավագիտականի միջև, որպես ինքնուրուց նյուղ»: Թեև Մյուլերը 1877 թ. նոյն վերմագրով / պատասխան-հոդված / հրապարակեց երիտասարդ հայագետի դեմ, սակայն պարտվեց, քանի որ իր շատ կողմնակիցներ որդեգրեցին Հյուրշմանի տեսակետը, ի տիվս հրանց և Ք. Պատկանյանն ու Տերլիշյանը, որին ի դեպ Հ. Անայանը հետևալ կերպ է ընութագրում: «Տերլիշյանի «Հնդեվլորպական հախալեզուն» (Պոլիս, 1855) Դը Լազարդից և Հյուրշմանից հետո հայ լեզվի մասին կներկայանար իրեն երկրորդ և հայերեն լեզվով առաջին գիտական ամփոփ աշխատությունը» («Արարատ», 1902, էջ 316):

Այս ամփոփ պատմությունն արեցինք ցոյց տալու համար, թե տեսական լեզվաբանության և հայերենի այսպես կոչված տոհմարանության, ազգակցության ինչ տեսակետներ էին ընդունված գիտական աշխարհում, երբ «Արարատ» ամսագիրն արժեքավոր ու հիմնարար ուսումնասիրությունը:

սկսեց հրատարակվել: «Արարատ» ամսագրի տպագրության 50 տարիների լեզվաբանական-հայրենագիտական հոդվածների ուսումնասիրությունը մեզ քերում է այն եզրակացության, որ հայագետներն ու լեզվաբանները մեծ մասամբ Հյուրշմանի այս միանգումայն ճիշտ տեսակետի վրա են կանգնած եղել՝ հայերենն ընդունելով որպես անևախ հնեղեվուական լեզու:

«Արարատ» ամսագրի ներևու ու հշանակությունը մեծ է հայ պարբերական մամուլի պատմության մեջ, իսկ մեր ժողովողի արեվական հրականության մեջ՝ շատ բարձր ու բացառիկ: Կարելի է վստահորեն ասել, որ արևելական հրականության մեջ ոչ մի ամսագրում հայագիտությունը չի ներկայացված այնպիսի բարձրությամբ և հետևողական, պատմական, բարոյական, մանկավարժական և ազգային բովանդակությամբ լուրջ և գիտական հոդվածների հետ մեկտեղ մեծ տեղ է տրված նաև լայն առումով բանասիրությանը և մասնագործական հայ լեզվաբանությանը ու հայերենագիտությանը: Հենց սկզբից ասենք, որ հատկապես 1898 թ. սկսած «Արարատ»-ում տպագրվեցին լեզվաբանական-հայերենագիտական այնպիսի հոդվածներ, որոնք իրավամբ մեր ներկա հայ լեզվաբանությանը հանդիսացան: Անձ թե ինչո՞ւ «Արարատ» ամսագրին արժանի է զիտական լայն հետաքրքրության, մասնավորպես հայագիտական առումով:

Մեր հաստակն է առավել ընդհանուր գծերով սույն հոդվածում ներկայացնել հայ լեզվաբանությունը «Արարատ» ամսագրի էջերում՝ որոշ չափով անդրադառնալով նաև հայերենի դասավանդման մերոդիկայի վերաբերյալ եղած նյութերին:

Անցյալ դարի 60—70-ական թվականներու հայ իրականության մեջ հշանակորվեցին լեզվաշինարարությամբ: Ազգային զարդարություն և ազգային արժանապատվությունը անհամատենելի էին հայոց լեզվում գտնվող բոլոր բոլոր օտար բառերի գործածության հետ: Այս հարցերի մասին «Արարատ» ամսագրում հոդվածներ են գրել Գաբրիել Ծերուակի Պատկանյանը, որն առողջ եղակետից քննադատում է հայոց լեզուն անհարկ օտար բառերով ծանրաբեռնելու ձգտումը: «Մի՞նչ իրավի մեր ազգային գրականությունն այնքան անմշակ է, այնքան աղքատ է, այնքան թշվառ է, որ երկու տղոջիք ինար գրել՝ առանց օտար լեզվեր բառ մուրալու», — գրում է նա: Ապա և՝ «Լեզվի և խորակցության մեջ օտար բառերի

սպրոդումն... ընդ ամենայն տեղին մեր քրեաց և քաղցր բարբառն աղավաղել է և խանգարել»: Նկատենք, որ հետազոտությունը կատարվել է 1912 թ. Գևորգ Ալթունյանը նույն մուսանգություններով քննադատում է Մ. Հայրությունյանցի օտար բառերի բառարանը՝ ցույց տալով, որ հեղինակը քաղաքացիություն է տվել այնպիսի օտար բառերի, որոնք հայոց լեզվում չեն կը գործածին: Լեզվի մաքրության հարցով մարդիկ հետաքրքրվում են, որովհետև «Լեզուն ազգությանց դրոշմն է, կուզեն շնչել ազգություն մը, շնչե՛ այդ ազգին լեզուն» (1873, էջ 237): Ահա թե ինչո՞ւ առաջ է քաշվում մի կարևոր հարց: Կաթողիկոսի գիտակորությամբ կամ համաձայնով, կամ ակադեմիա առեղծելու, որ գրավվի հայոց լեզվի և նրա մաքրության հարցերով: Ավելի ուշ Սահմանական մասին կամ կանոնական կանոններ որոշող մի հեղինակավոր հաստատություն ունենալու անհրաժեշտության մասին, գրում է. «Լեզվի ուղղագրության մեջ փոփոխություններ մտցնելը պետք է վերապահված լինի բարձրագույն գիտնական հաստատության և հետինակավոր լեզվագետ անձանց և ոչ առաջին պատահած քննադատ բանաստեղծի կամ հրապարակախոսի»:

Պատմական դառն ճակատագրով երկիրեղկամ է մեր ժողովուրդը: Եվ անձ 19-րդ դարի 30—50-ական թթ. անհատ լեզվաշինարարների ձեռքով և անհետուակությամբ հայ ժողովոյի երկու հատվածները բարձրագույն հիմքերի վրա որդեգրեցին տարբեր գրական լեզուներ: Հայագիտությանը հոգովոր հարցերից մենք է սա, որ ամենայն սրությամբ արտահայտվել է «Արարատ» ամսագրի էջերում: 1897 թ. հրատարակված «Մեր երկու գրական լեզվի միության խնդիրը» վերաբերով հոդվածում Մ. Արենյանը, քնննելով երկու գրական լեզուների կազմության պատմական հանգամանքները, գտնում է, որ «անենք մի հայ ազգ ենք և մի հայ գրականություն ու գրական լեզու պիտի ունենանք: Խնկեթ չունենաք այդ, կնշանակե մեզ պակասում է արդի ժամանակների հոգնոր միության համար ամենամեծ ուժը» (էջ 427): Սակայն, պետք է խոստվանել, որ դժբախտաբար Մ. Արենյանը իր մտածությն իրականացնելու համար գործնականություններու ընդունելի, տրամարանորեն համոզեցուցիչ առաջարկներ չի անում, այլ, ինչպես նկատում է հայտնի մանկավարժ Մ. Մանդինյանը «Արարատ»-ում 1898 թ. ընդունել Մ. Արենյանի այդ հոդվածի գրած պատահանում, Արենյանի կարծիքով

# Ա Ր Ա Ր Ա Ս

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԿՐՈՆԱԿԱՆ · ՊԱՏՄՈՒԹԻՒՆ · ԲԱԼՈՋՈՐԴԻՈՆ ԵԿ ԲԱՐԱՁԵԿԱՆ

Գ Ե Տ Ե Լ Ե Ա Յ

Խ Ե Խ Ո Յ Ա Յ Ա Յ Ա Յ

1 8 6 8

ՄՈՅԻՆԻ 1.

Գ Ե Տ Ե Լ Ե Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

ՀԱՅՈՒԹՈՒԹԵԱՆ ԱՅԽՈՂԻ Ա-ԼՅՈՎԵԱԿԻ

Լահեմեան բարեպաշտօն պարոն Ասք զիս ստեփաննաևան որ Դարդանդ ըստ զաքի հայց Երեցիումն է, իրենց Եկեղեցուց լինութեան համար նուրբել է ու ասաներեք հաշար ըստ պատմաւթաւուած աւատ է ի Ա Ե հանիստ Հայրապետէն ընթալաւ կոնդակ օրհնութեան բառ բայտուրութեան Վուշնորդի վճամին է բացաւ Երաւթիւն և պատմելուանդ մերակնեց:

Վ. ՀԵՐԱՆԴՐԱԿՈՂ թեմի բաժանուրդ Դրեգոր վարդապետ աւել Դիմուկան իւր կամաւզնէց պարմանց համար՝ Ո Ե հանիստ Հայրապետ հրամակաւ պրկան:

Տաւ որպես ՚ի պաշտօնէ, նոյնոքէս ՚ի մեղադիմաւ զարկէն, ՚ի փելմէն և ՚ի վարդապետական բայցենեւ առաքեցաւ յապաշխապութիւնն ՚ի Անձն, ՚ի գլուխութիւնն ՚ի խրամնութաւ յապատճեն նորա տեղը կարգուեցաւ ։ Յաջապետ վարդապետ աւեր Դարդաւթեան պաշտօն կարեր բաժնուաւ:

Ռուս յայտապարութեան Վ. զայքին բանաւուալուայն Օ մեւանից յաշոց հիմունից հանուց ու բարեցիստակ գուածաբանց Վայրէց Վայրի տեսինեցաց, որ է Օ Շիռնից և Վանիսի վարդարունոց և հիւանդանուց անուանը, Ա Ե հա-

«այսուհետև բոլոր զիշումները արևմբրդան բարբառից պետք է պահանջվին, իսկ արևելյանը հանգիստ հոգով կարող է ոչ մի նշանակություն չիրաժարվիլ... այսուղի իսպան արհամարհված է իրավախորհության դո ստ դե «սովոր եմ, որպեսզի փոխարինեա» առաջը: Այս դատավճիռը անսրդար և խիստ վտանգավոր է» (Էջ 129): Ս. Մանդինանն իրավացիորեն գտնում է, որ երկու գրական լեզուների միություն պետք է հասկանալ որպես հրանց ճշխություն, բարգավաճում, կատարելություն, քանի որ «անկարելի է լեզվի մի մասին անսպասիծ դիպչել, առանց խախտելու և մուս մասերը, որոնք առաջինի են սերտ կապված են ներքին ծածուկ շաղկապնդույթ և հյուսվածությամբ» (Էջ 131), ուստի այժմ ծամանակը չէ լեզվի միությունը նեղ կանոններով կաշկանդել, որն արդեն ինքնին բնական ընթացքով է կատարվում, այլ մեր երկու գրական լեզուները պետք է ազատորեն օգտվեն միմյանց միջոցներից՝ նույնիսկ քերականական ձևեր փոխառնելով, «որպեսզի բնական ընտրությամբ հաղթականը հաղթե և մեր արևելյան բարբառը զորանա, կանոնավորվի, գեղեցկանա» (Էջ 134): Եվ իրոք որ արևմբրդարայ գրական լեզուն Մեծ եղենին ծամանակ կորցրեց իր գրական հսկաներին, մեր ժողովորդի արևմտյան հատվածը սրբարձնեց ամրող աշխարհով մեկ և երբեմնի բարգավաճ արևմտահայերենը ինչ-որ շափով դժունեց...

Տնտեսական-քաղաքական զարգացում ունեցող երկրներում բյուրավոր հայորդիներ այսօր արդեն օտարախոս են. պատմությունը մեզ սպառեցնում է, որ անցյալում հայերենիքից դուրս եղած հայ հոծ գաղոթներն իսկ ուժացումից խուսափել չկարողացան, օտարացան, ձուլվեցին... Մյուս կողմից՝ հատկապես վերջին երկու տասնամյակում արևմտահայ գրական հսկաների երկերի բազմահազար տպաքանակով հրատարակումն ու բնականացումը արևմբրդարայ գրականն ավելի սիրելի ու սրբատառ դարձրեն Սովետական Հայաստանի լայն զանազանների համար. այժմ ամեն մարդ իր խոսքը համեստում է Հ. Պարոնյանի թևակիր խոսքերով, ամեն մարդ ոգևորությամբ արտասանում է Դուրյան, Մեծարենց, Վարուժան, Սիմանեթո... Վերջին տարիներս նույնիսկ հրապարակ եկան գրեթե, որոնք լավագույնն կարողացել են օգտագործել մեր լեզվի երկու հատվածների հարատությունները: Այսօր այսպես պետք է հասկանալ մեր երկու լեզուների մերձեցման հայցը՝ փոխադարձ հարգանք,

միմյանցով հարստացում, երկուսի կողմից ել յուրաքանչյուրին առանձնահատուկ բառական, ոճական և քերականական ձևերի կիրառություն...

Լեզվաբանության և հայրենագիտության հարցերի լուսաբանումն «Արարատի» էջերում բղորովին նոր որակ է ստանում, եթե հրան աշխատակցում են Հ. Աճառյանը, Մ. Արելյանը, Գր. Ղափանցյանը, Ռ. Աքրահամյանը և ուղիշենքը: Յուրացրած լինելով եվրոպական հայագիտության բոլոր նվաճումները, նենց Նվրոպայում անցնելով օտար մեծ հայագետների դպրոցները, նրանք ի նորո խորապես ուսումնասիրում են հայոց լեզվի՝ գրաբարի, հայ բարբառների և գրական հայերենի լեզվական իրավությունները: 1898 թ. «Արարատ» ամսագիր Յ համարներում տպագրած «Զայնարանություն» վրացերեն հայերենից փոխառյալ բառերի» հոդվածում Հ. Աճառյանը քննության առևելու և՛ հայերենում, և՛ վրացերենում հանդիպող 900 բառերի հնչյունային կազմությունը, համոզիչ կերպով ցոյց է տալիս, որ այդ բառերի մեծ մասի աղբյուրը հայերենն է, քանի որ այդ բառերը վրացերենում հանդիպում են հայերենի հնչյունական օրենքներին համապատասխան փոփոխված վիճակում, ինչպես զմրուտս-գործուխտի, գանձանձնի, անեղեծ-անեղեծի, բազմակ-բազմակի (Էջ 310): Առավել և անառակելի են այն քանակ բառերը, որոնք վրացերենում հանդիպում են հին հայերենի ողղական-հոլովիչով վերջավորությամբ, ինչպես՝ շղող-շիղոյ, շտո-սատոյ, կալո-կալոյ և այլն: Նշանակում է՝ սրանք հայերենից փոխառված պետք է լինեն 1-ին դարի վիճակից: Նկատի ունենալով, որ պարսկերենից, ասորերենից, արաբերենից, այլև հունարենից փոխառյալ բառերից շատերը վրացերենում հայերենի հնչյունական օրենքների համապատասխան փոփոխված վիճակով են հանդիպում, Աճառյանը գտնում է, որ Վրաստանի հարաբերությունները այդ ժողովորդների մետ Հայաստանի միջոցով էին կատարվում, ինչ որ բացառիկ երևույթ չէ ազգերի պատմության մեջ:

Հայտնի է, որ Ն. Մատը ևս, քննելով վրացերենով գրված 14 վարբարանությունների լեզուն, համձեց այն եզրակացության, որ դրանք հայերենից են թարգմանված: Գարեգին վարդապետ Հովհաննեսցը «Արարատում» 1900 թ. Մատի հայագիտական գործությունները մասին գրած գրախոսականում հաստատում է, որ նովնիսկ ձեռագերից մեկում հշում է եղել հայերենից թարգմանակած վարդ լինելու վերաբերյալ, «քայլ անհարա-

զատ ձեռքեր աշխատել են քերել այդ նկատողությունը»:

Հ. Սճառյանը «Արարատում» տպագրեց «Բննություն Ղարաբաղի բարբառի» (1899, 1900, 1901) արժեքավոր աշխատությունը, որը լորովի ընդօրինակելի դարձավ երիտասարդ բարբառագետների համար: Իր իսկ վկայությամբ Հ. Սճառյանը դեռևս աշկերտական տարիներից սկսել էր կազմել հայերների արմատական բառարան: Հետագայում ծանոթանալով պատմա-համեմատական դպրոցի խոշոր Աերկայացուցիչների՝ հայերների արմատների ստուգաբանությամբ նվիրված աշխատանքներին, ստեղ-ստեղ անդրադարձել է այդ հարցին՝ ցուց տալով առանձին բառերի ոչ ճիշտ ստուգաբանությունը, իսկ մյուս կողմից՝ ստուգաբաններով նորանոր արմատներ: Այսպես, «Արարատ» ամսագրի էջերում տարբեր տարիներում «Հայկականը» ընդհանուր խորագրի տակ Սճառյանը տվել է կամ ճշտել մի շարք բառերի ստուգաբանությունը, ինչպես՝ պատարագ (1908), հեղինակություն, սիխոս, ազգողք (1911), խուցոց (1915), շարսաղար, լկնել, մոռմոռող, նկահ, փանդանել (1917) և այլն: Արա հետ մեկտեղ Սճառյանն անդրադարձել է նաև ստուգաբանության տեսական հարցերին: Այսպես՝ 1902 թ. «Արարատ» ամսագրում (էջ 313—323) տպագրած «Հյունքարպելենտյանի լեզվաբանական դրույթունը» հոդվածում խուելով լեզվաբանական մտքի՝ Հյունքարպելենտյանի բառարանի մասին պահած հանցավոր լուսական մասին իրավացիորեն գտնում է, որ պետք է հանրությանը ծանոթացնել, քանի որ «Հյունքարպելենտյանի դրույթունը ինչքան ով ամենու և անամեք լինի, վերջապես մի դպրոց է»: Հանուն ճշմարտության Սճառյանը չի խնապում նույնիսկ իր ուսուցիչ Գրագաշյանին՝ ցուց տալով, որ վերջինս խիստ աշտու կերպով պաշտպանում է Հյունքարպելենտյանին՝ ոչ գիտականություն և տգիտություն խրախուսելով: Արդ, ո՞ր էր Հյունքարպելենտյանի «լեզվաբանական դրույթունը»: Նրա համար փոխառությունները որոշելու առանձին կանոն, հնչյունական օրենք չկա, նույնպես և կարուր չէ, որ փոխառյալ և փոխառու ձևերը նույն կամ գունե հման հշանակություն ունենան: Հայերնեն ամեն բառ ըստ պատեհի կապում է իր հմացած լեզուների՝ հունարենի, լատիներենի, պարսկերենի, թուրքերենի և արաքերենի հետ: Այսպես՝ վայոյակ առաջացած է համարում արար, բայց «մուկ» բառից, քանի որ երկուուն էլ փոքր կենդանի լինելու ըմբռնման հետ են կապվում, առաքինի բառից՝ արագի, աշումից՝ շուն, արա-

գից՝ արեգ, արեգակ, քակորից՝ հաղի, զաղի, աղքատ, խոյակ, խակ ևալլի, ևալլի:



Հյունքանեն Հյունքանիստան

Ինչպես վկայում է Սճառյանը, Հյունքարպելենտյանի ստուգաբանությունները խորքում գործնական ապացուցի ճիգեր էին իր այն տեսության, թե հայերներ... թուրանան լեզու է: Գարագաշյանը, թեև պաշտպանում էր այս «տեսությունը», բայց բարերախտաբար հյունքարպելենտյանական տեսական մարզաններով չզբաղվեց, այլ գործնական բանահրությամբ՝ իր համար պատվավոր տեղ ապահովելով հայագիտության պատմության մեջ, իսկ հյունքարպելենտյանականությունը թաղվեց. պայօք նրա ստուգաբանությունները պարապ վախսի խաղաղիքի նման մի բան են:

Զգիտենք, թե գերմանացի լեզվաբան Յոզեֆ Կարստը ծանությունը էր արդյոք Հյունքարպելենտյանի «տեսությանը», սակայն, ինչքան լէ այս տարօրինակ լինի մանաւական մի հայագետի համար, որ միշտն հայերնենի վերաբերյալ արժեքավոր հետազոտությունները ունի, 1911 թ. հրատարակած «Հայոց ազգագրական դիրքը» ուսումնասիրության մեջ գտնում է, որ «հայերը կազմում են ալյան-ալյարդյան կամ պեյսագ-հիթիթյան մարդկային ցեղի արևելյան

ճյուղը, որ իբրև մարդարանական միջին ու կապող անդամ առաջին հերթին քամյաների և ուրալ-ալթայանների միջև է գտնվում:

Սեր դարի սկզբին ուսումնասիրություններ են ծավալվում հնդեվրոպական-սեմական, հնդեվրոպական-ուգրոֆիննական, կովկասան-սեմական և հնդեվրոպական-կովկասան լեզվական ընդհանուրություններ հայտնաբերելով ուղղությամբ: Այդ հորդանություն մեջ է նետպում և ն. Մառը և ձանակցելով Կարստին, հայերենի համար սահմանում է նոր ծագումարանություն՝ հայերենը հարեթական լեզու է, նոյնին հայերենը մեկ լեզու չէ, այլ երկու հայերեն լեզու կա: ք-ով հայերեն և ո-ով հայերեն (ըստ ք և եր հոգնակիակերտների): Իր տեսության որպես կենդանի պացառոց Մառն սկսում է փետրել «հարեթական տարրը Հայաստանի լեզուներում» (յաֆետիկական ալեմենտ և յայկան Արմենիա) և մի շաբթ բրոցը ուղարկուիկ համեմատություններ է անում:

Կարստ-մայում այս տեսությունն արտացոլվել է և «Արարատ»-ում: Դր. Արքահամանը 1912 թ. «Արարատ»-ում գրած «Ի՞նչ կերպ հնարավոր է հայերենի գիտական ուսումնասիրությունը» հոդվածում գտնում է, որ «հարեթական թերորիային պատում է մեծ ապագա» (էջ 479) և Մառի հետևողությամբ ակամա լեզվի դասակարգավետության գաղափարին հնագեղով՝ երկիրեղիկում է հայոց լեզուն, գտնելով թե՝ «հայկական զնուի հնագույն հերկայացուցիչն է գրաբարը, արիստոկրատական (համարարական) (sic!) խոսակցական լեզուն, որ որպես գրական լեզու հայտնի է դարձել Ե դարում» (էջ 479): Այսպես, պարզվում է, որ գրաբարի արիստոկրատական լեզու լինելը Մառի «լեզվի նոր տեսության» և 1930—40-ական թթ. նոր ուղղափառ հետևորդների «հայտնագործումը» չէ:

Մառը լայն առումով հեղինակավոր հայգետն էր, թեև Վատի հայերենագետն: Իր տեսությունն ազդում է շատ-շատերի վրա: Եվ ահա Էսգեթ ստորագրությամբ հանդես եկող մեկը «Արարատ»-ի էջերում սուս ու մուս ստուգարանություններ է անում հայացուց այն բանի, որ սեմական լեզուների հետ ծագումարանական աղերսակցություններ ունի հայերենը: Նա 5-րդ դարի հայ մատենագրության մեջ օգտագործված հարս, սև, գրահ, լեզու բառերը թիւցնում է արաբերեն արուս «հարս», ասուատ «սև», պիլան «զենք», լեզու (իսան) բառերից և եղուակացնում, թե բանի որ այս բառերը 7-րդ դարում փոխազած չեն արաբերենից, այլ 5-րդ դարում կային, ուստի հայերենն ու

արաբերենը ծագումարանական աղերսակցությունն ունեն: Ավելին, Մառի տեսությունը հակադրում է պատմա-համեմատական մեթոդին և վերջինիս վրա քամահրանքով է խոսում. «Վերջին ժամանակներու ականական կապը Արքին. Մառը փորձում էր հայ լեզուն մտնեցնել կովկասյան ցեղերի լեզվախմբին: Արդ, եթե լուրջ ուսումնասիրով մեմբրական տարրը մեր լեզվում... կհարկադրի մեզ փնտրել մեր և սեմբրական լեզուների մեջ որևէ ներքին հաստատուն կապ: այն առեւ գուցե համեմատական լեզվագիտությունը այլ հիմքեր գտնի իր աշխատանքների համար հայ լեզվի վերաբերյալ» («Արարատ», 1915, էջ 500): Ի պատիվ Հ. Աճառյանի ասեճք, որ դեռևս 1914 թ. «Արարատ» ամսագրում Մառի «տեսության» դեմ տպագրած հոդվածում, անդրադառնապով հարեթականության հարցին, գրում է: «Հայունի է, որ Մառի հնարած (ընդգծում մերև է— Ս. Ա.) վարդապետությունը (իր բառով՝ հաՓեթագիտությունը) ո՞չ մեկ հետևող ունի եւրոպական գիտական աշխարհի մեջ: Բոլոր այն գիտականները, որոնք առիթ ունեցած են այս մասին խոսելու, ցուց տված են Մառին ոչ համեմի վերաբերմունք: Պր. Մառը առաջմն մինակ է» (էջ 281—282): Սակայն հոդվածում Հ. Աճառյանը մեջ է բերում իր ուսուցիչ Ս. Մելքիշ շախչախիչ հոդվածը Կարստի նոյնքան հնարավի տեսության դեմ: «Հազիվ կարելի է հավատալ, որ այս հոդվածը Կիլիկիի հայերենի քերականության, այն պատվական գրքի մեջինակին գործն ըլլա: Լեզուներու ազգակցության այն որոշ գաղափարին փոխարեն, որ կարելի եղած է կազմել, իր կողմեն դեղով ամեն տեսակ լեզուներու հարաբերության տարրամ գաղափար մը, որ պր. Կարստ տարակույու կը հայտնե հայերենի զուտ հնդեվրոպական հնարագրի մասին.... Հյուրըշման, որուն մեթոդը այնքան ապահով և գգուց էր, չպիտի ճանչնար իր աշակերտը» («Արարատ» 1914, էջ 283):

Հ. Աճառյանն «Արարատ»-ում տպագրել է նաև մի շաբթ այլ գիտական հնարամատչելի հոդվածներ՝ հնատակ ունենալով ծանոթացնել հայ հանրության լեզվաբանական գիտությանը: Ուշագրավ է հատկապես 1902 թ. գրած «Մեր լեզվի տարրերը» հոդվածը, որի մեջ հայագետների համար ծրագրային մի կարևոր հաղու է առաջ քաշուն. «Հայ լեզվաբանության գործածելու միջոցների մեջ մի մեծ թերի մաս կա: խիստ թիշ բան է հայտնի կապադովկերենից, փոյուգերենից, խալերենից և փոքր-ապիական այլ լեզուներից, և սակայն պահն շատ մեծ դեր ունեն մեր լեզվի կազմության մեջ» (էջ

68): Եվ իրոք, ներկայում այս ուղղությամբ պրոֆ. Գ. Զահոնլյանի կողմից կատարվող աշխատանքները մեծ ներդրում են հայ լեզվաբանության մեջ հայերենի կազմության, բառապաշտի ու քերականության մի շարք կնճուտ հարցեր լուսաբանելու ուղղությամբ: Դեռևս հին հույն պատմիչները խոսել են հայ-փոյոգիական աղերսակցությունների մասին: Արդար լինելու համար հշենք, որ Մատն իր հարեթական տեսության որոնումների ճամփիճն տվեց մի քանի ճիշտ ստուգաբանություններ, որոնցից է Աստուած բանի ստուգաբանությունը՝ կապվելով փոյոգիական Սարագիսու բանի հետ: Հուսիկ արքեպու. թարգմանությամբ Մատն այդ հոդվածը «Սարագիսու աստուած առ Հայս» վերնագրով լույս է տեսել 1911 թ. «Արարատ» ամսագրում (էջ 794—799): Սակայն այստեղ ևս Մատն, հավատարիմ իր տեսության, պնդում է, որ «հայերը փոյոգացիների ցեղակից են», ապա և՝ «մենքելով մի քանի ավանդությունների վրա, հիմք կա կարծելու, որ հնդեվրոպական արմենները ծագել են փոյոգիացիներից» (էջ 794):

«Արարատ»-ում լեզվաբանական ծանրակշիռ հոդվածներ է տպագրել ևս և հայ լեզվաբանության մեկ որիշ կաղնին՝ Գ. Ղափանցյանը: Հայտնի է, որ Ղափանցյանն սկզբում որդեգրել էր երիտքերականների դպրոցը, մասնավորապես Բոդրուն դե Կուրտենի ուղղությունը: Անմա տեսության այդ դիրքերից է գրված «Լեզվաբանական դիսցիպլինաներ և լեզու» հոդվածը, որ տպագրվել է 1914 թ. (էջ 261—271): Բնորոշելով լեզվաբանության բաժինները՝ ա) «Ներսօնություն լեզվաբանություն, բ) Ընդհանուր լեզվաբանություն, գ) Պատմական լեզվաբանություն, «երիտքերականների հման լեզվական բոլոր իրողությունների հիմքում տեսնում է մարդկային հոգեկան աշխարհի գործունեությունը, ամրոջ լեզվական երեւությունների բովեւ է համարում մարդկային հոգին» (տե՛ս Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2-րդ, էջ 206): Այդ հոդվածում Ղափանցյանը գրում է. «Լեզվային երևությունը, ինչ պատճառից է առաջացած լինեն, միայն մի շավով են խկապես երևան գալիս լեզվի մեջ,— այդ մեր հոգեքանության միջնորդությունն է.... Այդ լեզվական երևությունն... իրենց խկական «մկրտումը» և ձևավորումը ստանում են մեր հոգեկան բովեւ անցնելով»:

Ղափանցյանի այս հոդվածն առավել արծեք է ստանում հրանով, որ այն փաստությունն իմբ համեմացավ 1937, ապա և 1939 թ. հրատարակված «Ընդհանուր լեզվաբանություն» խիստ արժեքավոր աշխա-

տության համար: Դեռևս 1914 թ. լուս ընծայած հոդվածում երևում է, որ հանձին Ղափանցյանի մենք ունենք մի մեծ հնչյունաբան լեզվաբան: Հեղինակը հայագետներին առավել համոզնեց այդ հարցում



Հրաչյա Աճառյան

իր «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությամբ, որն «անշուշտ հշանավորում է մի նոր էտապ: Նրա բերած նորություններից հատկապես պետք է նշել ձևովիթ, որ պետք լեզվաբանական կատեգորիայի, ըստընումը» (տե՛ս Էդ. Աղայանի վերոհիշյալ աշխատությունը, էջ 215): Ղափանցյանն իր լեզվաբանական գործունեության մեջ ըստընումը իրեն դուրս դրեց պատմա-համեմատական մեթոդից, որոշ վերապահություններ անելով՝ սակայն իր ամբողջության մեջ որդեգրեց Մատն հարեթաբանությունը: Այս հիմաստով ճանաչողական մեծ արժեք է ստանում 1917 թ. «Արարատում» Ղափանցյանի տպագրած «Հայա-արմենական լեզվահմբի ազգակցության բովանդակությունը» (էջ 205—231) հոդվածը: Նախ՝ հարեթաբանության մասին: «Հարեթական լեզվանությունների ընտանիքը՝ պրոֆ. Մատն այդ համ-

ճարել գյուտը (ընդգծումը մերև է—Ս. Ա.) փոված է եղել առավելապես Փոքր Ասիայի հյուսիս-արևելյան մասում և Կովկասում և ազգակից է համարվում սեմական լեզուների մետ, իբրև երկիրյակներ» (Եշ 207): Ղափանցյան ընդունում է նաև, որ դասական հայերենն ու արդի հայ բարբառները առաջացել են երկու տարրեր՝ լեզվական զանգվածներից՝ պատմականութեանից, մյուսը՝ արևմտականից (Եշ 209): Անուհետև Ղափանցյանը գտնում է, որ հայերենն ուսումնասիրողի համար «գիտական դոգմա» (ընդգծումը մերև է—Ս. Ա.) պիտի համարվեն հետևյալ չորս սկզբունքները. առաջին՝ որ պատմական Հայաստանի հարավային մասն է եղել հայ ազգի և լեզուների բնագավառը և օրիանը. երկրորդ՝ որ մինչև «պատմական» հայ ազգի կազմը վել այդ տեղում ապրելիս են եղել առավելապես այլնայլ հարեթական ցեղեր (ոչ պատմական, այսինքն՝ սեմական)՝ ազգակից ըստ պրոֆ. Մանի սեմական ժողովորդների մետ. երկրորդ՝ որ եկվոր փոխութիւնական հայերի և այդ տեղացիների ձուլվելուց է առաջացել պատմական հայ ազգը. և չորրորդ՝ որ այդ ազգի լեզուն (կամ լեզուները) գոյացել է երկու լեզվական միատեսների և տարրերի հարկադրաբար բաղադրվելուց և ներկապակցվելուց որպես հնդեվորպական և հարեթական, որ պատմականորեն ի հայտ է եկել երկու տարրերակներով՝ ա) ուսումնի բարբառով, բ) ռամականությամբ (Եշ 213):

Սակայն այսուամենանից Ղափանցյանն ընդունում է, որ «հարեթական մորթեմականությունը (ձևաբանությունը) համեմատաբար ավելի նվազ քանակով է մնացած, քան հնդկա-և վերոպականը, քայլ «քառարարանի» տեսակետից հարեթականը գերիշխում է, մանավանդ մեր արդի բարբառներում» (Եշ 228):

Ամեն ինչ ասված է պարզ ու մեկին. հայերենը հնդեվորպական ընտանիքին չի պատկանում, այլ խառնածին լեզու է՝ հարեթական դիմորդությունվ: Հնդեվորպականը հայերենում մի շերտ է միայն, իսկ հայագետի սուրբ պարտականությունը պիտի լինի ոչ թե այդ շերտը, այլ հայերենի բուն կազմող տարրը ուսումնասիրել:

Հնդագայում Ղափանցյանն իր աշխատաքայլ ծավալեց այս ուղղությամբ. այլնայլ առիթներով պնդելով, թե՝ «հայոց լեզուն իր տիպուղիխական կառուցվածքային և սուտիալ-գաղափարախոսական շատ դրսորութեարով ու հատկություններով անկանած ցեղակից է մին փոքրասիրական (ասիանական), քան թե հնդեվորպական լեզուներին» («Կ պրօքչօքդենիո

արմանյան յանական 1946»): Առո՞ ինչպես պետք է գնահատուի Ղափանցյանի «Հայապատմենական լեզվախմբի ազգակցողական բովանդակությունը» հոդվածը և ընդհանուրապես նրա «ասիանական» տեսությունը, որն իր ամբողջական ամփոփումը գտավ «Խանաս-կոլուելը արման» աշխատության մեջ: Պրոֆ. Էդ. Սղայանը «Հայ լեզվաբանության պատմության» մեջ, քննության առեներով Ղափանցյանի ասիանական տեսությունը, իր ամբողջության մեջ որպես սիալ՝ «ոչ ճիշտ» է բնութագրում (Եշ 227). այնուամենանիվ Ղափանցյանն իր աշխատություններում առաջ է քաշում հայերենի ամբողջ հյութի քննարկման անհրաժեշտությունը՝ զանազան մին լեզուների մետ ուժեցած ընդհանրությունները վեր հանելու համար և դրանով իսկ մեծապես ընդարձակում է հայերենի ուսումնասիրության շրջանակները» (Եշ 247):

«Արարատ» ամսագրին աշխատակցում էր նաև մեծավաստակ հայագետ Ս. Արենյանը: Ընդհանուր լեզվաբանության հարցերը Արենյանին թիշ են հետաքրքրել. նա որպես լեզվաբան բարիս բուն հմաստվ արևելահայերենի քերական է: Ծիշտ է, որ մինչև Արենյանը Ստ. Պալասանեան ստեղծել էր արևելահայ լեզվի քերականության դասընթաց, սակայն լեզվական երևույնների բացարության խոր գիտականությամբ Արենյանին անհասանելի բարձունք է. այս հմաստվ նա Պալասանեան մետ կարող է վիճարկել առաջնության դափնե պատկը:

«Արարատ» ամսագրի 1908 թ. համարներում տպագրվեց Ս. Արենյանի «Աշխարհաբարի հողովները» հայտնի հոդվածը, որ ահա վեց տասնամյակ հետո էլ փոթորկահույզ վեճերի պատճառ հանդիսացավ: Եղակես ունենալով այն սկզբունքը, թե ձևաբանության մեջ միայն ձևի մետ պետք է գործ ունենալ, Արենյանը գտնում է, որ արևելահայ աշխարհաբարը հինգ հոլով ունի: «Մեր աշխարհաբար լեզուն ըստ ձևի միայն հինգ հոլով է զանազանում, ուստի ձևաբանության մեջ ընդգծումը մերև է—Ս. Ա.) միայն հինգ հոլով պիտի դնել» (Եշ 665), իսկ կոչականը, հայցականն ու սեռականը «ձևերի կիրառություններ են, որ շարադիւսության հյութն է» (Եշ 74—75): «Ինչպես կոչականը, նույնպես հայցականն ու սեռականը միայն ըստ հշանակության կարելի է հոլով համարել, ուստի դրանց ուսուցումը պետք է մտնի շարադիւսության մեջ» (Եշ 665):

Արժեքավոր է նաև 1912 թ. «Արարատ»-ում տպագրած «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» հիմնարար հոդվածը, որտեղ խոսելով եղանակի ու ժամանակի

տրամաբանական և քերականական ըմբռունութերի մասին, պարզություն է մոցնու Ստ. Պալատականի հաստատուած կարգի մեջ և հիմք է դնում արևելահայ գրականի եղանակի ու ժամանակի քերականական կարգի ներկա պարզ ու հստակ ուժումնան:

«Արարատ»-ի էջերում լեզվաբանական և հայրենագիտական լուրջ հոդվածներ է տպագրել նաև Սեսրու Վրդա. Մաքսուդյանցը: Այսպես՝ 1914 թ. գրած «Նշխարներ հայ լեզվի պատմության» հոդվածաշարութ նպատակ է դնում գրաբար լեզվով գրված գրականության բնագրից դուրս եղած մասում, այն է՝ ծանոթությունների, հիշատականների մասն դիտողություններով վեր հանել լեզվական տարրերություններ, որոնք ժամանակի աշխարհաբարն են ներկայացնում: Եվ իրոք, Էջմիածնի մատենադարանի 259—2627 ձեռագիր Աստվածաշնչում (291—1338 թ. Սիս) նշում է երկու բարբառային հիմքով լեզվածներ. մեկը՝ կիլիկան հայերենը (1338 թ.), մյուսը՝ Դարանայաց կամ Երզնկայի բարբառը (1425 թ.): Մաքսուդյանց վրդա. արժեքավոր դիտողություններ ունի նաև հայերենում աճման (1915), եղանակ բայի ձևափոխությունների (1915), ինչպես նաև հայերենի տաղաչափության վերաբերյալ: Ուշադրության արժանի է հատկապես նրա այն դիտողությունը, թե ինն հայերենն ունեցել է երկար ու կարծ ձայնավորներ, ինչ որ արտահայտված է հունարեն օ-ի-ով տառադարձույամբ, ինչպես՝ Հերովդես, Յովսէփ և այլն:

Արդեն առիթ ունեցել ենք նշելու Ռ. Արքահամյանի անունը, որ «Արարատ»-ում տպագրել է լեզվաբանական մի քանի կարևոր հոդվածներ: Այսպես՝ 1912 թ. տպագրած «Ի՞նչ է լեզվաբնությունը» հոդվածում նա գիտականորեն բնորոշում է լեզվաբանության առարկան, նրա բաժինները, լեզվաբանական սուպերկանները և գաղափար է տալիս ներքին և արտաքին խոսքի մասին: Իսկ «Ի՞նչ կերպ հնարավոր է հաւերենի գիտական ուսումնասիրությունը» (1912, էջ 364—377) հոդվածում հայոց լեզվի համակարգային (սիստեմատիկ) դասընթաց ստեղծելու ծրագիր է առաջ քաշում՝ ծանրության կենտրոնը դնելով բարբառների ուսումնասիրության վրա: Բարբառների ուսումնասիրության անհրաժեշտությունը շեշտելու համար Ռ. Արքահամյանը մեջ է բերում գերմանացի գիտնական Վեգների այն միտքը, թե բարբառների ուսումնասիրության համար պահանջվող ծախսերը պետք է պետությունը վերցնի իր վրա:

Իսկ ինքը ծրագիր է տալիս այդ աշխատանքները կատարել Գևորգյան ճեմարանի ուսանողության ուժերով: Ի տես լեզվական իրողությունների այն հարատության, որ ի հայտ է բերում բարբառների ուսումնասիրու-




Լ. Ե Ն

թյունը, Արքահամյանը ճիշտ կերպով նկատում է, որ հետազոտողները գրաբարն ընդունում են որպես «հայկական նախալեզու» և բարբառների ամենայն երկույթ աշխատում են բացատրել գրաբարով: Ի դեպ, նկատենք, որ Ռ. Արքահամյանը գրախուել և բարձր է գնահատել Հ. Անաղյանի «Հայ բարբառագիտություն» աշխատությունը («Արարատ», 1912, էջ 556—561):

Արժե երկու խոսք ասել նաև հայ և օտար հայագետների հայագիտական և լեզվաբանական աշխատությունների մասին «Արարատ» ամսագրում լուս տեսած գրախոսականների, այլև տարբեր հեղինակների տպագրած ստուգաբնությունների մասին. ինչպես՝ Մ. Արեւյանի գրախոսականը Սեսրու Վրդա. Մաքսուդյանցի «Le parler armenien d'Alep» (Փարիզ, 1912) բարբառագիտական արժեքավոր աշխատության մասին, Գ. Տեր-Մկրտչյանի «Հայկական» խորագիր տակ Մատի «Վարդանի առակա-

62

գլորի» և Ստ. Լեհացու երկասիրություննենի մասին (1899 թ.) և Թաղեռն Վրդա. Աստվածատրյանի «Համարարքան Հին և Նոր կուսակարանաց» աշխատության մասին: Պատարագ բառն ստուգաբանելով պրոկ. Փադրեք «քաղաքաջիկ» բառից է ծագած համարում Մ. Աղամյանը, իսկ Սս. Չահնազարյանը, ուղեկելով Աճառյանին, պնդում է,



«Արարատ»-ի 1870 թ. առաջին էջը

որ Ղարաբաղը մորտել բառ չունի, իսկ որեւէր կազմված է համարում որ +եար մասերից և այլն, և այլն:

Արժեքավոր է հատկապես Մարի՝ Անդրս  
հնագիտական ինստիտուտ հիմնելու մասին  
հոդվածը, որ թագմանաբար տպագրված է  
1910 թ.: Մարը, հիացած Երերուսլի և Ազա-  
ռակի բազիլիկայով և Տելորի տաճարով,  
բացաձայնում է. «Կովկասը կարող է նաև  
հապատանալ Երկնքի մի այլ քաղաքակրթա-  
կան գանձով՝ Անդի ավերակներով, այս՝  
յուր հնագիտական թագի մեջ ամենամեծ  
մարգարիտով»:

«Արարտ» ամսագրում արժեքավոր հոդվածներ են տպագրված նաև հայոց լեզվի ուսուցման հարցերի վերաբերյալ։ Այսուղև Ս. Մանուկյանն ողջակի փայլում է իր

մանկավարժական տաղանդով: «Ծարադրական վարժություններ» (1890 թ.) վերևագրով գրած հոդվածում նա խոսում է սովորություն գրել սովորեցնելու մասին, իսկ «Քերականական լուծումն» հոդվածում գործականորեն նախադասություն վերլուծելու հմտություն զարգացնելու մասին է խոսում: Դիտողություն անելով, որ «Լեզվի ուսումը ավելի հիմնված է քերականության դասերի վրա», որի արդյունքը թիւ է լինում, առաջարկում է ընթերցանության մի ամրոց պատմություններ հիմք դարձնել ուսումնապրության ժամանակ, իսկ դրա համար պետք է, որ նախադասության կենտրոնը դիմուվոր բայց ընդունվի և ոչ թե ենթական: Մանդինյանը միաժամանակ ուսուցչության ուշադրությունն է հրավիրում, որ հայ լեզվամտածողությամբ ուսուցանվի հոյթը. «Մեր ուսուցիչը ոչ միայն ուղիղը պետք է սովորեցնե, այլ մահու և կենաց պատերազմ հայունե օտարաքանություններին, որոնք ամենայն խորչերից մտնում, աճում, բազմանում են մեր մթնոլորտի մեջ» (1890, էջ 327): Ս. Մանդինյանը միաժամանակ գրախոսություններով հակահարված է տվել իր ժամանակի վայ-մանեկավարժների մեթոդական տգես առաջարկներին: Այսպես, 1897 թ. գրած հոդվածում շախատիչ քննադասության է ենթարկում S. Միհրաբյանի «Ալյունարան առանց ուսուցիչ կարդալ սովորելու համար» գիրքը, որի իսկապես համբակի գործ է: Իսկ 1899 թ. «Լեզվի մի համեստ դաս» հոդվածում քննադասում է Վանցյանի կամայական վերաբերմունքը. Վանցյանն առաջարկում էր հայերենում արական և իգական սեռերի տարրերակում մացնել և ենելով օտար լեզուներից առաջարկում էր կարճ ձևերը՝

Երա, Երանցից, Երանով—իլ, օհ  
որպես արական օգտագործել, իսկ երկար  
ձևերը՝ որպես իօական.


նորա, նորանից, նորանով—ուստի, ոհա «Լեզուն կենդանի կազմվածք է, լեզվին քամահան պատվերներ տալ չի կարելի: Պետք է աշխատել վարպետորեն տվյալ լեզվից արտահայտության ձևեր գտնել»,— ճիշտ կերպով դիտում է Մանդինյանը:


Ս. Մանդինան մեծապես հոգ է տարել,  
որ ոսուաց լեզուն յավ դասավանդվի հայ-  
կական դպրոցներուն: Ենքն էլ կազմել է դա-  
սագրքեր և գրել է հորդածներ ոսուաց լեզ-  
վի ուսուցման վերաբերյալ: Այն ժամանակ  
տարածված է եղել այն կարծիքը, թե ոս-  
ուերենի ուսուցման ժամանակ պետք է տա-  
վել շատ մերկ բառեր սովորեցնել, դրանքի  
աշակերտը նայերենի շարհուսովթաւը

խոսք կազմի: Արամ հակատակ՝ Մանդինյանը պնդում է, որ «աշակերտը պեսք է սովորություն ունենա միշտ կենդանի հայադասություններ ձևացնել, միշտ ստքեր և մտքեր արտահայտել հարազատությամբ» (1910 թ., «Ի՞ուսերենը մեր ուսումնարաններում»):

Առավել ընդհանուր գծերի մեջ վերցրած՝ ահա սրանք են «Արարատ» ամսագրում արձարձիած լեզվաբանական, այլև հայերենի

ուսուցման խնդիրները: Անկասկած է, որ այս հոդվածները ձևավորեցին լեզվաբանական և մանկավարժական միտք, նպաստեցին հայագիտության զարգացմանը, միաժամանակ գործնականորեն օգնելով հայ ուսուցչությանը՝ լեզվաբանության հիմներին ծանոթանալու և հայոց լեզուն գիտական ու մեթոդական իմաստով առավել լավ դասավանդելու համար:





## ԳԵՎՈՐԳ Դ-Ի ԿՈՆԴԱԿԸ Կ. ՊՈՂՍԻ ՊՈՂՈՍ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝ ՎԱՏԻԿԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՎԵՐԻ ԴԵՄ

(«Արարատ», 1870, փետրվար)

Գերապատիւ Պատրիարքի Կ. Պողոս Պողոսի Սրբազն Արքեպիսկոպոսի սիրելի Եղբօր մերոյ խնդաւ:

Ջայտարար գրութիւն ձեր ի 14 դեկտեմբերի անցելոյ ընդ համարաւ 1417 ընկալեաւ հանենք թարգմանութեամբ թղթոյ Սրբազն Հայրապետին Հռովմայ Պիոսի Թ. մատուցեալ Ձեզ ի կողման փոխանորդի նորին եղելոյ այդր ի Մայորաբարիդ, և ընթերցեալ զայն ուշով տեղեկացաք դիտարութեան, որով Մտադիր է կազմել ժողով ընդհանրական յան դեկտեմբերի այս ամի ի Հռովմ. առ որ հրահրեալ է զջեզ և զայլ:

Հաս անհասնելի կամաց բարձրելոյն Աստվածոյն և մերս նուաստութիւն գոլով մի ի հովուապետաց Քրիստոսական հօտին, թէս ցանկամք միութեան կաթոլիկէ եկեղեցոյ և փափաքիմք հանապատ տեսանել զիրճիմն հակառակութեան բարձեան ի միջոյ, և զւէր և զիսալապութիւն ի միութեան ան Եկեղեցոյ թագաորեալ. ըստ որում հակառակորդին է գործ ընդդեմ կա միութեան մարմնոյ Եկեղեցոյն Քրիստոսի, քայլ քաջ հասու եղեալ մտաց և հմատից թղթոյ ս. Պիոսի Թ. ցախմք յոյժ, զի բաղադրին և մեզ միութին զոր կամի և Փրկիչն աշխարհի և այօթէ առ Հայր թէ «Եղիշցին մի, որպէս և մեք մի եմք», անյուսալի իմն երկի այժմէն իսկ ի ժողովոյ անտի:

Եթէ իրապէս փափաքեալ էր Հռովմայ՝ միութեան եկեղեցոյն Քրիստոսի, ապաքեն պարտ էր կանաւ: Բետամուս լինել այն թէ՝ ուստի՝ Ալիզքը էաս պառակտումն եկեղեցոյ ի միութեանէ, և զի՞ն արդեօք դասնութեամբ և սիրով ի միութին Գիլոյն Քրիստոսի զօնեալ անդամք որոշեցան ի միմեանց, և ծագեցան ցաւալին այն բազմադարեան գծուութիւն լընդհանուր Քրիստոնեալս, ո՞չ ապաքեն որպէս քաջալակ աշխարհի՝ ծնունդ էր այն տքնութեանց Աթոռոյն Հռովմայ առ ի նախապատի և գերազահ հանդիսանալ քան զայլ Աթոռս Արևելեաց:

Ապա ուրեմն ցանկալի էր ամենայն ճշմարտասիրաց տեսանել նախ զջանս նորին Սրբազնութեան ի բանաւ զնախասկիզբն գծուութեան ի միջոյ և ընթանաւ ընդ արահետ շահին նախնի Հարցն սրբոց, և ըստ օրինի կանհասպէս խորհրդակցեալ ընդ Արևելեան Եկեղեցոյ Հռովուապետս իրաքանչիր Ազգաց՝ յայտնել կանոնական յօդուածովք գրուն նպատակ իր և զեւս խնդրոց քննելաց ի ժողովի անո, և յետ ընդունելոյ զիսալապութիւն նոցին՝ համակրութեամբ որոշել զտելի և զժամանակ ժողովոյն:

Սակայն ի բաց թողեալ ս. Հայրապետին Հռովմայ զայն որ լըլալին հայի միութին ի Յիոսու Քրիստոս, ինքնին համեալ է հրատարակել նախ զօրինաւ:

հրամիրական թղթոյ, և ապա առաքել զայնս առ Հովհան Եկեղեցոյ, որով ի կարծի տայ ձկուիլ ամենեցու թէ՝ Նորին Սրբազնութիւն կամի զանձն իր ցուցանել գերագոյն իշխող, և գուխ Քրիստոնեութեան՝ ոչ ճանաչելով զՀովուսպեսու Արևելեան Եկեղեցոյ համապատիս ինքնան աստիճանօք և իրաւասութեամբ և Առաքելական յաջորդութեամբ պատուեալս, զորս Հոգին սուրբ Բարապատ իշխանութեամբ և շնորհօք զարդարեաց: Եւ զի զԱթոռոն Հոռվմայ բացայստ հոչակէ ի թղթին կեդրոն միութեան, զոյայիս վարդամետութիւնն ոչ ընդունի սուրբ և ուղարփառ Եկեղեցին Հայաստանեաց ընդ այլոց ազգաց Արևելեան Եկեղեցեաց՝ Գլուխ Եկեղեցոյ զՓրկիչն մար միայն՝ զՔրիստոս հանաչելով:

Նա որ խնդրէ զմիութիւն Եկեղեցոյ, զանց արարեալ զկարի կարևորօք, որք պարս էին իմեւ անյեղի հիմն գումարման ժողովին, իրովն կարծեցեալ միապետական գերիշխանութեամբ ինքնին իսկ ևս քան զևս մեռանայ ի միութեան: Կաթողիկէ Եկեղեցոյ. և ո՞ւմ չիցէ յայտնի՝ թէ յայնապիսի սկզբանց հակառակեցող իմաստից ողջամիտ վարդապետութեանց սրբոյ Անետարանին, դժուարին է ակնունել ճշմարիտ միութեան, թերևս նորանոր վէճից և անդարմանելի պառակտմանց ևս և դառնագին հակառակութեանց բացցին ասպարէզ ի գայթակղութիւն բազմաց և ի հախատին Քրիստոնեական սուրբ կրօնի:

Ապաքեն մեր որ յամենասցն ժամ տքնիմք վասն հոգոց ի Քրիստոս հաստացեալ ժողովրոց յանձնելոց մեզ ի Տեառնէ և շանամք պահել զանդորրութիւն Հօտին մերոյ, և պարծիմք Տերամք յԱռաքելական սուրբ Եկեղեցին մեր, որ ի ձեռն սրբոց Առաքելոցն Թաղէոսի և Բարթողիմէոսի հաստատեցաւ ի Վեմն Քրիստոս. Եւ աղօթիք բազմաշարչար հահատակի Ս. Գրիգորի մեծի Հայրապետի ցայսօր կայ անդրդուելի ի դրանց դժոխոց ինքնուրոյն իրասութեամբ, հարկ անհրաժեշտ համարիմք ծանուցանելու Սրբազն Եղբայրութեան ձերուս զգոյշ լինել ի հրամիրմանէ անտի և ի ժողովի որ զրկեալ գտանի ի հիմանց օրինաւորութեան և զգուշացնցանել նաև զԱրքեպիսկոպոսուն, և զամենասցն Առաջնորդս վիճակաց և Եկեղեցեաց մերոց որ ի Տաճկաստան, շտալ տեղի շփոթից և տարածայնութեան:

Եւ միարան աղաչեսցուք յամենայն սրտէ, որպէս և միշտ աղաչեմքս, զի Գլուխն ամեկան և խաղաղութիւն Եկեղեցոյ սրբոյ Քրիստոս Փրկիչն ամենեցուն, որ արար խաղաղութիւն արեամք խաչին իրոյ կոչելով զամենեսին ի մի արօտ Անետարանական վարդապետութեան, պահեսցէ ի խաղաղութեան զեկեղեցի իր սուրբ, և զԱզգս Հայոց պահպանեսցէ յանակնունելի փորձութեանց:

Ողջ լեռուք զօրացեալ Տերամք:

Համար 31  
ի 11 փետրուարի





## ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

Ողջո՞յն քեզ, Առաքելական Եկեղեցի Հայաստանեայց, Թադէոսի, Բարթուղիմէոսի և Գրիգորի աւետարանաւ ծնեալք ի Քրիստոս. աճեալք և զարգեալք հայատովք Աստուածպաշտոթեան:

Ողջո՞յն քեզ, Մայր Սիօն՝ լեառն Աստուծոյ Երուսաղէմ. եթէ ի քեզ երեւեցաւ լոյսն աշխարհի Մարմնացեալ Փրկիչն, նոյն Միածին էց ի Հօրէն, եղ գիհինն Այրարատայ Եկեղեցւոյն լուսակերտեալ սուրբ Էջմիածնի:

Ողջո՞յն քեզ, Տուն և Առաքելական Աթոռ Սրբոց Յակովեանց: Ողջոյն համայն միարանական ուխտին Հայոց, որ իբրև խաչակիր զինուոր տքնիք և պաշտէք զոնօրինական սուրբ տեղին և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանէք զվիճակն Հայոց ցանկալին և նախանձելին համայնչից ազանց:

Ողջո՞յն Զեզ, Կաթողիկոսունք և Պատրիարքունք, որ ընդին համալծակից Եղբայր էք ի վարել և տանել զպաշտօն Քրիստոսի Եկեղեցւոյն. գիտէ՞ք թէ քանի՞ մեծ է պատասխանատուութին մեր առաջի մեծ Հովուապետին, զի իրաքանչիր որ ի մէնչ զիր հօտին համարս ունի տալ:

Ողջո՞յն Զեզ, հովիր և Առաջնորդք փոքրիկ հօտին Հայոց, որ արքուն աշօք հակէք և արածէք զհաւատացեալ հօտն Քրիստոսի, յիշելով զբան Տեառն թէ՝ «Հովի քաջ զանձն իր դնէ ի վերայ ոչխարաց»:

Ողջո՞յն Զեզ, Վարդապետք Եկեղեցւոյ, որ ուսուցանէք և աւետարանէք զբանն կենաց. մսիթարեցէք զժողովուրդ, զի լի եղն տրտմութեամբ. թողեալ լիցին մեղք իր, ասէ Աստուած:

Ողջո՞յն Զեզ, քահանալք Բարձրելոյն Աստուծոյ, որ մատակարար էք սուրբ խորհրդոյ Եկեղեցւոյն, դաստիարակք և պահապան ընտանեկան Սրբութեան, և գիտէք թէ քանի՞ մեծ է պաշտօն ձեր:

Ողջո՞յն Զեզ, Սարկաւագունք, որ խունկ արկանէք առաջի Սելանոյն Աստուծոյ և մատակարար էք որոշն և աղքատին. յիշեցէք զիսադ սարկաւագն մեծին՝ ներսիսի՝ նմանողք լերուք նմա:

Ողջո՞յն Զեզ, Դափիր, որ քաղցրաձայն երգօք Շարականաց և տեղից՝ շարժէք զիոգին ջերմեռանդութեան ի ժողովուրդն, պաշտել և սիրել զԱստուած, դուք զվերին սրբարան դասուցն բերէք զնմանութիւն:

Ողջո՞յն Զեզ, Հարք և Եղբայր վանական ուխտին, որ պահապան Բրեշտակք էք մնացեալ նշխարաց վանորէից, որ յաերժական պարծանաց յիշաւակ են մեր նախնի կրօնաւոր և գրաւէր սուրբ Բարց:

Ողջո՞յն Ձեզ, վարժապետք և ուսուցիչք. Ձեզ յանձնեալ է ազգային կըրթութիւն և դաստիարակութիւն մանկաց ի պէս պէս ուսմուն և գիտութիւն, որոյ նպատակն է միայն վարել և տանել զմարդիկ ի յաւագոյն կեանս. ոչ միայն ի բարեբաստիկ վիճակս աշխարհի, այն ի Վերին Քրիստոսի արքայութիւն:

Ողջո՞յն Ձեզ, խմբագիրք Հայոց, որ ճճմիք անդադար յաշխասութիւնն և իբրև հրապարակախոս մունետիկ, գրով և թղթով վարեք զժողովորդն ի յառաջդիմութիւն և քաղաքակրթութիւն՝ բանալով զմիտս նոցա ընդունել զլա: և խորշի ի վատէն: Զգո՞յւ, զգո՞յւ, շանացեք միշտ ի շինել, զի այս է ձեր սեպուհ պարտիք:

Ողջո՞յն Ձեզ, յօրինիչ մատենագիրք և թարգմանիչք գրոց ի զանազան լեզուաց հեղինակութեանց, զորս օգտակար համարիք բարոյական կրթութեան և ձեռնուու արուեստին գիտութեան:

Ողջո՞յն Ձեզ, Բարեբար Մեկնեասք, որ քաջալերելով գգրասէր աշխատաւոր մշակն ի լոյս հանեք զնորա վաստակն և ընծայէք ազգին, որով ճոխանան և հարստանան աղքատիկ մատենադարանը Հայոց:

Ողջո՞յն Ձեզ, նախանձաւորք սուրբ Կրօնի, եկեղեցասէր, ժողովրդասէր բարեապաշտ Ոգիք, որ շինեք զեկեղեցիս և զդպրանցոց, հաստատելով և պահելով կրօնի և ուսման տաճարն, որով լուսաւորին որդիք եկեղեցոյ և ժողովորդն յորդորի յԱստուածապաշտութիւն, որ քան զամենայն ինչ զօրաւոր է:

Ողջո՞յն Ձեզ, ուսանող մանկունք և օրիորդք, եղբարք և քորք, որ ձեռն ի ձեռն սուրեալ ի միասին երթայր և գայք ի կրթութեան տաճարն. բարեբաստիկ և երշանիկ էք, եթէ հաւասար կրթութեամբ պատահեալ միմեանց ձեռն տայր յաւոր պակադրութեան Ձերոյ ի սուրբ ամուսնութիւն:

Ողջո՞յն Ձեզ, մայրաքաղաքացիք և գաւառական քաղաքացիք, որ պարապիք ի ձեռակերտ արուեստ և ի շահավաճառութիւնն, որ աշխատիք յառաջ վարել զգործն Ձեր իմաստու տնտեսութեամբ և ճարտարագիտութեամբ, միշտ մրցելով և զարգանալով ըստ պահանջման ժամանակին:

Ողջո՞յն Ձեզ, բնակիչք դաշտաց և լերանց շինական երկրագործ ժողովորդ, որ սիրէք զիոնն և մաճ, զոշխարն և տաւար, դուք աշխարհի բարի և անհարդան մշակն էք, դուք հարազար որդիք էք նախահօր մերում. գործեցէք գերկիր և պահեցէք, գիտելով թէ միայն երկիրն է Ձեր կեանք և զօրութիւն. միշտ շանացեք անկորուատ պահել այդ հայրենատուր ժառանգութիւն:

Յետ ողջունելոյ զամենայն դասակարգ Ձեր, ժողովորդ Հայոց, դառնամ արդ պատմել Ձեզ թէ զինչ արար Տէր ընդ իս և գիտէք արդէն զի հոչակեցաւ ընդ ամենայն աշխարհ:

Ո՞չ որպէս կամին մարդիկ, այնպէս առնէ Տէր, այլ որպէս ինքն կամի և ո՞վ կարէ հասու լինել անքննին խորհրդոց նորա. զի ո՞ն գիտաց զմիտս Տեառն և ո՞ն եղան նմա խորհրդակից թէ խելամուս արացէ զնա:

Մինչ փոքրիկ և կրտսեր էի ի մէջ եղբարց և արածէի զիմ փոքրիկ հօտն ի լեառն Վարագայ, առ հովանեան Քրիստոսի Առաք սուրբ Նշանին, Ձեռն Տեառն կալա զիս, ած յերուսաղէմ և կացոյց ի վերաց լերին Սիօնի, ուր երևեցաւ Բանն Բժիշկ մարդկութեան և վերանորոգիչ հնացեալ մարդուն:

Յերեսուն ամաց անտի մինչև ցեօթանասուն ամճ իբրև խեցելէն սի տկար անօթ միշտ վարեալ և գլորեալ ընդ քարքարուտ ելեւ առապարս աշխարհի, այնպէս եղէ զի կարծեցին մարդիկ թէ իսպան շախսախեցայ. և

զի՞նչ էր, որ կենդանի պամիր զիս. միայն հեզութիւն, և խապառ համբերութիւն:

Անդ ի Սիօն մօտ էր նորոգիչ Բրուտու Յիսոս, որ անդրէն վերստին նորդեաց զքեկեալ ամօթս: Միանգամ և երկիցս հիանդացայ լոյժ, այնպէս թուեցա ինձ թէ հասեալ կամ առ դրուն գերեզմանին, և եղէ ես որպէս զուտայն մերձ ի հատանիլ, սիրտ իմ և շունչ գելաւ լիս, լացի և գոչեցի. Ո՞վ Տէր, դեռ տարածամ է ասացի, դեռ բազմապատիկ պարտու ունիմ առ Քեզ և առ եկեղեցին, թոյլ տուր, դարձն՝ զոգի իմ, զի կեցի՛ց և վճարեցից: Ո՞՞ն թէ մեռաշիմ շմամ պարտապան առաջի քո ահաւոր ատենիդ:

Լուս ինձ Տէր և ողորմեցաւ, և յաեւ ինձ նոր կեանս, վերացոյց ի լեռնեն Սիօնի, եղ ի Սիօն Այրարատայ, ի Կայուղիկէ Էջմիածին և ասաց. Որդի մարդոյ, դէս կացուցի զքեզ տանդ Հայոց և հովի վարատեալ հօտին սուրբ Գրիգորի: Արա քեզ և ժամանակ, երթ վճարեա՛ զպարտու քո:

Խոնարհելով առաջի երկնից Հօր կամաց և մեծարելով զբամազգային միաձայն ընտրութիւնն, ահաւասիկ գամ ի վճարել զմնացորդ նորիական պարտու իմ, զոր ունիմ առ Եկեղեցին Հայաստանեայց և առ ժողովուրդ Հայոց և գիտէ՛ք թէ քանի՛ շատ բազմապատիկ և բազմապատիկ են չափ և կշոն պարտուց:

Այլ ևս մինչ հասեալ կամ ի ծերութիւն և անցեալ գեօթանասուն ամն, մինչ ձեռու ի վեր կալեալ ալլքն ածեն ինձ գօտի, ի՞ն կարացից վճարել զայնչափ պարտու գունէ փոքրամասն տաղանդին չափով, զոր ինձ ասանդեալ է Տէրն և պահանջէ շահագործել տոկոսիք և պարզերես կալ առաջի պահանչողին:

Մինչ խոկամ զարհուրիմ ես, ո՞վ Եկեղեցի Հայաստանեայց, որ ընդ ամենայն հեռաւոր աշխարհս սփոռեալ կամ տարագրեալ ի հայրենի քո տանեն, չը գիտեմ թէ որպէ՞ն կարեմ վարել զիովուական տեսչութիւն իմ: Միթէ Աըստեալ լԱյրարատ' մինչ ի Հնդիկս և Խորոպ և այլ հեռավայրս գօրե՞ն տեսանել զՁեզ: Ես զի՞արդ հնար է ինձ արածել զիօտն սեփական, որ ընդ ամենայն աշխարհս ցիր և ցան կան, անտես յաշաց իմոց և ուր չկարեն հասանել ուր այցելութեան իմոյ:

Այո՛, առաքեցայ ես ի լեռնեն Զիթենեաց, այլ չեմ ազատ առաքեալ, շրջել ոչ ի հեթանոսս, այլ յամենայն Եկեղեցին Հայոց, կենդանի բարրառով քարոզել և ուսուցանել, աչօք իսկ տեսանել զցաւս հօտին իմոյ և հոգալ զդարմանն: Այլ զի՞նչ իցէ մարդոյն դարմանն: Իցէ՛ թէ գթած Սամարացին անցանէր զքն:

Ուստի մնայ ինձ միայն, որ շատ նախանի սովորութեան հօտասէր հովուաց՝ Ընդհանրական գրով և թոլով խօսիլ ընդ ձեզ, ժողովուրդ Հայոց, թէ յերկրի աստ մինչչն մեռեալ իցեմ և թէ յերկինս, զի և անդ կենդանի եմ հոգուվ, ուր հոգիք մեր նախանի սուրբ Հարց կան և աղօթեն վասն ձեր:

Այլ ունիմ ես աչս, որ մօտ են և տեսանեն զՁեզ, նորա են իմ ընտրելակից եղբարք, Հովիք և Առաջնորդդ իրաքանչիր վիճակաց, որ յանձնեալ է ոչ յինէն, այլ Քրիստոսէն. հովուել և յանձանել, պահել և հատատել ի հաւատու Առաքելական Եկեղեցւոյն Հայաստանեայց, որոյ հիմն Թաղէոս և Բարթուղիմէոս եղին և զող շինուածն ած ի կատար հրաշալի նպիտակութեամբ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն:

Գիտէք իսկ և հոչակեցաւ, թէ յաւոր համեխսի օծման մերում առաջի նշման սուրբ Տաճարին՝ ուստեցի հաւատարիմ մնալ առ այդ հիմն, և շին-

ուածն առաքելական եկեղեցոյս Հայաստանեայց և պինդ պահել զաւանդութիւնս մեր նախնի սուրբ Հարց, զգուշանալ չխրամատել զցանկն հայրենի:

Եւ դուք իսկ ուխտակից էք ընդ իս և զնոյն ուխտն ունիք ի ձեռնադրութենէ շնորհաց, անարատ և անաղարտ պահել զկնիքն, որ աւանդեալ է մեզ ի Քրիստոսէ յԱռաքելոց և ի սրբազն Հայրապետաց:

Ուստի կայ և մնայ մեզ ամենեցուն երկիրածութեամբ ծառայել առաջի Տեառն, զի ունիմք մեր հիրաքանչիր զմեծ պատասխանատութիւն ըստ աստիճանի և շնորհաց, որ սունալք են ի Հոգոյն պաշտել զեկեղեցին, հոգալ վասն եկեղեցոյն և թէ յաշխարհի աստ պատրաստի և առաջի մեր Քրիստոսի խաչ՝ յօժարութեամբ կրել և երթալ զիւն զօրավլխոյն, որ ասաց. «որ ոչ առց զնաչ իր և եկեսցէ զկնի իմ՝ չէ ինձ արժանի»: Ծնորի մեծ է մեզ, եթէ սիրով և համբերութեամբ կրիցեմք զնոյն խաչ:

Աղօթեցէք վասն իմ, ով գործակից հոգնոր իմ Եղբարք, զի գիտէք թէ խաչն իմ ծանրագոյն է, զոր եղ ի վերալ թիկանց իմոց Եկեղեցին Հայաստանեայց: Այլ թէ դուք զօրավիդ լինիշիք ինձ, որպիսնօք Սիմէօն Կիրենացին, ես յայնձամ զօրացեալ ի Հոգոյն՝ բարձեալ զնաչն սիրով, ածեմ ի կատար Գողգոթային:

Եւ ես աղօթեմ վասն Զեր, զի և դուք զնոյն խաչն համբերատար սիրով բարձեալ երթիշիք զիւն խաչեալ Փրկչին մերոյ, զի անհնարին է մեզ խոսափել ի խաչէն, քանզի ասաց Յիսուս. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք: Եւ զի՞նչ իցէ նեղութիւն մեր առ նեղութիւն նախատակ նախնեաց:


Եսկ դու Եկեղեցի և ժողովորդ Հայոց, որ ընտրեցիք զիս հովի Զեզ, ես ապաստան լինիմ աղօթից ձերոց և հաստատ թէ լուէ Տէր ձայնի աղաշանաց Զերոց և պահէ զիս վասն սիրելի եկեղեցոյն իրոյ:

Կեցից ես վասն Զեր և դուք վասն Քրիստոսի: Ամէն:

### ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց

Գրեցաւ անդրանիկ Կոնդակս օրինութեան ի 15 դեկ. 1893 ամի Փրկչական եւ ըստ տօմարիս Ռթնգ. ի Մայր Աթոռու Հայաստանեայց ի Ս. Էջմիածին. Դ Վաղարշապատ:  
(«Արարատ», 1893, դեկտեմբեր, էջ 955)





## ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՒԱԳ ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

### Ո Ւ Խ Տ Ի Խ Ո Ս Ք ԱՐՏԱՍԱՆՎԱԾ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾԻՐԻՄԻ ՎՐԱ

Ծիրիմ, որ մեր բարերար Հօր նշխարմերն են ամփոփում. ամի և դոդութեամբ ենք մօտենում քեզ այս վճռական խորհրդաւոր պահու կրկնելու և երեքներու մեր ուստը՝ ովաս սրբազն հաւատարմութեան և անքակտելի հաւատառութեան. որ մեզ Վատահութիւն ներշնչիր մեծ մեծ պարտքերի մի այսպիսի ծանր լուծ քաղցր հեշտութեամբ մեր վերայ առնելու: Անձալից սրտով քեզ ենք կանչուն, Վեհիւ Գէորգայ պահնակի անուն, որ ոսկեղին տառերով մեր կրթութեան դրոշակի վերայ մակագրած՝ տարիներէ ի վեր մեզ ոգետրել, ուղղութեան ճանապարհով մինչն այս կէտն ես առաջնորդել, որո և այժմ կնիք եղեղ մեր ուստի համար, արթուն յուշարար մնալով կեանքի ամեն քայլափոխում թէ որոյ ոգոյ ենք մենք զաւակ. այդ անուամբ զուարանանք տագնապի րոպեում. այդ անունից երկնչենք, երբ փորձանաց դեռ գայլակղութեան թուլութեան որոգայթ մեր առաջը լարէ, և ո՞վ է այն չուառակենք, որ սրութեան քողը կրել համարձակեղով այդ անուան արատ բերելոց պիտի չփախչէ:

Այժմ Հայոց, որ անշուշտ դիտում ես երջանիկների կայանքից մեր այս գումարումը թող խաղաղեն բազմաշխատ գործերդ, փափազներդ լեցուած են. Բնուատես խորհուրդներդ կատարումն ընդունած. Բո մեծ գործին արդինք, բազմապատիկ խնամոցդ տրիտուր, ահա Տիրոջ սեղանի առաջ ենք դնում մեր սրտերդ, մեր հոգին, մեր ամրող կարո-

ղութիւնը, նորան լինի ամենը, նորա տան սպասաւորութեան սուրբ գործին նուիրած: Տկայ են արդարն ու տարութեր մեր սրտերն ու հոգին, յողողոյ մեր մտքերը, անհաստատ մեր կամքը. ըստ ամենապնդ դուզմաքեայ է և անարժան թերևս մեր այս նուէր, սակայն ամենայն յօժարութեամբ բերած. օրինի՞ր մեր ուստը և բարեխոս եղիր նորա առաջ, որ ոչինչը ինչ դարձնել կարող է, տկարք զօրացնել, անարժանը նուիրագործել և արծանի կացուցնել. Նա՛ տայ մեզ կարողութիւն սրբութեամբ սկսելու և կատարելու:

Հայաստանեայց Սրբագնագոյն Հովուապեսի, մեր մեծագոյն հայրապետաց արծանընտիր յաջորդի ձեռն ենք յանձնում մեր այս սրբազն ուստի կմիքը, կրկնելով իր առաջ ուստ մտադիր հնազանդութեան. Նա, որ տէր է ցառվ և գաւազանաւ առաջնորդելու մեր ապաստորութեան գործին, այլ որի աջու աչք գորովագութ հայր են խոստանում ամենքին: Անկեալ է նա և անհաղորդ մեր սրբազն ուստին, որ այդ հայրական գթոյն Վեհութիւնը գնահատել չի հիմանայ և կմոռունայ երբեք կամակոր հպատակութեամբ պատրաստ գտնուել մեր հոգնոր Տիրոջ մէն մի հրամանին: Հայոց Հայրիկը, որ ասես մեր երջանիկ նախնեաց շարքից է իշել, հայ կրօնաւորի տիպարը կենդանի օրինակաւ մեր առաջը նկարելու. որի սիրտը միշտ վառ է եղել հայ անուան սիրոյ կրակով, որի բերանում միշտ կենդանի է եղել սուրբ աւետա-

րանի ճշմարտութեան խօսքը՝ Նա թող ներ-  
շնչէ մեզ այն հոգին, որ մարդկանց հոգինե-  
ռո սիրով կապել, ճշմարտութեամբ ղեկավա-  
րել գիտէ: Անտէր ազգի հոգսերի ո Վշտերի  
ծանրութեան ներքոյ ներմակցած այլք մեր  
երիտասարդական անձնապատճենութիւնը  
մինչև գետին է խոնարհում Ձեր պատկառե-  
լի վսկանութեան առաջ, Ձեզ ենք կամ ենում  
ետևել մեզ և խոնարի սրտով, ամրասիր ո ն  
բարեկը մի կենաց առաջնորդ մեզ եղէ:

Օրինեցէք մեզ և դուք, Սրբազն հայրեր, Ս. Էջմիածնի հնօրեայ միարանութիւն, ներ-  
կայացուցի փառաւոր անցեալի և պահա-  
պան աւանդական սրբութեանց, որ այսօր  
կրկին նուիրագործութեամբ ի շարու ձեր դնել  
յօժարում էք մեր տիաս ոգիքը. ձեր առաջ  
ենք երեքկնում մեր ոխտը. յարգել անցեալը  
ճշմարտութեամբ պահել նուիրական աւան-  
դութիւնները, խոնարհել այն ամեն սրբու-  
թեան առաջ, որ մեր պաշտելի հախնեաց  
անուան ու գործի դրոշմն է կրում. օրինեցէք  
և աղօթեցէք, որ այդ հայրերի շաղովն ըն-  
թանալ նոր ուժով հին բայց և միշտ նոր կեն-  
դանի, հարազատ և կենածանարար ոգին ար-  
ծարծել կարող լինենք:

Հապա դո, Հայոց ժողովուրդ, որ աղդաւ  
հետաքրքիր աչքերով դիտում ես մեզ և պիտ  
շարունակես դիտել ու քննել մեր իրաքանչ-  
իր քայլափոխը. որ անտուն անտէր գաղ-  
թականից սկսած մինչև նոյն պալատների  
մէջ զուարձացող մեծատունը թշուառու-  
թեանց ու մոլորութիւնների մի ծով ես ներ-  
կայացնում, բռնում ես անհամար վերքեր, որոնց  
սպելամի, վշտեր, որոնց սփոփում  
պետք է և մատով ցուց ես տալիս. ահա մեր  
հովիններն ու վարդապետները. ահ, ես ճա-  
նաչում եմ այդ հայուածքը, դարձուր, տանել  
չեմ կարող, ես հայում մաշում է իմ երիտա-  
սարդ հասակը: Տես ժողովուրդ, Հայի արին  
արցունքը թող լինի մեր ուխտի չորրորդ  
կնիքը. քո հասաշանքը երբէք դադար չտայ  
մեզ թմրութեան անկողին վերայ, ընդուա  
վեր եւնենք, Կայենի նման աստանդական  
շղնենք, եթէ քո ցաւերը տեսնենք ու անտար-  
քեր մնանք. ուղեկցիր և դու մեզ քո մադ-  
թանքներով, Լուսաւորչի Աստուածը չի նիր-  
հում, Նա քո աղաշանքն էլ կլսէ:

Եւ վերջապէս Դուք, ներկայացուցիչներ  
մեր ուսուցիչների և դաստիարակների, որ

մեր մանուկ սրտերն ու մտքերը ղեկաւարել  
էք, բարոյ և ուղութեան շատի վրայ դրել.  
Վերջինը ձեզ ենք լիշում, բայց ոչ ի լատինս,  
և դուք եղէք մեր ոխտին վկայ և աղօթեցէք,  
որ ձեր ցանած բարի սերմերը զարգանան և  
պտղաբերնեն:

Խոյ դոյք Գէնրգեան ճեմարանի սիրասուն  
սաներ, մեր սաննակից եղբայրներ, որ նոյն  
դաստիարակութեան շաղով ընթանում էք  
մեր ետևից. նոյն Մասեաց հովն է ձեր կուրծ-  
քերին գօղութիւն տալիս նոյն սուրբ տեղիք  
են իրենց հովանին ձեր վերայ սփոփում, այս  
աւերակների ոգին ձեզ այժմ տակալին օրոր  
է ասում. անո՞ւ այդ կազդուրիչ քունը բա-  
րեցաց թող լինի արթուրութեան րոպէն.  
յո՞ւ ձեզ այն ժամանակ այս պահուն խոր-  
հուրդը: Թող շնորհաց Ս. Հոգին առաջնորդէ  
ձեր քայլերը և տայ իրաքանչիրին, ինչ որ  
արժան է և հիր բարի կամաց տրամադրու-  
թինը. սակայն երբ ժամը հնչէ ու այս ոխտի  
կնիքը նաև ձեր առաջ քացուի. Ս. Եկեղեցու  
սպասաւորութեան գործին նուիրելու հրա-  
իրէ. քայլեցէք անկախ, վաստակութեամբ  
դրէք ձեր նուրը մաճի վերայ և ես մի հա-  
յէք, արտի Տերը կինդայ թէ ձեր և թէ հիր  
ցաւիք մասին. խոյ մի մնար միայն այս ժո-  
ղովոդի հասաչի համար, այս սրբազն տեղ-  
եաց խորիդաւոր լեզուն հասկանաւ սովո-  
րեցէք: Այս, այդ լեզուն խօսէ թող այս ժա-  
մուն և մեր սրտերում. մեր շնորհատու մայր  
Հայաստանեացու Ս. Եկեղեցոյ գերազան  
Աթոռ և լուսոյ խորան, թող և մեր շուրջ շո-  
ղայ այն լոյսը, որով լոփացած մեր երանելի  
հայսիքը համատակութեան ասպարէզ եղան,  
այս լոյսը նուիրագործէ մեզ սրբութեամբ  
մօտենալու ահաւոր խորիդոյն, քո սպասա-  
ւորութեան, քո վերաշինութեան գործի հա-  
րաւարիմ ծառայութեան արժանի շնորհքն  
ընկունելու: Երկնաւոր ճարտարապետ այս  
հրաշազան տաճարի, Յիսուս, Անմահ խա-  
չեցեալ... «Ո» տացէ ի Սինէլ զիրկութիւն  
իսրայէլի, ի դարձուցանել Տեառն զգերու-  
թիւն ժողովութեան հիրոյ»:

«Զիմ խնդրեցի ի Տեառնէ և զայն աղաշեմ,  
բնակել ինձ ի տան Տեառն զամենայն աւուրս  
կննաց: իմոց»:

(«Արարատ», 1894, սեպտեմբեր, էջ 291—292)





## ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՆԱԳ ՑՈՎՍԷՓԵԱՆՑ

### ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ԿՈՉԸ

Եկայք շինեսցուք սուրբ գլուհանն լուսաց Շարական.

Մեր բաղդի անհիլ այսօր մի տարօրինակ շրջան է կատարում: Մեզ թուում է, թէ մի կործանիչ ոյժ իր գօրոտքեան ազդեցութիւնն է տարածում մեր բռվանդակ կեանքի ամեն մի շրջանի վերայ, և թէ մենք արինով ներկուած վերջալոյսի ականատեսի մի սերունդ ենք, որ արևի վերջին ճառագայթների հետ՝ պէտք է մայր մտնեն և մեր լուսոյ վերջին նշոյլները:

Բայց ահա մեր ականջին հնչում է սրբազն երգչի խօսքերը. «Եջ Միաձինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» և մեր միտքը պանում է դէպի այն երշանիկ ժամանակը, որի համար երգուած են այս նուիրական տողերը: Մեր հոգու առաջ կենդանանում է Հայի հոգեւոր վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հնկայ անձնաւորութիւնը իր կենսաբեր գործունեութեամբ և նետևանքներով: Նա անձնուագործ մի արձան կանգնեց անելի տևական և աւելի խօսուն, քան պղինձն ու երկաթը, բայց և այդ անձնուագործ արձանի յայտարար հիմնեց այն անշոյր շենքը, որը սակայն Հայի վերածնութեան աւազանն է եղել դարձ ի դար: Դարեր են եկել, դարեր անցել, բայց նա հաստատուն խարիսս է մնացել մեր գոյութեան համար: Նա իրուն կենդանի վկայ՝ ականատես է եղել իր որդոց զիլին հասած անլոր աղէտներին և իրուն գթառաւու մայր

միսիթարութեան և սփոփանքի աղբիրներ է հոսեցրել նոցա սրտի մէջ: Ծառ անգոյթիններ և աերումներ է տեսել նա, բայց ամեն անզամ էլ Վերակենդանութեան լոյս ներշնչել լուսահատ սրտերի մէջ: Այսօր ևս, երբ մեր մտքի առաջ պատող պատկերները հազարաւոր Հայերի յօշուուած դիակներն են, երբ մերկ, սովալով որբերն ու այրիները, կանայք և տղամարդիկ հեռու իրենց սրբազն երկրից՝ օտարի, աւելի լաւ ասած, մահուան դուներն են բաղչում, և երբ հայրենիքի և եկեղեցու փատակների փոշին ամեն կողմից վեր է բարձրանում՝ սրբազն երգչի խօսքերը լիշեցնում են մեզ, որ դեռ ևս ամեն ինչ կորած չէ, թէ դեռ ևս կանգուն է Հայութեան «Լուսոյ Խորան», Մայր Աթոռ և Էջմիածնին:

Քաղցր և նուիրական անուն:

Ե՞րբ է եղել Հայի օրը անապես ևս, ինչպէս այժմ. ե՞րբ է եղել նորա ապագան աւելի մոռալ և լուսահատ, քան այժմ: Բայց այսօր ևս Մայր տաճարի սրբազն կամարների տակ հնչում է Լուսաւորչի քարոզը. «Եկայք շինեսցուք սուրբ գլուհանն Լուսոյ»: Ինչպէս սխորհրդաւոր է հնչում այդ կոչը, երբ նոգեսր և բարոյական աերակները մէկ մէկու տեղի են տալիս:

Սրբազն երգիչը հիմնուելով Լուսաւորչի

տեսիլքի վերայ՝ այս հաստատութիւնը «Լուսոյ Խորան» է անուանում: Խորանով որոշուած է և նորա կոչումը: Նա հիմնուած էր հոգևոր դաստիարակութեան մայր լինելու, նորանից պիտի բղխէին աւետարանի լուսոյ ճառագայթեար Հայութեան սրտի խորքերը լուսարթելու: Անցեալից գիտենք մենք, որ այս հաստատարին է մնացել այդ կոչման: Եկեղեցին հայութեան հոգևոր քաղաքակըրթեան լուսարդութեան փարուս է եղել միշտ: Հայի հոգևոր և մտաւոր շարժման արդիւթեար համարեա առանց բացառութեան Լուսոյ Խորանի աղբիւթերից են բրդիւել: Գիր, մատենագրութիւն, սրբազն արուեստ, հոգևոր կեանք, այս բոլորը մեր եկեղեցու շնորհն է, որ մենք վայելելու բաղդ ունինք: Նա մեր հոգևոր վերածնութեան որորանն է եղել, եթե խաւարն ու մահի մեզ կրանել են սպառնացել:


Այսօր ևս, եթե Լուսարդի հոգին մեր եկեղեցու աւերակների վերայից վերաշինութեան հրաւեր է կարդում, մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրեւո՞ւ, բայց եթե կրօնական, հոգևոր վերածնութեան ճանապարհը: Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է: Փրկչի խօսքը՝ «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ» կարելի է և ազգերին ուղղել: Կրօնն է ճշմարիտ կեանքի աղբիւրը, որեւմն և կրօնական վերածնութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ: Մեր ներկայ կեանքը լի է վերքերով: Մեր կեանքը լի է հիշանդ երևոյթներով, որոնք իրենց կողմից

ամենածանր հետևանքներ են յառաջ բերում: Հոգևոր են այդ վերքերը, հոգևոր գէներերով էլ պէտք է դրա ապաքինուին:

Մենք մի մեծ մարտ ունինք խաւարի կործանիչ ոյժի դէմ, ուստի և մեզ գէներ է պէտք, ոչ մտալից, այլ Աստուծոյ հոգուվ կուած: Նա աւելի սուր է և կտրուկ, քան երկաթն ու պղղաւը: Ժամանակը ծանր է և լորջ, իսկ մենք թեթև ենք և անհետատես, ժամանակը հիմնաւորութիւն է պահանջում և գործ, իսկ մենք օդային ամրոցներ ենք կառուցանում և բաներ արտասանում: Մեր անկեղծ համոզմամբ ճշմարիս վերակենդանութեան աղբիւրը կրօնական վերածնութեան մէջ պէտք է որոնել: Մեր եկեղեցին պէտք է աւելի բարօնական ոյժ, կենսատու գօրութիւն ունենայ, եթէ մենք լուսալից մի նոր կեանք սկսել ենք կամտնում:

Արդ Մայր Աթոռն է այն կենդրոնը, որտեղից հայութեան համար հոգևոր, կրօնական կեանքի մի նոր հոսանք պիտի սկսուի. «Օրէնք ի Սիննէ եցէ»: Այստեղ է հաստատուած Լուսարդի՝ Հայաստանեաց վերածնութեան հօր՝ սուրբ գաազանը, որ նորա հօտին միշտ ի փրկութիւն է հովուել: Այստեղ ևս պէտք է նորա հոգին, որ Հայի վերածնութեան սկըզբնաւորութեան առիջն է եղել, միշտ կենդանի և միշտ գործունեալ մնայ: Նոյն հոգին և այսօր սրբազն երգչի բերանով Մայր Աթոռի միաբանութեան է ուղղում իր հրաւերը. «Եկայր շինեսցոր սուրբ զխորանն Լուսոյ»:

(«Արարատ», 1897, նույնիւ, էջ 269—270)



## ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

### ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱԶԳԱԿԻՑՆԵՐԻՆ

Մարդկայն սեղ անհատները զանազանում են միմանցից ըստ զարգացման և ըստ պարագման, բայց մի կողով կայ, որ մարդ անուան ենաւ սերտ և անքանելի կերպով կապակից է, որով և բոլոր մարդոց մի անձանազանելի միանմանութեան է բերում: Այդ կոչումն է աշխատութիւնը:

Աշխատութիւնը՝ կ կատարումն կենսական պահանջմանց: Մարդու կեանքը կայանում է Բոգույ, մարմնոյ և մտաց միավորութեան մէջ, ուստի և կենսական պահանջմունքները որքան մարմնական են, մի նոյնքան ևս հոգեկան են և մոտարական: Մեր եղինակին Տէրը, որ իր անսահման սիրովը հախախնամում է բոլոր արարածներին, իսկ մարդուն առաւել ևս սիրելով Բանորդակից է արել Իրեն և երկրի վերաց թագաւոր կարգել նորան, այսքան սիրելոց յատոյ, աշխատութիւնը իրուն թշուառութեան աղքիր չէ դրան մեր բնոյեան մէջ, այլ իրուն մի բնական պահանջմունքը: Այն բոլոր բնական պահանջմունքները որ ունինք մենք, դոցա ոչ թէ կատարելն է թշուառացնում մեզ, այլ չկատարելը և վաստ կատարելը: Ինչո՞ւ որպահանում ենք մենք, երբ պատահում ենք մեր տարիներով անշատուած ծնողին, բարեկամին, հայրենակցին: Այդ թշուառութիւնն է միտէ Արարշից շնորհած մեր հոգուն: Բայց պարու է գիտել, որ ետք մարդու միտքը անքարա չէ զարգացած, որ կարողաւ տիրել իր հոգեկան կիրքերի վերաց, որևէն և որախութեան, նա կարող է չափազանց որպահանալ, մինչև ուշագնաց լինելու ասիհման, գժուելու, և մեռնելու անգամ: Ինչ որ ասացինք այս հոգեկան պահանջման մասին, նոյնը կարող ենք ասել և մորի և մարմին մասին: Ի՞նչ Բարկաւոր է միտք զրադեցնել այնպիսի խնդրի վերաց, որ գեր ի վեր է մարդկային մոտար կարողութեան սահմանից, և կամ այնքան թեսն դնել մի մէջի վերաց, որ նորա ուժից բարձր լինի և տանել անկարելի: Բայց ի՞նչպէս քաղցր է մոտածի գզալի էակմերի վերաց, ճանաչել նրանց, և

նրանցով նրանց Ստուծողի անսահման մէրը զգալ ու սիրել նորան գիտակցարար՝ ամենայն անձամբ՝ Բոգույ և մորը: Ի՞նչպէս քաղցր է իր տնկած ծառի տակ նստելը, նորան դարմանելը և ամենելը:

Կարծե՛լ որ երշանկութիւնը հանգստութիւնն է, այդ թէ աստուածային և թէ բնական օրինաց դէմ մոլավիչել կնշանակէր, վասն զի ամրոց բնութիւնը « և Բուման և ի ծորման » է, ամենայն տեղ շարժողութիւն է, ամենայն տեղ կեանք է: Եթէ ամենք՝ Աստուած մեզ ատելով է ենթարկէլ աշխատութեան, այդ կը հշանակէր ասել, թէ Աստուած մեզ ատել է, մեր մարմնոյն հոգի կենդանի տաղով և նոցա կառավարելու համար մի միտք. վասն զի պատուի է հանգստութիւնը, որ ոգի՝ կենդանութիւն կամ շարժողութիւն չկայ: Բայց ո՞ւր է պայդիսի մի տեղ բնութեան մէջ. մեր անշնչ բնակարանը անգամ անշնչան շարժողութեան մէջ է իր բոլոր մասունքներովը: Ծառը իր պտղովը, ծաղիկը իր հոտովը, մտղուն իր մեղրովը, շերամն իր մատաքսովը. բոլոր, բոլոր անքան արարածները անգամ ակն յանիման ատում են ծովութիւնը, որ մայր է ամենայն չարեաց, և ապացուանում աշխատութեան անհրաժեշտ կարևորութիւնը և երշանկութեան միակ աղքիր լինելը: Եթէ բնագրդուար ապրոյ, միակ գիշապահութեան եռուն ընկած մարդուն անապուն ենք նմանեցնում, ապս ուրեմն այն մարդուն, որ իր միակ գոլուսը պահպանելու չափ գործունելութիւն չունի, պէտք է նմանեցնել ցեցի, որ ոստում է առանց աշխատութեան ուրիշի աշխատանքը:

Մեր նպատակը չէ այստեղ բնագրտական մնանով ցոյց տալ, թէ ինչ պատճառներից է յառաջանան ծովութիւնը, և հետևապէս ցոյցանել, թէ ինչ պատմական և բնական պայմանների է կարօտ մի որ և իցէ ծողովորի գործունելութեան ասիհման և կերպ, այլ առ այս կամենում ենք ասել միայն, թէ աշխատութիւնը է երշանկութեան միակ ճանապարհը, և որքան գիտակցարար լինի՝ աշխատութիւնը, այնքան

մասի կը մոտացնէ մարդուն այդ նպատակին: Բայց նաև մարդիկ, որ երևակարութեցից թելադրված, սրբաց անձը ենթարկել էն ծովութեան, պարուն էն առատառալ, որ երշանկութիւն ձեռք թերել միայն աշ-առասութեամբ կարելի է, թէ այս անցաւոր կենցա- ցոյս վերաբերութեամբ և թէ այն: Արքայութիւնն սրբինց բռնարարի և բռունք յափշտակին զնա: Ձէ՞ որ մենք առաքինութեամբ կարող ենք ձեռք թերել թանանց երշանկութիւնը. բայց ո՞վ է լսել, որ առա- ժմինութիւնը մի վերացական բաց լինի և ցնորարա- տութեան նևունաճը: Սուարինութիւնը գործ է, աշ- առասութիւն է, որ իր նմանակցին սիրելու և կարե- լինց լինելու մէջ է կայանում: Եթէ մենք ճշդի կա- տարենք աստուածային այս կենսատու պատուիքը, անշուշն այս կեանիք մէջ ևս կարող ենք երշանկու- թեան մօտենան:

Կարո՞՞ն է միթէ հասարակութեան մի անհատը իր պարդար աշխատութեան պատուղ վայելել, եթէ միւս ողլոր անհատութեար գործ և ծոյլ մարդիկ են: և եթէ մասսարակութեան մի անդամը, կարծելով որ միմի- րայն նիւթական նոխութեամբ կարող է հասնել եր- աշխատութեան, և այդ կարծիքը իրեն համար մի նոր ժիշտ համարելով, ուզում է հասնել այդ նախառակին նույնուրույնարար, դա պիտի հախանձի անշուշն իր ընկերի բաղդի վերայ, պիտի ամենայն ջանք ի գործ գնել, որ նա ևս շնորհանայ, որպէս զի ինքը միշտ սեմբանմաս բարձր մնայ նորանից: Եւ ապախի վերապէտ հարստացած մարդը մի՞թէ երշանկութեան մօտեցան կը համարիի: Ամեննին ո՞չ. վասն զի եր- շանկութիւնը մնատող չէ և ոչ մետաքս, այլ հաւա- րակշոռութիւն պահպանել է հոգեկան, մարմնա- յան և մոտարական պահանջմանց մէջ: Եթէ այդ պահանջմանց կատարելով միայն կարելի է մօտե- նալ երշանկութեան, ապա ուրեմն որքան ընդհան- ուական լինի այդ ձգտողութիւնը, որքան ընկերական, այնքան շուտ կը մօտեցնէ մարդուն իր նախառակին: Մենք չենք կարող մի զրկանք հասցնել մեր ընկե- րին, և համգխան խճանտաքով մեր հոգին վեր ուղ- ղել դէայի Արարշի աթոռը, և եթէ աղդակն ամենը, ըրկին պատիծ կընդունինք կրկնապատկերով մեր սունմտանիք տանշանքը. վասն զի՞ երթ, կառէ, նախ նախտեաց ընդ երօր քում..... վասն զի՞ զԱսո- ուած, զոր ոչ տեսանեն, զի՞ արդ կարիցն սիրել...

Վերջապէտ ասել կամցանք պարան խօսելով, թէ աշխատութիւնը մի բնական պահանջմունք է՝ մար- դուս բնութեան մէջ դրած ի սկզբանէ անտի Արար-

չագործի ձեռամբ, թէ չկայ մարդ, որ ազատ լինի այդ օրէնքից, և թէ դա մարդկային սեղ երշանկու- թեան մօտեցնող միակ գործին է, թէ անցաւոր կեն- ցաղոյս վերաբերութեամբ, և թէ անաց:


Այն բոլոր միջոցները, որոնք համարվում են լու- սաւորութեան միջոցներ, ծառայում են այդ նպա- տակին. ցոյց են տախի փորձով և բանի, թէ ի՞նչ- պէս աւելի դիրագոյն է, յարմարաւոր է, բնական է, վայելու է և, վերջապէտ, օգտական աշխատել:

Պարքերական ներթը լինելով լուսաւորութեան գործիններից մինը, արձակ ճանապարհ ունի մտնե- լու ընդհանուրի մէջ և նորան իր մուաց զարգաց- ման աստիճանին լարմար սեղնդ տպու և հաս- կացնելու, թէ ինչպէս պիտոյ էր աշխատել:

Ենք առնելով Արարատի երկրորդ տարվան ըն- թացքի դեկը, զգում ենք, որ այդպիսի մի պարու- տութիւն և մուգ վերայ կայ կատարելու մեր ժողո- վըրդեան մէջ. հայ ժողովրդեան եւ ասում, որին երբ համեմատում ենք այլ ժողովրդոց նետ, բոլորվիմք տարրեր ենք զանուտ նորան թէ՝ ըստ բաղարակա- նին և թէ ըստ մտարականին և բարոյականին: Մեր խորին ուշադրութիւնը դարձնելով այս տարքե- րութեան վերայ, մենք նկատում ենք, որ ոչ ամե- նայն աշխատութեան կերպ, որ գործ է դնում որիշ ազգ, կարող է գործ դնել և Հայ ազգը, բայց ինչ կերպ որ ամենակարևորագոյնն է և անթամեջու հարկաւորը, այն կարող է գործ դնել և Հայը: Այդ կերպն է՝ երկայնամտութեամբ և միարանական սի- րով աշխատել: Միարանական սէրը պէտք է լինի ինման մեր աշխատութեանց, ընդհանուրի օգուտը նո- րա վերայ կառուցած: Ուրախութեամբ սրտի մենք նկատում ենք, որ այս պատուական ձգտողութիւնը այժմ ամեն Հայի մէջ էլ զարթել է ուսման և կրթու- թեան կարևորութիւնը ձայն բազմաց է դստել. սա- կայն ցաւելի է նկատել, որ շատ տեղերի յառաջըն- թացութիւն անհիտակցարար և աննպատակ է....

Արարատը այս նկատողութիւնը անելով իր սիրե- լի որդոցը, պիտի աշխատ և ինքը, ընդհանուր ազ- գի օգուտը և բարին գերադասելով ամեն բանից: Արարատը իր ամեն ջանքը պիտի գործ դնէ լինել այնպիսի մի պատկեր, որոյ մէջ Հայը կարողանայ տեսնել իր անցեալ և ներկան, և յուսով է, որ իր հարազատ որդոց լուսաւորեալ մասը ամենայն կեր- պով դիրութիւն կը տայ այդ նպատակին մօտենա- լու:

(«Արարատ», 1869, մայիս, էջ 1)





### Յ. ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆ

#### ՓՐԿՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ

Սիրտս վշտահար, մոլորուած մտքով,  
Նայում եմ առաջ, դիտում եմ հեռուն,  
Եւ հարցնում եմ՝ վիատած հոգով,  
Թէ ուր պիտ հասնի մեր նաևն երերուն:

Ալեծուի ծովին դարձած խաղալիք  
Եւ խաւարի մէջ կորցրած ուղին,  
Առաջ ենք գնում՝ վաստակած, լոիկ,  
Անզօր հապտակ մեր ճակատագրին:

Եւ տեսնում եմ ես, ամէնքս խոնարի,  
Մի յուսով միայն չենք ընկճուում ցայսօր.  
Այդ մեր փրկութեան խաչն է լուսավառ,  
Մեր յաւէտ անշէջ փարոս դարաւոր:

Սևաթոյր երկնից մոայլ երեսին.  
Փայլել է նա միշտ իբր յուսոյ մի շող—  
Սին կենդանութեան, Մայր Էջմիածին,  
Տարագիր հօտի արթուն ժողովող:

(«Արարատ», 1896, մայիս, էջ 227)

#### ԽԱՉԻ ՆԵՐՔՈՅՑ

Գիշերուան այս սև, ամոելի խաւար  
Զվիատեցնէ թող քեզ, իմ եղբայր.  
Վառ անտաքեր օրուայ է նշան:  
Այդ արշալուահ ընկերն անբաժան:

Տե՞ս տեսել, ինչպէս մոայլ փոթորկին  
Յաջորդում է միշտ լուսագեղ երկին,  
Եւ քաղցր ծափով արևը պայծառ  
Գգուում է կրկին սար, դաշտ ու անտառ...

Խաչիդ տակ ճնշուած դարձեալ դու յուսա—  
Փրկութեան քո ծամն անշուշտ պիտի գայ.  
Արեամբ ներկուեցաւ առաջ Գողգոթան,  
Ալպա թէ ծագեց սուրբ օրն յարութեան:

(«Արարատ», 1896, սեպտեմբեր, էջ 405)

## Մ Ա Յ Ո Ւ


Հոգեմաշ ցաւով ամենայն գիշեր  
Ես քոն եմ մտնում արտասուրն աչքիս,  
Եւ խոտն երամով տանջող պատկերներ  
Ծուռ պաշարում են տառապեալ հոգիս...  
Մենակ ապրեցայ կարօտ գգուանքի,  
Փորձով ես ուսայ խորհուրդը կեանքի,  
Օրս սեւացաւ այրող կրքերից,  
Չքրտուալ երբեք մի սիրու կարեկից:

Եւ քոն եմ մտնում ամենայն գիշեր  
Արտասուրն աչքիս, հոգեմաշ ցաւով—  
Հանգիստ չեն տալիս սեւ սեւ պատկերներ,  
Որ պաշարում են ինձ խոտն երամով...  
Եւ ահա դու ես որ ինձ այդ պահուն  
Երեսում ես, մա՞յր, պսակով զարդարուն.  
Դու գրկում ես ինձ սիրով կաթոգին,  
Գոչում ես՝ «որդի» ձայնով անմեկին:

Եւ տեսնում եմ ես քո փշեայ պըսակ,  
Խոցերով ծածկուած քո սիրուն ճակատ,  
Եւ մի թափանցիկ նորր շղարշի տակ՝  
Կործքիցը հոսող արիւնը կաթ կաթ:  
Աչքը աղերսալիր տեսնում եմ վերաս,  
Կանչում եմ քեզ «մա՞յր» ես ձայնով նըւազ,  
Եւ կրկին ելնում անքուն վշտահար—  
Ա՞յս, մա՞յր, ի՞նչ անէ որդիդ քեզ համար...:

(«Արարատ», 1896, Բոկտեմբեր, էջ 456)





## ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Հայրապետական փոխանորդ Արարատյան թեմի)

### «ԱՐԱՐԱՏ»-Ը ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1878 թվականի մարտի 3-ին ստորագրվեց Սահ-Ստեֆանոյի պայմանագիրը միջազգային հարաբերությունների լարված պայմաններում: Ռուսական պատվիրակությանը հաշողվում էր Արևմտյան Հայաստանի հարցը մոցնել հաշտության պայմանագրի մեջ, որպես նրա 16-րդ հոդվածը, որն ուներ հետևյալ բռվանդակությունը. «Նկատի ունենալով, որ Հայաստանում գրաված, բայց Թյուրքիային վերադարձվելիք վայողություն ունենալով կարող է կիրակերի և բարդությունների տեղիք տալ և բացասարար անդրադառնալ երկու պետությունների բարյացակամ հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է հայկական մարզերում, առանց ուշացման, գործադրել տեղական պայմաններից բխող բարեկարգություններ ու ուժքումներ և հայերի ապահովությունը պաշտպանել բրդերից ու չերքեզներից<sup>1</sup>:

Այնուհետև, եվրոպական պետությունների մրցակցության պատճառով, Սահ-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը վերաբենության ենթարկվելով, դառնում էր Բեռլինի վեհաժողովի տիրամահուչակ 61-րդ հոդվածը, ըստ որի ուստական բանակը պետք է անհապալ

լուրս բերվեր Արևմտյան Հայաստանից և ուստական վերաբենողության փոխարեն ստեղծվում էր եվրոպական խոշոր պետությունների հավաքական վերաբենողություն: Բեռլինի ժողովի 61-րդ հոդվածից հանվել էր «Հայաստան» անունը և մտցվել՝ «հայարակ» տերմինը:

Հովհաննես Թումանյանը այս մասին գրում է. «Հայկական հարցը Բեռլինից չի սկսվում և եվրոպական պետությունները չեն դրել, այլ Սահ-Ստեֆանոյից է սկսվում և ուստի են առաջին անգամ հայկական հարցը անցրել միջազգային խնդիրների շարքը»<sup>2</sup>:

Հայ ժողովուրդը 1878 թ. Սահ-Ստեֆանոյի և Բեռլինի ժողովներից հետո արդում է համազգային ուրախության և միաժամանակ դառն հուսախարությունների մի շրջան:

Համայնան կառավարությունը յուրահատուկ ձևով է հասկանում և գործադրում հայկական վեց գավառներում բարենորդումների ծրագիրը: Կազմվում է վեց վիլայեթներում ապրող հայության սիստեմատիկ բնաջնջման ծրագիրը. «Բամիդիկ» գնդերի կազմությամբ, որոնք արտաքնապես պետք է ապահովեին Արևմտյան Հայաստանում հայ ժողովուրդի կյանքի, պատվի, ինչքի անվտանգությունը, բայց ներքնապես, գաղտ-

<sup>1</sup> Сборник договоров России с другими государствами, 1856—1917, Москва, 1952, стр. 168—169.

<sup>2</sup> Հովհաննես Թումանյան, թ. 4, էջ 225—226;

նորեն հրահանգված էին թաղել հայկական հարցը կոտորածների կազմակերպումով:

Խրիմյանը երբ հայրապետական Աթոռ քարձորաց, արդեն Արևմտյան Հայաստանի հանում էին շարդերի և կոտորածների արյունուր լուրերը: Եվ այդ թվականից սկսած Մայր Աթոռ Ամենայն Հայոց հայրապետների գլխավորությամբ ստանձնում էր արևմտահայոց թագ ապահովության և պաշտպանության ղեկավարությունը և իր բոլոր միջոցներով հետապնդում հայկական հարցի հաստի լուծում:

Այդ տարիներից «Արարատ» ամսագիրը լայնորեն իր էջերն է արևմտում հայկական հարցի վերաբերյալ, հայոց հայրապետների դիմումներին, կոչերին, բոլորքներին և Արևմտյան Հայաստանից ստացված տիտոր լուրերի հրատարակությանը:

«Արարատ» ամսագիրը հայրենասիրական խորունկ գիտակցությամբ պաշտպան և կանգնում արևմտահայության իրավունքներին և պահանջում էր հայկական հարցի արդար լուծմանը:

Պետք է երախտագիտությամբ արձանագրել, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը համարձակորեն կանգնում էր հայրենասիրական այդ դիրքերի վրա 1895 թ. մինչև 1919 թվականը:

Թուրքական բռնապետությունը, սկսած 1870-ական թվականներից, սիստեմատիկ շարդեր կազմակերպեց Արևմտյան Հայաստանում: 1870-ական թվականներին կոտորածները սկսեց Սասունցից, այնուհետև 1898 թվականին՝ Վասպորականում: Այդ կոտորածների առթիվ «Արարատ»-ը մեղադրում էր նաև Արևմտյան պետություններին. «Քրիստոնյա աշխարհի բոլոր ջանքերը ծնեցին մեռապ քարենորդություններ, որ սկսվեցան տմարդի կոտորությունը և վերջանում են ահա երկրի ամայանալով: Այս երկու տարվա ընթացքում շատ խոսվեցավ և գրվեցավ հայոց մասին, բայց խկական ճշմարտությունը երևան չեղավ»<sup>5</sup>:

1896 թ. հայկական կոտորածի ժամանակամիջոցին սկսվում է Արևմտյան Հայաստանի գաղթականության հոսանքը դեպի Արարատյան դաշտ. «Ս. Էջմիածինը պատրապարել է օրական 500—600 գաղթական, որոնք միշտ տեղի տալով նորեններին, ցրվում են դեպի կենտրոնական քաղաքներն ու հայաբնակ գյուղերը»<sup>6</sup>:

Ս. Էջմիածինը գաղթականներին Հայաստանի շրջանները բաժանելուց բացի, հիվանդներին վաճռում էր խնամում. «Վեհափառ հայրապետի հրամանով վասրի գյուղի

միջի տունը, նախկին տղայոց դպրոցը, փոխարկվել է հիվանդանոցի, որ տասնյակ հիվանդներ են խնամվում ճեմարանի բժշկի ձեռքով: Գաղթականների մի մասը ևս վաճքի գումանոցում է, որոնց վրա հոգածություն ունեն ճեմարանի սարկավագ աշակերտները»<sup>7</sup>:

Այսուհետև «Արարատ» ամսագիրը «Տաճկահայք» ենթավերնագրի տակ խոտում է մասրամասնորեն Հայաստանի և Կիլիկիայի մեջ տեղի ունեցած 1895—1896 թվականների հայկական կոտորածների մասին, հրատարակելով նաև այդ հարցերի առնչությամբ բազմաթիվ վավերագրերներ<sup>8</sup>:

Խրիմյան Հայրիկը 1898 թվին գրում է համար 493, 494, 497, 498, 499 սրատան կոնդակները ուսահայոց թեմական արքայի կուպունուներին և պատվիրում է աշակել «ի գործ վերադարձի գաղթականաց ի հայրենիս»<sup>9</sup>, իսկ 501 կոնդակով Կ. Պոլսի պատրիարքին, որով պատվիրում է բանակցել առ որ ան է գաղթականների պահով վերադարձի մասին յուրաքանչյուրը իր հայրենիքը և տեղը, և վիճակավոր առաջնորդներին և փոխանորդներին ջանալ՝ ըստ ամենայնին «արգել լինել հետ այսու նորոգ գաղթականութեան»<sup>10</sup>:

1909 թվականի ապրիլի 25-ին Ամենայն Հայոց Հայրապետի տեղակալ Գևորգ արքայի կուպուր, Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Հովհաննես արքայի կուպուն Արշարունուն են և խնդրում մասրամասն տեղեկություններ հաղորդել Կիլիկիու մեջ տեղի ունեցած վերջին սուլայի շարդերի մասին:

Պատրիարքական տեղապահը իր գեկուցագրում մասրամասն տեղեկություններ տալուց հետո խնդրում է, որ սինոդը և հայրապետի տեղակալը օգնության հասնեն Կիլիկիու հայությանը<sup>11</sup>:

Սինոդը որոշում է միանվագ 500 ուղարկել Կիլիկիու աղեստյալներին<sup>12</sup>:

«Արարատ» ամսագիրը 1908 թվականի 1146—1147 էջերում և 1909 թ. 107—108 էջերում տպագրում է Խօմիրլան պատրիարքի կոչը Տաճկա-Հայաստանի և Կիլիկիու մեջ սովոր մասին: Հայրապետական ամսագիրը հրավեր է կարդում նյութապես օգնել սովոր մասին: Ս. Էջմիածինի միաբանությունն էլ իր միջից հանգանակում է 280

<sup>5</sup> Նոյնը, էջ 419:

<sup>6</sup> Նոյնը, էջ 420—424, 472—476, 525—530, 578—586:

<sup>7</sup> «Արարատ», 1898, էջ 285:

<sup>8</sup> Նոյնը, էջ 235:

<sup>9</sup> «Արարատ», 1909, էջ 526:

<sup>10</sup> Նոյնը, էջ 416:

<sup>3</sup> «Արարատ», 1896, էջ 417;

<sup>4</sup> Նոյնը, էջ 419;

ոորթի և այն Մեսրոպ վարդապետի միջոցով փոխադրում է Կ. Պոլիս, պատրիարքարքարական<sup>11</sup>:

1912 թ. նոյեմբերի 10-ին 1482 թվակիր կոնդակով Գևորգ Ե-Ա Պողոս-Նուապար փաշային նշանակում է հայրապետական պատգամավոր և 1913 թվականի հունվարի 4-ին՝ ազգային պատվիրակության նախագահ<sup>12</sup>:

Գևորգ Ե-Ի հանձնարարությամբ Պողոս-Նուապար փաշան ահազին ճիզ և շանք թափեց այդ ուղղությամբ, ինչպես երևում է կաթողիկոսի և Պողոս-Նուապար փաշայի միջև փոխանակված հեռագրերից, որոնք տպագրված են «Արարատ»-ի էջերում:

Գևորգ Ե կաթողիկոսը օրինության և շնորհակալության հասուն կոնդակ է ուղղում Պողոս-Նուապար փաշային 1914 թ. փետրվարի 20-ին 258 համարով և հանձնարարում է նրան շարունակել որպես իր ներկայացուցիչ՝ ազգօգուտ իր գործունեությունը<sup>13</sup>:

«Արարատ» ամսագիրը իր 1914 թվականի փետրվար-մարտ համարներում մանրամասն տեղեկություններ է տվել «Տաճկա-Հայաստանի բարենորոգումների ծրագիրը» խորագիրը կրող հոդվածաշարքում, ինչպես նաև Պողոս-Նուապար փաշայի գործունեության մասին:

Սուաշին համաշխարհային պատերազմի նախօրյակին Տաճկա-Հայաստանում Ակավում են թուրքական և քրդական շարժումները, Բիթլիսի, Մուշի, Բաղեշի հայերի կոտորածք:

Գևորգ Ե-Ա հրահանգում է իր դիվանին, ինչպես նաև Կ. Պոլս տ. Զավեն պատրիարքին «զուտով մանրամասն գեկուցանել Բիթլիսի, Մուշի հայերի վիճակի մասին, լուսագրերում հուզիչ լուրեր կան»<sup>14</sup> և ստանում է տեղեկություններ այդ իրադարձությունների կապակցությամբ:

1914 թ. Աւատումքերի 28-ին 1511—1528 թվականամար կոնդակով կոչ է ամուս իր բարձր հովանավորության ներքո առնել հայ ժողովորդին եղբայրական օգնության գործը, որի հապատակն է ամեն կերպ խնամել պատերազմից վերադարձած վիրավոր և հիվանդ զինվորներին և նյութապետ օգնել նրանց անօգնական ննտանիքներին<sup>15</sup>:

1914 թ. նոյեմբերի 15-ին 1750, 1751 համար կոնդակներով Երևանի փոխ-թենմակալ

տ. Խորեն նախակոպոսին և Վրաստածի հայոց թեմի առաջնորդ տ. Մեսրոպ նախակոպոսին հրահանգում է անհապաղ գևաղ պ. պ. Հովսեփ Խունունցի, Ծիրվանզարեկի, Հովհաննեսի Թումանյանի և Միքայ Խաչատրյանի ընկերակցությամբ ոսու-տաճկական պատերազմի նակատ, նախ հայութել գորքի հրամանատարներին նորին վեհափառության օրինությունն ու բարեմալությունները, երկրորդ՝ զրաբանակն այցելելու ժամանակ հայրարարավոր տեղում կատարել Կայսերական մայութանք, օրինելով զրաբաններին ու զորքին, երրորդ՝ հաղորդել բոլոր հայ զինվորներին և կամավորներին՝ լինել միշտ պարտաճանաչ, լավ և օրինակելի բոլոր գործերում, չորրորդ՝ քննել Ռուսաց տիրած մասի հայ զյուղական ժողովը վիճակը և նրանց կրոնական ու բարյական և տնտեսական կացության մասին մանրամասն տեղեկություն ժողովել, և, հինգերորդ՝ ուսումնասիրել հայոց ազգային կրոնական ու աստվածահանու հաստությունների, կալվածների վիճակը. Առև նոյն շրջանի հայ հոգկորականության մասին տեղեկություն քաղել, պատվիրելով վերջինս միշտ միմիթարել հոգեպետ և բարյապետ հայ ժողովորդին, որ ծանր կացության մեջ է, շրջադարձությունից հետո մանրամասն զեկուցագիր ներկայացնել նորին Վեհափառության<sup>16</sup>:

Սուաշին համաշխարհային պատերազմը հայ ժողովորդի համար հանդիսացած կործանարար:

Եղենին օրերին ս. Էջմիածինը իր կարելին արել է փրկելու համար մնացորդը մեր ժողովորդի:

Ս. Էջմիածնի կատարած դերն ընդգրկում է գործունեության մի քանի բնագավառ: Հատկապես շատ կարևոր էր ս. Էջմիածնի հովանավորությամբ գործող եղբայրական օգնության հանձնաժողովի կատարած աշխատանքը: Գաղթականների օգնության գործը արդյունավերապես կազմակերպելու համար եղանակահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսը գրում է իր 28 դեկտեմբեր 1914 թվականի համար 1990 կոնդակը, որ վշարահար հայրապետն ասում է. «Դարձալ լուս ենք Հայաստան աշխարհի ողբը և աղաղակը՝ մեր սիրելի զավակների անօգնական վիճակի մասին»<sup>17</sup>:

Կաթողիկոսի հրամանով Երևանի փոխթեմակալ տ. Խորեն նախակոպոս Մուրատբեկյանը մեկնում է Բգդիր, կազմակերպելու եղբայրական օգնության հանձնաժողով,

<sup>11</sup> Նոյնը, էջ 187:

<sup>12</sup> «Արարատ», 1914, էջ 120—121:

<sup>13</sup> «Արարատ», 1914, էջ 195—198, 217—219, 404—406:

<sup>14</sup> Նոյնը, էջ 325:

<sup>15</sup> Նոյնը, էջ 870—873:

<sup>16</sup> «Արարատ», 1914, էջ 1066:

<sup>17</sup> «Արարատ», 1915, նունվար, էջ 3, 4, 5:

կարգադրություններ ամելու, ընդունելու և խնամելու ժամանող գաղթականներին:

Այդ օրերին շարունակվում է գաղթական արևմտահայերի հոսանքը դեպի Եգիտիր: Դարձայ կաթողիկոսի հրամանով Եգիտիր է մեկնում նաև ու. Գարեգին վարդապետ Հովհաննեսը, տեղական հանձնաժողովի ներ ընդունելու և պատսպարելու գաղթականներին, ինչպես նաև կազմակերպելու հրաց փոխադրության գործ դեպի Էջմիածին: Նոյն հայտակով Արիստակես վարդապետը և նեմարտանի մի քանի ուսանոնք մեկնում են Մարգարա գյուղ՝ սնունդ մատակարարելու գաղթականներին և հանապարհելու հրաց դեպի և Էջմիածին:

1914 թվականի դեկտեմբերի 26-ին ս. Էջմիածին է հասնում գաղթականների առաջին մեծ հոսանքը: Ցուրտը, քաղցը, հոգնածորյունն ու բարոյական տաճառքները միավամայն ճնշել և կենդանի մեռնենք էին դարձել գաղթականներին: Այդ մասին մանրամասն նկարագրում է Կարեն շրջանի վարժարանների տնօրեն Ս. Բարաշանյանը «Ինչո՞ւ և ինչպե՞ս գաղթեցինք» հոդվածաշրութիւն<sup>18</sup>:

1915 թվականի փետրվարի 13-ին ս. Էջմիածինը իր միջոցներով գաղթականների համար քաց է անում հասուկ հիվանդանոց, որի դեկապարությունը հանձնվում է թիշվի Օգունյան Տեր-Հարությունյանին:

Այդ օրերին արդեն դեպի Էջմիածին էր շարժվում նաև Վասպուրականի 120 հազար գաղթական հայությունը: Գևորգ Ե կաթողիկոսը իր համար 462 սրբատառ կրնդակով<sup>19</sup> կոչ է անում. «Էլիայոս եմք, զի ամենայն պարտաճանաչ և գիտակից ազգայինք մեր սրտեռանդն ոգով օգնեսցեն հիյթապես և բարոյապես վասն շինարար փրկարար գործունեութեան այսորին՝ յօդուտ և ի փրկութիւն փախատական գաղթականաց մերոց»<sup>20</sup>:

Սրտառուց է նաև Եղբայրական օգնության հանձնաժողովի 1915 թվականի ապրիլյան կոչը, ուղղված համայն հայ ժողովընդունելուն:

«Արարատ» ամսագրի 1915 թվականի հունիս-դեկտեմբեր համարներում կան հաշվեցուցակներ հետևյալ վերևագրով. «Հաշիվ ս. Էջմիածինի Սինոդում գաղթականների անոնով ստացված գումարների»<sup>21</sup>, Ըստ

<sup>18</sup> «Արարատ», 1915, փետրվար-մարտ, էջ 150—169, 573—585:

<sup>19</sup> «Արարատ», 1915, էջ 101—108:

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 108:

<sup>21</sup> «Արարատ», 1915, էջ 150—151, 505—512, 664—667, 798—799, 925—928:

թաշվեցուցակների, 1915 թվականի օգոստոսի 1-ից մինչև 1917 թվականի դեկտեմբեր ամսար հանգանակությամբ և նվիրատվությամբ Եղբայրական օգնության ֆոննեն մուտք է եղել 3.187.778 ո. 65 կ.:

Հայ ժողովորի վշտահար Հայրապետը 1915 թ. ապրիլի 7-ին իր կոչերով և հեռագրերով դիմում է նաև աշխարհի պետությունների դեկապարներին («Արարատ» 1915 թ. էջ 170—175), հրավիրելով հրաց ուշադրությունը հայ ժողովորի համատակության վրա: Համանամաս գրությունները ուղղում է Կովկասի փոխարքա կոմս Խլարին Խվանովիչ Վարանցով-Դաշկովին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Դմիտրինիշ Սագանովին, Խոայիայի թագավոր Վիկտոր Էմմանուել Գ.-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին, Փրանչիական հանրապետության նախագահին, Անգլիայի թագավոր Գևորգ Ե-ին:

Վեհափառ Հայրապետը աշխարհի մեծ պետությունների դեկապարներին գրած իր դիմումների մասին տեղյակ էր պահում Ազգային պատվիրակության նախագահ և իր անձնական ներկայացուցիչ Պողոս-Նուպար փաշային:

Գևորգ Ե-ի ապրիլի 7-ի թվակիր դիմումներին պատասխանում էին ուսուական արտաքին գործոց մինիստր Սագանովը և փոխարքա Վարանցով-Դաշկովը, ինչպես նաև Անգլիայի արտաքին գործոց նախարար Գրեյը («Արարատ», 1915, էջ 175—176):

Հայ գաղթականներին օգնելու կոչով Գևորգ Ե-ն մասնակիրապես դիմում է ԱՄՆ-ի նախագահին, ասելով. «Եմ ժողովորի Տաճատանում կրած տաճառքներն անհուն են և անսահման: Մարդկանի պատմությունն այդպիսի օրինակներ չունի»<sup>22</sup>:

Հայոց Հայրապետը իր 21 մարտի 1916 թ. համար 670 կրնդակով դիմում է նաև Ամերիկայի բարձրաստիճան եկեղեցականներին՝ Ուիլմսի, Լեոնարդի, Մըկ-Քորմանի և Ռայլենդրայի (Եպիսկոպոսներին), և կոչ է անում հրաց իրենց գործակցությունը քերել հայ բազմաշարչար և համատակ ժողովընդունելու, որպեսզի «մի խախտեսցի ի հիմանց ընդ Արևելք՝ ի դրուն հնոյ աշխարհին առաքելաշահի եկեղեցին Հայատանեաց, որոյ ի նախկին դարուց անդի շաղախմաբ արեան Քրիստոսի նախատակաց անսասան հաստատեալ ի վերայ վիմին հաւատող»<sup>23</sup>:

Գևորգ Ե կաթողիկոսը կոչեր էր ուղարկում նաև Անգլիա և Ֆրանսիա, օգնելու.

<sup>22</sup> «Արարատ», 1915, էջ 843—844:

<sup>23</sup> «Արարատ», 1916, էջ 163—166:

հայ ժողովրդին: 1916 թ. մայիսի 22-ին Լոնդոնի հայ փախատականներին օգնող ընկերության պատվավոր քարտուղար, վերապատվելի Հարող Բաքստոն տեսակցություն է ունենալու Գնորգ Ե-ի հետ և պատմու երան Անգլիայում գործող հանձնաժողովների և ընդհանրապես հայանապատ շարժման մասին: Անգլիայում կազմակերպված հայանապատ շարժման գլուխն են կանգնու Լոնդոնի Լորդ Մերը, Քենտրոնքրի արքեպիսկոպոսը, Յորքի եպիսկոպոսը, Կարդինալ Պորք, Լոնդոնի ուսական դեսպանը, լորդ Ջեյմս Բրայսը և այլ երեխներ անձնավորություններ: Հանձնախոսմբը Կովկաս է փոխադրում 38 հազար 239 անգլիական ուկի հայ տառապյալներին բաշխելու:

Հիշարժան է լորդ Ջեյմս Բրայսի անկաշատ գործունեությունը ի նպաստ հայ ժողովրդի արդար դատի պաշտպանության: Հանրահայտ են մամուլում տպագրված նրա գեկուցումները: Անա այդ առիթով է, որ ի գնահատումն նրա կատարած ազնիվ հայանապատ գործունեության, 1916 թ. ապրիլի 27-ին Գնորգ Ե-ն կոնդակով գորու է Ջեյմս Բրայսին. «Զի արդարամիտ և ազնուագոյն որդիք ազգաց մեծաց և ազատաց, յորոց և զմին զվանմաշուր Տերդ դիտել գիտեմք, զպաշտպանութիւն տկարացն ընկալեալ յանձննա, փութացին դատ ամեն հրապարակաւ ընդ Մեզ և ընդ ուսիսի մերում և չտալ թոյլ զի իսպառ կոխան լիցուր ոտից թշնամեաց մերոց»<sup>24</sup>:

Մեծ եղենին դժվարին օրերին Ֆրանսիայում կազմակերպվում է ֆրանս-հայկական մի ընկերություն, որն իր ամենաջերմ համակրության գգացումներն է դրսնորում հայ ազգի հանդեա: Այդ հանձնաժողովը բաղկացած էր նշանավոր ամեներից: Այդ հանձնաժողովին և Գնորգ Ե կաթողիկոսն ուղղում է իր գործունակության և օրինության խոսքը, մաղթելով նրանց կատարյալ հաջողություն, հույս հայտնելով, որ նրանց համակրությունները, և անձնվիրությունը հայ դատի պաշտպանության նկատմամբ կը պասակի հաջողությամբ և հայ նահատակ ժողովուրդը հավետ երախտապարտ կլինի նրանց:

Գնորգ Ե իր մասնակի ուշադրությանն է արժանացնում Անատոլ Ֆրանսի գործունեությունը ի նպաստ հայ ժողովրդին<sup>25</sup>:

Համանման կոնդակներ Գնորգ Ե-ն գրել է Ժնևի հայանապատ հանձնաժողովի նախագահ Լեռուղի Ֆաուրիին, որտեղ վրտահար հայրապետը գրել է. «Գոհանամբ զՁենք, զի տառապան հօտին մերոյ, ոչ հա-

մեցաք տարածանել զբազուկ մարդասիրականի և հայրանակացաց ի բարձրաստ, ի լեռաց Ալպեաց... Ծորիս ունիմք առ Ջեզ վասն գործոց առաքինութեան Ջերոյ»<sup>26</sup>:

Գնորգ Ե-ն կատարում է նաև գործեամբան քայլեր, կորուսից փրկելու համար մեր մշակույթի արժեքավոր գաևաները: Կաթողիկոսը, նկատի առնելով ուսական զորքերի առաջացումը, Մուշի և շրջակա գյուղերի ազատագրումը ուսմերի կողմից, նշանակում է մի աշրավախոսմբ (Մայր Աթոռի միաբան համարակ արկ. Տեր-Ղազարյան (հետագայում Գյուտ եպիսկոպոս), ճեմարանի տեսչի օգնական Ավետիք Տեր-Պողոսան և ճեմարանի ուսուցիչ Բահաթոր Բահաթորյան), որոնք Մայր Աթոռից պիտի գնային Մուշ և նոր շրջակայքը, թեսլյալ հրահանգություններով.

ա) Մուշի և շրջակայքի ժողովրդի գաղթի ժամանակ, վանքերի և եկեղեցիների գումըք, զարդերը, եկեղեցական անոթները, որոնք զանազան թաքստոցներում պահպած էին, ինչպես նաև վանքերին և եկեղեցիներին պատկանող ձեռագրերը գտնել, հավաքել, ցուցակագրել և ուղարկել Մայր Աթոռ:

բ) Մանոթանալ ժողովրդի այժման վիճակին, որ լինելու և քանակի մասին, հնար եղածին չափ, ավերից և կողոպուտից ազատված ազգագրական, հնագիտական արվեստի և այլ մնացորդները ժողովու և հասցենել Մայր Աթոռ՝ ս. Էջմիածին, ինչպես և տեղական թշվար հայ ժողովրդի մնացորդներին ցուց տալ հոգատարություն և խնամարգություն:

Մուշ գնացող արշավախոսմբ անդամները 1916 թ. մարտի 29-ին մեկնում են Մայր Աթոռից և մայիսի 29-ին վերադառնում ս. Էջմիածին ու Վեհափառ Հայրապետին եկեղեցանում իրենց գեկուցագիրը: Պարզվում է, որ Մուշի շրջանի վանքերը ավերված են, ս. Կարապետի վանքի զանգակատունը կանխօրոք մուածողութամբ և ուժանակի միջոցով պայթեցված: Այդ շրջանուն ննացել են վեց հազար հոգի: Արշավախոսի անդամները գտել են մի թաքստոց ս. Կարապետի վանքին պատկանող եկեղեցական գգաւուների ու սպասքների և մասնավոր անձանց մոտ գտնվող արժեքավոր ձեռագիր մատյաններ, որոնք հանձնաժողովի անդամների շնորհիվ բերվել են Մայր Աթոռը<sup>27</sup>:

Արժանի է հիշատակության նաև Վասպուրականի վանքերի որոշ սրբությունների և մշակութային արժեքների ազատագրումը Հովհաննես վարդապետ Հյուպանի կողմից.

<sup>24</sup> Նոյմ, էջ 314:

<sup>25</sup> «Արարատ», 1916, էջ 389—386:

<sup>26</sup> Նոյմ տեղ:

<sup>27</sup> «Արարատ», 1916, էջ 566—586:

Դիվանի գրություն մայր տաճարի լուսարարապետի անունով, որով հանձնարարվում է: Վանից տեր Հովհաննես Վարդ. Հյուպանին ողարկած եկեղեցական արծաթյա իրերը բանալ տեր Սահակ արքեպիսկոպոս Այվաշյանի և լուսարարապետի օգնական Արիստուկես Վարդապետի Եերկայությամբ, ցուցակագրել և պահել Մայր տաճարի խորանում, ցուցակը Եերկայացնել դիվանատուն<sup>28</sup>:


«Արարատ»-ը իր հրատարակության առաջին օրից գրադիմ է ոչ միայն հայության արևմտյան հատվածի լեզվական հարցերով

(«Արարատ», 1868, համար 1), այլ նաև հանգամանորեն գրադիմ է արևմտահայության ազգային, եկեղեցական, ազատագրւական ու հայկական հարցերով:

Հայ ժողովրդի համար տագնապալի օրերին «Արարատ»-ը հույս և հավատ ներշընչելով բովանդակ հայ ժողովրդին իր պահան ապագայի մասին, գրում էր. «Հայ ժողովրդի առաջադիմության համար հայ գիրը և գրականությունը հիմնական սկզբունքն է և հայ մարդը յուր ծանր, նեղ օրերին անգամ գրի-գրականության վրա պետք է կենտրոնացնի իր ուշքը»<sup>29</sup>:

<sup>28</sup> Նոյնը, էջ 773:

<sup>29</sup> «Արարատ», 1917, էջ 850:



## Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

(Արվեստագիտության թեմանածու)

### «Ա. Ր Ա. Ր Ա. Տ» - Ն ՈՒ ԵՐԳ ԵՐԱԺԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ, կրոնական միակ հանդես և ոռուամայ մամուլի հնագույն օրգան «Արարատ»-ը, որ իր կրոնական, ազգային, գրական-բանասիրական, գիտական և հայագիտական բաժիններով մեծապես նպաստեց հայոց պատմության, գրականության ու արվեստի ուսումնասիրությանը և սնեց ու դաստիարակեց հայ գիտնականների մի ողջ կաճառ, իր էջերը լայնորեն քացեց հան եղած-երածտության, և, մասնավորապես, հայ երաժշտության խնդիրների արծարման ու լուսաբանությանը: «Արարատ»-ում տպագրված և հայ երաժշտության հարցերին վերաբերող նյութերի առանձնացումը, դասակարգումը, քննադատությունները գիտական մշակումը կարող էր մի մենագրության ծրագիրը դառնալ: Ամսագրին մեջ՝ նոր գոյության հիմնամյա պատմաշրջանում երևացած ու մեզ մետաքրքրող հույսերը հսկրավորվում են մետղալ չորս կետերի շրոջ. ա) ժամանակի հայ երաժշտական ընթացիկ կյանքի արտացոլումը, բ) նախորդ դարավեցի ու երկար դարակարգի հայ երաժշտական մշակույթի զարգացման հետ կապված մի քանի կարևոր երևույթների քննությունը, գ) հայ մին երաժշտության պատմության ու տնտերքան հարցերի լուսաբանությունը, և դ) երաժշտության ընդհանուր պատմության վերաբերող առանձին խնդիրների պարզաբանումն ու միջազգային երաժշտական կյանքի մի շարք երևույթների անդրադարձումը: Սույն նորմանում համառոտակի կանգ կառնենք Շշված կետերից միայն առաջինի վրա:

#### Ա

Ժամանակի երաժշտական ընթացիկ կյանքն արտացոլում են՝ այլնայլ լուրերն ու հաղորդումները, ազգային-կրոնական, եկեղեցական, և ժամանական-դարցական առօրյայի փառերը, գրախոսություններն ու առանձին ստեղծագործողներից նվիրված նոդվածները;

Այլնայլ լուրերն ու հաղորդումները, բնականաբար, խայտարեսուն պատկեր են ներկայացնում: Դրանցից իմանում ենք, թե ե՞րբ և ինչպիսի երաժշտական գրքեր են հրատարակվել Էջմիածնի տպարանում կամ այլոր, թե ազգային երաժշտական ի՞նչ երևույթներ մթնողութ են ստեղծել տեղում և գաղթօչախններում, և կամ թե ինչպիսի՞ն է եղել Մայր Աթոռի վերաբերմունքը դեպի մեր այս կամ այն ստեղծագործողը և այլն: Դժվար է պատեհ խիստ դասակարգում կատարել: Որոշակի պատմաշրջանի հայ երաժշտական կյանքի ուսումնասիրության առում շահեկան տվյալներ են՝ օրինակ՝ Պոլսում Եր. Տեր-Անդրեապանի ձեռնարկած աշխարհաբար Չարականի մասին տեղեկությունը<sup>1</sup>, Մադ. արք. Օրմանյանի հրահանգով, Պեղմբարչի և Աստվածածին եկեղեցու երաժշտական Սր. Բը-ժըկյանի<sup>2</sup> եկուուական ճաշակով պատրաստած մանկական ճոկ երգարանի վերաբերյալ տեղեկությունը<sup>3</sup>, և կամ Էջմիածնում հայ կամավորների հավաքին ու մի ամբողջ գիշեր տևած իմքնարուխ երգեցողության վերաբերող տեղեկությունը<sup>4</sup> և նմանները, որոնց վրա մեկ-մեկ ծանրանալ մեզ մեռուն կտաներ: Ավելի կարևոր է ի մոտ ծանոթանալ այն հաղորդումներին, որոնք ցույց են տալիս Էջմիածնի վերաբերմունքը դեպի Կոմիտաս Վարդապետը: Պարզվում է, որ Մայր Աթոռը պարբից մեթ Ականանելով Կոմիտասի բացառիկ տաղանդը, ամեն կերպ աջակցել է երաժշտին՝ բարձրագույն կրթություն ստանալու և կյանքում իր առաքելությունը կատարելու գործում: «Ընմարան ավարտած սամերից արժ. Կոմիտաս Վարդապետը, —կարդում ենք ամսագրի էշերում, —որ եղանցողության ուսուցիչ էր նմարանում անցյալ տարի և այս տարի Թիֆլիզում

<sup>1</sup> «Արարատ», 1902, էջ 1127:

<sup>2</sup> «Արարատ», 1904, էջ 328—329:

<sup>3</sup> «Արարատ», 1915, էջ 289:

պ. Եկմայանին էր աշակերտում, իրավունք առաջալ Նորին Վեհափառությունից արտասահման գնալու և երաժշտական արվեստում կատարելագործվլու: Հայր Կոմիտաս վարդապետի ուսման ծախըն հոգալ խոստացել է հայտնի բարեգործ պ. Աղեքսանդր Մանեաչյանը, որին այդ առթիվ ազգին Վեհափառ կարողիկուն յուր առաքելական օրինությունն համեսցավ տալ հասուն կոնհակով<sup>4</sup>: Ավելի ուշ, Էջմիածնին ոչ միայն գրիարաց ընդունում է արտասահմանում կրթությունն ավարտելով վերադարձած Կոմիտասին, այլև սրտանց ողջունելով նրա՝ նայ եկեղեցական երաժշտության մեջ աշխարհիկ-ծովով վշրդական միմբերը որոնելու և հայտնաբերելու ձգությունները, «մեծ ապագա» է կամեմատնում կոմպոզիտոր-երաժշտագետին: Անմա թե ինչպես է արձագանքել ամսագիրը՝ Կոմիտասի կազմակերպած երեկոյթերից մեկին: «Ծրագիրը հարուստ էր և բազմազան՝ հոգեւոր և ծովովլուական երգեր, դասախոսություններ երաժշտության պատմություններ, զավետական գեղեցիկ արտասահմանություններ: Շատ հնասարքրական էր մանավանդ և Կոմիտասի դասախոսությունը, որով ապացուցանում էր, թե նայոց եկեղեցական եղանակները ծովովլուական են՝ շարականները համեմատելով ծովովլուական երգերի հետ: Բոլոր ներկա եղած հանդիսականները երաժշտական ծաշմարիտ վայելք ստացան երեկոյթից և ամենագոյն սրտով և ոգնությամբ ի թողին դաշիճը: Հ. Կոմիտասը, կարող ենք վստահությամբ ասել, մեծ ապագա ունի նայոց երաժշտության պատմության մեջ, ցանկանք, որ նա լոր բարի գզուումներն իրագործել կարողանան»<sup>5</sup>: Վերջապես, ամսագիրը խորին հարգանքի տողեր ունի նվիրված Կոմիտասին, նաև նրա գործունեության հետագա տարիներին վերաբերող արտասահմանյան եղոյթների անշությամբ: «Ս. Էջմիածնի միարան և. Կոմիտաս վարդապետը, գրված է սպանելոյ, —Փարիզի «Salle des Agriculiteurs»-ում և «L'Ecole d'Art»-ում տվյալ է նայկական համեմոք, մի քանի սիրողների մասնակցությամբ: Գաղղիական՝ հատկապես մասնագիտական երաժշտական երկարաթերթը՝ «Le Courrier Musical» № 24, «Le Mercure Musical» № 28—24, «Le Monde Musical» № 23 և «L'Aurore» օրաթերթը իրենց դիմու: 21-ի համարում միացմանը են խոսում այն համեմոքների մասին: Խոսք չեն գտնում գովելու նայոց պատարագի արարության եղանակների քաղցրությունը, վիստությունը և ներդաշնակությունը: ...Բայց Կոմիտաս վարդապետից մասնակցությունն են ունեցել օրինոր Ծովիկ և Մարգարիտ Բարպարանի նախարարությունը և պ. պ. Մուղունյան, Շաբ-Մուրացան երգել և նվազել են. իսկ պ. Չորամյան մի գեղեցիկ դասախոսությամբ ծանոթացրել է ծովովլականներին հայոց բանահյության հետ: Բոլոր մասնակիցները իրենց շնորհան երգերով և նվազով հիացրել են հանդիսականներին և

իրենց մայունին երկրի համեմարք փայլեցրել: Դնեմը պատող բանիմաց և երաժշտական արվեստին տեղական կարծիքը» և այլք: Միանով չեն սպավում ամսագրում Կոմիտասին վերաբերող հյութերը, ինչպես կոտսենենք սոորու: Բայց այս փոքրիկ հայորություններն իսկ, փաստերի լևզվով զատ ամենայնի գծուն են Էջմիածնի մեռ Կոմիտասի ունեցած հարաբերությունների իրական պատկերը:

Ազգային-կրոնական կյանքի փաստնը, որ ընդհանրապես տրված են դարձյալ հաղորդումների ձևով, հիմնականում վերաբերում են ավանդական տարբեր տոների, ինչպես՝ Հոհիսիմանց-Գայիսիանց, և Սահակի և Մաշտոցի, առհանանց, կառողիկներ Էջմիածնի, Գևորգո և ի անվան ունարանի բացման տարեկանական երեկոն թիվինում հաստատվող որևէ նոր դպրոցի, այլև որիշ առիթներով կազմակերպված իրական-երաժշտական երկելու միջնորդներին: Դրանք ունեն ճանաչողական շշանակարություններ: Ասեմք՝ Գևորգան նեմարանի բացման տարին, տոնակատարությանց միջոցին «երրենց զիմսորդական նվազածուաց խմբին նշանակներ, և մեր դպրաց ազգային ընտիր և գևոգելու երգեր» են նշեն<sup>6</sup>, որտեղից պարզ է, թե նվազականումը հրավիրված է եղիք: Զինվորական հրավիրված նվազականի հանդիպում ենք նաև ավելի նոր ժամանակներում, երբ այն հայ գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակի առիթով Էջմիածնում անցկացված շքեղ հանդիպություններին մի նավազյալ փայլ է տվիլք<sup>7</sup>: Բայց 1890-ական թվականներին ճամարանը ունեցել է և իր սեփական նվազականումը, որ հանեն է եկեղեց Վարդանաց տոնի առթիվ: «Հանդար բացվեց «Նորամբաց» շարականու: Աշնունեան կարդացին ճառեր, հատվածներ Եղիշինց և ուսանւորներ մեր նորագույն բանաստեղծներից: Ժնմարանի նվազականումը և երգեցիկ խումբը փոփոխար նվազում էին և երգում»<sup>8</sup>: Նման հանդիպությունների ժամանակ ճամարանի երգեցիկ խումբը կատարել է ոչ միայն հոգեւոր, այլև աշխարհիկ բովանդակության ազգային երգեր<sup>10</sup>, որոնց մի գագի մասը նայենասիրական ազնիվ զգացումներ արձարելուն զոգընթաց, երաժշտական եվոլուպական ճաշակի ընկալման ու տարածման միջոց է ծախայի մեր մեջ և՛ հնուաքրքի է, որ Էջմիածնի միջավայրը, պատրաստակամությամբ ընկալելով առաջադիմական այդ նովելը, նիշալ երգերի ունով նույնիկ նորեր է ստործել, մերժ ընդ մերթ հրատարակելով դրանք ամսագրիս Էջերում, հայկական ճայնանշեն-

<sup>4</sup> «Արարատ», 1896, էջ 189:

<sup>5</sup> «Արարատ», 1901, էջ 217:

<sup>6</sup> Բերված են մի ամբողջ շաբ հիացական կարծիքներ Ս. Հարությունյանի թարգմանությամբ: «Արարատ», 1907, էջ 142:

<sup>7</sup> «Արարատ», 1874, էջ 345:

<sup>8</sup> «Արարատ», 1918, էջ 16 (նվազական ժամանակի):

<sup>9</sup> «Արարատ», 1892, էջ 170:

<sup>10</sup> Տե՛ս «Արարատ», 1879, էջ 319:

րով, ինչպես օրինակ՝ «Յաւուր օրմնութեան բացման ճեմարանի Ուղերձը»<sup>11</sup>, եռաձայն Ուղերձը, «Առ Վիհանքան Հայուագետն Ամենազն Հայոց Տ. Տ. Մակար»<sup>12</sup> և այլն։ Տարբեր համեմաներին նվիրված բազմաթիվ հաղորդումների շարքում անհաված ուշագրավ են երկուսը ևս, որոնք նկարագրում են Երևանում Ալոն Հազարյան, և Թիֆլիսում Մարիամյան-Հովհաննյան օրինութաց դպրոցների բացման տպախմբությունները։ Երկու առիջենորով է, պատարագի ընթացքում, Բայ դեռատի օրինութեարը կատարել են երգեցիկ դպրոցների և ասրկավագների պաշտոնը։ Ալոն Հազարյան դպրոցի աղջիկների մասին Զ. Տեր-Զաքարյանցի գրում է. «Դարպոցի օրինութեաց քանի և չորս թվով միակերպ մաքուր Բագուսովի կատարում էին երգեցիկ դպրոց պաշտոնը պատարագում կատարում ուսուցչի դպրակետությամբ.... Այն տեղ էր տեսնելու՝ թե օրինութաց ներդաշնակ, քաղցրածայն և միջնակային ժամկետությունը որքան կզմակեցնեին ժողովուրդը»<sup>13</sup>։ Ավելի նետաքրքիրն այն է, որ այս, առաջին հայացքից նոր կարծեցալ, տեսարանը Մարիամյան-Հովհաննյան դպրոցի օրինության ժամանակ, կուսանաց Անապատի և Ստեփանոս եկեղեցում, պարզվել է՝ «ըստ վաղեմի ստվորության»։ «Ինչպես որ կանչապ որոշված էր, ժամը 10-ին Գեր. Գարդիել արքակի կուպու Առաջնորդ մասուց սուրբ պատարագը կուսանաց Անապատի սուրբ Ստեփանոս եկեղեցվույն մեջ, և պատարագին սպասավորեցին պարկեշտառուն կուսանըն ըստ վաղեմի ստվորության՝ սարկավագությամբ»<sup>14</sup>։

Աստիճանաբար դորս գալով սոսկ հաղորդումների շրջանակներից, շամեկան նյութեր ենք գտնում նաև բուն եկեղեցական կյանքի վերաբերյալ։ Դրանցից թիշտառակելի են՝ Թիֆլիսի հայոց եկեղեցների սարկավագների ու դպրոցների «Խնդրագիրը»։ Մայր Աթոռից՝ իրնենց ըյութական անձուկ դրույթան բարելավման առնույթամբ<sup>15</sup>, Սեբ. քի. Սարգսյանցի հոդվածը՝ գյուղական քահանաների նյութական վիճակի մասից<sup>16</sup>. և հատկանի քահանայցուների ընտրության ու պատրաստության կանոնների «Մրագիրը», որտեղից իմանուն ենք, թե մասնավորապես երգեցողության ասպարեզում քահանայցուներից ներկա դարակըներին էլ դեռևս պահանջվում էր՝ «շարականների և տաղերի անխայ երգելը համաձայն հիմքի ամյամագրյալ շարականի»<sup>17</sup>։

Թատերական ներկայացումները լուսաբանող գրություններում մեզ հետաքրքրողն այն է, որ նրանցում ներկան համեմատում ենք արտահայտությունների, որոնցից հետուուն է, թե նիշալ ներկայացումները Արեվիլան Հայաստանում և տրվել են՝ նայած տեղին

ու պայմաններին՝ որոշ երաժշտական ձևավորումն։ Հայ եղած տվյալների, աղբյուին է եղել պարագան, օրինակ՝ Խորեն նախակոպուսի «Արշակ Բ»-ի երևանյան ներկայացման դեպքում, և Սարգսին կից հոգևոր դպրոցի մեջ դամիլճում, որտեղ՝ «զինվորական երաժշտաց լույսն ու երրորդ զանգակի ձայննեւ նետ բացեցավ վարագույք և կրնեցան Հայոց դրմազարդ լիրանց գագարները»<sup>18</sup>։

Գայով դպրոցներին, պետք է ասել, որ «Արարատ»-ը միշտ է լուրջ ուշադրություն է դարձել նրանցում Բայ դեռատիկ երգի ուսուցումը պատշաճ մակրադակի վրա հնարին խնդիրն։ Դեռևս ամսագրի ստացման համարներում գլուխված մի քանի հյութից, ինչպիսիք են՝ վաճական դպրոցների «Կանոնադրությունը»<sup>19</sup>, Շուսաստանի Բայ թեմական դպրոցների «Կանոնադրությունը»<sup>20</sup> և այլն, երևում է, որ ուսանելի առարկաների շարքում կարևոր տեղ է հատկացվել, մի դեպքում շարականի երգեցողությանը, մյուսում՝ ընթանրապես ազգային երգ-երաժշտությանը։ Նույն պայ շրջանում ամսագրի խրմագործությունը նաև մի բանիման հոդված է լուրջ ընձայում ապագա սուսպիցիների կրթությունը կրթությունը պետք է ընթանա ամրութ ազգային կյանքի հոդելի մետ, և պետք է իմի լուրջանց ազգայնության, լուրջանց դարու՝ գիտակցության, գտնմանց և լուսավորության արտադրությունը» և այլն, երգ-երաժշտության շորջ հաստատագրվում է հետևյալը։ «Պարտավորյալ է ամսան աշակերտ [Վարժապետանոցի] սպորտիկ երգեցողությունը. Չոթակի վերայ ածալը և երաժշտության տեսական մասը (1)։ Պարտավորյալ չէ՝ դաշտամուրը (Փորտեպիանո), երգենոն (օգանը)։ Ամենափոքը այնքան պետք է լինի, որշափ և որպիսի կարությունը կա կանոնավոր երգեցողության ծողովդրական դպրոցի մեջ՝ և առաջարակ ժողովի մեջ»<sup>21</sup>։ Անոնեան ամսագրի էջերում հրատակվում են նաև երաժշտության ուսուցման մեթոդական հարցերը շոշափող գրություններ ևս, որոնցից թիշտառակելի է Գր. Նրգնելյանցի հոդվածը։ Նրանում հեղինակը առաջարկելով՝ երեսաների մետ երգով պարապել 8—9 տարեկան հասակից, ուսուցման հիմնական միջոցը դարձնել լուղությամբ լուրացնելը, բայց մետ անցնել ձայնագրությունը ևս, երգել տա ինչպես մեկ-մեկ, այնպես էլ խմբովին, սպորտների ոչ միայն հոգևոր, այլն աշխարհիկ երգեր, բարձրացնում է դասավանդման համարական (սինթետիկ) և վերլուծական (անալիտիկ) մեթոդների խնդիրը ու գոնում, որ տարրական դպրոցներում հայտակահարմար է կիրառել երկրորդը։ «Առաջին

<sup>11</sup> «Արարատ», 1874, էջ 350—351։

<sup>12</sup> «Արարատ», 1885, էջ 505—507։

<sup>13</sup> «Արարատ», 1877, էջ 486—487։

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 484։

<sup>15</sup> «Արարատ», 1905, էջ 568։

<sup>16</sup> «Արարատ», 1907, էջ 892։

<sup>17</sup> «Արարատ», 1908, էջ 10։

<sup>18</sup> Ա. Մարտության, Մեր ազգին թատրոններում համարու տեսությունը, «Արարատ», 1870, № 3, էջ 280։

<sup>19</sup> «Արարատ», 1889, № 5, էջ 4։

<sup>20</sup> «Արարատ», 1889, № 2, էջ 141։

<sup>21</sup> Թե ինչպես պետք է պատրաստել մանկավարձ ուսուցիչներ, «Արարատ», 1870, № 6, էջ 47։

նախամակված աշակերտները նախապես սովորում են երաժշտական առանձին ձևաբերք,—գրում է նա, —յոթհակն, նետո անցնում են ավելի դժվար վարժությունների, և այդպես շարունակելով աշխատում են ավելի բարձրանալ դեպի բարդը: Երկրորդ եղանակը առաջինին բակատիան է կազմում առաջ ամսանախառարակ մի քանի երգեր են սովորում, նետո մի առժամանակ անցնելուց զիմի, ուսուցիչ օգնությամբ աշակերտները ամրողը տարրների (Ելեմենտների) են բաժանում, սոցա և առանձին ձայնների, որոնք և միմյանցից չուկում են յորյաց բարձրությամբ, ուժով և երկարատևությամբ: Առաջին եղանակը ավելի գործածական կարող է համարվել մասնագիտարար երաժշտություն սովորելու ժամանակ, իսկ տարրական ուսումնարանում միայն միակ և բողորդին տարրական և բնական միջոցը պետք է համարի վերլուծական (անախտիկական) եղանակը»<sup>22</sup>:

Գրահատարարություններում քննադատվում են ճամանակագրական երգարաններն ու երգեցողության դասագրքները, երաժշտական ժողովածուներն ու առանձին ստեղծագործությունները, ինչպես և երաժշտագիտական աշխատությունները: Բայց սրաց անհրաժեշտ է ավելացնել այն մատենախոսությունները ևս, որոնցում քննվում են՝ նաև երաժշտների գիտական հետաքրքրություններին ուղղակիորեն վերաբերող հայագիտական երատարակությունները: Ամսագրում լուրջ խոսակցության առիջ է սվեյ Արեմիյան Հայաստանում լուս տեսած ստացին «Զայնագրյալ մանկական երգարան» իսկ, Եղմ. ք. Երգելիքնի աշխատափորտթյամբ: Երգարանը նախ գրախուել է Սահմակ Սմատունին (այն ժամանակ՝ սարկավագ), իրավացիորեն հանդես թրելով խիստ մոտեցում<sup>23</sup>: «Մեղու»-ի էջերում տպվում է արևամարիական մի պատասխան: Ս. Սմատունին նորից է հանդես գալիս, այս անգամ ավելի խիստ քննադատությամբ: Հետո ամսագրի խմբագրությունը ներկվի հանձնարարում է Դ. ք. ք. Հովհանիսյանին մի անգամ էլ անդրադանաւ Եղարանին, (ինչպես և նոյն հետինակի՝ հայկական ճայնագրության Դասագրքին), ու Հովհանիսյանը և նրայու է ուժենում ուղանք արդարացի քննադատությամբ<sup>25</sup>, թեև վերջում ավելացնում է և այն, որ «Կ. Նիկ. Թաշճանի աշակերտներից միայն Եղմիկ քանանան է աշխատում, իսկ մյուսների մետքն անգամ չեն երևում»: Ինչ վերաբերում է հիշյալ Դասագրքին, նրա բուն հիմունքնե-

<sup>22</sup> Գ. Երգելիքն, Դասավանդման խորհուրդներ, «Արարատ», 1892, էջ 1068 (Երգեցողություն):

<sup>23</sup> Մի քանի խոր Եղմիկ քանանայի «Զայնագրյալ մանկական երգարան» մասին, «Արարատ», 1880, էջ 505:

<sup>24</sup> Դարձյալ ճայնագրյալ մանկական երգարանի համար, «Արարատ», 1881, էջ 182:

<sup>25</sup> Դասագիրք հայկական ճայնագրության (վիմատիա) և ճայնագրյալ մանկական երգարան անվանյալ գրյաց վերադասարքություն, «Արարատ», 1881, էջ 500:

ին, ապա Կոմիտասը ևս մի առիջող պարզ գրում է, թե «բարեկրոն տեր Եղմիկ քահանա Եղմելիք մեր արևելյան պարզ յոթենակը տակն ու վերա արավ, կարծելով, թե ելորպականի համապայն է մերն է»<sup>26</sup>: Խոկ Եղգարանի մասին արված քննադատական խիստ, բայց ողջամտի դիտողությունները համազ գումար են այն բանին, որ Երանում՝ երգերը մանկացն աշակերտական ու համապատասխան չեն, երբեմն բնապրոսիկ կերպով «ելորպականացված» են, պատամում են խորքերի ու եղանակների անհամապայնության դեպքեր, վերջիններս էլ (Եղանակները) պալաշատ են, և որ կարևոր է՝ առաջարակ մանկական երգարանի համար մատչելի և ոճով ազգային նյութը (Ա՝ խորքերը, և՝ երաժշտությունը) պետք է բաղկա, միմնականում, իսկ ժողովական բանակուտյան գանձարանից: Եղ նարկ է նշել, ի պատիվ «Արարատ», թե նա այն բան լավ պրոպագանիկ երգարան կազմելու պահանջունակ կարող ու մեզ մոտ ի վերջու երապարակ ենակ դա կիրակելու ընդունակ երաժշտություն է, մասնակի Սպ. Մելիքյանի: Ու երբ վերջինն լոյս ընծայեց երգեցողության իր Դասագիրքը (Քիմնականություն մաս մողովդական, ազգային ու նաև բուն ելորպական ճաշակով նախարկած և դասակարգված երգերով), ամսագիրը ողջունեց այն<sup>27</sup>: Ուշագրավ է մի պարագա, ինչպես ընդհանրապես արևելահայ, այնպես էլ, մասնավորապես, Էջմիածնի միջավայրը, ընդլայնով Եղմիկ քահանայի կատարած բնապրոսիկ «ելորպականացվածների» դեմ, միաժամանակ իրապես լայնախոն մոտեցում է հանդես թրելու այն արդյունավոր փորձին, որով Սպ. Մելիքյանը իր Դասագրում գտնելուն էր նաև «համաշխարհային նայունի երաժշտների գործերից, ինչպես օր. Մուցարտի, Շումանի և այլ նեղինակների, որոնք փոխադրված են հայերեն և աշքի են ընկենում որպես աշխոյդ և կենարանի գործեր, որոնք ունեն ժողովությալ գանձնական ամփելիքներուց»: Ամիսին. ամսագիրը իր էջերը սիրով տրամադրել է տակալին երիտասարդ Սպ. Մելիքյանի մի գրահատության ևս, որը նեղինակը ընդհանարակը Շահման Սիմենի կազմած տարրական ճայնագրության «Ուղեցոյցը»<sup>28</sup>, տեղին պետում է, թե նայ դպրոցներում ճայնագրության ուսուցումը հարկադրու է սկսել ոչ թե Էմիլ Շեվի «Քվանչանական», այլ միջազգային «գնային» դրությամբ<sup>29</sup>, հետո

<sup>26</sup> «Արարատ», 1898, էջ 112:

<sup>27</sup> Տև Մուրեն Աքելա, Դասագիրք երգեցողության (Ա. և Բ. տարի, ժողովածու հայ ժողովությալ գանձնական անհամապայն և երկկայն երգերի, կազմեց Սպ. Մելիքյան), «Արարատ», 1918, էջ 390:

<sup>28</sup> Սպ. Մելիքյան, Ինչ սիրումով պետք է անցնել երաժշտություն մեր դպրոցներում, «Արարատ», 1902, էջ 1158:

<sup>29</sup> Գործ՝ որ վաղուց հաջողությամբ ճեղմարկել էր արդյուն Ա. Եկմայանը Ներսիսյան դպրոցում: Տես մեր նորվածք՝ Մակար Եկմայլան, «Էջմիածն», 1958, Բ—Գ, էջ 56:

անցնելով հավական էլ (Լիմոնջանի դրույտունը): Հայ ժողովրդական (մամավան գեղջոկ) երգի անապատությամբ պաշտպանության դիրքերից ճշուված դիպոլ քննադատություն է Կոմիտասի գրախոսականը, և. Եղիազարյանի՝ Փարիզում հրատարակված «Recueil de chants populaires arméniens»-ի առաջին գրույին վերաբերյալ<sup>30</sup>: Ժիշտ է, այստեղ Կոմիտասը տակալին չի տարբերում հայ գեղջոկների ժամանակականը՝ քաղաքացին-ժողովրդականից, ու նրա մի-երկու միտքը այն մասին, թե «Արարի արտասուրը»՝ «բողոքական եկեղեցու երգ է (choral)», «Հերիք որդենակը»-ի եղանակը՝ «տամական», իսկ «Կիհիկիա»-ինը՝ «նորմանդական» է և այլն դեռևս քննելի են: Սակայն, ցուց տալով, որ Եղիազարյանի հրատարակած երգերը (որոնցից լոկ մեկն է հայ գեղջոկ-ժողովրդական՝ «Զիմ գլխին»), ձայնագրության ու ներդաշնակաված կամ փոխադրված են ոճական խաթարումների հաջանակություն ունեցող և այլ մի շարք սիմպերով, սկզբունքային հարց է բարձրացնում նաև, եթե գորում է: «Սեր կարծիքով հայ ժողովրդական երգերը դաշնակելուց առաջ պետք է քաջ հմուտ լինել հայ ժողովրդի պատմական, բնական և ազգային պայմաններին, եղանակի կազմության ոգուն, ոճին, բառերի իմաստին, մեր ժողովրդական տաղաչափությամ, ժողովրդի երգեցության և արտասանության հանգամանքներին և էլի մի շարք այլ բաներին, ասա ձեռնարկելու դաշնակելու և հրատարակելու»: Մ. Եկմալյանի ներդաշնակած «Պատարագին» նվիրված Կոմիտասի գրախոսականը իր բովանդակությամբ այնախին է, որ դրան հարկ է անդադանական՝ հայ եկեղեցական երաժշտության մեջ բազմապատճեան առաջացման ու զարգացման խնդիրների առնությամբ: Այստեղ միայն շեշտներ, որ Կոմիտասը հիշար հողովածուն մի ամրող շարք քննադատական մանրակրկիս դիտություններ անելուց հետո, ըստ արժանվույն զնանաւուելով «Պատարագը», նորակացնում է: «Հարգաի երաժիշտ այ Մակար Եկմալյանը մեր եղանցության ամայի անդաստանի մեջ ներդաշնակության անդրանիկ բուրատանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ հայեր այս կարող ենք պարծել, թե մենք էլ ես չենք մնացել վեր գեղարվեստի և կատարեագույն երաժշտության զարգացումից»<sup>31</sup>: Եկմալյանի կարառուն պատասխանի մեջ էլ<sup>32</sup>, որը խմբագրությունը հրատարակել է լոկ «Փ հարգան ա. երաժշտագիտի», Ժիշտ մկանումներ կամ, ինչպես կտևենք տակալին: Ամսագիրը գրախոսական քննադատականներով արձագանքել է նաև՝ «սեր բեղմավոր երիտասարդ երաժշտներից» Ա. Տեր-

Ղունդյանի «Մանկական երգերին»<sup>33</sup>, Գ. Ջորիքյանի (այն ժամանակ՝ սարկավագ) մշակած երեք խմբերին (ազգային օրմեներգ «Տէր կեցո», «Երբ որ բացուին» և «Մայր Արարափ») ու Ս. Բարխանյանի «Արևելյան պարերին» (դաշնամուրի համար)<sup>34</sup>, այլև Ռումանու Մելիքյանի երկու երգին («Աշնան երգ», և «Վարդը»)<sup>35</sup>, որ հաստատագրված են ժամանակին հայ երաժշտագիտության մեջ խմբրված հնատարքի գաղափարներ: Քննադատը («Յ. Յ.») մի քանի հակասական մորքը ունի Ռ. Մելիքյանի ու հրա երգերի մասին, բայց նա հստակ գիտակցում է այն պարագան, որ Մելիքյանը հայ երաժշտության մեջ անհատական ստուծագործության ուղղության «ասենից շնորհած ներկայացուցիչն է» ու հետևյալն է գրում: «Որքան և կարևոր լինի եկեղեցական և ժողովրդական երաժշտության մշակույթինը, այնուամենակ հայ երաժիշտը չպահի սահմանափակի միայն այդ գործնենությամբ... Պետք է զատիկ երաժիշտ-գիտականը երաժիշտ-ստուծագործուից, որպեսզի արդյունավետ լինեն երկրուի էլ աշխատանքը: Այդ անշատումը չորս ուղղությամբ կարելի է կատարել. 1. Կարելի է գեղարվեստական տևականությանց արժեքավոր ժողովրդական և նեկեղեցական երգերը մշակել՝ բազմապատճեան երգեցության կամ նվազի վերածելով, ինչպես այդ անում է Կոմիտաս վարդապետը: 2. Կարելի է ժողովրդական երաժշտության ոճով մշակել այդ ոճին համապատասխանող հոյութեր (իրուս օրինակ հիշենք պ. Սպ. Մելիքյանի «Զմոնն անցավ»-ը, Կոմիտաս վարդապետի «Կարարի երգը» և այլն): 3. Կարելի է եկեղեցական և արևելյան ոճերի խառնուրդից մի նոր միացյալ ոճ ստեղծել (ինչպես այդ փորձել է, թեև, ի դեպ, բավական անհաջող կերպով, պ. Բաղդասարյանը իր «Մի՛ լար բրուկ»-ով) և վերջապես 4-րդ՝ կարելի է բոլորովին անուն առնելով հայկական երաժշտությունը (ուզում է ասել՝ երաժշտա-ազգագրական զույգերը—Ն. Թ.): Նվիրվել բացառապես անհատական ստեղծագործության: Ուղղությանց այս չորս տիպերը հետևող որոշակի չեն բաժանելի նայ երաժշտության այս սաղմանային վիճակի մեջ. միևնույն անձի մեջ համախ այդ 4 ուղղությունն էլ միանում է: Անցուած այս բանը շատ անզամ վնասում է գործին, որը պահանջում է ուժերի կերպնացում՝ իր կատարելագործման համար: Միայն առաջին և վերջին ուղղությունները ունին իրենց համեմատաբար զատկան ներկայացուցիչները: Այս 4 ուղղություններն էլ անխրստ իրենց հաստուկ և կարուր ենքն ունին մեր երաժշտական գրականության մեջ, ուստի և ցավակի է տեսնել, որ փոխադրձ ատելություն և արժամարհամբ է տիրու դրանց միջև: Բոլոր այդ ուղղությունները մի ընդհանուր պատվանդան պետք է ու-

<sup>30</sup> Կոմիտաս, Recueil de chants populaires arméniens, («Հավաքածն նայոց ժողովրդական երգերի»), Արարատ, 1898, էջ 887:

<sup>31</sup> «Արարատ», 1898, էջ 117:

<sup>32</sup> Մ. Եկմալյան, «Արարատ» խմբագրության, Արարատ, 1898, էջ 824:

<sup>33</sup> Oberthon, Մանկական երգեր ձայնակցությամբ դաշնամուրի, երաժշտություն Անուշավան Տեր-Ղեղվոնյանի, «Արարատ», 1914, էջ 1152:

<sup>34</sup> Ռուբեն արեւա, Երեք խմբեր, Արևելյան պարեր, «Արարատ», 1913, էջ 674:

<sup>35</sup> Յ. Յ., Երկու երգ, «Արարատ», 1912, էջ 76:

նենամ՝ հայ ոգին, որը միաժամանակ և այդ 4 տուղությանց միացման կտուն է։ Խնարկե, պյուս, ավելի քան հիսուն տարի հետո, դժվար չէ վիճարկել քրնադատի՝ պատուի ևս թրված մորթերից մի քանիշը։ Էկանմն այն է ասլայն, որ նա ճիշտ ժամանակին և ընդհանրապես շատ ողջամիտ մոտեցմամբ քարձրացրել է ազգային երաժշտական ստեղծագործության ամենահրատապ խնդիրներից մեկը, ընդ հմտն պարզություն հայ արվեստի տարրեր մշակների միջև տիրապետած «փոխադարձ ատելության և արքամարթների վիճակը, որը և մեր արդի մի շարք մենագրություններում, զգիտու ինչու, պրոլիտ է լինում շատ անգամ, ի վեհա ջշմարտության և պատկերով երևույթի հակասություններով ին համակողմանիության։

Երաժշտագիտական աշխատություններից ամսագրի էջերում գրախոսված է ի. Պոպովի «Արմանական մասնական աշխատության մասին» և արքամարթների վիճակը, որը և մեր արդի մի շարք մենագրություններում, զգիտու ինչու, պրոլիտ է լինում շատ անգամ, ի վեհա ջշմարտության և պատկերով երևույթի հակասություններով ին համակողմանիության։

Երաժշտագիտական աշխատություններից ամսագրի էջերում գրախոսված է ի. Պոպովի «Արմանական մասնական աշխատության մասին» և արքամարթների վիճակը, որը և մեր արդի մի շարք մենագրություններում, զգիտու ինչու, պրոլիտ է լինում շատ անգամ, ի վեհա ջշմարտության և պատկերով երևույթի հակասություններով ին համակողմանիության։

Շատ ավելի նարուստ ևս թեկում և լոկ այն մատնախությունները, որոնք վերաբերում են նաև նաև երաժշտության, պետք է նկատած լիներ, որ Պոպովի աշխատությունը, իր հիշալ և այլ թերություններով նանդեռ, որպես հայ երաժշտության պատմության մի շարք նյութերի համակարգման առաջին փորձերից մեկը, անտարակույն, ողջունելի էր։

Շատ ավելի նարուստ ևս թեկում և լոկ այն մատնախությունները, որոնք վերաբերում են նաև նաև երաժշտության, պետք է նկատած լիներ, որ Պոպովի աշխատությունը, իր հիշալ և այլ թերություններով նանդեռ, որպես հայ երաժշտության պատմության մի շարք նյութերի համակարգման առաջին փորձերից մեկը, անտարակույն, ողջունելի էր։

Շատ ավելի նարուստ ևս թեկում և լոկ այն մատնախությունները, որոնք վերաբերում են նաև նաև երաժշտության, պետք է նկատած լիներ, որ Պոպովի աշխատությունը, իր հիշալ և այլ թերություններով նանդեռ, որպես հայ երաժշտության պատմության մի շարք նյութերի համակարգման առաջին փորձերից մեկը, անտարակույն, ողջունելի էր։

36 Արշակ Տեր-Հովսեփյան, Ի. Ե. Պոպով, Արմանական մասնական աշխատությունների մասին, 1910, էջ 174։

37 Նկատի ունենք գրքում «Կ. Ս.» ստորագրությամբ իրատարակված «Երկու խոսք հայ երաժշտության մասին» բանիմաց նորվածը։ Խնչվես նադորդում է Ալ. Չամիլերյանը, «Զ. Բ. Սարաջևանի հավասարական աշխատանակ այլ հորվածի նեղինակը Կոնսուլատին Սոլոմոնիշ Սարաջևն է» (Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1959, էջ 186)։

38 Հովհ. Թաղեստյան, Քուչակ Նահապետի երգերի մի նոր երատարակության առթիվ, «Արարատ», 1902, էջ 1148։

պատկանելության հարցը<sup>39</sup>. Մ. Արևոյանի պատասխանը «Մորճի» գրախոսին, ի պաշտպանություն «Հայաբ»<sup>40</sup>, որ օգտակար և ուսանելի է նման երգարաններ կազմոյ մեր այժմին նեղինակների համար է։ Ծարականցի ուսմերեն էմինյան թարգմանության թվանությունը<sup>41</sup>. Ներսես Տեր-Միքայելյանի «Das armenische Hymnarium» գրքին նվիրված մատևախոսությունը<sup>42</sup>, թեև չափազանց խիստ<sup>13</sup>. Ս. Վոլ. Ամաստոնու «Հին և նոր պարականոն շարականներ» փայլուն սուսմանի բորբոքությունը<sup>43</sup>, վերջապես Ն. Սոլոնցի «Դիոնիսի Փրակիանակի և արմանակություն» աշխատության գրադատությունը<sup>44</sup> և այլն։

Ուսանեն ստեղծագործողներից ամսագիրը հատուկ էշեր է նվիրել Զիվանոն, Կոմիտասին և Նիկ. Ֆիքրամյանին։ Զիվանու անդրադառնարու և նրա բանաստեղծություններից մի քանիշը հրապարակ հանենու առիր է տվել Հ. Խոչայանցի մի հոդվածը («Գյումրի»), որը նեղինակը անհիմն կերպով պեղել է, թե Ակերասներապարուս հայ աշոտները մեծ մասամբ երգում են, իբր, տաճկերն, և թե ծողովորդն էլ որպատճյամբ լսում է այդ երգերը։ Կ. Մատինյանցը փաստացի նյութերի հիման վրա մերժում է այդ տեսակները<sup>45</sup>: «Ակերասներապարուս երբ ունեցել է իր մեջ թատրոն (շնորհիվ հարգուագատիվ Սյունեցի Ակերասների Մելիք-Հայկացան)», և

39 Հարց, որը ավելի ուշ տաք վեճեր առաջարկեց, ինչպես հայտնի է, և որը մինչև այժմ էլ բոլորի համար լսնումնելի լուծում չի ստացել տակավին։ Թվում է, թե հարցի բուն լուծումը պիտի որոնել՝ նախապահին որպես հայրենների միջնադարյան փայլուն երգիշ-կատարող ճանաչելու մեջ, որպիսի դեպքում լիովին բացատրելի է դատում ամենակարևորը՝ հայոց կանքում երա երեմնի վայելած մեծ համբավ։

40 Մ. Արեգակնալի, Ժողովրդական երգարան և «Հայաբ» ու մի խաչ, «Արարատ», 1904, էջ 1078։

41 Էմ. Ք. Նազարյան, «Ռարատ»-ի մասին, «Արարատ», 1904, էջ 677։ Տե՛ս նաև նոյն նեղինակի՝ «Վերջին խոսք» Ռարատ»-ի մասին («Արարատ», 1905, էջ 72)։

42 Մ. Խոստիկյան, Das armenische Hymnarium, von Nerses Ter-Mikaelian, Leipzig, 1905, «Արարատ», 1908, էջ 939։

43 Եվ արդյո՞ք դա չէ պատճառը, որ Ն. Տեր-Միքայելյանի, Վերջին նաշվով, լորջ աշխատությունը երկար ժամանակ այնպիս էլ շմտավ գիտական լուս շրջանառության մեջ։

44 Ս. Կանայան, Հին և նոր պարականոն շարականներ, «Արարատ», 1911, էջ 1044։

45 Մեսրոպ Վոլ. Մարտունյան, Bibliotheca Armeno-Georgica, IV—Դիոնիսի Փրակիանակի և արմանակություն, «Արարատ», 1917, էջ 827։


46 Կ. Մատինյանց, Բանաստեղծը և նյութավաճ Զիվանի, «Արարատ», 1871, № 11, էջ 415, № 12, էջ 473։


երբ թնդացրել է բատրունական թևի վրա ազգային երգերի արձագանքը, մենց այն օրից Ալեքսանդրապոլու աշողները սկսել են երգել հայերեն, որով մենք հասարակությունը այդ մասին ամելի սեր ու ուսմակրություն է ցույց տալիս: ...ասածին ապացուց կարելի է համարել՝ հասարակության համայնքը ավելի այն սրճանցները, որտեղ համարյա թե միշտ հայերեն են երգում, ինչպես այ. Կարապետ Տաղյանցի սրճանցը, որտեղ երգում է աշոյ Ջիվաճին... Ալմոյանցի սրճանցը, որ երգում է Հովհաննես աշուղը մականվաճայ Խոյթը: Իսկ որիշ սրճանցներում երգում են Թաթոս (Հալեսի) և Մարուի մականուն աշուղները և այլն: Կոմիտասի մասին գրել է Գ. Հովսեփյանը<sup>47</sup> (այն ժամանակ վարդապետ): «Սեպտեմբերի 80-ին յոր 1½ տարվա բացակայությունց հետո Վերադարձավ Մ. Աթոռի դարրապետ ու. Կոմիտաս վարդապետ՝ Եվրոպայում կատարած ճանապարհորդությունից: Նա այս ժամանակը գործադրել է մի գեղեցիկ նախարարի համար՝ հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը ծանրացնելու կորուպացիներին»: Հետո գիտ նաև նայանք նորից անդրադառնայով կուպողիտորերածխագիտական վերոհիշյալ համերգներին, ամբողջացնում է Կոմիտասան ելույթներից մի ուրուց շարք պատկերը, կարգով տեղեկություններ տալով՝ Փարիզում հայ գաղթականների «Մասիս ալումբ» ում, Ռուսաց երեկոյթում, Գեղարվեստագետների ընտանեկան երեկոյթում և Միջազգային ժողովը դաշտական համերգում (Concert de chansons et danses populaires) հնած հայկական երգ-երաժշտության, եվրոպական թերթերի ջերմագույն արձագանքների, Կոմիտասի հրատարակած «Հայ քնար» ժողովածուի, La musique rustique արտեպուու աշխատության հատվածի, նաև Ցյուրիխում, Ժնևում, Լուգանում և

<sup>47</sup> Գ. Վրդ. Հովսեփյան, Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդությունը Եվրոպայում, «Արարատ», 1907, էջ 906:

Բերնում, այն ու Ղազարում և Մուրադ-Ռևախիլյան վարժարանում երա տված համերգների ու կարդացած դասախոսությունների մասին նիկ. Տիգրանյանին վերաբերող նորվածը մի կննագրական ակնարկ է, որ գրել է Պ. Մոնոյանցը, կոմպոզիտորի գործունեության 25-ամյակի առթիվ<sup>48</sup>: Ակնարկը շարադրված է փաստերի լեզվով, պատշաճ կերպով գնահատված է նիկ. Տիգրանյանի հայրենավելքը գործունեությունը, ինչպես և երա դերը առհասարակ Անդրկովկասի ժողովուրիների երաժշտական մշակույթի զարգացման մեջ: «Տիգրանյանի երաժշտական բեղմնավոր գործունեության մասին չենք կումեա այստեղ երկար կանգ առնել, — մասում է մեղմակը, — սակայն անհրաժեշտ ենք համարում պարան ասել, որ երա գլխակոր արժանավորություններից մեկն էլ այն է, որ նա պեղանտիկ հշտությամբ ծանրագրելով ազգային և արևելյան եղանակները, մեծ տաղանդով գուազ արնելյան երաժշտության համապատասխան և բնորոշ հարմոնիզմացիա նվրուպական մովկիայի տերիխալով և հարմոնիզմվի»: Եվ անդրադառնարով ուսական «Գրաժданու», «Երյացեա Վեճոմուտ», «Նոյօ Վրեմյ», «Պետերբուրգսկա գազետ» և «Նովոսի» լրագիրների արձագանքներին՝ նիկ. Տիգրանյանի Պետերբուրգացան համերգներին, նա նույնական քաղվածքներ է քերում, որոնց որոշ շարքը պատկերը, կարգով տեղեկություններ տալով՝ Փարիզում հայ գաղթականների «Մասիս ալումբ» ում, Ռուսաց երեկոյթում, Գեղարվեստագետների ընտանեկան երեկոյթում և Միջազգային ժողովը դաշտական համերգում (Concert de chansons et danses populaires) հնած հայկական երգ-երաժշտության, եվրոպական թերթերի ջերմագույն արձագանքների, Կոմիտասի հրատարակած «Հայ քնար» ժողովածուի, La musique rustique արտեպուու աշխատության հատվածի, նաև Ցյուրիխում, Ժնևում, Լուգանում և

<sup>48</sup> Պետրոս Մոնոյանց, Երաժշտագետն նիկողապու Տիգրանյան (կննագրական ակնարկ երա 25-ամյա երաժշտական գործունեության առթիվ), «Արարատ», 1914, էջ 163:





## Բ. ՏԱՎՈՒԾԵՑԻ

### ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՆ «ԱՐԱՐԱՏ»-Ի ԷԶԵՐՈՒՄ 1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

«Արարատ» ամսագիր հայրուրամյակը նշելիս, չի կարելի չիշխատակել նրա կատարած դրական այն մեծ դերը, որ նա ցուցաբերել է արվեստների և, մասնավորապես, թատերական արվեստի մասսավականացման գործում: «Կրոնական, պատմական, բանափառական և բարոյական» ամսագիր լինելով համերերա, «Արարատ»-ը իր էջերում լայն տեղ է հատկացրել գրականագիտության, ժողովրդական կրթության, առողջապահության, երաժշտության, կերպարվեստի, թատերական և այլ հարցերի լուսաբանությանը:

Հրապարակ գալով անցյալ դարի ՅՈ-ական թվականների վերջերին, Հայաստանում՝ Արարատյան դաշտի կենտրոնում, լինելով նրա միակ տպագիր օրգանը մայր Ռոդի վրա, «Արարատ»-ը, բնականաբար, գործունեության ավելի բազմազան շրջանակներ է ընդգրկել, քան, ասենք, նրան զուգահեռ, բայց օտար ափերում լուս տեսնող «Բազմավիճակ»-ը, «Սին»-ը, «Հանդես ամսօրյա»-ն և այլ պարբերականներ: Այս իմաստով, «Արարատ»-ն ավելի շոտ և առավել շատ է անդրադարձել ժողովրդին նորող, նրա հասարակական-մշակութային կյանքի, առաջընթացի հետ կապված հարցերի լուսաբանությանը: Այդ հարցերից մեկը, տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը, եղել է Հայաստանի տարածության վրա՝ Երեվանում և Ալեքսանդրապոլում գործող ու զարգացող թատրոնի հարցը: Այն, ինչի մասին գրել է «Արարատ»-ը 1869—1872 թվականներին Երևանի և Ալեքսանդրապոլի թատրոնների մասին, միակ սկզբանբյուրներն են, որոնց շնորհիկ հնարավորությունն է ընձեռնվում կապ ստեղծել դրանց նախորդող և հետագա տարիների գործունեու-

թյան միջն, որովհետո ոչ «Սեղու Հայաստանի» լրագիրը, ոչ «Հայկական աշխարհ» հանդեսը, ոչ էլ 1872 թվականից լուս տեսնող «Մշակ» թերթն այդ տարիներին չեն անդրադարձել Թիֆլիսից դուրս գործող թատերական կյանքի մասին:

Թատերական թեմը որպես քաղաքակրթության, լուսավորության ու առաջախմբության կարևոր գործոն, հաճախ է համեմատվել եկեղեցու թեմի և դպրոցի ամբողջի հետ: Դրա համար էլ, շատ հաճախ, թատրոնը հովանավորվել ու խրախուսվել է հոգևոր իշխանության կողմից, մի հանգամանք, որը նկատելի է ինչպես «Արարատ»-ի էջերում տեղ գտած հոգութերից, այնպես էլ դրանից առաջ եղած պատմությունից: Այսպես, երբ 1865-ի աշնանը թիֆլիսահայ դերասաններ Գևորգ Չմշկյանը, Սիհիրդատ Ամբիկյանը և Սեդրակ Մանոհնյանը եկել են Երևան Երկարացումներ տպու, նրանց ոչ միայն ընդառաջել, այլև ցանկությունն իրագործել է Երևանի թեմի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Բադայշանը: Այդ նրա հովանավորությամբ է, որ Երևանի թեմական դպրոցի երկու դասարանը վերակառուցելով թեմ ու դահլիճի, բավարարել է ոչ միայն այդ պրոֆեսիոնալ դերասանների պահանջմունքները, այլև գրեթե երկու տասնամյակ ծառայել է տեղի թատերասերների խմբերին:

Չմշկյանականների տվյալ ներկայացումներին մասնակցել են թեմական դպրոցի ուսուցիչներ Սիմոն Փիլիպոսյանը, Նահապետ Աթանազյանը և ուրիշներ, որոնք շուրջ մեկ տասնամյակ վառ են պահել թատերական կյանքը Երևանում:

1869 թվականի սկզբներից Երևանում գործել է կազմակերպված թատերախումբ,

«Թատերական ընկերություն» անվան տակ: Այս այս ընկերության գործունեության, նրա պատմության միակ վկայությունը «Արարատ»-ի էջերում գետեղված հյութերն են, որ տպագովնել են ամենատարբեր առիջենով:

«Արարատ»-ի Երևանի թղթակցի «Հայկական թատրոն յԵրևան» վերնագրով հոդվածից պարզվում է, որ թիֆլիսեցի Սողոմոն Արամելիքյանի «Բոգացողությամբ» բայց Երևանական խոսքը 1869 թվականի փետրվարին տվել է երեք ներկայացում: 16-ին խաղացված «Ծուշանիկ»-ը ժողովրդի խնդրանոր կրկնվել է 25-ին, իսկ 28-ին ներկայացվել է «Երվանդ» պատմական պիեսը: Քաղաքի երկու դպրոցների օգտին տրված այդ ներկայացումները տեղի են ունեցել թեմական դպրոցի դահիճում պատրաստված թատերական բնմի վրա» (այժմ այդտեղ բնակելի տուն է՝ Կոմսոմոլի փողոցի վրա, ո. Սարգիս Եկեղեցու մոտ): Ըստ թղթակցի վկայության, ներկայացումներն սպասածից ավելի հաջողությամբ են անցել: «Այդ ներկայացումներում,—գրել է թղթակիցը (ամենայն հավանականությամբ մասնակիցներից մեկը),—իրենց ներերը առավել աշխուժ և ըստ արժանվույն են կատարել Սիհն-Շ. Վայ. Ժ. Փիլիպպովանը, Նահապետ Տեր-Հովհաննիանը, Նահապետ Աթանազյանը, համեստուփալի օր. Եղիսաբետ Ղորդանյանը, որը առաջինն է եղել Երևանի հայ տիկնաց և օրիորդների մեջ թատրոնական բնմի վրա հանդիսացող, ներկայացներով «Ծուշանիկ»-ի դերը»<sup>1</sup>:

1869 թվականի ընթացքում, զատկական տոններին և հետագա շրջանում «Թատրոնական ընկերության» դերասանները տվել են ևս 5 ներկայացում: Ուժը ներկայացման հասուլությունը կազմել է 812 ո., որից 600 միայն փետրվարին տրված 3 ներկայացումից: Գումարների այս տարրերությունը կասկած է առաջ բերել թատերական վաճառական Արգար Գուլամիրյանի մոտ, որը և «Արարատ»-ի միջոցով բացատրություն է պահանջել այդ ծախսների համար: Որոշ բացատրությամբ հանդես են եկել Երևանի թեմակալի փոխանորդ և թեմական դպրոցի տեսուչ Մերովը վարդապետ Սմբատյանը և դերասանները: «Թատրոնական ընկերության գործունեությունը զրուցի առարկա շնարձնելու նպատակով տեսուչը պարտավորեցրել է դերասաններին, որ իր հետ համաձայնեցնեն իրենց ձեռնարկումները: Իսկ դերասանները մի հայտարարությամբ բա-

ցարություն են տվել կատարվածի մասին՝ խոստանալով 1870 թվ. սկսած ներկայացումները տալ են պայմաններով, որովք բաղկացած են յոթ կետից: Այդ հաջորդարության տակ առորդագրել են իսկ իսկ կատարված Սողոմոն Արամելիքյանը և դերասաններ Սիհն-Շ. Վայ. Ժ. Փիլիպպովանը, Նահապետ Աթանազյանը, Վայի Եղիսաբետը:

Բացատրություններից նդգոնի, Գողամիրյանը մի ընդարձակ համակով մասնամասն հաշվումներ է կատարում և գտնում, որ ծախքերի մեջ «աշքակապություն» կա:<sup>2</sup> Նամակը մնում է անպատճախան:

Մի կողմ թղթենելով այս վիճաբանության շարժադիմները, պարզվում է, որ 1869 թղթականին տրված ներկայացումների համար դեկորացիաների է նկարել Մկրտիչ Հովհաննիապանը, որ պատրաստվել են «19 հատ նեղ կողիս և 9 հատ վարագոյն ետին կողմանց», «քաթանների կամ միտկալների վրա նկարված բաները, որոնք թատրոնի ամենամեծ հարկավորության պարագաներն են», ինչպես և քրիստոնեական համար թանգիփից կարած շապիկը, գնել են նոյն այդ տարրվա ներկայացումների գեղարվեստական որակը պատշաճ բարձրության վրա պահելու նպատակով: Բացի այս բեմի նորոգման, պիեսների ձևավորման, զանազան բեմական գեեստներ և իրեր ձեռք բերելու նպատակով գնվել են տախտակներ, «շպաների (արոյների) թղթեր», խառ և չիթ կտորներ, անգլիական երկու շղթա, «թվով մեկ հատ աղջկա խառ դերիս և մեկ հատ նախարարի յորկա շալից» և այլն: Այս բոլորը վկայում են, թե ինչպիսի ջանահրությամբ ու նվիրվածությամբ են աշխատել տեղի թատերասերները: Թատերական կյանքի աշխուժացմանը պետք է վերագրել և այն խոշոր առաջնորդացքը, որ 1869 թվականի մեկ դերասանությունը փոխարին է 1870 թվականի բևել են բարձրացել Սոնա Մադայանը, Թագուհի Դեկարտիանյանը, Մարթա և Զավահիր Գեղամյանը բոլորը:

Երևանի թատրոնի վերաբերյալ այս համակերն ու բացատրությունները մտահոգել են «Արարատ» ամսագրին, որն իր աշխատակից Ս. Մարտիրանին «Գործութել» է Երևան՝ տեղում ծանոթանալու իրերի դրության հետ: 1870-ի փետրվարին դիտելով մի քանի ներկայացում, Մարտիրանը գոհ սրբություն վերաբերյալ է Էջմիածին և գրել «Մեր

<sup>1</sup> Նոյն տեղում, 1870, № Ժ (փետրվար), էջ 253—254:

<sup>2</sup> Նոյն տեղում, 1870, № Բ (նունիս), էջ 69—71:

ազգային թատրոններում համառոտ տևողությունը» վերևագրով հոդվածը: Խրախուսելով հայ երիտասարդությանը «ազգը բարոյապես կրթելու» գաղափարով, նա միաժամանակ դրել է թատրոնական ընկերություններ հաստատելու հարցու: «Ազգութիւն, Երեւանա, Տիմիսոր և նորերու Նոր Նախիջենական մեջ հաստատված թատրոնները, — գրել է նա, — արդարն պետք է խրախուսական պատճառ լինի որից հայաբնակ քաղաքաց մեջ ինչպես Սովորանորապոյի, Աժտերիսանա, Քիշնևի, Վաղարշապատի և այլոց (հայաբնակ) քաղաքաց մեջ նույնական թատրոնական ընկերություններ հաստատելուն: Վասն զի վերջին հիշված քաղաքներուն մեջ ևս պակաս չեն քանի մի հայուածելուն և լուսամիտ երիտասարդներ, որոց նվիրական պարտքն է ըստ ի՞ն՝ այս գգալի թատերական դպրոցը բանալ իրենց քաղաքաց մեջ ևս ժողովրդական բարոյական և մուավոր կրթության համար»<sup>4</sup>:

Խոսքը մասնավորեցնելով Երևանի թատրոնի մասին, հոդվածագիրը նշում է, «որ «քարի հախանձով վատված հայ երիտասարդությունը» երկու խմբի բաժանման ողբերգություններ և կատակերգություններ է տալիս: Նեքը ներկա է եղել Ս. Արամելիքյանի դեկավարությամբ խմբի՝ փետրվարի 2-ին տված Խ. Գաֆայանի «Արշակ Բ»-ի բեմադրությանը: Ներկայացումը տեղի է ունեցել թեմական դպրոցի դահիճնում: «Երեւանա ժողովորդը, — գրել է Մարտությանը, — թե՛ ուսու, թե՛ հայ և թե՛ տաճիկ՝ հետզհետեւ շոշովվելով գրեթե բոլոր նատարանները բռնեցին, որ մեծ նշան է տեղվոյն ժողովրդան կատարյալ համակրությանը առ թատրոնն, և մանավանդ որ որից ազգերը մինչև ցաւծմ չեն կարողացած իրենց համար ունենալ առանձին թատրոն, բայց ինչպես որ կավի, հայոց այսպիսի եռանոր բարի օրինակ լինելու վրա է և այլոց բնակչաց քաղաքին»<sup>5</sup>:

Հոդվածագիրն իր հիացմունքն է հայտնում Արամելիքյանի ուժիտրական ու բեմական ձևավորման գործում ցուցաբերած հմտության ու ծառադրություններին, գովեստի ու գնահատության խոսքեր ուղղում Արշակի դերակատար՝ Վաղարշապատի հաշտարար դատարանի առենադարի օգնական և թարգմանիչ Վաղարշակ Շահիստունանի հաստենին:

Ողբերգությունից հետո ներկատառներ է զգառեցի Հառությունը Ռստանիկի (Հովհաննես Քուչուրեկան) «Չոր հոկաւը կամ պրոճավ գնաց» կատակերգությունը, որը նույն-

պես ծափահարությամբ է ընդունվել հասարակության կողմէց:

Մարտույանի այս արժեքավոր հոդվածում նկատելի է ոչ միայն նրա անձնական համակրանքը դեպի թատրոնը, այլև «Արարատ»-ի ընտրած ուղղությունը՝ բոլոր հայաբնակ վայերում թատերական արվեստն արմատավորելու և զարգացնելու նպատակը: Այստեղ, միաժամանակ, տեղ է գտնվել ազգերի բարեկամության և համագործակցության գաղափարը: հայկական ներկայացնությունին ներկա են եղել ուսու և աղքեցանցի հանդիսատեսները, որոնք խանդակված էին համարադրացի հայերի ունեցած հաջողությունները, տարիներ հետո, իրենց ևս, իրենց մայրենի լեզվով սկիզբ են դրել գեղարվեստի այդ հույսին:

Ահա սրանք են Երևանի թատրոնի մասին գրված հյութերն «Արարատ»-ի էջերում:

Համեմատարար քիչ, բայց և այնպես «Արարատ»-ի էջերում իր արտացոլումն է գտնել նաև 70-ական թվականների Ալեքսանդրապոլի թատրոնը: «Արարատ»-ի մրցաթական խթանից Մկրտիչ Վարժապետ Արարաջյանն իր «Մի քանի տեղեկությունը Ալեքսանդրապոլու հայոց ուսումնարանի, ընթերցարանի և բարեգործական նպատակով կազմված ընկերությանց վրա» ծավալուն հոդվածում խոսելով դպրոցների, ընթերցարանների բացման հետ կապված դժմարությունների և նրանց գործունեության մասին, միաժամանակ գրել է: «Մեր մեջ կարծեն ստվորական է՝ որ մի որևէ հայ օգուտ գործ մեծ եռանդով կակավի, բայց հետզհետեւ եռանդը բազմապատկերով գործին յավ ուղղություն տալու և կանոնավորելու փոխանակ՝ կակավ նվազել և հետեւ մարար գործն է: Կիանդիպի հսկան դադարելու տիտուր բախտին: ինչպես որ փոքր ինչ ժամանակ տևելուց հետո թատրոնն է հանդիպեցավ»<sup>6</sup>:

Դադարելու տիտուր բախտին հանդիպելն ան է, որ 1865 թվականի մայիսին հիմնադրման այդ թատրոնը 1866-ից կանոնավոր խումբ ու գործունեության կանոնադրություն ունենալուց հետո, հետզհետեւ թուղարքել է իր աշխատանքները: Տղղատակի ծանոթության մեջ Արարադան այդ հանգամանքը բաւարարել է ապահով: «Թատրոնը թե որ կանոնավոր լինի, իրավի հասարակաց բարուց կրթության և նոցա պատմական հրահանօհ անցից ծանոթացնելու մասմբ ունի լոր մեծ հաշանակությունը, ինչպես որ փորձու տեսնված է օտար երկրներու մեջ. սական մեր քաղաքի հման նոր զարգացող քայլ մեծի մասին անվաճառաշահ, և ժողո-

<sup>4</sup> «Արարատ», 1870, № Ժ. (մարտ), էջ 279:

<sup>5</sup> «Արարատ», 1870, № Ժ. (մարտ), էջ 280:

<sup>6</sup> «Արարատ», 1869, № Ե (սեպտեմբեր), էջ 114:

փորդը թատրոնական ճաշակին դեռ չպատրաստված քաղաքների մեջ շարունակ թատրոն պահելու խիստ մեծ դժվարություն է, և գոեթե անկարելի ուստի և այդ պատճառով մեր թատրոնի կյանքն էլ կարճաւու եղավ»<sup>7</sup>:

Այդ տարիներին թատրոնը դեռ ավելանդրապողիցների համար հոգեկան բավականություն, անհրաժեշտություն շրաբնայում մասին է բողոքել նաև տեղի թատերասեր Հովհաննես Խոջայանը: Նա իր «Գյումրի» հոդվածում նկարագրելով քաղաքի և նրա բնակչության, հասարակական ու մշակութային կյանքի, կրթության օջախների վիճակը, դժգոհությամբ հջում է, որ «Թատրոնական խաղ սկսվեցավ այստեղ 1865 թվին. բայց ժողովրդի մեծ մասի հասկացողության շնորհիվ... չկարողացավ շարունակություն ունենալ, թեև ներասաններն և աշխատում էին առանց ակնկալության վարձու»<sup>8</sup>: Խոջայանը լուրջ հիմքեր ուներ դրա համար: Թատրոնի կրթիչ ները դեռ ըմբռնելու, Բետամնացության մեջ խարիսխելու, ներասաններին զանազան պիտակներ կացնելու տիսուր փաստեր ավելի շատ հենց Ալեքսանդրապողում է նկատվել: Պատճառներից մեկն է հենց դա է, որ եթե Երևանում առաջին կին ներասանութին բռն է քարձագել 1869 թվականին (իսկ ըստ Ն. Արանիացի 1865-ին), ապա Ալեքսանդրապողում այդ հաղթական քայլը կատարվել է 1873-ին (Զարուի Գյուլումյան և Երանուի Տիգրանյանի):

Ներասանութիներին արհամարիելու, նրանց ծիծաղի առարկա դարձնելու և հասարակության մեջ խայտառակելու մի փաստով հեղինակը, նրա հետև և «Արարատ» ամսագիրը դատապարտել են փողի քակը քաջության գենք դարձած մարդկանց, պահարակել նրանց և նրանց նման մտածողության տեղ մարդկանց վերաբերմունքը դեռ թատրոնն ու նրա մշակները:

Ահա թե ինչ է պատմում այդ առթիվ Հ. Խոջայանը. «Ես ևս,—ասում է նա,—իբրև այդ թատրոնի դերասանների շարքից գոլով, մեկ օր մի վաճառական պարուն մոտիցը անցնելիս, հարցվեցան նրանից. «Ալթես օր կերթափ կը ձեռ թեաթիրը, օդորդի ի՞նչ կեննեք կը»: Պատասխաննեցի՝ «Վարդ եք մեկ օր շնորհ բերել այնտեղ և տեսնել աշքերով թէ ի՞նչ կեննեք կը». ասաց «զարի ես միտք ծովի եմ օր մեկ օդորմ պիտի գամ թիաթիրը. ըմբը էս միտք կեննմ կը, թե հինգ շաբի տամ, ինձի ամոր է, թե տասը շաբի տամ, փարան ափսո՞ւ է, և հրը

մնա աշենք». (նկատեցի, որ միտք ուներ ինձ բազարի միջին ներկայացնելու տակ մի գործողություն). ասացի «քո՞ղ դերասանները շարժարմին առանց շաբքի, տեսնենք նրանց վերջն ի՞նչ կիմնի. դուք էլ ափսուացնեք տասը շաբին, տեսնենք ձեր վերջն ի՞նչ կիմնի». թողի անցա՞:

Ինարկեն, բարոյական հաղթանակը դեռասանների կողմն էր, որոք հազար ու մի գրկաներներով. նեղություններով արհամարինեցին ու հաղթահարեցին բոյոր տեսակի խոշնդրությունն ու դժվարությունները և ալեքսանդրապողիներին դարձրին թատրուակեր ու թատրոնի գիծ:

Հ. Խոջայանի վերոհիշյալ «Գյումրի» հոդվածում շոշափված է ևս մի հարց, որը սերտորեն առնչվում է թատրոնի կատարած դրական դերի գնահատությանը: Դա արճարաններում հայ աշոտների ո՞ր լեզվով երգելու, և ինչոր անապահն հայերներ երգելու հարցն է: Ըստ հոդվածագրի, արճարաններում աշունները միշտ թուրքերներ են երգելապահն է եղել և հարուսիներներում: Խոջայանի այս վելությունը մերժում է մի այլ ալեքսանդրապողի՝ Կարապետ Մատիկյանը: Զիվանու մասին գրած իր հոդվածում Մատիկյանը ներքում է Խոջայանի ասածը, դրանք համարելով «քոյլորովին սուս»: Նա գտնում է, որ այժմ կատարվող երգերը բոլորն էլ հայերներ են և որ հայերներ երգերի տարածման և թուրքերներ նկատմամբ առաջելությունը ձեռք բերելու գործում շափազանց մեծ դեռ են կատարել թատրոնը, հայերնեն տրվող ներկայացումները, «որովհետև Ալեքսանդրապոյր եռք ունեցել է իր մեջ թատրոն (շնորհիվ հարգոյապատիվ պունեցի Ալեքսանդր Մելիք-Հայկացյանի) և երբ թնդացը էլ թատրոնական բնմի վրա ազգային երգերի արձագանքը, հենց այն օրից Ալեքսանդրապոյր աշունները սկսել են երգել հայերներ, որովհետև համարկությունը այր մասին պվեխ սեր և համակրություն է ցոյց տալի»<sup>10</sup>: Մատիկյանն այնուհետև նրանում է, որ հասարակությունն այլևս «ականց չի դնում» թուրքերներ երգերին, և որ մարդիկ առավելապես հաճախում են այն սրբաճանները, որը աշունները երգում են հայերնեն: Որպես օրինակ նա բերում է Զիվանու (Կարապետ Մատիկյանի սրբաճանում), Հովհաննեսին (աջոյու Խորեգ-Ալմոյանի սրբաճանում), Թաթոսին (Հավեսի) և Մալույին՝ այլ սրբաճաններում:

Դեռևս հաստատուա գործումներույուն չունեցող թատրոնը պարզ է, որ չէր կարող խոսակցության նկութ լինել ամսագրի հջե-

<sup>7</sup> Նոյն տեղում:

<sup>8</sup> «Արարատ», 1871, № Ժ (փառվար), էջ 346:

<sup>9</sup> Նոյն տեղում:

<sup>10</sup> «Արարատ», 1871, № Է (Յոյնմելը), էջ 415:


րում, ու «Արարատ»-ն այլևս չի արձագանքել Աղեքսանդրապոլի թատերական կյանքին:

Այս տարիներին՝ 1872-ին, մի թղթակցություն էլ տպագրվել է Մոսկվայի ուսանողական ուժերով տրված մի Անրկայացման մասին: 1871-ի դեկտեմբերի 18-ին Մոսկվայի ուսանողները ներկայացրել են Մ. Պեշիկթաշյանի «Վահե» ողբերգությունը հօգուտ շքավոր ուսանողների: Այդ ինչպես և դրանից հետո խաղացված պիտում համեմատելի են եկել բժշկական, իրավաբանական և այլ բաժինների ուսանողներ Արամյանը (Վահե), Տեր-Հովհաննիվանը (Արտավազդ), Սանուկյանը (Զարմայր) և որիշներ: Ուսանողական այս ներկայացումներին սիրահոժար օժանդակել են օրիորդներ Սո-

լումե Ստեփանյանը և Լեյնիոնդ քույրերը:

Թատրոնի, ժողովրդի լուսավորության և առաջադիմության հարցերում նրա ունեցած առաջնակարգ դերի ու Եղանակության մասին «Արարատ»-ի էջերում գետեղված հյութերը վկայում են թատերական արվեստի նկատմամբ ամսագրի ունեցած առողջ դիրքավորումը, շահագրգովածություն ցուցաբերել ամենուրեք տարածելու և մասայականացնելու հայ դրամատորգիան ու դերասանական արվեստը, բարձր պահելով այդ ազգօգուտ հաստատության բարոյական ազդեցությունը հասարակական-մշակութային կյանքում:

Ահա այն հարցերն ու երևոյթները, որ արծարծել է «Արարատ» ամսագիրն իր էջերում 1870-ական թվականներին:





## «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՑԱԿԻՆ ՆՎԿԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ**

Այս տարի մայիսի 1-ին լրացավ Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակը:

Այս առջիվ Վեհափառ Հայուապետի թելադրությամբ և հրահանգով կազմվել էր հորելլանական հանդիսությանց մի ծրագիր, ո. պատարագի մատուցմամբ, քարոզով, հոգեհանգստյան պաշտոնի կատարմամբ և այլ միջոցառությունով, ըստ արժանվույն նշելու համար այդ կարևոր և հիշարժան տարեթիվը:

Նոյեմբերի 10-ին, կիրակի օրը, Մայր տաճարում հանդիսավոր ո. պատարագ է մատուցում հոգեստ ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. Վլդ. Պողապալյանը և քարոզում «Երանի մեռելոցն որք ի Տէր ննջեցին, զի գործք իրեանց չոգան զինս նոցա» (Յայտ. ԺԴ 13) բնաբանով: Պատարագի հայր սուրբ իր քարոզի մեջ ներկայացնում է Գևորգ Դ կաթողիկոսի կյանքը ու մշակութային, կրթական գործունեությունը, մանավանդ որպես «Արարատ» ամսագրի հիմնադիր, և ապա խոսում է Մայր Աթոռի առաջին պաշտոնաթերթի կատարած կրոնական, եկեղեցական և հայագիտական մեծ և շնորհիակա դերի մասին, ոգեկոչելով նաև հիշատակը ամսագրին իրենց աշխատակցության բաժինը բերած Մայր Աթոռի միաբանության և անդամներին և մտավորականության:

Ս. պատարագին և քարոզին ներկա է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ըլրաջապատված միաբաններով և սիյուորից Մայր Աթոռ ժամանած ուստափությունով:

Ս. պատարագի Եկմալյան երգեցողությունը կատարում է շնորհիալիորեն Մայր տաճարի երգեցիկ խումբը:

### Հոգեհանգիստ

Ս. պատարագը վեհությամբ շարունակվում է մինչև արձակման Ավելատանը:

Այսուհետև Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճարի գնվթում, զանգակատան հարավակին կողմում, Հայրապետների շարքում երջանկաթիշատակ Տ. Տ. Գևորգ Դ Ամենայն Հայոց Հայրապետի շիրմը, որի վրա Ն. Ս. Օծության հանդիսադրությամբ և ի ներկայության հոծ բազմության, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն:

Հանգստյան Ավելատանի ընթերցումից հետո, Հայոց Հայրապետը արտասանում է «Քրիստո Որդի Աստուծոյ» աղոյքը, ոգեկոչելով հիշատակը հայ մշակույթի մեծ երախտավորներին՝ Տ. Տ. Գևորգ Դ կաթողիկոսին, Մայր Աթոռի միաբանության և բոլոր այն մտավորականների, որոնք իրենց ծառաւությունն ու մասնակցությունն են բերել «Արարատ» ամսագրի աշխատակցության միջոցով հայ եկեղեցու պայմանագրացմանը, և հայ մշակույթի զարգացմանը:

**Հանդիսավոր նիստ Վեհարանում՝  
նվիրված «Արարատ»-ի հարցուրամշակին**

Նոյեմբերի 10-ին, երեկոյան ժամը 17-ին, Վեհարանի հանդիսությանց ջահազարդ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված «Արարատ» ամսագրի հրատակության հարցուրամշակին:

Որոշակ ժամին հախագիտական պատվու սեղանի շորջ տեղ են գրավում Վեհափառ Հայրապետը, որպես հանդիսության նախագահ, Մայր տաճարի լուսարարապետը. Հայկագուն արքեպ. Արքահամայնք, ոխուավորաբար Մայր Աթոռում գտնվող Արեվմրտան Եփրապայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովը արքեպ. Մանուկյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանը և դարձայ ովհասպորտաբար ա. Էջմիածնում գտնվող հայտնի մտավորական Հ. Սիրունին:

Նախագիտական սեղանի շորջ տեղ է գրավել նաև ՀՍՍՀ Մինիստրուների սովորություն առջևության հայ ներկեցու գործերի խորհրդի համագահ Կ. Դալլայքյանը:

Հանդիսությանը ներկա են շորջ 300 հրավիրակներ, այդ թվում՝ Գերագույն հոգևոր խորհրդի և միաբանության անդամներ, «Էջմիածն» ամսագրի խմբագրություններ ու խմբագրական մարմններ, հոգևոր ճեմարանի դասախոական կազմն ու ուսանողություններ, մտավորականներ, թղթակիցներ և այլ հրավիրյալներ:

Հանդիսությանը ներկա են նաև Երևանի 2750-ամյակի առջևի ովհասպորտաբար մայր հայրենիքում գտնվող մտավորականներ, ծանոյ ազգային դեմքեր, այդ թվում՝ ֆրանսիացի հայունի հազարես, հարգելի պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելիքսի Փարիզից, պրն. Գերսամ Անարունեանը («Զարթոնք» օրաթերթի խոմբագիր)՝ Բելըրութից, պրն. Կարպիս Ղազարյանը՝ Ծնևից, Ակարիչ պրն. Արտավազը Բելըրեյլյանը՝ Փարիզից, երգուուի օր. Սոնա Ղազարյանը՝ Բելըրութից, հասարակական գործի պրն. Հովհաննես Դիմիջյանը՝ Բուենոս-Արեսից, և որիշներ:

Հանդիսավոր նիստը բացվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով, որին հաջորդում է հոգևոր ճեմարանի երազականի կատարած «Որք զարդարեցին տօնորինաբար» շարականի կատարումը, որոնք ուկընդունում են հոտենալաւ:

Անոնիետն՝ հանդիսության բացման խոսքով հանդեն է գալիս Մայր Աթոռի յուսարարապետ տ. Հայկագուն արքեպ. Արքահամայնքը և նշում, որ եթանականի հայտապահության մեջ նվիրված «Արարատ» ամսագանձանական անյանու Արարատին դիմացը կանգնեցուց ու-

րի իմացական Արարատ մը, որ պիտի լեզու առներ ու պիտի պատմեր անցյալ ու ներկա փառքերն ու վիշտերը նայ ժողովորդին, հայ նեկոնցին, և հայությունը պիտի համախմբվեր ու. Էջմիածնի լուսին ու խորհուրդին շորջ, հայրենիքի հողին վրա»:

«Արարատ»-ի հրատարակության հարցուրամշակին նվիրված հանդիսություններ բաղկանում էր երկու մասից:

Սուածին մասում՝ գեկուցումներ և ողջունի խոսքեր, իսկ երկրորդ մասում՝ գեղարվեստական ծրագրի կատարում:

Զեկուցման համար առաջին խոսքը տրըւում է «Էջմիածն» ամսագրի խմբագիր Արթոռն Հատիկյանին, որը նշելուց հետո, թայ սա տարի մայիսի 1-ին լուսավ Մայր Աթոռն ու. Էջմիածնի առածին պաշտոնաթերթ «Արարատ»-ի հրատարակության հարցուրամշակը և հիշարժան այդ տարեթիվը նշելու հետ կապված միջոցառումները, բայ հարապետական հրահանգի և թեկադրության, խոսում է «Արարատ» ամսագրի կատարած մեծ դերի մասին մեր եկեղեցական պատմության, մատենագրության և հայ բանահրության մեջ, շեշտելով, որ «Արարատ»-ը եփրապական իմաստով միակ կրոնական լուր ու գիտական ամսագիրն է եղել արևելահանեղի մեջ, որի կրոնա-քարոշական, եկեղեցագիտական, դպանաքանական հարցերի խորը ուսումնասիրությանը, գիտական մակարդակին, ծավային ու բարձրության չի հասել ոչ մի այլ կրոնական հայ ամսագիր և, մինչև Հայաստանու սովետական կարգերի հաստատումը, «Արարատ»-ը հանդիսացել է նաև միակ լուրջ բանահրական ամսագիրը, որին իրենց աշխատակցությունն են ներել հայագիտությամբ գրադարձը մեր մեծ գիտական ները:

Անոնիետն հարգելի բանախոսը կանգնառելով «Արարատ»-ի հրատարակության հիմնական նպատակին, նշում է, որ այն եղել է «Հայկագուն սերնդոց սրտի և հոգվուն եռանու ու աշխուզը» վառել, «Արթուրության և զարգացման սիրով և ազգային դաստիարակության» միջոցով բանալ «հնարենյաց կենտրոններ հայունի հնությանց թանգարանը» և «ազգային մեծագործությանց պատմական հիշատակները կենդանագնեն, ի մըխթարություն հեռավոր ազգայնոց, որոնք ժամանակավ հատված գնալով ի պտուղուն և այլ աշխարհաց, առ գետս բարեկացվող կրօնական ու կիշենի գՀայաստան...» («Արարատ», 1868, Ցառաջարան, էջ 1):

Անոնիետն Մայր Աթոռում և միաբանության մեջ հոգևոր, մշակութակին կանքը խորթանելու, հավասար և հայունահրության «եռանդ» ու այս աշխուզը բորբոքելու և ուսումնական շարժումը» բաշակերեսու համար Գե-

վորդ Դը «իւր ուսումնասէր հոգ:ոյն եռակունամբը» ձեռնարկում էր ամսագրի հրատասրակությանը, «ազգային, բարոյական զարգացմանը աստարելու» և դրանով էլ ավելի բարձրացնելու համար նաև միաբանության անունն ու վարկը «հոգեւոր պարտականություն: Այս կատարելու և նոյն հոգեւոր կոչման վարկը անձին սեպականելու, որով միայն կարող եմք ազգին առաջին ամենաշատի լինել» («Արարատ», 1868, էջ 2):

«Արարատ»-ը թեև լրագրության պատմության մեջ անդրանիկներից չեր, բայց իր մասնավոր տեղն ու հշանակությունն է ունեցել իր բովանդակությամբ-ուղղությամբ, հայ եկեղեցուն և մեր մշակույթի զարգացման մատուցած իր ծառադրությամբ, հայ լրագրության պատմության մեջ:

«Արարատ»-ը հրատարակվեց ավելի քան կես դար և եղավ հայ կրոնական մամուլի, ինչպես նաև մեր լրագրության պատմության մեջ լավագույն, բովանդակալից և մասնավանդ երկարակյաց ամսագրերից մեկը:

«Արարատ» ամսագիրը հանդիսացավ հայ դավանարանական մտքի, եկեղեցական պատմության և իրավունքի և հայագիտության հանդիսարան:

«Արարատ»-ը միաժամանակ եղավ հայ դավատի, հայեցի բարոյախոսության թեմ և հայկական հարցի և դասի պաշտպանության ամբիոն:

«Արարատ»-ը սրբությամբ կատարեց իր առաքելությունը և հայ հասարակական մըտքի զարգացման վրա ունեցավ մեծ ազդեցություն: Դժբախտաբար, սակայն, ցարդ, ինչպես որ հարկն է, լուր, բազմակողմանի, գիտական վերուժության ու ուսումնասիրության չեն ենթարկվել «Արարատ»-ը և Մայր Աթոռի միաբանության կատարած մշակութային, մատենագրական, վաստակին անդրադել է նաև ծանոթ գրաքննադատ Հ. Օշականը իր «Արևելյանաց բանասիրությունն և Էջմիածին» ուսումնասիրության մեջ՝ գրված Գարեգին Կաթողիկոս Հովհաննեցի ծննդյան 80-ամյակի և մատենագրական գործունեության 60-ամյակի առթիվ: Գիրքը տպված է Անդիխատում 1952 թ. (208 էջ), որին և կցված է նույն հարցի վերաբերյալ գարեգին կաթողիկոսի վկայությունը: Դեռևս 1947 թ. «Սինան» ամսագրում (մարտ համար) Օշականը անդրադարձել է այլ հարցին: Թե՛ իր հոդվածում և թե՛ իր գրքում Օշականը քննության է առել միմնականում արևելահայ բանասիրական դպրոցը և անդրադարձել է նաև «Արարատ»-ին և նրա միջոցով ս. Էջմիածնի բանասիրական դպրոցի կատարած գիտական նպաստին՝ արևելահայ բանասիրության մեջ:

Հայ պարբերական մամուլի ուսումնասիրությամբ զրադկողների մոտ քննության չի առնվել այս կարևոր հարցը: Նրանք բավարարվել են միայն հայ պարբերական մամուլի մատենագիտական ցանկերի կազմությամբ: Այս ասպարեզում մեծ և մնայուն աշխատանք է կատարել Ա. Կարինյանը, որի աշխատության երրորդ հատորը, սակայն, որն ընդգրկելու էր 1850—1900 թվականների հայ մամուլը, լուս չի տեսել: Որով նրա քննության ու ուսումնասիրության տեսադրամությունը էլ դուրս է մնացել առայժմ «Արարատ»-ը:

Գ. Լունյանը իր «Հայոց պարբերական մամուլը» աշխատության մեջ (Երևան, 1934 թ.) «Արարատ»-ի վերջին տարիների մասին ունի միայն հետևյալ վկայությունը:

««Արարատ»-ը լուրջ գիտական-ակադեմիական շրջաններ է ունեցել, իր էջերում տպագրելով Գալուստ Տեր-Միրուչյանի, Մ. Արենյանի, Ա. Կանայանի, Հր. Աճառյանի, Ն. Աղոնցի, Կարապետ, Մեսրոպ, Գարեգին, Կոմիտաս, Երվանդ Վարդապետների նաև հայունի բանակերների ուսումնասիրությունները: «Արարատ»-ը իր ծագքերում պարունակում է հարուստ նյութեր, որոնցից օգտվել կարող է և՛ գրականագետը, և՛ պատմագետագագործեցուը, և՛ լեզվաբանը: Մենք տեսնում ենք նաև այստեղ և՛ Ղազարոս Աղայանին, և՛ Հովհաննեսիսին» (էջ 36):

Մեծավատակ բանակեր-գիտականի գնահատությունը, իհարկե, ճիշտ է, բայց ոչ ամբողջական: «Արարատ»-ի բոլոր համարներում մեծարժեք էշեր կան նաև հայ եկեղեցու պատմության, արվեստի, հայ դավանարանական մտքի, եկեղեցական իրավունքի, հայ մանկավարժության, գիտության և այլ բնագավառներին նվիրված:

«Արարատ»-ի դերին և Մայր Աթոռի միաբանության եկեղեցագիտական, մատենագրական, բանասիրական վաստակին անդրադել է նաև ծանոթ գրաքննադատ Հ. Օշականը իր «Արևելյանաց բանասիրությունն և Էջմիածին» ուսումնասիրության մեջ՝ գրված Գարեգին Կաթողիկոս Հովհաննեցի ծննդյան 80-ամյակի և մատենագրական գործունեության 60-ամյակի առթիվ: Գիրքը տպված է Անդիխատում 1952 թ. (208 էջ), որին և կցված է նույն հարցի վերաբերյալ գարեգին կաթողիկոսի վկայությունը: Դեռևս 1947 թ. «Սինան» ամսագրում (մարտ համար) Օշականը անդրադարձել է այլ հարցին: Թե՛ իր հոդվածում և թե՛ իր գրքում Օշականը քննության է առել միմնականում արևելահայ բանասիրական դպրոցը և անդրադարձել է նաև «Արարատ»-ին և նրա միջոցով ս. Էջմիածնի բանասիրական դպրոցի կատարած գիտական նպաստին՝ արևելահայ բանասիրության մեջ:

Խոսեղով «Արարատ»-ի կատարած մեծ գործի մասին, հարգելի բանախոսը ծանոթ գրաքննադատ Հ. Օշականի գնահատությունն է բերում, ըստ որի «Արարատ»-ը հայագիտական իր մասերում մեջ, առնվազն հավասար է Բազմավեպին և Հանդես Ամսօրյալի (38), որոնք եւլուսական կերպունենքու և իմացականության մոտիկ ըլլալու իրենց բարիքները իրավունք չունին անեցնելու, գերուածացության հարցեր արծարծելով» (38): Արդարն, Էջմիածնականները հրաշաի կերպով կատարեցին «ապար մեր մշակությիմ» արմեստների ուղիով, սապար մեր՝ եկեղեցու՝ ապատականությանց ճանապարհով» (28): «Արարատ»-ը կատարել է իր պարտքի բաժինը «Եվոլուպական ուսումնակերպ մարդոցը» կատարել է իր պարտքի բաժինը «Եվոլուպական ուսումնակերպ մարդոցը»

չափ ու տեղագրական, ազգագրական հարցերու մեջ ալ գերազանց համեմատություններով:

1950-ին Երևան, այժմու արևելահայ բանահրության ոստանը, գիտե մեր պատմութեան շատ ավելի բան, որքան չեն իսկ երկակայեր Վենետիկն ու Վիեննան:

Եթ բանահսության մեջ Ս. Հատիխյանը քերում է և առև երշանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Հովսեփյանց կաթողիկոսի վկայությունը Էջմիածնի միաբանության և «Արարատ»-ի կատարած եկեղեցագիտական, հայագիտական ծառայությունների մասին:

«Հայագիտության և հայերենագիտության ծագման և զարգացման մեջ Էջմիածնը շատ կարևոր դեր է կատարել, որ գրեթե ամտեսված է մեր մտավորականության կողմից: Ալիշանի «Ծիրակ»-ը, «Արարատ»-ն ու «Սյունիք»-ը իրենց կարևորագույն մասով հիմնված են Էջմիածնի միաբաների աշխատությունների կամ հրանց բերած օգնության վրա: Չափաթունյանի, Սարգիս եպիկոպոս Զալայանի, Ստեփանոս Վարդապետ Միհիթարյանի, Սմբատյան Մեսրոպ և Բարինության Մակար եպիսկոպոսների և Քաջքերունու ճանապարհորդական եկատողությունները, որ տպագրվեցան «Արարատ»-ի մեջ, նաև հետագա միաբաներից ունաց գործերը հիմքն են եերկան հայերենագիտության և աղյունները մեր անցյալ շինարարության, պահճեն ճարտարապետության ուսումնահրության և հասկացողության: Երևանայիտյան միայն, առանց գործնական փորձի, դժվար է իրական գաղափար կազմել, թե ինչ անասելի դժվարությունների և աշխատանքի հետ է կապված հայուրավոր շեն ու ավերակ վանքերի արձանագրությունների ընթերցումը, նկարագրությունը: Ամենայն հարգանք և գնահատ Վենետիկի և Վիեննայի Միհիթարյան մեծ աշխատավորներին, բայց ո՞չ Էջմիածնի դերի ուրացմամբ:

Հայագիտության կամ բանահրության համար Էջմիածնի կատարած ամենամեծ և հանոր հայության երախտագիտության արժանի գործը հազարավոր ձեռագիրների հավաքումն ու պահպանությունն է, հայ ժողովրդի ամենամեծ ժառանգությունը:

Սուանց այսպիսի հաստատության արեւկերպայ բանահրության մասին երազեն անգամ կարելի չեր:

Սուաշին գեկուցողը իր խոսքն ավարտում է հետևյալ հաստատումով:

«Այսօր ուստի օր է ճան մեզ՝ Մայր Աթոռի միաբանության, խմբագրական, դասախոսական կազմի, պաշտոնության և ս. Էջմիածնի մոտիկ կանգնած մեր մտավորա-

կանության համար: Այս հանդիսավոր աղիթով, աննահանջ սիրով, բոլորանվեր սրտով վերակրկնում ենք մեր սրբազն ովտու, Սմենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրինարեր ներկայությամբ և Նրա հայրապետական բարձր առաջնորդության ներքո շարունակելու մեր էլ համեստ սպասն ու ծառայությունը՝ ի նպաստ հայ մշակույթին, հայ հավատի և հայ ոգիի Արարատը հանդիսացող Մայր Աթոռ և Էջմիածնին, և նրանց միջոցով վերածնված մեր ժողովրդին և մայր հայրենիքին»:

Այսուհետև եւովյա է ունենում «Էջմիածն» ամսագրի խմբագրական մարմնի անդամ և Սերու Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի գիտաշխատող Սուրեն Քոլանցյանը «Արարատ»-ը և հայագիտությունը թեմայի շորջ:

Հարգելի գեկուցողը հանգամանորեն և բարեխստությամբ ներկայացնում է «Արարատ» ամսագրի կատարած դերը հայագիտության զարգացման բնագավառում, ժամանակագրականորեն, տասնամյակներով նշելով այդ տարիներին «Արարատ»-ում տպագրված հայագիտական ու հայերենագիտական, ձեռագրագիտական աշխատաբերների գիտական արժեքն ու կարևորությունը:

««Արարատ»-ի առաջին տասնամյակը ընթանապես ընդունված է կոչել «որոնումների շրջան», քանի որ այն հիմնականում, ինչպես մեր գրեթե բոլոր ժամանակակից հանդեսները, բովանդակում էր այլազանցույթի հետաքրքրական խառն. Կույտեր: Սակայն միաժամանակ խմբագրությունը հատկապես իր աստանական ընթերցողներին ցանկանում էր ծանոթացնել հայ անցյալի հշարժների հետ: Այնուղի ասված էր, որ աշխարհով մեկ սփռված հայերը «Արարատ»-ից սպասում էին, որ նա «Հայրենյաց կենտրոննեն հայրենի հնությանց թանգարանը բանար և ազգային մեծագործությանց պատմական հիշատակները կենտրոնացներ ի միհիթարություն հեռավոր ազգայնոց»: Ավելի ոչ հայտնի գրող Դ. Աղայանը «Արարատ»-ի 1869 թ. համար 1-ում գրում էր, որ «ամսագիրը յոր ամեն շանքը պիտի գործ դնել ինեւ աշնակի մի պատկեր, որո մեջ Հայր կարողանա տեսնել յոր անցյալը և ներկան...»: Նոյն հանդեսի մի այլ հայտարարության մեջ ևս ցանկություն էր հայտնրվում հայագիտական բաժինը մեծացնել: «Բովանդակության մասին ևս կիստանա հավելացնել բանահրաց հետաքրքրության արժանի հնագիտությունք, և ժողովրդական ճաշակին համաձան բաղվածներ, և այլն...»:

«Արարատ»-ի երկրորդ տասնամյակը, ուլ ընդգրկում է 1878—1887 թթ., նրա պատմության մեջ կարելի է ասել, որ դարձում է իր

հունը գտնելոյ և դեպի վերեւը նախապատրաստվելոյ ժամանակաշրջան։ Խմբագրությունը շանում է ավելի մեծ թվով աշխատակիցների ընդունումով ընդարձակել նաև հայագիտական բաժինը։ 1879 թ. հրատարակելով «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսիսի» և Դավիթ հարցուներ ըստ երկարնական» քննագիրը, խմբագրությունը հայտնել է այն մասին, որ «Եթե առաջինական ևս Մայր Աթոռի գրչագրերում կարևոր հյութեր հայունարերնեն, հրատարակելոյ են իրեն ազատին հնության փափագելի թեկորներ «Արարատ» ամսագրին մեջ, Վեհափառ կաթողիկոսի բարեհանության և պատվերին համաձայն, որ ազգասիրաբար մեծ հովանավոր է ազգային գրականության մշակման» (Եշ 188—189)։

«Արարատ»-ի երրորդ տասնամյակը շրջադարձային կետ հանդիսացավ ոչ միայն ամսագրի, այլև հայագիտության կամքում։ Այս շրջանում այնուել սկսում են հանդեպ գալ ապագայի այնպիսի խոշոր հայագետներ և ձեռագրագետներ, ինչպիսիք են Կ. Վ. Տեր-Սկրտչյանը, Գ. Տեր-Սկրտչյանը, Սողոմոն Սողոմոնյան և ու (անհնամ Կոմիտաս վարդապետը), Սահակ Վ. Ամատոնին, Խաչիկ Վ. Դարյանը, Սեսրով Վ. Տեր-Մովսիսյանը, իսկ աշխարհականներից՝ Կ. Կոստայեանը, Մ. Արելյանը, Ստ. Մայսասյանը, Հր. Աճայանը, Գր. Խալաթյանը, Երվ. Շահագիզը, Նիկ. Քարամյանը, Ա. Տեր-Միքելյանը, Ա. Հայկոնին և որիշները։ «Արարատ»-ի խմբագրերը և հրտ. հանձնաժողովները հետագայում ընտրվում են հիշյալ պատկանելի գիտնականներից, որոնք ել ենոյ փառ են տալիս իր վերեւը ապրոյ հանդեսին։ Մեծ ուշադրություն է դարձվում հայագիտական հոդվածներ հրատարակելու ուղղությամբ։ 1895 թ. առաջնորդում կարդում ենք. «Արարատ»-ը նաև պատմական և գրականական մի թերե պիտի լինի, որ լուս սկսել մեր պատմության և գրականության մութը և դեռ անձանոթ կետերի վրա»։

«Արարատ»-ը իր 4-րդ տասնամյակն է թևակիութ (1898—1907) հաստատաքայլ շարունակելով իր բուռն վերեւը։ 1899 թ. վերջում «Արարատ»-ը մեծ ձեռնհատությամբ խմբագրող Կարապետ Վ. Տեր-Սկրտչյանը երբ հրաժարվեց, 1900 թ. սկզբից նրա խըսքագրությունը Խրիմյան Հայրիկը հանձնեց հայագիտության ապագա մեծ երախտավոր Գարեգին Վ. Հովսեփյանին, որին կրոնական և այլ բնույթի բաժինների հետ միասին, հրահանգում էր հաստու ուշադրություն դարձնել մասնավորապես հայագիտական գործերի վրա։ Հայրիկը այս առթիվ գրել է. «Զան ի գործ ներել գորացուցանել ըստ իրշման առագրին Մ. Աթոռովս գգիտական, զարգացման-

կան, զմատենագրական, զմանախօսական բաժինն սու ի բարձրացուցանել գրարի անուն և գգիտական համբար միարանութեան Սուրբ Էջմիածնի»։

«Արարատ»-ի 5-րդ տասնամյակը, որը և վերջինը եղավ նրա հարուստ կամքում, շատ բանով է զիջում իր 3-րդ և 4-րդ տասնամյակներին համարեներին։ Այդ սուսչին ներթին մետանաց էր խմբագրական կազմի թուլացմանը։ Բազմահամուտ գիտնական Գարեգին Հովսեփյանը 1908 թ. նոյեմբերի 5-րդ ազատվեց խմբագրական պաշտոնից։

1909 թ. Մատթեոս Բ կաթողիկոսը խմբագրի է նշանակում Հովսիկ արքեպիսկոպոսին։ Սակայն շուտով 1911 թ. խմբագրի է նշանակվում Արել արքեղա Արքահամբանը, իսկ խմբագրական անդամներ են դառնում Մ. Արելյանը, Գ. Աթոռովանը, Ռ. Արքահամբանը, Գ. Էղիկյանը։

«Արարատ»-ի վերջին շրջանի խմբագրությունն են վարում Սեսրով և Դարեգին և պիտի պատմա-բանասիրական հյութերով հանդառ են գալիս Միհարանը, Գարեգին Վ. Հովսեփյանը, Մովսես Վ. Տեր-Մովսիսյանը, Խաչիկ Սահմելյանը, Ստ. Կանայանը, Թ. Ավդարելյանը, Մ. Արելյանը, Հր. Աճայանը և ուրիշներ։ Տիրայր վարդապետը սկսում է հրատակությունը մոռացված մի հայ երգի (Ֆրիկի) մասին գրած իր ուսումնասիրությունը, Սեսրով Վ. Մաքսումյանը լույս է ընծայում Ագուսիսի և շրջակարիքի ձեռագրերից ցուցակը, որը ընդգրկում է 37 գրչագրերի նկարագրություն, և որոնց մեջ մասը այժմ կորած է գիտության համար։ Դարձյալ «Արարատ»-ի այս շրջանի համարներում առաջին անգամ հանդես են գալիս նորանոր առունենք, որոնք ևս մեծ անուն էին թողնելու մեր վերածնած հալենինից գիտական բարձր շրջանակներում։ Վերջին տասնամյակի աջդ նոր աշխատակիցներից էին Արսեն Տերտիկյանը «Հ. Թումանյանի և այլոց մասին» գրած իր գրականագիտական հոդվածներով, Գր. Ղափանցյանը «Հնության մի քանի հիշատակարաններ», Աշ. Հովհաննելիյանը «Նոր հյութեր հայ ունիտուական պատմություններ», և «Պետրոս ոի Սարգսի Գիշանենց» և այլ ուսումնասիրություններով։

«Արարատ»-ը իր շրջան համախմբած մեծանուն գիտնականներով իր ժամանակին հանդիսացել է մեր գիտության ուրուն կաճառը։ Այստեղից և բնավ պատմահական և րեմույթ չպետք է համարել այն համգաման, թի, որ վերածնալոյ մեր հայրենիքի նորա-

ստեղծ պետական համալսարանում, ինչպես նաև գիտությունների կանոնում հրավիրված դասախոսների և անդամների շարքում առաջին ներթին տեղ են գրավել նաև «Արարատ»-ի շորջ երեսն համախմբված գիտականներից ումանիք:

«Արարատ»-ի արձերք ավելի քան կըրկնապատկվում է, եթե նկատի ենք ունենուն հատկապես նրա էջերու պարփակված ձեռագրական հրապարակություններն ու պատմարանախրական բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրությունները։ Նրա էջերու հայագետը կարող է գտնել հայագիտության բազմազան և բազմարվանդակ բնագավառների, ինչպես նաև տարրեր ժամանակաշրջաններին վերաբերող ուշագրավ գործեր։

Թեև 100 տարի է անցելում այսօր «Արարատ»-ի հիմնադրումից, սակայն նա իր բարձրակությամբ իրեն հայագիտության անսպառ գաևաճարան միշտ թարմ է մնում։

Հանդիսադրության ժամանակ, «Արարատ»-ի հարյուրամյակի առիթով, ողոյվությունը խոսքով հանդես է գալիս ուսուավորաբար Մայր Աթոռում գտնվող ծանությունության, գիւղականագետ, բանասեր Հ. Շ. Սիրունին, որն ասաց.

«Հավաքված ենք հայ մշակույթի պատմության ուշագրավ մեջ իրադարձություններ տունախմբելու համար և նշելու համար հարյուր այն տարիները, որոնց ընթացքին Մայր Աթոռում միաբանները սրբեցան, սերնեկ-սերնե, իրենց քրտինքը խառնելու համար և հայ բանախրական նվաճումներուն և պարբերաբար խոսելու համար հայ ժողովություն հետ, երեկ՝ «Արարատ»-ի, այսօր՝ «Էջմի ածին»-ի բնեմեն։»

«Արարատ» ամսագրի հրատարակության հարյուրամյակին նվիրված հանդիսադրությունը Ս. բաժինը փակվում է Վեհափառ Հայրապետության օրինության խոսքով։

Ն. Ս. Օծությունը խոսում է 1860-ական թվականներին Եվրոպայում սկիզբ առած փոքր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հոգնոր, մշակույթային զարրունի մասին՝ գիր ու գրականության միջոցով, ինչպես նաև ազգային ազատագրական շարժումների և պայքարների մասին, որոնք սպարտվեցին ժողովրդի հայոթանակով և նպաստվոր պայմաններ ստեղծեցին փոքր ժողովուրդների ազգային մշակույթների և հոգնոր արժեքների զարգացման համար։ Հայ եկեղեցու ծոցում «Արարատ» ամսագրի հրատարակությունը արտահայտությունից մին հանդիսացավ հայ ժողովությի ազգային-հոգնոր զարտուիքին և քրիստոնեական լուս, ազգային շունչ, հայեցի դաստիարակություն շատերեց մեր եկեղեցու զավակներին։

«Բայլազուն սերնդոց»։ Ն. Ս. Օծությունը պատ ոգեկոչեց հիշատակը Տ. Տ. Գևորգ Դ. կաթողիկոսի, Մայր Աթոռի միաբանության և հայ մտավորականության, որոնք իրենց նպաստը բերեցին հայ մշակույթի, հայագիտության սկզբանավորության և զարգացման, շարժում, որը մեծ նվաճումների հասավ վերջին շորջ 50 տարիների ընթացքում, մեր վերածնած մայր հայրենիքում, հայրենի կունավարության հովանու ներքո հայ գիտնականների հայրենանվեր, գիտական ու լորջ ուսումնասիրություններով։

Իր խոսքի և օրինության ավարտին Վեհափառ Հայրապետը սրտագին հուսու հայտնեց, որ մեր երկրի մշակույթի հրաշալի ծաղկման կողքին, Մայր Աթոռի միաբանությունը, «Էջմիածին» ամսագրի շորջ հավաքված մտավորականությունը նույնականացնելու համեստ հայտնաբերության մեջ առաջընթացին, ինչ որ մեծ գոհունակության և ուրախության աղբյուր կհանդիսանա նաև Նր հայրապետական սրտի համար։

Տապ րոպե տևող ընդմիջումից հետո, գործադրության դրվեց «Արարատ» ամսագրի հարյուրամյակին նվիրված հորելյանական հանդիսադրության գեղարվեստական ծրագիրը։

Առաջինը երույթ ունեցավ հանդիսադրության ժողովուրդական արտիստ, թագչության կամաց Գորգեն Աղամյանը, որը, նվագակցությամբ դաշնակահարուելի Ելեոնորա Աղամյանի, կատարեց՝

1. Բոքեր, «Հունգարական ուսպուհիա»,
2. Կոմիտաս վարդապետ, «Ես առուն» (մշակումը Գորգեն Աղամյանի), 3. Գորգեն Աղամյան, Ելեօնորա երգ ծոնված Վեհափառ Հայրապետին։

Հոգերու նմարանի Ս. լարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը արտասանում է Կոմիտաս Զարյանի «Գայլիր սերունդներ» բանականությունը, իսկ Գ. լարանի ուսանող Հովհաննես սրբ։ Գըլքը անը՝ Սիլվա Կապուտիկյանի «Երրում հայրենի լեզվին»-ը։

Բեկրութակայ ծանոր երգչուի Սոնա Ղաղարյանը, որը ուսուավորաբար գտնվում էր Մայր Աթոռու և հայրենիքում, հանդես եկավ երեք մեներգերով։

1. Կոմիտաս վարդապետ, «Կոունկ», 2. Գ. Աղամշահ, «Խմ երգը», 3. Կոմիտաս վարդապետ, «Կաքավիկ» նվագակցությամբ դաշնակահարուելի, վաստակավոր արտիստուի Մարիանա Հարությունյանի։

Ծանոթ երգչուի Մարիա Գեղունին հանդես եկավ երկու մեներգերով։

1. «Տաղ առ Տիրամայրն», 2. «Տաղ Աստուածածնայ» նվագակցությամբ դաշնակա-

հարումի, վաստակավոր արտիստութի Ելենա Տեր-Ղևոնյան:

Հանրապետության վաստակավոր արտիստութի և Մայր տաճարի երգեցիկ խմբի մենակատար Լուսինե Չաքարյանը կատարեց չորս մեներգեր.


1. «Այսօր հարսն լուսոյ» (մշակումը պրոֆ. Ռ. Աթայանի), 2. Նարեկացի, «Սալլա աղն իշաներ» (մշակումը պրոֆ. Ռ. Աթայանի), 3. Վարդան Սարգսյան, «Հոյնար», 4. «Պաղ աղբյուրի մոտ» (ժողովրդական)։ Ըստավակցությամբ դաշնակահարութի, վաստակավոր արտիստութի Մարիանա Հարությունյանի։


Հայկական պետական ֆիլհարմոնիայի լարային քայլակը, գեղարվեստական դեկավար և առաջին ջութակ Լևոն Մամիկոնյան, երկրորդ ջութակ՝ Մարտին Երիցյան, կատարեց չորս մեներգեր։

այս՝ Յուրի Մանուկյան, թավջութակ՝ Ֆեղիք Սիմոնյան, կատարեց.

1. Հայդա, մերենադ, 2. Կոմիտաս վարդապետ, «Ալաջազ», 3. Կոմիտաս վարդապետ, «Երկինքն անպետ ա», 4. Կոմիտաս վարդապետ, «Վաղարշապատի պար», 5. Կոմիտաս վարդապետ, «Չինար ես»։

«Արարատ» ամսագրի հրատարակության հարուրամյակին նվիրված հանդիսատեսական մասը ավարտվում է ընդհանուր ու խանդական ծափերի մեջ՝ հանուն Հայոց Հայրապետի տ. Հայկազոն արքեա. Արքահամյանի շնորհակալական խոսքով՝ հայտնված կազմակերպիչ «Եջմիածին» ամսագրի խմբագրությանը և հանդեսի բարեհաջող ու հիշատակության արժանի անցկացման համար իրենց սրտագին մասնակցությունը բերած արվեստագետներին, երգիչներին, արտասանողներին և բոլորին՝ իրենց ներկայության համար։





## ԱՆՁՅԱԼԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Ստորև տպագրում ենք անցյալ դարի 90-ական թվականների երկու հետաքրքիր փաստաթղթեր, որոնք վերցված են Կովկասյան Փոխարքայի Գլխավոր գրաքննչական կոմիտեի արխիվներից: Երկուսն էլ վերաբերում են «Արարատ» ամսագրի գրաքննության հարցերին:

Ցարական Ռուսաստանի սատրավների և նրանց գրաքննիչների համար անհանդուժելի էր հասարակական մորի զարգացման, հառաջդիմության և ազգային զարթունքի որևէ արտահայտություն, ինչպիսի ձևով էլ որ այն արտահայտվելիս լիներ, անգամ, թեկուզ շատ աղոտ կերպով, կորուսկան մամուլում:

Հարկավ «Արարատը» շափագանց հեռու է եղել իր ժամանակի բուռն հասարակական շարժումների արձագանք լինելու, շարժումներ, որոնք ընդգրկում էին համայն-

Ռուսաստանը: Նրա շոշափած խնդիրները սահմանափակվում էին ազգային-եկեղեցական շրջանակներով, որ Մայր Աթոռի ամսագիրը համարձակորեն հանդես էր գալիս ի պաշտպանություն հայ եկեղեցու ինքնուրույնության, անկախության, համարյան շամերի, առաջադեմ ու լուսամիտ գաղափարների և ազգային միասնության: Սակայն հրապարակախոսական այս նվազագույնն անգամ հաճելի չէր ցարական հշիսանափորներին, որոնք պատրաստ էին ավելի սեղմելու գրաքննության խեղողիչ օդակը ամսագրի շորջը:

Եվ անուամենայնիվ, չնայած ցարական գրաքննիչների բոլոր շամերին, «Արարատը» մինչև վերջ հավատարիմ մնաց հայ եկեղեցու, հայ ժողովոյի զարթունքի և ազգային հառաջդիմության շամերին:

ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏԻ ՄԻԱՆԳԱՍՍԱՅՆ ՎԱՂՏՎԻ

ԴԻՄՈՒՄԱԳԻՐԸ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԳԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԱՐՈՒ ՄԻԱՆՍՐԻՆ,

ԱՌ 24 ՄԱՅԻՍԻ 1897 ԹՎԱԿԱՆԻ, № 542

Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Գևորգը 1888 թվականին, մեր կառավարության կողմից իր պատրիարքական ընտրության հաստատումից ամենամասն հետո, այդ առիթով Թիֆլիս Մեծ Խշան Փոխարքային ներկայանալիս, Նորին Բարձրությանը հայունեց իր մնադրությունը՝ Էջմիածնում հրատարակելու ամենամայս կրօնա-քարոշական հանդես: Հետագային, երբ նրա այս մտադրությունը իրականացավ, նա այս մասին տեղեկացրեց Կովկասական Գլխավոր Կառավարչությանը, ընդ որում նույն հայունեց, որ իր հիմնած ամսագիրը իր ուղղությամբ կարող է բարենպատ ազիցություն ունենալ Ռուսաստանի և հասլանական Կուստանիուպոլիսի հայ ազգաբնակչության վրա:

Այս առթիվ Փոխարքայի Գլխավոր Կառավարչության պետը, Նորին Բարձրության հանձնարարությամբ, իր նույն թվականի հունիսի 21-ի գրավոր կար-

ծիքի մեջ մանրամասն բացատրելով, թե ինչ պայմաններում և ինչ ուղղության դեպքում, համաձայն մատնանշված նապատակի, այդ ամսագիրը կարող է արժանանալ Կովկասյան Գլխավոր Կառավարչության համականքին, հայտնեց Պատրիարքին, որ թույլատրվում է հրատարակել «Արարատը» առանց նախական ընտրության Կովկասական Գրաքննչական Կոմիտեում, եթե Պատրիարքը իր վրա վերցնի ամսագրի գրաքննությունը և հրատարակի այն իր պատահանատվությամբ, ընդ որում Էջմիածնի տպարանը պարտավորվում է Գրաքննչական Կոմիտեին ներկայացնել ամսագրի լուրաքանչյուր համարից օրենքով սահմանված օրինակները: Պատրիարքը սրա դեմ չառարկեց:

Վերոհիշյալ ամսագրի գրաքննության իրավունքը պահպանում ժամանգար անցնում էր Էջմիածնի մոտ պատրիարքներին, ինչպես նաև ամեն անգամ,

Կովկասան Գլխավոր Վարչության հատուկ թուղթով բարերարացնելու, անցնում էր Եջմիածնի Սիսնդի հայության, երբ պատրիարքական Արքուր թափուր էր մողու:

Իր հաստակության մեջից «Արքաւու» ամսագիրը խիստ անհամապատասխան գոտինեց նախապես Եշված ուղղությանը: Դեռևս առաջին համարում զետեղված ծրագրից կարելի էր նկատել, որ առաջին ուշադրությունը է դարձվելու ամսագրի պատմաաշխարհագրական բաժնին, որի միջոցով նախատեսվում էր հայերի մեջ արթնացնել նայենասիրական զգացմունքներ, նկարագրելով «ազգի և հայրենիքի պաշտպան նախանձերի մեջ գործոց նիշատակարանները» և տպագրելով «պատմական ակնարկներ, ինչպես Արքաւույան մարզի վերաբերյալ, որ իրենց գամելը են հաստատել հայոց թագավորությունը, այնպէս էլ Հայաստանի այլ վայրերի մասին»: Ի հակադրություն Հայաստանի քաղաքական անցյալի, նկատի էր առնվում «խորտակված սրտով» Ենրկապացնել երկիր ներկա տիսուր Վիճակը: Ըստ ծրագրի, ամսագրի վերոհիշյալ բաժնի Եշանաբանն էր հանդիսանում—«Հայը ձգտում է հետի հայության հիմ կենտրոնը և անպայման պետք է որ ձգտի»:

Ակնհայտ է, որ հետևելով միայն այդ ծրագրին «Արքաւու» չկարողացավ օժանդակել հասնելու համար այն նպատակին, որը դրվել էր 1888 թվականին Կովկասան Գլխավոր Վարչության կողմից, այն է—հայերի մերձեցումը ուստի մետ։ Սակայն եղել են դեպքեր (ինչպես օրինակ, կառավարական կարգադրությունները հայկական ծիսական կեղծացական դպրոցների մասին), երբ ամսագիրը միանալավ ընդունադիր դիրք ընդունելով մեր կառավարության դեմ, միացել է հայկական մյուս հրատարակությունների բանավեճին, որը և բրորություն է մեզ թշնամի ազգային կրքեր:

«Արքաւու» ամսագրի նամաօրինակ ուղղությունը արտահայտվեց նաև Ենրկա Պատրիարքի\* օրոք այն բանից հետո, երբ Զերդ Գերազանցության կողմից, 1895 թվականի հոկտեմբերի 31-ի № 17 գրությամբ առաջարկեց Նրան իր ազդեցությունը գործադրել ուստահայերի և արտասահմանակ հայերի նկատմամբ՝ նպատակ ունենալով Վերջ տալու քաղաքական խորվությունը գործ այս առաջարկության, «Արքաւու» մի ամբողջ շարք համարելում երևացին ծայրահեղորդն գործի բնույթի հողվածներ, ուղղված բոլոր մեծ պետությունների դեմ, որոնք իրենց մասնակցությունն են բերում խորվությունների խաղաղեցման գործին (Խնֆանտերիայի գեներալ կոմս Տատիշչին անցյալ տարվա մայսի 17-ի նամակի նավելվածը):

Նկատի ունենալով Վերոհիշյալը, մագիստր թե նպատակահարմար համարվի այն բացառիկ դրությունը, որով օժմական է «Արքաւու» ամսագիրը գրաբնության տեսակետից: Դա, թերևս, որոշ Եշանակություն

ուներ անցնալում (ինչպես օրինակ, 1860-ական թվականներին), երբ արտսասահմանի և հատկապես Կոտանենուպությի հայերը, պաշտպանություն գտնելով Արևմտյան տերությունների կողմից, մեզ համար թշնամական իրենց քաղաքական ձգտումներով աշխատում էին նոյն ոգով ազդեցությունը գործ դնել իրենց պազալիցների վրա Ռուսաստանում, որ նոյն տուափրականությունը այն ժամանակ դնելով պակամատիվ էր և չուներ քաղաքար չափով ուժ և համամբվագրական բաժնությունը որպեսի կարողանար ակնառու դիմուրք:

Ներկացումն մեր հայերը իրենց անշատական ձգտումներով չեն զիշում իրենց արտսասահմանական եղանակներին, որով անհամատ է պաշտպանել նրանց վերջիններին վնասակար ազդեցությունից: Ընդ որում այս հարցում որևէ ենթադրություն երեքը չի կարելի պատճեն Եջմիածնից, որը, Պատրիարքի գլխավորությամբ, ստվարաբար նայերի համար համար դիմանաւում է ոչ այնքան կրոնական, որքան գաղափար նկատություն և մոլով զիշու նրանց անշատողական ձգտումների համար:

Ենթադրով վերոհիշյալ մտածումներից, այլ և նկատի ունենալով, որ արավուպավ եկեղեցու բոլոր նոգուր պարբերական հրատարակությունները և նոյնին թեմական տեղեկագրերը նեթակա են պատասխանատու գրաբնության, ևս ոչ մի հիմք չև գտնում այդ ուղղությամբ բացառությունը թուղթ տպու օտար դավանության պատկանող նոգուր ամսագրի նկատմամբ և գտնում են, որ նոյնպիսի գրաբնության պետք է ենթարկել «Արքաւու» ամսագրի: Հաս որում գուտ հոգնոր մեռոյթ կրող հոգվանության համար պետք է Պատրիարքի կողմից Եշանակի առանձին պատասխանատու գրաբնին և ի դեմ հոգևորականների և Կովկասան Գլխավոր Կառավարչության համաձայնությամբ, իսկ մյուս հոդվածները պետք է ուղարկվեն Կովկասան Գլխավոր գրաբնաշական կոմիտե նախնական քննության, որը «Արքաւու»-ի համար, իրու ամսագրի, դժվարություն չի կարող ներկայացնել:

Հկամենալով, սակայն, դիմելու կորուկ միջոցների, առանց դրա համար մոտավոր ատիօն ունենալու, ևս, հայուներով վերոհիշյալի մասին Զերդ Գերազանցության, պատիվը ունեմ խնդրելու որպեսի բարձրագույն նկատառման հանձնվի իմ կարծիքները և հայցելու Նորին կազմերական մեծության հանույթուն՝ իրավունք տպու իմ առաջարկի համար առիթով նախնական գրաբնության նեթարկելու «Արքաւու» ամսագրիը վերև մատունանշված միունքների համաձայն:

Հետևաներների մասին համեմեք հարգել ծանուցմամբ:

Գեներալ-ադյուտանտ իշխան՝ ԳՈԼԻՑԻՆ,  
ՍԵՆՍԱՏՈՐ

Վավերացնելու

Առաջին գրասենյակի դիրեկտոր՝

ՄԱ. ՑԱՆ Վ. Վ. Հ. 2

\* Խորոք Խրիմյան Հայրիկի մասին է:

ՆՈՐԻՆ, ԳԵՐԱՎԱՆՑՈՒԹՅՈՒՆ, ԿՈՎԱՍԻ ԳՐԱՔՆՆՉԱԿԱՐ,

ԿՈՄԻՏԵԼԻ ՊԱՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԵՒՆ,

Կովկասի գրաքննական Կոմիտեի տեղական և արևելյան լեզուների ավագ գրաքննիչ՝  
կողեծսկի խորհրդական Քիշմիշի գեկոցագիրը

Հմբ. 2. Մարտ 3, 1892 թ.

«Արարատ» ամսագրում Պետրոս Սիմոնյանցի—  
որպես նոյն ամսագրի խմբագրության նախկին ամ-  
դամի—գործունեության վերաբերյալ տպագրված  
հոդվածի նավելում մասին, նամակում, որը կրում է  
«Սիմոնյան անդամ» ասորագրությունը, ևս  
պատիվն ունեցած գլուխցելով Զերք Գերազանցության,  
որ վերջին ժամանակներում «Արարատ» ամսագրին  
տպագրում է քաղաքական բնույթի հոդվածներ, ո-  
րոնք սուսնի են գցում նաև գործադրյալ Պատրիարք և Կա-  
թողիկոս Մակարի միջառակին և շշափում պա-  
տիվն ու բարի անոնք ազնիվ անձնավորություն-  
ների:

«Սիմոնյանցի անդամ»-ի վերոնիշյալ նավելու-  
մի մեջ, որի բարձրամասությունը ներկայացված է իմ  
կողմից, ի միջի այլոց կա նետելայ արտահայտու-  
թյունները, որոնք վերաբերվում են Մակար Կաթո-  
ղիկոսի գործունեությանը.—«Նրա (Պետրոս Սիմոն-  
յանցի) ձայնը վճռական հշամակիրյուն ուներ գրեթե  
բոլոր գործերում՝ ինչպես վարչական, ուսումնական,  
այնպիս էլ տնտեսական»: Այսուհետև—«Հանգուցալ  
Կաթողիկոսը սովորություն ուներ զանձարկից  
դրամ վերցնելու, մասնավորապես հասուն պարզևա-  
տըրությունի համար»:

«Արարատ» ամսագրի սովոր բավական համարի  
համարում խմբագրությունը շարունակում է հարա-  
զար մնալ իր կողմից որդեգրած բանավիճական  
բնույթ կրող տոնին և շշափում է ոչ միայն մասնա-  
վոր անձանց, ինչպիսիք են Ներսիսյան Հոգևոր  
դպրանցի նոգարարությունը՝ երդվալ նախատարմա-  
տար Նվանգույնը և իշխան Կոստանդն Բերդուլը,  
այլ և շշափում է նոգարարության նախազան՝  
Քրաստանի և Խմբերի ամառ առաջնորդ Մամբրե  
Խափիկոսի և նույնիկ Կոստանդնուպոլիս ներկա  
Պատրիարք՝ Խորեն Արքայիշխորպու Աշքայանի պա-  
տիվը:

Խուսկով տեղակաղության հարցի վերաբերյալ տե-  
ղական նայեական և արտասահմանան թերթերում  
ընդունված ուղղության մասին, «Արարատ» ամսա-  
գրի խմբագրությունը ավելացնում է—«Արևելք» թեր-  
թը մեկ Volt Face-ով դավաճանելով իր անցյալին ո-  
իր դավաճան գաղափարներին և գտնվելով մեծ ձեղ-  
տումներ (դեպի իշխանություն, տվյալ դեպքում դե-  
պի ծայրագոյն Պատրիարքի իշխանությունը) ունե-  
ցող մի բարձրաստիճան պաշտոնայի (Կ. Պալս  
Պատրիարքի) բովանավորության ներքո, դարձել է  
մի օրգան, որը ժամանում է ամեն տեսակի ստեր: Մենք չենք կարող արտասալել «Արարատ»-ում այդ  
բոլոր ստերը և ներթել դրանք, քանի որ դա կնշա-  
նակելու վերածել «Արարատ»-ը աղտոնությունների  
պահեստատարանի»:

Այսուհետև վերլուծելով Ներսիսյան Հոգևոր դպրա-  
նցի նոգարարության շրջանակում տեղի ունեցած  
միջադեպը, որն առաջացել էր տեղակալի կարգա-  
դությանը չնետարկելու և դպրանցի երկու տու-  
ցիչներին արձակելու կապացությամբ, «Արարատ»  
ամսագրի խմբագրությունը բացականչում է— «Անս  
ձեզ բարձրաստիճան նոգարարական, թեմակալ ա-  
ռաջնորդ, նախակոռու, որին ներկի չէ ունահարել  
այն օրենքներն ու կանոնները, որոնցով պաշտոնա-  
պես դեկապլում է եկեղեցին և որը բոլոր է տախո  
իրեն ընդդիմանա իր պետին ու ընթանավ ներ կու-  
սակցական ոգով նամակված երկու աշխարհական  
անձանց (Եվանգելով և իշխան Բերուտով) ներքե-  
րով...»:

Այդ ընդարձակ հոդվածում թեմակալ առաջնորդի  
և դպրանցի երկու նոգարարությունների նասցեին նորա  
վերնիշյալ արտահայտություններից բացի, կան  
նաև շատ այլ արտահայտություններ, որոնք վարկա-  
րեկում են այլ անձանց բարի անոնքը: Այսպես, օրի-  
նակ, նանդիպում ենք նետելայ արտահայտություն-  
ների—«Արարատ»ի նոգարարության նախագահի  
և մի քանի անդամների նախարինական և շահա-  
դիտական վարմութք», «Կանոններից շեղվող նո-  
գարարություրը և նրանց նախագահը», «Կատարելով  
այդպիսի ծանր նանցանք և վրդովունք նարուցելով  
ընդդիմ Գերագոյն Հոգևոր իշխանության...» և այլն:

Բացի այդ, «Արարատ» ամսագրի նոյն համարում  
կարելի է նանդիպել այլ կարգի ակնարկությունների—«Նա բախտավորություն է, որ Հայ պարբերա-  
կան մամուլի բավագոյն նատվածքը նշութական շամե-  
րով կապված չէ Էջմիածնի մաս և կամ այս ու այն  
նախակոռուի մետք», «Պաշտոնական «Արարատ»-ը  
լուս էր, քանի որ նայտնի էր, թե ինչ ճանկերումն  
էր այն գտնվում...», «Պարզ էր, որ 1884—1885 թթ.  
ընտրությունների ժամանակ տեղի ունեցած փաստե-  
րը կօգոր և աննետեանք չանցան, այլ ծառայեցին  
ուղիս ազդու և նախազգուշացնող դասեր: Վեր-  
նիշյալ տարիներից ենոտ չեն փախվել ոչ մարդիկ, ոչ  
զգությունները և ոչ էլ նախառակին նասներու միջոցներ-  
ը: Ըստ վերջի պարբերությունը շարված է ըն-  
դգծված տառերով և ակնարկում է Մակար Կաթողի-  
կոսի ընտրությանը:

Վերնիշյալից Զերք Գերազանցությունը կհանի  
տեսնել, որ ոչ բորբածի տռնը, ոչ էլ նախադասու-  
թյունների ու արտահայտությունների ընտրությունը  
և ոչ նովնիսկ վերնիշյալ ակնարկությունները պետք  
չէ որ տեղ գտնեն այնպիսի պաշտոնական ամսա-  
գրում, ինչպիսին է «Արարատ»-ը, որը նախարինում  
է Հոգևոր նախատարան օրգան:

Ինչպիս նայտնի է Զերք Գերազանցության, Տեղա-

կայի իրավունքների հարցը անցյալում բավական սրվեց, մասնպատ տեղի ունեցած բանալիքի պատճառով և գրուեց թէ տեղի և թէ թրքամայերի մորեքը, առաջ բերելով անցանկադի հուզումներ նորանց մեջ, որով գրավնությունը ժամանակին արգելեց բանակենք մամուլում, գտնելով անհարմար և անցանկադի այլ հարցի հնտագա քննարկումը։ Այդ հարցի նոր քննարկումը «Արարատ»-ի էջերում, բանակենք բնույթ կրող և կրօռո հարձակումներով լի նորմանական կամ անհարմար է։

Նոյնը կարելի է ասել նաև Ներսիսյան Հոգևոր դպրանցում տեղի ունեցած միջադիմի մասին, որի շուրջը եղած լրատվություններն ու հոդվածները անառկելի կերպով արգելվեցին մամուլում, ինչպես առանձին գրաքննչների, այնպես էլ Կոմիտեի որշմամբ, որպես երիտասարդ սերնի մոտքերը գրրգրող և դպրոցական կարգապահությունը խախտող հյութեր։

Տեղին չեն նաև անձնական վիրավորական հարձակումները ընդդեմ նովապետների, մասնաւոն ներկայիս, երբ ներթի է դրված Հայ Եկեղեցու պետի ընտրության հարցը և մամուի մեջ սարդեում են անոնները այն հոգևոր անձանց, որոնք նախատեսվում են Հայրապետական Աթոռի թեկնածուներ։


Մինչև միմա գրավնությունը դեկավարվել է վերոհիշյալ նկատություններով և արգելող է տպագրել նման անձանց համար վիրավորական հոդվածներ և դիտղություններ։


Այս ամենը, ինչպես նաև բազմաթիվ այլ փաստեր վկայում են, որ «Արարատ» ամսագրի խմբագրության դեկավարման գլուխ անցած ավագ Խորկավագ Գալուստ Տեր-Միրուշյանը բոլորովին անպատրաս է հարկ եղած արժանապատվությամբ վարելու էջմաննի վամբի պաշտոնական օրգանմ։

Այս ամենի հնտականություն, այլև նախառակ ունենալով վերացնելու, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի հայերի միջև եղած դժգոհությունները, որոնք առաջանում են «Արարատ» ամսագրում տպագրվող և հնտագային տպագրվելիք բնույթի և մասնավոր ու հոգևոր անձանց դեմ կրօռո հարձակումներ պարունակող հոդվածներից, շահազանց ցանկադի է, որպեսզի մետ պատ արգելվեն նման հոդվածների տպագրումը էջմիածնի վաճքի պաշտոնական օրգանում։

**Աղեծմսկի խորհրդական՝**

**Ա. ՔԻԾՄԻԾԵՎ**





## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ (1868—1919)

Կազմեց՝ ՍԵԴԱ ԿՈՇԻՆՅԱՆ

Խմբագրեցին՝ ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՉՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ՀԱՏԻՏՅԱՆ

### ԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

1968-ին լրացավ «Արարատ» ամսագրի հրատարակության 100-ամյակը: Սույն մատենագիտությունը կազմված է այդ առթիվ, «Էջմիածին» ամսագրի խմբագրության հանձնարարությամբ:

«Արարատ»-ի առաջին համարը լուս է տեսել 1868 թվի մայիսի 1-ին, վերջին 1—12 միացյալ համարը 1919-ին: Մատենագիտությունը ընդգրկում է ամսագրի բոլոր տարիների և համարների նյութերը լրիվ:

«Արարատ»-ում հրատարակվել են կրոնա-աստվածաբանական, պատմական, քանակական, հայագիտական, փիլիսոփայական, բարոյախոսական, գիտական, մանկավարժական և այլ բնույթի ուսումնասիրությունները: «Արարատ»-ի էջերում տեղ են գտել նաև հայրապետական կոնդակներ, կաթողիկոսական տօնօրինություններ, սինոդի արձանագրություններ, եկեղեցական քրոնիկուններ: Նման նյութերը մատենագիտության մեջ նշված են ամբողջական էջերով, այսինքն բացված չեն լուրաքանչյուրի բովանդակությունը առանձին:

Որոշ հոդվածաշարերի («Մայր Ա.-թոն», «Ագամին», «Սորենան», «Բիուգական», «Տաճկան») նյութերը կազմված է սահմանական-այբբենական կարգով՝ ըստ տպագրության տարեթվերի: Ցորաքանչյուր տարվա նյութերը դասավորված են այբբենական կարգով: Վերջում կոնենա հետևյալ օժանդակ ցանկերը՝ նեղինակային, անձնանունների, ծածկանունների, տեղանունների, թեմատիկ-առարկայական:

Հեղինակի անունով են նկարագրված այն բոլոր հոդվածները, թղթակցությունները, գեղարվեստական ստեղծագործությունները, որոնց սկզբում, վերջում, ամսագրի ցանկում նշանակված է նրանց անունը: «Արարատ»-ը հրատարակության առաջին տարիներում գերծ չի եղել տեխնիկական և հրատարակական թերություններից: Որոշ

թարգմանված նյութերի տպագրությունը տեխնիկապես աղնակ է ձևավորված, որ ստացին հայացքից թարգմանմանը հեղինակ է թվում, այնինչ մեղինակի անունը թագնըված է հոդվածի առաջարանում, վերջարանում, տողատակի ծանոթություններում կամ բոլորովին նշված չէ. նախորդ հյութերի հոդվածների ոճից նեթադրվում է, որ հյութը բարգմանություն է: Հետաքրության սահմաններում աշխատել ենք ճշտել այդ տեղեկությունները և նկարագրությունը վերցնել հիմնական հեղինակի անունով:

Հոդվածագրերի մի զգայի մասը ստորագրել է ծածկանուններով կամ անվան, ազգանվան և կրոնական կոչումի սկզբնատառերով: Օգտվելով Սիեռոյի արձանագրություններից, կաթողիկոսական կոնդակներից և Գյուտ եպիսկոպոսից կազմած «Արարատ»-ին աշխատակցած հեղինակների անձնանունների ձեռագիր ցուցակից, հմարավորության դեպքում աշխատել ենք բացել ծածկանունները և նկարագրությունը վերցնել հեղինակի հիմնական անունով, ծածկանունը՝ որպես ստորագրություն, տայ ծանոթության մեջ:

Կան նաև անստորագիր հոդվածներ, որոնց ոճից թեպես ենթադրվում է հեղինակը, բայց նկարագրությունը տրված է խորագրի տակ: Նման դեպքերում անձնանուններից ցանկում կասկածվող հեղինակի անվան դիմաց համապատասխան նշում է արված:

Հիմնական կամ կողքին կլոր փակագրերում նշված է այն վայրի անունը, որտեղից առաջիկա է առաջարկված ձեռագրերի հեղինակների անունները հիշատակված են ինչպես հիմնական նկարագրության, այնպես էլ անձնանուններից ցանկում:

Հեղինակի անվան կողքին կլոր փակագրերում նշված է այն վայրի անունը, որտեղից առաջիկա է առաջարկված է տվյալ հյութը: Այդ արված է այն նպատակով, որ աշխարհական պատմասիրող իմանա, թե «Արարատ»-ը ինչ վայրերի հետ է կապված և ո՞ր հայ գաղութում ինչ մտավոր կյանք է գոյություն ունեցել:

Եթե հոդվածի հեղինակը նշված չէ և հնարավոր չէ այն վերականգնել, ապա հոդվածը

նկարագրված է խորագրի տակ: Խորագրի տակ են նկարագրված նաև հոգարածուերի (երեքից ավելի) դպրոցական գործին վերաբերող որոշ համակենտր: Այդ համակենտրի գերակշիռ մասը տպագրված է միևնույն՝ «Խմբագրութեան» Արարատ ամսագրոյի հասցեագրով: Կրկնություն չտասացնելու համար անտեսված է այդ հասցեագիր-վերնացիրը:

Կան նաև անհորագիր և անմեղինակ հյութեր: Դրանք մեծ մասամբ ուրիշ աղբյութներից քաղված խառը լորեր են:

«Արարատ»-ի, (յուրաքանչյուր հրատարակական տարրում) համարների էջերը շարունակվող են: Ուստի հրատարակչական տեղեկություններում ցուց են տրված միայն տարեթիվը և էջը: Բայց 1868—1871 թվերի հյութերի նկարագրություններում տարվա հետ միասին ցուց են տրված նաև ամիսը, համարը և էջը. որովհետև «Արարատ»-ի առաջին համարը լուս է տեսել 1868 թվի մայիսի 1-ին, ուստի հրատարակչական տարին համարվել է մայիսից-մայիս: 1—8 համարները համընկել են նախորդ, իսկ 9—12 համարները՝ հաջորդ տարվան: Մի հրատարակչական տարին կազմվել է երկու տարբեր աստղաբաշխական տարիների կեսերից: Ժամանակագրության մեջ շիփություն չառաջացնելու նպատակով այդ հյութերի էջերի հետ միասին ցուց են տրված նաև ամիսը և համարը:

Ամսագրում կան էջերի սիալ համարակալումներ, կրկնված էջեր: Նման դեպքերում սիալ աղբյուրի կողքին ցուց է տրված նաև, թե նիշտը ինչպես պետք է լիներ: Այդ հյութերից օգտվելիս ընթերցողը պետք է նկատի ունենա կազմողի ծանոթությունը:

Մի շարք նկարագրությունների մեջ հրատարակչական տեղեկություններից թեսող տրված են թիմ ձեռագրի բնագրերի սկզբնատողները:

Սատենագիտությունը խմբագրել են Ա. Հատիսյանը և Ս. Քոյանչյանը: 1868—1880 թվերը՝ միասին, 1881—1900 թվերը՝ Ս. Հատիսյանը, 1901—1919 թվերը՝ Ս. Քոյանչյանը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ  
(1868—1919)

1868 մայիս-դեկտեմբեր № 1—8

1869 հունվար-ապրիլ № 9—12

**1. ԱՐԱՐԱՏ** եւ բազէ: [Արտատպված է ձևագիր տպարանից ԾՀ: Զափածո]: 1869, նունվ., № 9, էջ 182:

Ակ. Մեր մեղքն է առեր՝ զագորան բազա...

**2. ԱՐԱՐԱՏԻՆ** բարեկարգութիւն: [Կուտակորոն Բոգևիլուականների անձնական ժառանգությունը Մայր Սթորին թողնելու մասին պայման և ուխտ]: 1868, մայիս, № 1, էջ 7—8:

**3. ԱՐԱՐԱՏԻՆ ՆԱՀԱՆԴՅՑ:** Երևանա օրիորդաց դպրոցին աշակերտութեաց հարցարնութեան կարդացուած ճառը: 1868, սեպ., № 5, էջ 62—64:

Ամսագրում տպագրական սխալ՝ պետք է լինի էջ 64—66:

**4. ԱԽԱԼՔԱԼԱԿ:** [«Հայկական ընթերցարանի» գործունության մասին]: 1869, ապրիլ, № 12, էջ 173:

**5. ԱՆԴՐԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ:** Էջմիածնի ժառանգութաց դպրոցի մասին: 1868, սեպ., № 5, էջ 62—64:

Տպագրված է առանց խորագիր: Ամսագրում սխալ էշագրություն՝ 62, 61, 62 պետք է լինի 62—64:

**6. ԱԽԱԼՔԱԼԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ:** [Ուղերձ: Երևանի հոգևոր դպրոցի մասին]: 1869, նոյիս., № 3, էջ 36—37:

Հեղինակի անունը նաևնական է խմբագրության ծանոթությունից:

Ստորագր. \*\*\*

**7. ԱՌԱՋԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ:** Զուարձափիք: Տաղ վասն մաքրամայի: [Զափածո: Արտատպված ձեռագիր տպարանից ԾՀ]: 1868, նունվ., № 8, էջ 116:

Ակ. Աստուած արար զիս ի հողոյ...

Հեղինակի անունը նաևնական է բնագրի նախամկերցին ստորից:

**8. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՆ ի տարեկարգի օծման Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց (Գերոյ Դ):** 1868, օգոստ., № 4, էջ 45—48, սեպ., № 5, էջ 66—67:

Հեղինակի անունը չի հցվում: Բնագրի վերջին մասը՝ էջ 66—67, տպագրված է առանց խորագրի:

**9. ԱՐԱԲԱՑԵԽՆԵՑ ՄԿՐՏԻՉ:** Պատուական ամսագրում «Արարատաց»: [Ակերանադրապող նոգեսր դպրոցի աշակերտների շնորհակալական խութը ազգաւոր Արտիշ Սահասարդացին]: 1869, փետրվ., № 10, էջ 147—148:

**10. ԱՐԱՐԱՏ ճահաճ:** 1868, մայիս, № 1, էջ 6, նունիս., № 2, էջ 16—20, նոյիս., № 3, էջ 28—29, օգոստ., № 4, էջ 42—44:

Բովանդ՝ Դիրք Արարատեան ճահաճից:—Օդ Արարատ ճահաճից:—Արարատեան դաշտի շրջապատ լեները:

**11. ԲԱՐՈՅԱԿԱՆՔ:** [Բարյախտսական խրատներ]: 1868, նոյիմ., № 7, էջ 100:

**12. Գ. Վ.—ԱՐԱՋՆՈՐԴ ՎԻՃԱԿԻՆ ԿԱՐՈՒՅ:** Պատճեն պատասխանոյ առաջնորդին Կարույ առ զերապան Արդյուն: [Պատասխան Հովհի պասի հրապիր տևորակին]: 1869, ապրիլ, № 12, էջ 174—175:

**13. ԳԱՐՈՒՆ:** [Զափածո]: 1868, նոյիս., № 3, էջ 37—38:

Ակ. Գեղեցիկ զարում, եղանակ սիրում:

**14. ԳԵՂՈՐԳ Դ. ԿԱԹՈՒԾԻԾԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒՅ:** Կոնցակ: [Ուղղված Կ. Պոլսի Պողոս պատրիարքին Վատիկանի ժողովի առթիվ]: 1869, մարտ, № 11, էջ 153—155:

**15. ԵԶԻՒՆ ԿՈՂՊԱՑԻ:** Առածք: 1868, նոյիս., № 3, էջ 38:

Ակ. Որ գերկիդան սիրէ, սերտ արձան կանգնէ առ Աստուած...

Հեղինակի անունը նաևնական է տողատակի ծանոթությունից:

**16. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՅԵՒ:** Բայեւ: [Գևորգ Դ-ի կաթողիկոսական օծության տարեկարգի հանդեսի նկարագրությունը]: 1868, նունիս., № 3, էջ 14—16:

**17. ԵՂԻԾԵ ՎԱՐԴԱՊԵՏ:** Առածք, մատենագիր հիմքերորդ դարու: 1868, նոյիմքը, № 7, էջ 89—92.

**18. ԵՂԻԾԵ ՎԱՐԴԱՊԵՏ:** Արբոյն Եղիշէի վարդապետի ասացեալ յաղագ Թարօր լերին: 1869, նունվ., № 9, էջ 128—125:

Ակ. Վասն լերինն զեղեցկութեան...

**19. ԶՈՒԱՐԺԱԼԻ ԴԵՎՐ:** [Արձակ]: 1868, օգոստ., № 4, էջ 52:

Ակ. Գոյի մէկը զիշեր ժամանակ քաղաքացու մեկի տունը կմտին...

**20. ԶՈՒԱՐԺԱԼԻՔ:** Մարդ էշ եւ գալ: [Արձակ]: 1868, նոյն., № 6, էջ 84:

Ակ. Մի մարդ իր էշը կորսեցուցած էր, ուստի խիստ աղյուսիք...

